Թէպէտ և իւրաքանչիւր գործ փրկչին մերոյ բաւական լինէր արդեամբք իւրով փրկել զազգ մարդկան , սակայն կամք ածութեն սահմանեալ էր՝ պատարագաւ անձին փրկչին լինիլ պատշաճապէս : Իսկ թէ էր աղագաւ այսպէս . հոգեկիր ածաբանքն յիմաստից ածաշունչ գրոց փոքր ՚ի շատէ ՚ի միտ առեալ , օրինակաւ վճարութեն պարտուց , և դեղոցն առ բժշկելի հիւանդութիւն համեմատութեն բացատրեն : Ըստ զի մեզ ոչ է ըմբռն երկար բանիւք թէ շաւիղս մեր ելանել . վասն թէ նպատակին մերոյ , զոր ՚ի կանխաբանութեն մատենիս առաջի եդաք , զմնկագրեալ գլուխս զայս հնգեակ յօդուածով վճարեսցուք :

Յօդուած Ա :

Վայել էր փրկչին մերում լինիլ ածմիջնը ածն . ամ է , ամենայնիւ նուիրեալ մեծավայելչութեն ածութեն : Իսկ կրկին կերպիւ նուիրանօք լինի ինչ նուիրեալ : Առաջինն յօժարական պատրաստութը միայն . իսկ երկրորդն իրօք . զի այս է ներգործութը մատուցանել զնուէրն մեծվայելչութեն ածութեն : Ըստ արդ՝ քաջայայտ է . թէ առաւել լի , և կատարեալ է մատուցանելն իրօք երբ մարթ է , քան միայն յօժարական պատրաստութը : Ապա իրօք սը առնել , և նուիրել զանձն իւր մեծավայելչութեն ածութեն վայել էր փրկչին մերում , ոպ և արար , և ոչ սոսկ յօժարական պատրաստութը : Եւ՝ իրօք նուիրելն իսկ կրկին է . Մինն է մասնական կրիւք , զոր օրինակ , հրով ողջակէզ եղեալ , կամ սրով խողխողեալ , և կամ այլ մասամբք մահաբեր կրից , ոպ զանազան մարտիրոսք պէսպէս մահաբեր տանջանօք զանձինս իւրեանց պատարագեցին մեծվայելչութեն ՚ի վկայութի ճշմարտութե նր , զոր օրինակ ՚ի հնումն եղև աբէլի , շամուէլեայ , և եօթն որդւոց նր . եղիազարու , եսայեայ , երեմիայ , և այլ բազմաց : Միւսն է բոլորական կրիւք , յորում զերազանցապէս ածմ ազգ կրից բովանդակին . Եւ յայտ է . թէ այս՝ քան զառաջինն կատարելագոյն է : Ապա փրկչին ածմի , որ քան զածմ սըբս և նուիրեալս անհամեմատ կատարելութը կատարեալ է , վայել էր այնու բոլորական կրիւք զանձն իւր հաճոյից ածութեն նուիրել , որ զայլոցն ամենեցուն զկիրսն յինքն զերազանցապէս բովանդակէր : Եւ ահա այսպիսի եղև նուիրումն փրկչին մերոյ յոլ ՚ի խաչին , յորում մատոյց զանձն անարատ պատարագ այ վն զմեղս մեր քաւելոյ : Եւ որ մտադիւր ընթեռնու զամ գրեալսն յաւետարանչաց , և ՚ի միտ առնու զիւրաքանչիւր անցս չարչարանաց նր իւրաքանչիւր համգամանօքն , քաջ իմանայ զճշմարտութի ասացելոյս : Որպէս աստ սուղ ինչ ՚ի յօդուածն հինգերորդ յառաջ բերեմք զքաջ խորհեալ համգամանս չարչարանաց փրկչին մերոյ :

Յօդուած . Բ :

Յառաջի վերադրոյն բացայայտեալ ճշմարտութեն և այլ բանիւք :

Վայել էր փրկչին զայնպիսի նուիրելի մեծավայելչութեն ածութեն անձն ունել , որ ածմ իրօք լցեալ սըբ , հեռի ՚ի մեղաց , ամբիծ , անարատ , և բարձրացեալ քան զերկինս : Իսկ այսպիսի անձին ունակ , ոչ ոք ՚ի հնումն եղև . քանզի ամենեքեան ունէին գոնէ սակաւ ըն դաւթի . թէ անօրէնութեամբ յղացայ , և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ : սաղմ . ծ . 7 : Եւ ըստ եսայեայ . եղաք իբրև զպղծեալ ամենեքեան . իբրև զհանդերձս դաշտանի ամ արդարութիւնք մեր : եսայ . կդ . 6 . Նա զի թէպէտ և լինէր ոք սրբեալ յորովայնէ , յայսմ ածմի յայտ է , թէ ոչ էր ածմ իրօք անարատ . զի էր ՚ի մեղս յղացեալ : Եւս թէ պէտ և անարատ յղութը լինէր ոք ծնեալ , և չլինէր իւիք մեղուցեալ , սակայն և այնպէս չունէր զնուիրելի անձն , այնչափ սըբ , բարձրացեալ քան զերկինս . զի ներգործութը առն լինէր յղացեալ , և ոչ ՚ի հոգւոյն սըբյ . ոպ եղև փրկիչն մեր յս քս : Ըստ և ոչ լինէր օծեալ ածծ . ըստ ենթակայացեալ

ածային անձնատուրութեան . ոպ է փրկիչն մեր յոյժ քնն . Նպա յոյժ քնն փրկչին մերում, որ զայսպիսի բարձր քան զերկինս ըն և ա֊նարատ նուիրելի անձն ունէր, վայել էր ոչ զանց առնել, և ոչ առ իւր պահել զայսպի սի նուէրս, այլ գործով նուիրել մեծ վայ֊ելչութեան ածունեն ՚ի գէպ պատշաճ . և այն պէս ձեռն էր նմ ըն յաւիտենից առհմմնելոյ հօրն երկնաւորի չարչարանօք խաչի զանձն իւր բոլորամատոյց կատարեալ ողջակէզ առնել ածային հաճոյիցն ՚ի հոտ անուշից ։

Յօդուած . Դ .

Յանդիման առնէ նոյն ճշմարտութիւն եւ այլ բանիւ ։

Փրկիչն ամի՝ է քահանայ ըստ կարգին մելքիսեդեկի . ոպ գրեալ կայ այս ՚ի դաւթեան սաղմոսի ։ Ճթ . 4 ։ Իսկ սեպ֊հական գործ քահանային ըստ առաքելոյն եբր . Ը . 3 . է պատարագաւ զմեղս ժո֊ղովրդեան քաւել, և այնպէս սրբել զնա, և առ ած մերձեցուցանել ։ Ոպ և անուննն իսկ զայս ստուգէ . զի ասի քահանայ . իբր թէ, քահէ նա ։ Նպա և փրկչին ամի վայել էր պատարագաւ զմեղս մարդկան քաւել, սրբել զնս, և առ ած մերձեցուցանել ։ Նյլ արդ՝ ոչինչ գերագոյն պատուական պա֊տարագ մարթ էր նմ ունիլ քան զանձն իւր . քանզի զինչ և իցեն այլ իրք պատարագո֊զին, ամենեքին ստորագոյն են քան զանձն նորին ։ Նաւ պատճառն է . զի մարդ՝ զինչ և մատուցանիցէ ոյ բաց ՚ի բայոր անձնէ իւրմէ, կամ ոչ զբովանդակ զիւրն մատու֊ցանէ, և կամ ոչ զիւրն, այլ զայլոյ իրսն մատուցանէ, որ ոչ այնչափ ինչ արժէ ։ Նպա վայել էր փրկչին ամի՝ զանձն իւր մա֊տուցանել պատարագ, և նովաւ քաւել ըզ֊մեղս մեր . սրբել զմեզ՝ և առ ած մերձե֊ցուցանել ։ Նա զի եթէ և փրկչին ամի պատ֊շաճ լինէր ոչ զանձն իւր, այլ զայլ ինչ մատուցանել, քահանայութի նր չունէր ինչ առաւելութի ՚ի վր քահանայութեան ահա֊րոնի . զի ամ նուէրք, և պատարագք ա֊հարոնի էին յիրաց ը զանձն իւր նուաստ եղելոց . Նայց յայտ է, թէ ոպ պատարա֊գիչ փրկիչն անհամեմատ գերագոյն է քան զահարոնն, սոյնպէս վայելէր նմա զանհա֊մեմատ գերագոյն ինչ մատուցանելի ունել, և մատուցանել ։ Իսկ քան զանձն նոյն փրկ չին՝ անհնարին էր այսպիսի գերագոյն ինչ լինիլ ։ Նպա արժան էր փրկչին զանձն իւր մատուցանել պատարագ հաճոյից ածունեն, և քաւել՝ և սրբել զժողովուրդ իւր ։

Յօդուած . Ե .

Յանդիման առնէ նոյն ճշմարտութիւն եւ այլ բանիւ ։

Վայել էր քնի փրկիչ մարդկան լինել՝ ոչ միայն գործովք բարեաց, այլ և կրիւք չարեաց . ոպ զի նր փրկագործութիւն լինէր ծայրագոյն նուիրօք անձին իւրոյ . Քանզի յորժամ նուիրէ ոք զանձն իւր պաշ տօն մատուցանել փառացն ոյ գործովք բա րեաց միայն, չեևս արարեալ է նմա զա֊մենակերպ և զամենակատար նուիրումն, զի մնայ նմա դեռ ևս այլ կերպ նուիրման անձին, որ է կրիւք չարեաց . և յորժամ նուիրէ ևս կրիւք չարեաց, յայնժամ ամե֊նակերպ լինի նուիրումն, զի այլ կերպ նուիր ման ոչ մնայ այնուհետև ։ Ըստ այսմ ասէ ըք առաքեալն յակոբոս, թէ համբերութիւն գործ կատարեալ ունի ։ յակ . Ա . 4 ։ Նաւ տրն ասէ, Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի՝ եթէ զանձն իւր դիցէ ՚ի վր բարեկամաց իւրոց ։ յով . ժե . 13 ։ Իսկ արդ՝ ՚ի կիրս չարեաց ծայրագոյն է մահն, և մանաւանդ մահն խաչի ։ Սորեմն ձեռն եղև փրկչին մերում և զայս կիրս չարեաց տանիլ ՚ի փրկագործութե իւրում, ոպ և ասաց իսկ, թէ վայել է մեզ լնուլ զամ արդա֊րութի ։ մատթ . Գ . 15 ։ Յայտ է ճշմար֊տութիս այս յերանելւոյն յոբ, որ թէպէտ և գործովք բարեաց կատարեալ էր . ոպ և վկայեցաւ յոյ, թէ ոչ գոյ եւրեք նմա ՚ի վր եր կրի այր անարատ ճշմարիտ աստուածապաշտ մեկնեալ յամ ի֊րաց չարաց ։ յոբ . Ա . 8 ։ Նայց յայնժամ ոչ ա֊ւարտեցաւ նր նուիրումն անձին . այլ պատ շաճ եղև նմա կրիւք չարեաց զնուիրումն կա֊տարելութե ընդունիլ, ոպ յայտ է ։ Նաւ աբրահամ թէպէտ և յառաջ քան զմա֊տուցանել զորդի իւր ըն ածային հրամանին ՚ի զենումն, էր արդար, ոպ յայտ առնէ զայս գիրն ածային . ծննդ . ժէ . 6 . էր ևս բարեպործ, ոպ և զօրութբ բանից նոյն գրոյն իմանամք ։ Նայց յայնժամ ոչ ասաց նմա ած, թէ այժմ գիտացի, թէ երկիւղած ես դու յայ ։ ծննդ . իբ . 12 . այլ յորժամ մա տոյց զորդին իւր ՚ի զենումն ։

Գուցէ ասասցես, թէ չէ ինչ ըմբռն՝ զանձն յողջակէզ մատուցանել ոյ իրօք, այլ միայն յօժարամիտ պատրաստութբ սրտի՝

որ՟պ և մատուցանելն աբրահամու զորդին իւր յողջակէզ ոչ եղև իրօք, այլ միայն յօժարութ՟բ սրտի ։

Նաև ընդդէմ այդմ բանի է այս ։ Նախ՝ զի թէ ոչ էր արգելեալ յա՟յ, իրօք իսկ լինէր մատուցումն այն. որ՟պ և երեք մանկունքն իրօք զանձինս իւրեանց յողջակէզ լինել ա՟յ ընծայեցին յընկենուլն քաղդէացւոց զերեսին զնո՟ 'ի հուր հնոցին, յաղագս պաշտաման ճշմարտին ա՟յ, և միայն սքանչելեօքն ա՟յ ապրեցան 'ի բորբոքեալ բոցոյն որ 'ի փառաբանելն իւրեանց զամենակալն ա՟ծ ասէին. դան. գ՟ ։ Այլ անձամբք խոնարհեալ, և հոգւով ... ընդունելի լիցուք որպէս ողջակէզս խոյոց և զուարակաց ։ Այնպէս ընդունելի լիցի պատարագս մեր առաջի քո, լինել կատարեալ զկնի քո ։ Նաև երկրորդ՝ սաստկանայ ուխտաւորն ա՟յ, իրօք ետ զանձն 'ի մահ լինել զպատառման իւր յա՟յ ընկալեալ. կատարել զայլազգիսն 'ի փրկութի ինքեան ։ դատ. ժզ. 30 ։ Նաև 'ի գիրս մակաբայեցւոց գրեալ է, ա՟. մակ. ա՟. 65. Թէ բազումք յիսրայէլացւոց հաստատեցան, և պնդեցին զանձինս իւրեանց, զի մի կերիցեն 'ի պղծութենէ. և յանձին առին յօժարութեամբ մեռանել, զի մի ... պղծեսցին, և մեռան բազումք 'ի նոյնժամ, և եղև ... ... 'ի վերայ իսրայէլի մեծ յոյժ ։ Նաև ոչ միայն պատրաստութ՟բ սրտի, այլ իրօք իսկ վ՟ն զճշմարտութիւն ա՟յ դաւանելոյ, և կամ վ՟ն զպատուիրանաւն ա՟յ ոչ անցանելոյ, տալ զանձն 'ի մահ, է լինել երկիւղած յա՟յ գեր 'ի վերոյ ։ Նաև յա՟ծային գրոց բանս հիմնեալ տրամաբանութ՟բ յայտ յանդիմանի եղև, թէ պատճառ էր փրկչին ա՟մի, ոչ սոսկ յօժարութ՟բ սրտին իւրոյ ևեթ. այլ և իրօք իսկ մատուցանել մեծվայելչութ՟ե ա՟ծութ՟են զայն ինչ նուէր, որ ս՟րբութ՟բ և պատուականութ՟բ 'ի վեր է քան զա՟մ նուէր, որ մարթ իցէ լինել, և է իւր, և ոչ օտարի, և է ոչ մասն ինչ, այլ անձն իւր գլխովին բացարձակեալ 'ի փրկութի մեր ։ Իսկ զի զայս և մարգարէքն իսկ զնմանէ կանխաւ գուշակեցին. իբր թէ նա այսպիսի լի ա՟մ արդարութ՟բ, ս՟րբութ՟բ և քաջութ՟բ հնորհալի նուիրանօք կատարելոց է զփրկութի մարդկան, յերկրորդում մասին գրոյս ցուցցի ։

Յօդուած . Ե ։

Յաղագս հանգամանաց՝ բոլորակէտ չարչարանաց փրկչին մերոյ ։

Բանզի և ա՟ց հանգամանաց մասին բոլորական կրիւք եղև փրկչին մերոյ զանձն իւր հաճոյից ա՟ծութ՟ենն նուիրել, որ՟պ զայս փոքր 'ի շատէ յայտ առնեն ա՟ծաբանքն եկեղեցւոյ. զխորհեալն 'ի նոցունց ըղձալի է ինձ առաջի առնել ։ Նախ զայս յուշ առնեմք զառաջինն. զի ք՟սի փրկչին մերոյ 'ի դէպ եղև զա՟մ կիրս չարչարանաց սեռօրէն միայն՝ յանձին բերել, և ոչ տեսակօրէն. այն զի 'ի տեսակս չարչարանաց են բազումք, որք ա՟ց հակառակս միմեանց բերին. և այնպէս 'ի միում անձին անբերելի են. որպիսի են հրկէզ և ջրահեղձ լինելն, և այլ սոյնպիսիք ։ Իսկ զսեռօրէն բովանդակութի չարչարանաց նորին ունիմք 'ի միտ առնուլ ա՟ց երից ։

Առաջինն է ա՟ց առ 'ի մարդկանէ լինելոյն. քզի կրեաց 'ի հեթանոսաց, և 'ի հրէից. յորս 'ի յարանց և 'ի կանանց. զոր օրինակ յաղախնոյ անտի, որ առիթ եղև ուրացութեն պետրոսի 'ի վիշտս ք՟սի ։ Յիշխանաց, 'ի սպասաւորաց, և յամբոխից. 'ի յընտանեաց, յորոց լքեալ եղև, և 'ի ծանօթից, զի մատնեցաւ 'ի յուդայէ, և ուրացեալ եղև 'ի պետրոսէ ։

Երկրորդն է ա՟ց ամփոփման արտաքին բարեաց. քանզի թողաւ 'ի բարեկամաց. համբաւեցաւ մոլորեցուցիչ. փառասէր ազգի, և խռովիչ ։ Նախատեցաւ, հայհոյեցաւ, այպանեցաւ, և արհամարհեցաւ, մերկացուցաւ, և ծանակեցաւ ։

Երրորդն է ցաւ ներքին. յորս ա՟ց հոգւոյն՝ տրտմեցաւ, երկեաւ, և տաղտկացաւ 'ի դառնութեց լեղւոյն, և քացախին, այլ և տեղւոյն, որ է տեղի կառափելոյ ։ Իսկ ա՟ց մարմնոյն կրեաց ցաւս վիրաց, և գանից. զապտակս, և զկռուփս՝ որ՟պ յորժամ ձորձ զգլխովն արկեալ կռփէին, և ասէին. մարգարէացս մեզ ք՟սդ, ո՞վ է այն որ եհար զքեզ ։ Յորս ա՟ց անդամոցն ընկալաւ զապտակ 'ի փշոց 'ի գլուխն, զբևեռս 'ի ձեռսն, և յոտսն. միանգամայն և 'ի մարմինն ողջոյն խիստ գանս և հարուածս ։ Կրեաց և յա՟մ զգայարանս իւր ցաւս սաստիկս ։ Ի շօշափելիսն՝ զգանս, և զբևեռս, զփուշս, և զապտակս. և այն զի ծայրագոյն զգացողականն էին շօ-

շա-

չափելիք նորին . քանզի կուսածին էր մար մնին . և 'ի հոգւոյն ՚սբյ կազմեալ . ուստի ասի , թէ նման էր աչաց ։ 'Ի ճաշակելին զդառնութի լեղւոյ , և քացախի ։ 'Ի հո_ տոտելին զգարշութի դիականց մեռելոց . զի օւր խաչեցաւն՝ էր տեղի մահապարտաց կառափելոյ ։ 'Ի լսելին զձայնս հայհոյու_ թեց , վահից , և կատականաց թշնամեաց ։ 'Ի տեսանելին զողորմ տեսիլ գթալից մօրն , և աշակերտին զոր սիրէր ։ Արդ՝ ըստ գրելոցս ըստ այսոցիկ , և որոց ոչ գրեալ ե_ ղեն . 'ի միտ առցես , թէ չարչարանք փրրկ չին մերոյ՝ քան զորս կարասցէ մարդ ճա_ ռել , կսկծագինք եղեն ։ Առ որոյ ասէ ՚սբն հերոնիմոս . վկայեաց , թէ եկից զամ սեռ_ մարդկային չարչարանաց , յորժամ խոնար հեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին ։

Այլ յաղագս սաստկութե ցաւոցն գիտել պարտ է , զի կրկին է . մին է ներքին . տրտմութի անոճանեալ . որ լինի մարդոյ 'ի մտածութե վնասու անձին ։ Իսկ միւսն է արտաքին , որ պատճառի 'ի վնասու մարմ նոյն ։ Եւ երկոքին սոքա եղեն 'ի քս սաստ կագոյն , որչափ մարթ է յառաջիկայ կեն_ ցաղոյս կեանս լինել ։

Արտաքին ցաւոց սաստկութե առաւելու_ թիւն եղև , նախ՝ վն միանգամայն առ հասարակ յամ կողմանց ամ մասամբք լի_ նելոյն . ո՞չ վերագոյն կարգեալ յիշատա_ կօքդ յայտ լինի ։ Երկրորդ՝ ըստ սեռին , զի ցաւ բևեռելոյն 'ի խաչ , է յոյժ դառնակըս կիծ . վն զի 'ի ջլային մասունս սևեռին . յորս առաւել զգալի լինին ցաւքն , որպիսի են ձեռքն , և ոտքն . միանգամայն և ծան րութին մարմնոյ կախեցելոյն 'ի բևեռաց անձե ցուցանէ զցաւն անդադար . ընդ որում է և եր կարութի ցաւոյ , զի ոչ փութով մեռանի բևե ռեալն 'ի փայտի իբրև զապանեալն սրով ։

Իսկ պատճառ առաւելութե ներքին ցա_ ւոցն եղև , նախ՝ մեղքն ազգի մարդկն , զոր իբրև իւր համարեալ , ասէր առ հայր , թէ թողեր զիս վն բանից յանցանաց իմոց ։

սաղմ . խա ։ Երկրորդ՝ անկումն հրեից , և այլոց 'ի մահ իւր մեղուցելոց ։ Այլ և գայ թակղութիւն աշակերտաց , որք յայնմանի անցս իւր թողին զնա , և մեղքն յուդայի , և ուրացումն պետրոսի ։ Երրորդ՝ կորուստ մարմնաւոր կենացն մահուամբ խաչի , որ բնապէս առաւել սոսկալի է մարդոյ ։ Ուս տի երեմիա յողբս իւր 'ի դէմս ՚քի ասէ . ՙՁեզ ասեմ , ձեզ ասեմ ամենայն անցաւորք ճանապարհաց , դարձջարուք հայեցարուք և տեսէք , եթէ իցէն երբէք ցաւք ըստ ցաւոցս լեալ , որ 'ի վր իմ հասին ։ Ողբ . ա . 12 ։ Զայս ամ , և զվերագոյն յիշատա կեալսն ահաւանիկ յայտ առնէ ՚սբն թով_ մաս . 'ի խն . 46 . յր . 5 . և 6 . Երրորդ

մասին ՚ածաբանութե իւրոյ ։

Բայց յայս ամ գրելոց զի՞նչ օգտիցուք . եթէ 'ի դարձն այսպիսի և այսչափ դե_ րազանցեալ երախտեաց փրկչին մերոյ ոչ ինչ փոյթ արասցուք ։ Որ լինի արդեօք , ե_ թէ զայս ամ շնորհօք ՚նն մտադիւր սրտիւ խորհեալ զննեսցուք , թէ ո՞վ է որ կրեացն . ո՞րչափ խիստ է զոր կրեաց . և վն որո՞յ կր_ րեաց ։ Քանզի 'ի հնչելոյ ոգւոյ մտածու_ թեց այսոցիկ . ազդմամբ ՚սբ հոգւոյն , առ_ կայծեալ պատրոյկն հոգւոյ մերոյ՝ առ ան_ չափ սիրով սիրողն մեր յս ՚քս 'ի բոց սիրոյ ուժգին բորբոքին . և դոյաւորի յոգիս մեր տենչումն խաչակիր վարուք կերպարանա_ կից լինել նմա ։ Եւ ո՞չ զի այսմ հասցուք , ասէ առաքեալն . Հայեցարուք 'ի զօրագլուխն հա ւատոց , և 'ի կատարիչն յս , որ փոխանակ ուրախու թեանն , որ նմա առաջի կայր , յանձն էառ զխաչն , արհամարհեաց զամօթն , նստաւ ընդ աջմէ աթոռոյն այ . Ածէք զմտաւ , որ զայնպիսի համբերութիւն 'ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց . զի մի աշխատ լինիցիք անձամբք ձերովք , և լքանիցիք ։ Եբր . ժբ . 2 ։ Արդ մի զլասցուք զէթ զդոյզն մասն ժամու աւուրն յառանձին մտածութի չար չարանաց ՚տն ծախել , վն անմոռաց ունե_ լոյ զսէր նր ։ Ուստի ասէ սիրաք . Զշնորհս երաշխաւորին մի մոռանար . զի ետ փոխանակ քո զանձն իւր ։ Եկղ . իթ . 20 ։

ՃԱՌՆ ԵՐԿՐՈՐԴ·

Կանխապատրաստութիւն յաղագս բանից առաջիկայ ճառին։

Ի մասինս յայսմ յերկրորդում՝ յմծայլն գրոց մարգարէականաց գումարեալ վկայութիւնք՝ յառաջնումն կարգեալ խորհրդածութեանցն 'ի ցուցումն։ Իբր զի յայտ յանդիման տեսցի, թէ ո՛րպ զոր ինչ միանգամ՝ որ աւետարանիցէք, և առաքեալք զմն մերոյ յսի քսի ըզ փրկագործ զտնօրէնութեանցն աւետարանեն, են մեզ բանիւ, և գրով, այնմ ամի յառաջատես գուշակութիւն նախապատումք եղեն կանխաւ՝ հոգւոյն շնորհօք՝ նախահարքք հոգեկիրք, և մարգարէք բազումք։

Այլ թէ ո՞ր աղագաւ գուշակք եղեն այն չափ կանխաւ, և բազումք։ Զայն՝ որ առաւել յայտնագոյն է 'ի պատասխանիս, որ և մտածողին բազում շահս ունի բերել անձին, օրինակաւ իմն դիցուք առաջի։

Բարք մարդոյ է, զուղ իմն իրողութը վաղվաղակի եղեալն ո՛չ մեծ ինչ գրբել, որչափ և մեծ իցէ։ Մինն իրի յորժամ արքայ յայց ելանել քաղաքաց իւրոց համագերձի, ո՛չ վաղվաղակի ելանէ երթալ. այլ կանխաւ հրեշտակս առաջի երեսաց իւրոց առաքէ ազդ առնել, թէ համդերձեալ է գալ։ Եւ իւր բզմս ունի առաջի նախընթացս 'ի մեծամեծաց անտի իւրոց։ Եւ կարապետք յառաջընթաց եղեալ, քարոզ կարդան ընմանէ զգաստացուցանել զժողովուրդ տեղեացն արժանի համդերձանօք, և ընծայիւք ը առաջ ելանել նմա։

Ըստ այնմ օրինակի վայել էր մեծավայելչութե փրկչին մերոյ, և կարևոր էր թմրեալ մտաց մարդկան՝ բազում ժամանակաւ յառաջ, բազում օրինակօք, և պատգամաւ յառաջընթաց լինել մարգարէից գալստեանն նր, և նախաձայն քարոզութը հրահանգել զժողովուրդն 'ի հաւատ, և 'ի փափաքումն ընդունելոյ զնա։ Ուստի մեկնիչն 'ի վր բանիս այսորիկ. Իբրև եկն լրումն ժամանակին, առաքեաց ած զորդին իւր. գաղ. դ. 4. ասէ, որչափ մեծ էր դատաւորն որ գայր, այնչափ քարոզ կարդացողաց կարդն հեռագոյն յառաջընթաց լինել պարտ էր։ Ուստի վն այնր իրի տնտեսութբ հոգւոյն սբյ այնչափ բազում հոյլք մարգարէից նախակարգեալ կանխեցին զգալուստ փրկչին մերոյ աւետարանել աշխարհի։ Ի՛ր էր և այս պատճառ այնչափ ժամանակաց 'ի մէջ լինելոյ մեղաց մարդոյն, և գալստեան փրկչին, իբր զի 'ի միտ առցէ մարդ զչարութի մեղաց կորստեամբ բազմաց, և զկարօտութի իւր փրկչին, 'ի գերութէ ամ յանցանաց։

Իսկ արդ՝ քաջայայտ է, թէ ո՛չ վայրապար, կամ անպատուղ եղև կարգս այս, և ո՛չ իսկ վայրապար բանք մարգարէիցն յիշելեան ազգէ եղեն առ մեզ փոխադրեալ։ Այլ զմեծամեծ նպաստս մատուցանեն հոգւոց մերոց ստուգութը իւրեանց. և զարգացուցանեն զմեզ 'ի հաւատ, 'ի յոյս, և 'ի սէր տն մերոյ յսի քսի, եթէ մեք զնա ո՛չ հարևանցի ընթերցցուք. այլ 'ի խոկումն մարդեղութե, և փրկագործ տնօրէնութեց նր մարգեսցուք զմիտս՝ յանդիման առնել զնա արդէն եղելոյն՝ զորոց գուշակեն նոքա լինելոց։ Վն զի լուսաւոր բանիւք նոցին հոգլին ճշմարտութե շնչեալ 'ի միտս մեր՝ արծարծանէ զնշոյլ հաւատոյն, զոր տպաւորեալ է 'ի մեզ։ Որով առաւել պայծառանան, ընդարձակին, և զօրանան հաւատք մեր։ Եւ այնպէս զաներևոյթսն իբրև տեսեալ, անպատմելի ստուգութը իմն ստուգեմք յոգիս մեր, սքանչանամք, և մեծամեծս համարիմք զմծայլն վն մեր զմարդեղութին, զխաչելութին, և զյարութին, և զայլ փրկագործ տնօրէնութիս նորին, ասելով 'ի ներքս 'ի սրտի մերում. Թէ արդ ուրեմն ճշմարիտ ած է նա՝ որ ծնաւ 'ի կուսէն մարիամայ։ Եւ մեծ եղև 'ի վր մեր ողորմութի նորա, որ վն զմեզ 'ի յանխծից մեղաց նախահօրն մերոյ, և 'ի դատապարտուէ դժոխոց ներքնոց փրկելոյ համ-

բեր

բեր խաչի՝ և մահու, և յարուցեալ՝ ՚ի մեռելոց յերկինս համբարձաւ փառօք . զի և զմեզ ՚ի նոյն վերացէ ողորմութբ : Որովհետև ՚ի սկզբանէ արարածոց աշխարհի՝ մինչև յամենակեցոյց գալուստն նր՝ այնչափ բազմահոյլ կարգ մարգարէից ՚ի դարս դարս ՚ի ժամանակս ժամանակս՝ բազմապատիկ տեսլեամբ, և պէսպէս առակ օրինակօք՝ համաձայն բանիւ՝ միաշունչ միախորհուրդ՝ նախագուշակք եղեն գալստեան նր, և իւրաքանչիւր այլ փրկագործ տնօրէնութեց նորա, յորս եւս առաւել խաչի, և կենսաբեր մահուն նր : Աւասիկ այսչափ կանխաւ բազմապատիկ լինելն գուշակութեցն նոցին՝ զմեծութի փրկչին, և զգործոց նորին, զորոց նախապատրաստ լինելն, քաջ ստուգէ : Նան զի յաղագս գալստեան սոսկ ստեղծողածոյ միոյ, և ոչ փոքր և դոյզն գործոց լինելոյ՝ զիարդ մարթ է այսչափ կանխաւ՝ այսպիսի հրաշալի մեծամեծ պատրաստութես յոյ լինել : Զայս այսպէս՝ թևօք որ հոգւոյն զմտաւ ածեալ, զարթնուն սիրտք մեր ՚ի թմրութէ հեղգութե ՚ի զգաստութի, և ՚ի փոյթ դառնալոյ առ փրկիչն՝ յամ սրտէ : Իսկ ով զի քաջայոյս լիցի իւրաքանչիւրոք զայսպիսի արծարծանումն հաւատոյ ՚ի որ հոգւոյն ընդունելոյ, ՚ի միտ ածցէ զօրինակն, զոր զնահապետէն յակոբայ ընթեռնուլ : Զի գրեալ է յաղագս նր, թէ յորժամ որդիք իւր պատմեցին նմա, թէ որդին քո յովսէփ կենդանի է, և նա է իշխան երկրին եգիպտացւոց, զարմացաւ ՚ի միտս իւր, զի ոչ հաւատայր նց . Այլ իբրև ետես զսայլսն, զոր առաքեաց յովսէփ առնուլ զնա, և խօսեցան ընդ նմա զամ ինչ, զոր ասաց յովսէփ, արծարծեցաւ ոգի նր, և ասէ . մեծ է ինձ, թէ արդարև կենդանի իցէ որդին իմ յովսէփ, երթայց, և տեսից զնա մինչչև մեռեալ իցեմ : ծննդ . խե . 26 : Ըստ սմին օրինակի մտադիւր խորհրդածութբ զփրկչին մերմէ եղեալ մարգարէութեցն, լինի ՚ի մեզ արծարծանումն հաւատոյ, ընդ նմին և բորբոքումն սիրոյ ՚ի պարգևաց հոգւոյն որյ : Իսկ ահա առ այսպիսի օգտակար կրթութի ՚ի մատեանս յայս զմարգարէից բանսն հանդամակել, և մնս րհնութեց փրկչին մերոյ համեմատութբ յանդիման առնել ըղձալի եղև մեզ :

Բայց կարևոր է աստ յուշ առնել ինչ : Նախ՝ զայս, թէ ոչ որչափ մարգարէութիւք են զփրկչէն մերմէ, զայն ամ յառաջ բերել նկրտիմք . այլ հատընտիր բանս ինչ : Երկրորդ՝ թէ ոչ ձոխագոյն, այլ այնչափ ինչ մեկնաբանութբ, որչափ կարևոր է զնո յայտնի առնել, թէ նք ճշմարտիւ են նախագուշակութիք եղելոցն այնոցիկ՝ առ որս որոշեմք, թէ զնոցանէ են : Եւ զի և զբազումս որք չունելով ինչ խրթնաբանութի, մեկնիք են, առանց մեկնաբանութե թողումք :

Ով անմիտք և հեղգասիրտք առ ՚ի հաւատալ յամի վերայ որ խօսեցան մարգարէքն . ոչ զնոյն պարտ էր չարչարել քն, և մտանել ՚ի փառս իւր : ղուկ . իդ . 25 :

Գլուխ . Դ :

Արար ած զմարդն ըստ պատկերի իւրում . և ըստ նմանութեան :

Այս անստգիւտ ճշմարտութիս յուշ առնէ մեզ . նախ՝ թէ մարդն, քզի աննիւթական հոգւով գոյացեալ, է իմացական . այսուէիկ է ըստ պատկերի այ : Երկրորդ՝ թէ էաւորութբ՝ կերպիւ իմն եղև ընդ նմանութե արարչին ամի՝ էակ բոլոր, և տիրական : Բոլոր, զի էաւորութի նորա զամ աստիճանս էակի յինքեան փակէ, ըստ գոյի, կենդանւոյ, և իմացականի : Եւ յայտ է, թէ ամ աստիճանք էակին ՚ի գոլն իմացական գլխաւորեալք՝ յայլ աստիճան բարձրագոյն քան զիմացականն զանցանել ոչ ունին : Եւ տիրական . զի որ է իմացական, սեպհական է նմ լինել կամօքն անձնիշխան, և ընդ ինքեան կարողական, (տես ՚ի Գ . մասին գրոյս . գլ . Գ :) Այլ թէ հոգին մարդոյ է աննիւթեղէն, աւանիկ յայտ առնէ որ գիրն . (ծննդ . Բ . 7 .) զի ոչ այլ կենդանեաց ասաց ած, Հանեսցէ երկիր շունչ կենդանի . իսկ ՚ի ստեղծման մարդոյ փչեաց յերեսս մարդոյ շունչ կենդանի : Աւասիկ քաջայայտ է, թէ հոգին մարդոյ, ոչ է ՚ի նիւթոյ, ով այլ կենդանեաց :

Վկայութիւնք :

1 . Ասաց ած . արասցուք մարդ ըստ պատկերի մերում, և ըստ նմանութե, և իշխեսցէ ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և անասնոց, և ամ երկրի, և ամ սողնոց, որք սողին ՚ի վր երկրի : Եւ արար ած զմարդն ՚ի պատկեր իւր . ըստ պատկերի այ արար զնա : ծննդ . ա . 26 . և 27 :

2. Եւ ստեղծ տր այ զմարդն հող յերկ-
րէ, և փչեաց յերեսս նր շունչ կենդա-
նի, և եղև մարդն յոգի կենդանի:
Ծննդ. Բ. 9:

3. Որ հեղու զարիւն մարդոյ. փոխանակ
արեան նր հեղցի արիւն նր. զի 'ի պատ
կեր այ արարի ես զմարդն: Ծն. Թ. 6:

4. Ապաքէն ոչ 'ի պատկերի շրջի մարդ,
սակայն 'ի զուր խռովի, դանձէ, և ոչ
գիտէ ում ժողովէ: Սաղմ. ԼԸ. 9:

5. Ած հաստատեաց զմարդն յանեղծութի,
և 'ի պատկեր իւրոյ բարերարութեն ա-
րար զնա: Իմաստ. Բ. 23:

6. Ած ստեղծ յերկրէ զմարդն, և ըստ պատ
կերի իւրոյ արար զնա: Էկղ. ԺԷ. 1:

7. Այս է գիր արարածոց մարդկան. յա-
ւուր յորում արար այ զադամ, ըստ պատ
կերի այ ստեղծ զնա: Ծննդ. Ե. 1:

Գլուխ. Բ.

Քանզի մարդն ստեղծաւ ըստ պատկերի այ, և ըստ նորուն նմանութե. երանելի հանգիստ նր է հան-գիստն այ:

Զստուգութի մակադրութես 'ի միտ ածցես 'ի վկայութեց ածայլին գը-րոց, զոր աստ գումարեմք փոքր 'ի շատէ, անմեկին, զի մի երկարութբ մեկ-նաբանութեց նոցին՝ լիցի խորհրդածելեացն կարի իմն ամփոփել 'ի միմեանց:

Վկայութիւնք:

1. Եւ հանգեաւ այ յաւուրն եօթներոր-
դի յամ գործոց իւրոց՝ զոր արար:
Եւ օրհնեաց այ զօրն եօթներորդ. և
սրբեաց զնա. քանզի 'ի նմա հանգեաւ
յամ գործոց իւրոց. զոր սկսաւ առնել
այ: Ծննդ. Բ. 2:

2. Այսօր եթէ ձայնի նր լուիցէք, մի խըս
տացուցանէք զսիրտս ձեր ոչ 'ի դառնու
թե յաւուրն փորձութե յանապատի. ուր
փորձեցին զիս հարքն ձեր.... ոչ եր-
դուայ 'ի բարկութե իմում, թէ մտցեն
'ի հանգիստ իմ: Սաղմ. ՂԴ. 8:

3. Գիտեմ, զի փրկիչն իմ կենդանի է. և
'ի վերջին աւուրն յերկրէ յառնելոց եմ.
և դարձեալ շուրջ պատելոց է զիս մորթ
իմ. և 'ի մարմնի իմում տեսից զայ իմ.
զոր տեսանելոց եմ ես ինքն. և աչք իմ
հայելոց են 'ի նա, և ոչ այլ ոք. պահեալ
կայ այս յոյս իմ 'ի ծոց իմ: Յոբ. ԺԹ.

25: Աղյս կայ յայլ Թարգմանութե:

4. Ո՞ խնչ կայ իմ բնաւ յերկինս, կամ
'ի քէն զի՞նչ ես խնդրեցից յերկրի:
Նուաղեցաւ սիրտ իմ, և մարմին իմ,
այ սրտի իմոյ. բաժին իմ այ յաւի-
տեան: Սաղմ. ՀԲ. 25:

5. Աղաղակեցի առ քեզ տր և ասացի.
դու ես յոյս, և բաժին իմ յերկրին կեն
դանեաց: Սաղմ. ՃԽԱ. 6:

6. Հաւատացի տեսանել զբարութի տն
յերկրին կենդանեաց. համբերեա տն,
և քաջալերեաց. զօրասցի սիրտ քո,
և համբերեա տն: Սաղմ. ԻԶ. 13:

7. Ոչ զի բազում արարեր զողորմութի
քո այ. այլ որդիք մարդկան 'ի հո-
վանի թևոց քոց յուսասցին: Արբեա-
ցին նոքա 'ի պարարտութէ տան քոյ,
և զուղխս փափկութե քոյ տացես ըմ-
պել նց: Սաղմ. ԼԵ. 9: Ուրախ արա-
ցես զնա յուրախութե երեսաց քոց:
Սաղմ. Ի. 7:

8. Համբուրեսցէ զիս 'ի համբուրից բե-
րանոյ իւրոյ: Երգ. Ա. 1:

9. Տարաւ զիս արքայ 'ի սենեակ իւր.
ցնծասցուք, և ուրախ լիցուք 'ի քեզ:
Երգ. Ա. 3:

10. Որպէս ստաշխին եղբօրորդին իմ ինձ.
'ի մէջ ստեանց իմոց հանգիցէ: Երգ.
Ա. 12:

11. Եղբօրորդին իմ ինձ, և ես նմա:
Երգ. Բ. 16:

12. Ես եղբօրորդւոյ իմոյ. և առ իս դարձ
նր: Երգ. Է. 10:

13. Եւ ոչ ևս եղիցի քեզ արեգակն 'ի լոյս
տունջեան, և ոչ ծագումն լուսնի
տացէ քեզ զլոյս 'ի գիշերի, այլ եղի-
ցի քեզ տր լոյս յաւիտենական, և
փառք քո այ: Եսայ. Կ. 19:

14. Որ գնայ արդարութբ.... նա բնա-
կեսցի 'ի բարձրային այրին հաստատա-
նոյ. հաց տացի նմա, և ջուր նր հա-
ւատարիմ. զթագաւորն փառաց տես
ցեն աչք նր: Եսայ. ԼԳ. 15:

Սքանչելի են բանքս, և առաւել պատմե-լոյ՝ մեծութի մարդասիրութեն այ: Ոչապայի կարգի անգամ լինել չեմք արժանի. և նա յան չափս բարձրութի յածանմանութի զմեզ վեր-առնուլ հանդերձի: Եւ դու տես ինձ յայսմ զատակայլին. զի մեք յայսմ այժմի յերկիր բնե-ռեալ կամք, և զեւս դնել 'ի մտի՝ այնմ հասա նելոյ ոչ փոյթ առնեմք: Որ աղագաւ այս

այսպէս մձարի : Յայտնի է պատճառն : Քանզի 'ի հաւատոց աներևութից այ նուաղեալ խաստացեալ է սիրտ մեր : Եւ այս ուստի · յայտ է , թէ զի հազիւ երբեմն զմտաւ ածեմք զաւետիսն հնդստեան , զոր մեզ պատրաստեալ է հայրն փառաց ած · և զայն ևս հարևանցի , և վեր 'ի վերոյ առանց սերտ հաւատոց ներգործութե :

Գլուխ · Գ :

Կենդանոյս բարիքն ոչ են սահմանեալ յայ 'ի հանգիստ՝ և յերանութիւն մարդոյ :

Քանզի կենդանոյս բարիքն զշօշորդ լինել հաղորդութե ածեղէն բարւոյն բարձեալ բերեն , վս որոյ կերպարանեին նմին · և մեք տղայամիտ բարս զգեցեալ՝ առ սոսկ կերպարանօքն , ամ առ խոկականս յարիմք · մանաւանդ՝ զի որ խոկն է , ոչ է երևելի , այլ է աներևոյթ · և ոչ է առաջիկայ , այլ խոստմամբ հանդերձեալ · իսկ որ սոսկ կերպարանօքն է , երևելի է , և առաջիկայ : Այսր աղագաւ և յաղագս կենդանոյս բարեաց գումարեսք զվկայութիս առ ստուգութի , թէ նք ոչ են սահմանեալ յայ 'ի հանգիստ և յերանութի մարդոյ , այլ ածեղէն բարին :

Վկայութիւնք :

1 · Ունայնութի ունայնութեց ասաց Ժողովողն , ունայնութի ունայնութեց ամ ինչ ընդունայն է : Օ ինչ աւելի է մարդոյ յամ 'ի վաստակս իւր · զոր տաժանի 'ի ներքոյ արեգական · · · · · : Ոչ յագեսցի ակն տեսանելով · և ոչ լցցի ունկն լսելով · · · · Ես Ժողովող եղէ թագաւոր 'ի վր Իէլի յերուսաղէմ · և ետու զսիրտ իմ 'ի խնդրել , և 'ի քննել իմաստութբ վս ամենեցուն եղելոց 'ի ներքոյ արեգական · · · : Տեսի միանգամայն զամ արարածս զարարեալս 'ի ներքոյ երկնից · և ահա ամ ինչ ընունայնութի է , և յօժարութի հոգւոյ · · · Խօսեցայ 'ի սրտի իմում ասել , թէ ահա մեծացայ քան զամենեսեան , որք էին յառաջ քան զիս յեհմ · և սիրտ իմ ետես զբազում իմաստութի , և զգիտութի , զառակս և զհանճարս ծանեայ · սակայն և այս յօժարութի է ոգւոյ : Ժող · Ա :

2 · Ասացի 'ի սրտի իմում , Եկ և փորձեցից զքեզ յուրախութե , և տեսից 'ի բարութե · ահա և այս ընդունայնութի է · · · · · Յաճախեցի ինձ արարս · շինեցի ինձ ապարանս · տնկեցի ինձ այգիս · արարի ինձ պարտէզս , և դրախտս · և տնկեցի 'ի նոսա փայտս ամենապտուղս · · · · · · : Ստացայ ծառայս , և աղախնայս , և ընդոծինք եղեն ինձ · և ստացուածք անդէոց , և հօտից բազումք եղեն ինձ քան զամենեցուն եղելոց յառաջագոյն քան զիս յեհմ : Ժողովեցի ինձ զարծաթ , և զոսկի , և ստացուածս բազումս քան զթագաւորաց : Արարի ինձ գուսանս և երգեցիկս արս և կանայս · և զփափկութիս որդւոց մարդկան · · · · : Եւ մեծացայ առաւել քան զամենեսեան եղեալս յառաջ քան զիս յեհմ · և իմաստութի յաւելաւ ինձ : Եւ զամ ինչ զոր և խնդրեցին աչք իմ , ոչ զրկեցայ 'ի նոցանէ · և ոչ արգելի զսիրտ իմ յամ ուրախութե · · · : Եւ հայեցայ յամ արարս իմ , զոր արարին ձեռք իմ , և 'ի վաստակս՝ զոր ջանացայ առնել · և ահա ամ ունայն է , և յօժարութի ոգւոյ · և ոչինչ է առաւելութի 'ի ներքոյ արեգական · · · : Եւ դարձայ հրաժարել սրտիւ իմով յամ վաստակոց իմոց զոր վաստակեցի ընդ արեգակամբս : Ժող · Բ :

Ահա ունիս , որ զայս ամ միտդ իւր ընթեռնուս , 'ի խորս սրտի քո միտ խոհ լինիլ , և ստուգել , թէ ոչինչ 'ի բարեաց աստի կենդանոյս սահմանեալ եղև յայ 'ի հանգիստ սրտի մարդոյ , և յերանութի · քանզի անհամեմատք են ընդ սրտի մարդոյ , որ ստեղծաւ առ պատկեր , և առ նմանութի այ , և 'ի վայելումն անեղծ անվախճան կենաց · վս յետ վճարելոյ բանիցս այսոցիկ , ասէ · Վախճան բանիս զամ ինչ լուր · Յայ երկիր , և զպատուիրանս նր պահեա · զի այս է ամ մարդ · Ժող · ԺԲ · 13 : Ուստի դաւիթ այրն ըստ սրտին այ ստուգեալ , թէ ոչինչ 'ի ստեղծեալ բարեաց գտանի համեմատ սրտի մարդոյ , լինել նմա յերանելի հանգիստ , աղաղակէր առ տր , և ասէր · Յիշեա տր , ո՞վ է իմ հանգիստ · միթէ 'ի նանիր ինչ ստեղծեր զամ որդիս մարդկան : Սաղմ · ՁԸ · 40 : Եւ ևս ասէր · Զի՞նչ կայ իմ յերկինս · և ընդ քեզ զի՞նչ կամեցայ յերկրի : Նուաղեցաւ սիրտ իմ , և մարմին իմ · ած սրտի իմոյ · բաժին իմ ած յաւիտեան : Սաղմ · ՀԲ · 25 : Հաւատամ տեսանել զբարութի տն յերկրին կենդանեաց · համբերեա տն , և

քաջա_

ժառանգեցից․ զօրաւորն սիրտ քո, և հանճար իմ։
սաղմ․ ԽԴ․ 13։

Զայս ամ վկայութիւս 'ի հին կտակարանաց անտի գումարեցի, յայս խորհուրդ․ իբր զի տեսցի, թէ որ ած 'ի սկզբանէ իսկ մարգարէիւք փոյթ արար յայտ առնել մեզ զայս իւր խորհուրդ․ և 'ի սոյն զմիտս մեր մարզել, և զփափագումն սրտի մերոյ յինքն ձգել։

Գլուխ․ Դ․

Ստեղծանելոյ ած մարդոյ ոչ վաղվաղակի զնա 'ի հանգիստ իւր մուծանել․ այլ յառաջագոյն զգործս ինչ գործել զնորին, և ապա 'ի նոյն հանգիստն վերստին կոչել։

Զբանն խրատանց, թէ էր ազատաւ գերբնական երանութիւն 'ի ըսկզբան ստեղծմանութե մարդոյ ոչ եղև նմա պարգևեալ, յերրորդ գլուխն առաջին մասին յառաջ բերաք․ ուստի յայսմ վայրի զսահմանութիւն յարմար կարգի յոյ, ածային գրոց վկայութեամբ յայտ առնեմք։

Վկայութիւնք։

1․ Եւ կատարեաց ած յաւուրն վեցերորդի զգործս իւր, զոր արար․ և հանգեաւ յաւուրն եօթներորդի։ ծննդ․ Բ․ 2։
2․ Եւ էառ տր ած զմարդն, զոր արար․ և եդ զնա 'ի դրախտին փափկութե գործել զնա, և պահել։ ծննդ․ Բ․ 15։
3․ Բաժին իմ ես դու տր․ ասացի պահել զօրէնս քո։ սաղմ․ ՃԺԸ․ 57։
4․ Ես արդարութե երևեցայց երեսաց քոց․ և յագեցայց յերևել փառաց քոց։ սաղմ․ ԺԶ․ 15։
5․ Տր ով կացցէ 'ի խորանի քում․ կամ ով բնակեսցի 'ի լերան սբ քո։ Որ գնայ անբիծ․ գործէ զարդարութի․ խօսի զճշմարտութի 'ի սրտի իւրում․ սաղմ․ ԺԴ․ 1։
6․ Երանեալ է այր, որոյ օգնութի իւր 'ի քէն է․ ելս եդ 'ի միտ իւրում, 'ի տեղւոջ յորում ուխտեաց․ ՁԳ․ 6։
7․ Օրհնութիւն տացէ, որ զօրէնս դնէ․ գնասցէ նա 'ի զօրուէ 'ի զօրութի․ և երևեսցի ած հրեշտակացն 'ի սիոն․ ՁԳ․ 7։
8․ Եւ հաճոյ եղև Ենովք այ․ և ոչ ուրեք գտանիւր․ զի փոխեաց զնա ած․ ծննդ․ Ե․ 24։
9․ Եղիա վասն նախանձայոյզ լինելոյ՝ խնդրեաց զվրէժ օրինաց․ և վերացաւ յերկինս․ Ա․ մակ․ Բ․ 58։
10․ Եւ ահա կառք հրեղէնք, և երիվարք հրեղէնք․ և վերացաւ Եղիա շարժմամբ յերկինս։ Դ․ թագ․ Բ․ 11։
11․ Զհետ քո 'ի հոտ իւղոց քոց ընթասցուք։ Տարաւ զիս արքայ 'ի սենեակ իւր․ ցնծասցուք, և ուրախ լիցուք 'ի քեզ։ երգ․ Ա․ 3։
12․ Ցանկացայ է ազգին է այնմիկ․ և ասացի միշտ մոլորեալ են սրտիւք․ և նք ոչ ծանեան զճանապարհս իմ․ որպէս երդուայ 'ի բարկութե իմում, թէ մտցեն 'ի հանգիստ իմ։ սաղմ․ ՂԴ․ 10։

Գլուխ․ Ե․

Ի՞ր աղագաւ պատուիրան եդ ած մարդոյն։
Եւ զի՞արդ եղև նմա օրինադրանել նմին։

Ո՛չ յիւր ինչ պէտս եդ պատուիրան, որ յամի աննխաղ անկարօտն է շքոյ, և զինչ և իցէ իրի յայլմէ ընդունելոյ․ այլ զի մարդն պահպանութե նորին, և շնորհօք նք հոգւոյն յուղղութե առ ած հաստատեալ, և 'ի սէր նր փորձիւ հաւատարիմ գտեալ, երանելի կենացն այ կցորդութե արժանասցի։ Բայց նա ստուգանող այսմ գտեալ, յուղղութէ անտի խոտորեցաւ․ և այնպէս է թագաւորութե անխծից, և մահու անկաւ։

Յաղագս պատուիրանին վկայութիւնք։

1․ Ած 'ի սկզբանէ հաստատեաց զմարդն․ և եթող զնա 'ի ձեռս խորհրդոց իւրոց։ եկղ․ ԺԵ․ 14։
2․ Յաւել զպատուիրանս և զհրամանս իւր։ ԺԵ․ 15։
3․ Եթէ կամիցիս զպատուիրանսն պահել, պահեսցեն զքեզ։ ԺԵ․ 16։
4․ Եդ առաջի քո ջուր, և հուր․ յոր և կամիցիս, մխեա զձեռն քո։ ԺԵ․ 17։
5․ Առաջի մարդոյ կեանք, և մահ․ բարի, և չար․ է որ հաճեսցի, տացի նմա։ ԺԵ․ 18։
6․ Ոչ էր եղեն նմա պարծանք յաւիտենական, որ կարաց յանցանել, և ոչ յանցեաւ․ առնել չարիս, և ոչ արար։ եկղ․ ԼԱ․ 10։
7․ Եւ պատուիրեաց տր ած ադամայ, և ասէ․ յամ ծառոց՝ որք են 'ի դրախտի, ուտելով կերիցես․ բայց 'ի ծա-

ռոյն զխրատն բարւոյ և չարի մի ուտիցէք. զի յորում աւուր ուտիցէք 'ի նմանէ, մահու մեռանիցիք ։ Ծննդ. Բ. 15 ։

Յաղագս յանցանելոյ մարդոյն պատմութիւն ։

Իսկ օձն էր խորամանկագոյն քան զամենայն գազանս ։ Եւ ասէ օձն ցկինն, զի՞ է զի ասաց Աստուած, թէ յամենայն ծառոց, որք իցեն 'ի ներքս 'ի դրախտի այդր, մի ուտիցէք ։ Եւ ասէ կինն ցօձն. 'ի պտղոյ ծառոց դրախտիդ կերիցուք. բայց 'ի պտղոյ ծառոյն որ է 'ի մէջ դրախտին, ասաց Աստուած մի ուտիցէք 'ի նմանէ, և մի հուպ լինիցիք, զի մի մեռանիցիք ։ Եւ ասէ օձն ցկինն, ո՛չ եթէ մահու մեռանիցիք. զի գիտէր Աստուած, թէ յորում աւուր ուտիցէք 'ի նմանէ, բանայցին աչք ձեր. և լինիցիք իբրև զԱստուած ճանաչել զբարի և զչար ։ Եւ ետես կինն, զի բարի էր ծառն 'ի կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ, և գեղեցիկ 'ի տեսանել. և էառ 'ի պտղոյ նորա, և եկեր. և ետ առն իւրում ընդ իւր, և կերին ։ Եւ բացան աչք երկոցունցն. և գիտացին զի մերկք էին ։ Եւ կոչեաց Տէր Աստուած զԱդամ, և ասէ. ո՞ւր ես ։ Եւ ասէ. լուայ զձայն քո 'ի դրախտի աստ, և երկեայ, քանզի մերկ էի, և թաքեայ ։ Եւ ասէ ցնա. ո՞ պատմեաց քեզ՝ թէ մերկ ես. բայց թէ 'ի ծառոյն, յորմէ պատուիրեցի քեզ անտի և եթ չուտել, կերե՞ր արդեօք 'ի նմանէ ։ Եւ ասէ Ադամ, կինն զոր ետուր ը̅դ իս, նա ետ ինձ 'ի ծառոյ անտի և կերի ։ Եւ ասէ Տէր Աստուած ցկինն. զի՞նչ գործեցեր զայդ ։ Եւ ասէ կինն, օձն խաբեաց զիս, և կերի ։ Եւ ասէ Տէր Աստուած ցօձն. փոխանակ զի արարեր դու զայդ, անիծեալ լիջիր դու յամենայն անասնոց ։ Եւ ցկինն ասէ. տրտմութբ ծնցիս որդիս ։ Եւ ցԱդամ ասէ. անիծեալ լիցի երկիր 'ի գործս քո. քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո. մինչև դարձցիս յերկիր՝ ուստի առար ։ Եւ եհան արտաքս զնա Տր Աստուած 'ի դրախտէ անտի փափկութեան գործել զերկիր, ուստի առաւ ։ Եւ հրամայեաց քերովբէից, և բոցեղէն սրոյ շուրջանակայ պահել զճանապարհ ծառոյն կենաց ։ Ծն. Գ ։

Գլուխ. Զ.

Յաղագս մեղաց առաջնոյն մարդոյ յոր ծնունդքս չգելոյ. և ազգին մարդկան՝ փրկչի կարօտանալոյ ։

Մեղք առաջին ծնողացն յամ ընդհանական ծննդեամբ սերունդս նոցա եհաս. և վնաս ամենեքեան ը թագաւորութե մեղաց, և անիծից մահու անկաք ։ Եւ առ բարձումն սոյ փրկչի կարօտացաք, քաւելոյ զմեղս, օրհնելոյ զմեզ, և 'ի շնորհս սոյ փոխելոյ ։

Յաղագս չգման սկզբնական մեղաց վկայութիւնք.

1. Նախանձու բանսարկուին եմուտ մահ
յա̅ ։ իմաստ. Բ. 24 ։
2. Անօրէնութբ յղացայ, և 'ի մեղս
ծնաւ զիս մայր իմ ։ սաղմ. Ծ. 7 ։
3. Իսկ սրտ՝ ո՞վ իցէ սբ յաղտոյ. այլ և
ոչ որ, թէպէտ և միոյ աւուր իցեն
կեանք նր 'ի վր երկրի ։ յոբ. ԺԴ. 4 ։
4. Ո՞վ ոք իցէ մարդ, որ եղև անարատ.
կամ ո՞ ոք կանանցածին լինելոց իցէ ար-
դար ։ յոբ. ԺԵ. 14 ։
5. Եւ ընկեցեր զնեխր ը երեսս դաշտին.
վս խոտորնակ մտաց քոց՝ յաւուրն յո-
րում ծնար ։ եզեկ. ԺԶ. 5 ։

Կարօտութե մերոյ փրկչի վկայութիւնք ։

6. Ո՞չ ես իբրև զիս մարդ, ը որում դա-
տեցայց. եթէ հասարակ եկեսցուք 'ի
դատաստան. իսկ յանկարծ գոյր միջ-
նորդ, և յանդիմանէր, և լսէր 'ի մէջ
երկոցունց ։ յոբ. Թ. 32 ։
7. Ամենեքեան իբրև ոչխարք մոլորեալք.
այր 'ի ճանապարհի իւրում մոլորեցաւ.
և Տր մատնեաց զնա առ մեղս մեր ։
եսայ. ԾԳ. 6 ։
8. Նա զմեղս մեր բառնայ, և վս մեր
չարչարի ։ եսայ. ԾԳ. 4 ։
9. Ո՞ տացէ 'ի սիոնէ զփրկութի իւր 'ի
դարձուցանել Տն զգերութի ժողովր-
դեան իւրոյ. ցնծասցէ յակոբ, և ու-
րախ եղիցի իէլ ։ սղմ. ԺԳ. 7 ։
10. Ցո՛յց մեզ Տր զողորմութի քո. և զփր-
կութի քո տուր մեզ ։ սաղմ. ՁԴ. 8 ։
11. Զարթո՛ զզօրութիս քո. և եկ 'ի կե-
ցուցանել զմեզ ։ սաղմ. ՀԹ. 3 ։
12. Ո՞վ տացէ քեզ եղբօրորդի իմ դիեել զքո
ստինս մօր իմոյ. գտեց զքեզ արտա-
քոյ համբուրեցից ։ երգ. Ը. 1 ։

13.

13 . Որ ինչ յերկինս է , ո՞վ քննեսցէ , և զխորհուրդս քո ո՞վ գիտաց , եթէ ոչ դու ետուր զիմաստութիւն . և առաքեցեր զհոգի քո սուրբ 'ի բարձանց , և այսպէս ուղղեցան շաւիղք երկրաւորաց , և զհաճոյս քո ուսան մարդիկ , և իմաստութեամբ փրկեցան : Իմաստ . Թ . 16 :

14 . Նա զնախաստեղծ զհայրն աշխարհի զմիայն հաստատեալ պահեաց , և փրկեաց զնա 'ի յանցանաց իւրոց : Իմաստ Ժ . 1 :

15 . Նա օրհնեսցին 'ի զաւակի քում ամ ազգք երկրի : Ծն . ԻԲ . 18 :

16 . Նա է ակնկալութիւն հեթանոսաց : Ծն . ԽԹ . 10 :

Գլուխ . Է .

Յաղագս 'ի սկզբանէ յայտ առնելոյ մեզ Աստուծոյ իւր՝ ծնանելոյ մեզ փրկիչ :

Ած , որ յառաջ քան զյաւիտեանս կամեցեալ էր տալ մեզ փրկիչ , բազում բանիւ , բազում իրօք , և գործով յայտ արար զայն 'ի սկզբանէ : Նախ . զի յետ մեղաց առաջին ծնողացն ոչ վաղվաղակի եհան զնոսա 'ի կենաց . այլ ետ 'ի վերայ նոցա զապաշխարութիւն , որոյ մախաձայնն է քաւութիւն մեղաց : Երկրորդ . զի ոչ արգել զնոսա 'ի ծննդոց . իսկ արդ՝ եթէ չէր կամեցեալ մեզ տալ քաւիչ մեղաց , սերունդ նոցա այնուհետև առանց միջնորդի փրկութեան , հնորհաց , և արդարութեան թողեալ , ոչ առ լրութիւն արքայութեան երկնից , այլ առ լրութիւն դժոխոց կարգեալ լինէր : Երրորդ . զի զբանսարկուն , որ 'ի յօձն էր , պատուհասեաց սպառնալեօք . յայտ արարեալ թէ զնելոց է զգլուխ նորա ոտիւք կնոջն յարուցանելով 'ի զաւակէ նորա եղծիչ իշխանութեան , զոր կալաւ նա 'ի վերայ ազգի մարդկան : Չորրորդ . զի զպատարագն հաբելի ընկալաւ . և եհան յիւր ծառայս զսէթ , և զենովս . և զենովքայն մահութիւն փոխեաց : Այլև զնոյ խաչանիշ տապանաւ ամ տանմին 'ի ջրհեղեղէն ապրեցոյց . զպատարագ նորա ընկալաւ . և եդ ուխտ այլ ոչ ևս ածել աշխարհի զհեղեղ ջրոյ . և ասաց . աճեցէք և բազմացարուք . զոր ոչ էր 'ի դէպ առնել մեզ վասն ունայն կենաց կենցաղոյս :

Սկայութիւնք .

Աստուածային օրէնն նշանակէր մեզ ծնունդ փրկչին :

1 . Նա ասէ ած յօձն . փոխանակ զի արարեր դու զայն , անիծեալ լիջիր դու յամ անասնոց , և յամ գազանաց երկրի . 'ի վերայ լանջաց և որովայնի քոյ գնասցես , և հող կերիցես զամ աւուրս կենաց քոց :

2 . Նա եդից զթշնամութիւն 'ի մէջ քոյ , և 'ի մէջ կնոջդ և 'ի մէջ զաւակի դորա . Նա սպասեսցէ քում գլխոյ , և դու ըսպասեսցես նորա գարշապարի : Ծն . Գ . 14 :

Աստուածապատուիրանօքն իւր զոր ետ մեղուցելոցն , ընդոյն յայտ արար :

3 . Նա կնոջն ասէ . բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս քո , և զհեծութիւնս . տրտմութեամբ ծնցիս որդիս . և առ այր քո դարձ քո . և նա տիրեսցէ քեզ : Ծն . Գ . 16 :

4 . Նա զադամ ասէ . փոխանակ զի լուար ձայնի կնոջդ քո . և կերեր 'ի ծառոյ անտի , յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել , և կերեր 'ի նմանէ , անիծեալ լիցի երկիր 'ի գործս քո . տրտմութեամբ կերիցես զնա զամ աւուրս կենաց քոց : Փուշ և տատասկ բուսուսցէ քեզ . և կերիցես զբանջար վայրի : Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո . մինչև դարձցիս յերկիր , ուստի առար . զի հող էիր , և 'ի հող դարձցիս : Ծն . Գ . 17 :

5 . Նա արար ած ադամայ և կնոջ նորա հանդերձս մաշկեղէնս . և զգեցոյց զնոսա :

Պատարագաւ հաբելի , և սեթիւ և ենովսիւ և ենովքաւ , և նոյիւ յետ ծանուցեալ ընդունելով :

6 . (Նա եղև յետ աւուրց) եած հաբէլ յանդրանկաց խաշանց իւրոց 'ի պարարտաց նոցա պատարագ ամ . և հայեցաւ ած 'ի հաբէլ , և 'ի պատարագս նորա : Ծն . Դ . 4 :

7 . Նա եկեաց ադամ ամս հարիւր և երեսուն . և ծնաւ ըստ կերպարանաց իւրոց . և անուանեաց զանուն նորա սէթ : Ծն . Ե . 33 :

8 . Նա սէթայ եղև որդի , և անուանեաց զանուն նորա ենովս : Նա յուսացաւ կոչել զանուն տն ամ : Ծն . Դ . 26 :

9 . Նա

9 ։ Եւ եկեաց յարեդ ամս հարիւր վաթսուն և երկուս . և ծնաւ զԵնովք ։ ծն . ե . 18 ։

10 . Եւ հաճոյ եղև Ենովք այ . և ոչ ուրեք գտանիւր . զի փոխեաց զնա ած ։ ծնդ . ե . 22 ։

11 . Եւ եկեաց Ղամէք ամս հարիւր ութսուն և ութ . և ծնաւ որդի , և անուանեաց զանուն նր Նոյ . ասէ . սա հանգուսցէ զմեզ 'ի գործոց մերոց , և 'ի տրտմութենէ ձեռաց մերոց , և յերկրէ՝ զոր անէծ տր ած ։ ծն . ե ։ 28 ։

12 ։ Նոյ այր արդար կատարեալ էր յազգի անդ իւրում . և հաճոյ եղև Նոյ այ ։ ծն . զ . 9 ։

Նոյ խոստանիչ տապանաւ ամ թանձեն ապրեցուցանելով ։

13 . Եւ ասէ տր ած ցՆոյ . ժամանակ ամ մարդոյ հասեալ է առաջի իմ , զի լցաւ երկիր անիրաւութեամբ . և ահա ես ապականեցից զնս , և զերկիր ։ Արդ՝ արա դու քեզ տապան 'ի չորեքկուսի փայտից ։ Եւ արար Նոյ զամ , զոր միանգամ պատուիրեաց նմա տր ած ։ ծն . զ . 13 ։

14 . Եւ ասէ ած ցՆոյ . մուտ դու , և ամ տունք քո 'ի տապանդ . զի զքեզ տեսի արդար առաջի իմ յազգիդ յայդմիկ ։ Եւ եմուտ Նոյ , և ամ տուն նորա 'ի տապանն ։

15 . Եւ փակեաց տր ած արտաքոյ նր ըզտապանն , և եղև ջրհեղեղ զքառասուն տիւ , և զքառասուն գիշեր , և մեռաւ ամ մարմին շարժուն 'ի վր երկրի , և ամ մարդ . և մնաց միայն Նոյ և որք ը նմ էին 'ի տապանի անդ ։ ծն . է ։

16 . Եւ ել Նոյ , և ամ տուն նորա 'ի տապանէ անտի ։ Եւ շինեաց Նոյ սեղան այ , և եհան ողջակէզ 'ի վր սեղանոյ ։ ծն . ը . 19 ։

17 . Եւ հոտոտեցաւ տր ած 'ի հոտ անուշից . Եւ օրհնեաց ած զՆոյ և զորդիս նր , և ասէ ցնս . աճեցէք , և բազմացարուք , և լցէք զերկիր . ծն . թ . 7 ։

18 . Եւ հաստատեցից զուխտ իմ ը ձեզ . և ոչ ևս մեռցի ամ մարմին 'ի ջրհեղեղէ ։ ծն . թ . 11 ։

Գլուխ . Ը ։

Յաղագս խոստմանն առ նախահարսն եղելոյ ։

Խոստումն արար ած աբրահամու , իսահակայ , և յակոբայ , և դաւթի՝ 'ի զաւակէ նր յարուցանել մեզ փրկիչ , որով օրհնեսցին , և օրհնին ամ ազգք ։

Վկայութիւնք ։

Խոստումն առ աբրահամ ։

1 . Եւ ասէ ած ցաբրամ . ել դու յերկրէ քումմէ , և յազգէ քումմէ , և էկ յերկիր , զոր ցուցից քեզ ։ Եւ արարից զքեզ յազգ մեծ . և օրհնեցից զքեզ , և մեծացուցից զանուն քո . և եղիցիս օրհնեալ ։ Եւ օրհնեցից զօրհնիչս քո , և զանիծիչս քո անիծից ։ Եւ օրհնեսցին 'ի քեզ ամ ազգք երկրի ։ Եւ գնաց աբրամ որպէս խօսեցաւ ը նմ ած .... և եկն յերկիրն քանանու ։ ծն . ժբ . 1 .

2 . Եւ եղև բան տն առ աբրամ 'ի տեսլեան , և ասէ . Մի երկնչիր աբրամ . ես վերակացու եղէց քեզ . և վարձք քո բազում եղիցին յոյժ ։ Եւ ասէ աբրամ . տր տր . զինչ տացես ինձ . զի ես կորնչիմ անորդի . և որդի մասեկայ ը ծնի իմոյ , այն է եղիազար դամասկացի . Եւ ասէ աբրամ . որովհետև ինձ ոչ ետուր զաւակ , ընդոծինն իմ ժառանգեսցէ զիս ։ Եւ վաղվաղակի ձայն այ եղև առ նա , և ասէ . ոչ ժառանգեսցէ ըզքեզ դա . այլ որ ելանէ 'ի քէն , նա ժառանգեսցէ զքեզ ։ Եւ եհան զնա արտաքս , և ասէ ցնա . հայեաց ը երկինս , և թուեա զաստեղս , եթէ կարասցես թուել զնս . և ասէ ցնա . այնպէս եղիցի զաւակ քո ։ Եւ հաւատաց աբրամ այ . և համարեցաւ նմա յարդարութի ։ ծն . ժե ։ 1 ։

Եւ եղև աբրամ ամաց իննսուն և իննուց . և երևեցաւ տր ած աբրամու , և ասէ ցնա . ես եմ տր ած քո . հաճոյ լեր առաջի իմ . Եւ իմ ահաւասիկ ուխտ ը քեզ . և եղիցիս հայր բազմութե ազգաց ։ Եւ ոչ կոչեսցի անուն քո այսուհետև աբրամ . այլ եղիցի անուն քո աբրահամ . զի հայր ազգաց բազմաց եդի զքեզ ։ Եւ սարայի կնոջ քո ոչ կոչեսցի անուն

նուն նր սարա , այլ սարրա եղիցի անուն
նր , և օրհնեցից զնա . և տաց քեզ՚ի նր
մանէ որդի , և օրհնեցից զնա : Ընկաւ
աբրահամ՚ի վր երեսաց իւրոց . և ծիծա
ղեցաւ , և խօսեցաւ ՚ի սրտի իւրում և
ասէ . եթէ հարիւրամենի որդի լինիցի
և սարրա իննսնամեայ ծնանիցի : Եւ
ասէ աբրահամ ցած . իսմայելս այս կեց
ցէ առջի քո : Եւ ասէ ած ցաբրահամ .
այո՛ ահա սարրա կին քո ծնցի քեզ որդի .
և կոչեսցես զանուն նր իսահակ . (Նարգ-
մանի՝ ծաղր) և հաստատեցից զուխտ իմ
ը նմայուխտ յաւիտենական , և ը զաւա
կին նր յետ նր : Եւ վս իսմայելի ահա լուայ
քեզ . և օրհնեցի զնա , և աճեցուցից զնա
և բազմացուցից զնա յոյժ , և երկոտասն
ազգ ծնցի , և տաց զնա յազգ մեծ : Բայց
զուխտ իմ հաստատեցից ը իսահակայ՝ զոր
ծնցի քեզ սարրա ՚ի ժամանակի յայսմիկ ,
և՚ի միւսում տարւոջ : ծննդ . ժէ . 1 :
3 . Եւ իբր յայցել սարրայի ոչ և խօսեցաւ ,
և յղացաւ . և ծնաւ սարրա աբրահամու
որդի ծերուէ ը ժամանակին՝ ոչ և խօ-
սեցաւ ը նմա ած . Եւ կոչեաց աբրա-
համ զանուն որդւոյ իւրոյ՝ զոր ծնաւ նմ
մա սարրա , իսահակ : Եւ աբրահամ
հարիւրամեան էր , յորժամ եղև նմա
իսահակ որդի իւր : ծննդ . իա . 5 :
4 . Եղև յետ ամաց ինչ . տեսեալ սառա-
յի զորդին ագարայ եգիպտացւոյ՝ որ
եղև աբրահամու , զի խաղայր ը իսահա
կայ որդւոյ իւրում , և ասէ ցաբրահամ .
՚Ի բաց հան զաղախինդ , և զորդի դո-
րա . զի մի ժառանգեսցէ որդի աղախ-
նոյդ ը որդւոյ իմում իսահակայ : Եւ
խիստ թուեցաւ բանն առաջի աբրա-
համու վս որդւոյ նր : Եւ ասէ ած ցաբ
րահամ . մի ինչ խիստ թուեսցի առաջի
քո վս մանկանն՝ և վս աղախնոյն . զամ
որ զինչ ասիցէ քեզ սարրա , լո՛ւր ձայ-
նի նր . զի իսահակաւ կոչեսցի քեզ զա-
ւակ . Յարեաւ աբրահամ ը առաւօտն
և էառ հաց , և տիկ ջրոյ , և ետ ցա-
գար . և եդ յուս նր զմանուկն , և արձա
կեաց զնա : ծննդ . իա . 9 :

Մեծերորդին հաստատութեան խոստմանն :

5 . Եւ եղև յետ բանիցս այսոցիկ փորձեաց
ած զաբրահամ , և ասէ . ա՛ռ դու զորդիդ
քո զսիրելի զոր սիրեցեր զիսահակ , և գնա՛
դու յերկիր բարձր . և հանցես զդա անդ

յողջակէզ : Եւ եղև իբրև ձգեաց աբ
րահամ զձեռն առնուլ զսուրն , և զենուլ
զորդի իւր . կոչեաց զնա հրեշտակ տն յերկ
նից . և ասէ . մի՛ մխեր զձեռն քո ՚ի պա
տանեակդ , և մի՛ ինչ առներ դմա . զի
այժմ գիտացի , թէ երկիւղած ես դու յայ ,
և ոչ խնայեցեր յորդւոյդ քո սիրելւոյ վս իմ :
Յանձն իմ երդուեայ ասէ տր . փոխա-
նակ զի արարեր դու զբանդ զայդ , և ոչ
խնայեցեր յորդւոյդ քո սիրելւոյ վս իմ , այո՛ ,
օրհնելով օրհնեցից զքեզ . և բազմա-
ցուցանելով բազմացուցից զզաւակ քո
իբրև զաստեղս երկնից բազմութբ , և
իբրև զաւազ առ ափն ծովու : Եւ ժա-
ռանգեսցէ զաւակ քո զքաղաքս հակա-
ռակորդաց իւրոց : Եւ օրհնեսցին ՚ի զա
ւակի քում ամ ազգք երկրի . փոխանակ
զի լուար ձայնի իմում : ծննդ . իբ . 16 :

Ընթերցուածք առ իսահակ :

6 . Եւ երևեցաւ նմա տր իսահակայ . տր
և ասէ , մի իջաներ յեգիպտոս . այլ բը-
նակեաց դու յերկրիդ յորում ասացից
քեզ : Եւ պանդխտեա՛ց յերկրիս յայսմիկ ,
և եղէց ը քեզ . և հաստատեցից զեր-
դումն իմ զոր երդուեայ աբրահամու հօր
քում . և տաց զաւակի քում զամ եր-
կիրս զայս . և օրհնեսցին ՚ի զաւակի քում
ամ ազգք երկրի : ծննդ . իզ . 1 :

Ընթերցուածք առ յակոբ :

7 . Եւ ետես յակոբ տեսիլ . և ասէ ցնա
տր : Ես եմ տր ած աբրահամու հօր
քոյ , և ած իսահակայ : Մի՛ երկնչիր ,
զի զերկիրդ՝ յորում դու դնջեցեր , քեզ
տաց , և զաւակի քում . և եղիցի զա-
ւակ քո իբրև զաւազ երկրի : Եւ օրհ-
նեսցին ՚ի քեզ ամ ազգք երկրի , և ՚ի
զաւակի քում : ծնն . իը . 12 .

Ընթերցուածք առ դաւիթ :

8 . Եւ եղև բան տն առ նաթան , և ասէ ,
երթ և ասա՛ ցծառայ իմ դաւիթ . ո՛չ
շինեսցես դու ինձ տուն : Եւ եղիցի ե-
թէ լցցին աւուրք քո , և ննջեսցես ը
հարս քո , յարուցից զզաւակ քո . որ ե-
ղիցի յորովայնէ քումմէ , և պատրաստե
ցից զարքայութի քո նմա : Եւ նա շի-
նեսցէ տուն անուան իմոյ . և կանգնե-
նից զաթոռ նր մինչև յյաւիտեան : Ես
եղէց նմա՚ի հայր , և նա եղիցի ինձ յոր
դի .

դի ։ Հաւատարիմ լիցի անուն նր, եւ աթ
քայուն նր առաջի իմ մինչեւ յաւիտեան,
եւ աթոռ նր կացցէ կանգուն առաջի
իմ մինչեւ յաւիտեան ։ 2 . Թագ . է . 4 ։
Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից
զզաւակ նր . եւ զաթոռ նր ազգ զաւուրս
երկնից ։ Իսկ թողցեն որդիք նր զօրէնս
իմ . եւ յիրաւունս իմ ոչ կամեսցին գը-
նալ ։ Հարից գաւազանաւ զանօրէնու-
թիւս նց . եւ տանջանօք զանիրաւութիւ
նց ։ Բայց զողորմութիւն իմ ոչ արգելից
՚ի նոցանէ . եւ ինչ որ ելանէ ընդ շրթունս
իմ, զայն ոչ արհամարհեցից ։ Միան-
գամ երդուեայ ՚ի սրբութիւն իմ . թէ դաւ-
թի ես ոչ ստեցից ։ սաղմ . ձը . 30 ։

Գլուխ . Թ ։

Վասն յայտարարութեան այ, շնորհելոյ մեզ փրկիչ ։

Ա՛ծ յետ խոստմանն՝ զոր հարցն մերոց արար
օրհնել զմեզ հոգեւոր օրհնութբ՚ ՚ի փըր
կութիւն եւ ՚ի շնորհս, ըստ մեծս բանիւ
յայտ արար լինելն կամաւ մարդ,
եւ զորս ՚ի մարդկանէ՝ յաւիտենական սիրով
սիրեաց է, զնա շնորհօք յերանելին յանձայնն յան
ձուկ ընտանութին առնուլ իբրեւ հայր զորդի .
եւ իբրեւ փեսայ զհարսն սիրելի . ՚ի նոյն իւր
համբոյր եւ ՚ի փառս . ՚ի նոյն իւր յուրախութի
եւ ՚ի ցնծութիւն անվախճան ։ Նաեւ այս յայտնի
է ՚ի զանազան գիրս, մանաւանդ յերգոց երգս ։

Վկայութիւնք ։

1 . Ի սէր յաւիտենական սիրեցի զքեզ .
վն այնորիկ ձգեցի զքեզ ՚ի գթութիւն ։
երեմ . լա . 3 .

2 . Որ օրինակ ընակի փեսայ առ հար
սին . այնպէս ուրախ լիցի տր ՚ի քեզ ։ ե-
սայ . կբ . 5 ։

3 . Վարար զաջոյ ձեռանէ իմմէ , ՚ի խոր-
հուրդս քո առաջնորդեցեր զիս . եւ փա
ռօք ընկալար զիս ։ սաղմ . հբ . 24 ։

4 . Ո՞ ինչ կայ իմ ընաւ յերկինս . կամ ՚ի
քէն զի՞նչ եւս խնդրեցից յերկրի ։ սաղմ .
հբ . 25 ։

5 . Նուաղեցաւ սիրտ իմ, եւ մարմին իմ
ած սրտի իմոյ . բաժին իմ ած յաւի-
տեան ։ սաղմ . հբ . 26 ։

6 . Համբուրեսցէ զիս ՚ի համբուրից բե
րանոյ իւրոյ . երգ . ա . 1 ։

7 . Իւղ թափեալ է անուն քո . վն այնորիկ
օրիորդք սիրեցին զքեզ ։ երգ . ա . 2 ։

8 . Ձգեա՛ զիս, զհետ քո ՚ի հոտ իւղոց քոց
ընթասցուք . (բոլոր լսարան ։) Տարաւ
զիս արքայ ՚ի սենեակ իւր ցնծասցուք
եւ ուրախ լիցուք ՚ի քեզ ։ երգ . ա . 3 ։

9 . Պատմեա՛ ինձ, զոր սիրեաց անձն իմ .
ուր հովուես , ուր հանգուցանես ՚ի
միջօրէի ։ երգ . ա . 6 ։

10 . Ծրար ստաշխին եղբօրորդին իմ ինձ .
՚ի մէջ ստեանց իմոց հանգիցէ ։ երգ .
ա . 12 ։

11 . Ահեակ նր ՚ի վր գլխոյ իմոյ . եւ աջ
նր պատեսցի զինեւ ։ երգ . բ . 6 ։

12 . Ձայն եղբօրորդւոյ իմոյ . ահաւա-
սիկ սա եկն վազելով ՚ի վր լերանց .
խայտալով ՚ի վր բլրոց ։ երգ . բ . 8 ։

13 . Պատասխանի տայ եղբօրորդին իմ
ինձ , եւ ասէ . արի եկ մերձաւոր իմ, գե
ղեցիկ իմ, աղաւնի իմ ։ երգ . բ . 10 ։

14 . Արտացուցէր զմեզ քոյր իմ հարսն ,
սրտացուցէր զմեզ միով ակամբ քո , եւ
միով քառամանեկաւ պարանոցի քո ։
երգ . դ . 9 ։

15 . Ո՛ի գեղեցկացան ստինք քո քոյր իմ
հարսն , զի գեղեցկացան ստինք քո ՚ի
գինւոյ , եւ հոտ հանդերձից քոց քան
զամ խունկս ։ երգ . դ . 10 ։

16 . Մեղր կաթեցուցանեն շրթունք քո՝
քոյր իմ հարսն . մեղր եւ կաթն ՚ի ներ
քոյ լեզուի քո . եւ հոտ հանդերձից
քոց իբրեւ զհոտ կնդրկի ։ երգ . դ . 11 ։

17 . Պարտէզ փակեալ քոյր իմ հարսն .
պարտէզ փակեալ, եւ աղբիւր կնքեալ ։
երգ . դ . 12 ։

18 . Իջցէ եղբօրորդին իմ ՚ի պարտէզ իւր,
եւ կերիցէ զպտուղս ՚ի ծառոց իւրոց ։
Մտի ՚ի պարտէզ իմ հարսն . կթեցի
զմուռս՝ հանդերձ խնկովք իմովք . կե
րի զհաց իմ մեղու իմով . եւ արբի զգ-
գինի իմ կաթամբ իմով ։ երգ . ե . 1 ։

19 . Երդմնեցուցանեմ զձեզ դստերք ե-
րուսաղեմի . . . . . եթէ գտանիցէք զեղբօր-
որդին իմ պատմեսջիք նմա , եթէ
խանդակաթեալ եմ ՚ի սէրն նր ։ երգ . ե . 1 ։

20 . Ո՞ ինչ է եղբօրորդին քո յեղբօրոր-
դին գեղեցիկդ ՚ի կանայս . զի՞նչ է եղ
բօրորդին քո յեղբօրորդեաց . զի այդպէս
երդմնեցուցանես զմեզ ։ երգ . ե . 9 ։

21 . Եղբօրորդին իմ սպիտակ է , եւ կար-
միր ընտրեալ ՚ի բիւրուց ։ երգ . ե . 10 ։

22 . Ես եղբօրորդւոյ իմում , եւ առ իս
դարձ նր ։ երգ . է . 10 ։

23 .

23 . Ո՞վ տացէ քեզ եղբօրորդի իմ դիեալ զստինս մօր իմոյ . գտեալ զքեզ արտաքոյ համբուրեցից . և ոչ անգոսնեսցեն զիս ։ երգ . ը . 1 ։

Նաև արդ՝ յայտնի իմն է, թէ այս ած բանք ոչ զաշխարհական, և ոչ զկենցաղոյս իրօք եղանելի կենակցութի ինչ նշանակեն, զոր և ածային գիրն ունայնութի ունայնութեց անուանէ, և բանաւոր հոգւոյ, և մանաւանդ այ ամենևին ոչ վայել է ։ Նաև զմարդոյ ընդ այ անձուկ ընտանի կենակցութի նշանակեն, որ է հոգևոր . և հրեշտակային մշտնջենաւոր իրօք սիրոյ՝ եղանիլ մարթ է ։ Այս և ոչ է ինչ ընդ ժամանակաւ աւարտելի . այլ 'ի յանվախճան կեանսն վայելելի ։ Ոչ յանտեսութե այ, յորում ոչ լինէր փափաքանաց սրտի սիրելւոյն լրումն . այլ մշտնջենաւոր կարօտութի, և թախծումն ։ Նաև է երես ընդ երես տեսութեն այ վայելումն ։

Գլուխ . Ժ ։

Թէ ո՛վ, և որպիսի ոք է ծնեալն, նախագոյական յարաբերութեանց վերայութիւն ։

Ի որդին այ ։

1 . Տէր ասաց ցիս որդի իմ ես դու . և ես այսօր ծնայ զքեզ ։ սաղմ . բ . 7 ։

2 . Ով կարաց զամ ծագս երկրի . զի՞նչ անուն է նր, կամ զի՞նչ անուն որդւոյ նր, զի գիտասցես ։ առակ . Լ . 4 ։

3 . Մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ . որոյ իշխանութի իւր 'ի վր ուսոց իւրոց ։ եսայ . թ . 6 ։

4 . Նաև տեսիլ չորրորդին նման է որդւոյ այ ։ դան . գ . 92 ։

5 . Յեգիպտոսէ կոչեցի զորդի իմ ։ ովս . ժա . 1 ։

Ի աստուած ։

6 . Վասն էօծ զքեզ ած ած քո իւղով ուրախութե առաւել քան զընկերս քո ։ սաղմ . խդ . 8 ։

7 . Աթոռ քո ած յաւիտեանս յաւիտենից . գաւազան ուղղութե, գաւազան արքայութե քոյ ։ սաղմ . խդ . 7 ։

8 . Ասաց տր ցտր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց ։ սաղմ . ճթ . 1 ։

9 . Անուն նր հրեշտակ, մեծի խորհրդոյ սքանչելի խորհրդակից . ած հզօր՝ իշ-

է

խան հայր հանդերձելոյ աշխարհին ։ եսայ . թ . 6 ։ Ով է խորհրդակից է այ իմաստութի ։ իմաստ . ը . 4 ։

10 . Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր . համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց ։ սաղ . իդ . 7 ։

11 . Ով է սա թագաւոր փառաց տր զօրութեց . սա ինքն է թագաւոր փառաց ։ սաղմ . իդ . 10 ։

Ի քս, այսինքն օծեալ ։

12 . Վասն էօծ զքեզ ած՝ ած քո իւղով ուրախութե առաւել քան զընկերս քո ։ սաղմ . խդ . 8 ։

13 . Իւղ թափեալ է անուն քո . վն այնորիկ օրիորդք սիրեցին զքեզ ։ երգ . ա . 2 ։

14 . Հոգի երեսաց մերոց տր քրիստոս ։ պատեցան վնովաւ յապականութե իւրեանց ։ ողբ ։ դ . 20 ։

Ի պատկեր այ հօր ։

15 . Ճաճանչ է այ զօրութե . և ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին ։ իմաստ . է . 25 ։

16 . Նշոյլ է մշտնջենաւոր լուսոյն . և հայելի անարատ այ ազդեցութեն, և պատկեր առատութե նր . մի է և յամի կարող ։ իմաստ . է . 26 ։

Ի իմաստութի և բան հօր ։

17 . Տէր ստացաւ զիս 'ի սկիզբն ճանապարհաց իւրոց 'ի գործս իւր . յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս, 'ի սկզբանէ յառաջ քան զերկիր առնել, և նախ քան զանդունդս գործել, և յառաջ քան զըղխել աղբերաց ջուրց . և նախ քան զլերինս հաստատել . և յառաջ քան զամ բլուրս ծնանէ զիս ։ առակ . ը . 22 ։

18 . Իմաստութի շինեաց իւր տուն, և կանգնեաց սիւնս եօթն, եզեն զզենլիս իւր և խառնեաց 'ի խառնարանս զգինի իւր, և պատրաստեաց զսեղան իւր . և առաքեաց զծառայս իւր կոչել բարձր քարոզութբ 'ի խառնելիս իւր, և ասէ . որ ոք իցէ անզգամ, եկեսցէ առ իս . և ցպակասամիտս ասէ . եկայք կերայք 'ի հացէ իմմէ, և արբէք զգինի իմ զոր խառնեցի ձեզ ։ առակ . թ . 1 ։

19 . Ով է մարդ՝, որ գիտիցէ զխորհուրդս

այ

այ, կամ ո՞վ առնիցէ զմտաւ . Թէ զինչ կամիցի տր . . . . . և զխորհուրդս քո ո՞վ գիտաց . եթէ ոչ դու ետուր զիմաստութիւն, և առաքեցեր զհոգիդ քո սբ 'ի բարձանց . և ապա ուղղեցան շաւիղք երկրաւորաց . և զհաճոյս քո ուսան մարդիկ . և իմաստութբ քով փրկեցան : իմաս . Թ . 13 :

20 . Նա զնախաստեղծ զհայրն աշխարհի զմիայն հաստատեալ պահեաց . և փրկեաց զնա 'ի յանցանաց իւրոց . ետ նմա զզօրութիւն ունելոյ զամենայն : Իմաստ . Ժ . 1 :

21 . Նա զարդարն վաճառեալ ոչ եթող 'ի ձեռանէ . այլ 'ի մեղաց փրկեաց զնա . ընդ նմա էջ 'ի գուբ . և 'ի կապանս ոչ եթող 'ի ձեռանէ : իմաստ . Ժ . 14 :

22 . Մինչ ընդ երկաթ անձն նր . մինչև եկեսցէ բան նր . և բան տն փորձեաց զնա : սաղմ . ՃԴ . 19 :

23 . Առաքեաց զբանն իւր, և բժշկեաց զն նոսա, և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց : սաղմ . ՃԶ . 20 :

24 . Ոչ դեղք, և ոչ սպեղանեաց դիրք բժշկեցին զնս . այլ քո տր բանդ, որ զամ բժշկէ : իմաստ . ԺԶ . 12 :

25 . Այն ինչ գիշերն իւրով արագութբ ըմիջէր . ամենազօր բան քո յերկնից աթոռոյ արքունեաց՝ սաստիկ պատերազմող 'ի մէջ սատակմամբ երկրին հասանէր : իմաստ . ԺԸ . 14 :

Նա ած և մարդ . որդի այ, և որդի մարդոյ :

26 . Ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նր էմմանուէլ . (որ թարգմանի՝ ընդ մեզ ած :) եսայ . Է . 14 :

27 . Զ՞ինչ անուն է նր . և զինչ անուն որդւոյ նր, զի գիտասցես : առակ . Լ . 4 :

28 . Տր ասաց ցիս որդի իմ ես դու . և ես այսօր ծնայ զքեզ : սաղմ . Բ . 7 :

29 . Ո՞վ տացէ քեզ եղբօրորդի իմ, դիեալ զստինս մօր իմոյ . գտեալ զքեզ արտաքոյ համբուրեցից : երգ . Ը . 1 :

30 . Ոչ ես իբրև զիս մարդ, ընդ որում դատեցայց . եթէ հասարակ եկեսցուք 'ի դատաստան, իսկ յանկարծ գոյր միջնորդ, և յանդիմանէր, և լսէր 'ի մէջ երկոցունց : յոբ . Թ . 32 :

31 . Տեսանէի 'ի տեսլեան գիշերոյ, և ահա ընդ ամպս երկնից իբրև որդի մարդոյ գայր : Եւ հասանէր մինչև 'ի հինս աւուրցն, և մատուցաւ առաջի նր : դան . Է . 13 :

Նա Թագաւոր :

Աշակերտացն պատուիրեցէք , 'ի Գալիլեա երթա՛յք տեսէք , և ձի քարոզեցէք : Բայց աշակերտքն նր գնացին , 'ի ժամադրեալ նդ տեղին , այլակերպեալ զտրն տեսին , որ երբեմն 'ի տբ լերին : Տրն խօսէր մետասանեցն , և առաքէր յերկիր ըղ նոսին , զհեթանոսս աշակերտել . երրորդութեն մկրտել . զպատուիրանն ուսուցանել : յն որդի : Եւ համբարձեալ քս առ հր առաքելոցն . և տուեալ ողջոյն կենդանարար , առաքեցեր զնոսա 'ի փրկութի տիեզերաց : շարական : Զի՛ք ինչ ամենակալին ամ այնպէս ընդունելի , իբրև զնախաման փրկութե հոգւոց . Գրիգոր : Բան զամ ամծայինս ամծայնագոյն է գործակից լինել այ 'ի դարձումն մեղաւորաց , ուր մաքուր սիրովն ամենեցուն փրկութե վաստակեն : դիոնեսիոս :

Հաւատացեալք , որք զքր խոր հուրդս այ քարոզեն , զի՛նչ այլ ինչ առնեն , բայց եթէ 'ի նոր լեզուս խօսին : Եւ որք բարի խրատուք իւրեանց բառնան զչարութի սրտի օտարաց , 'ի ձեռս իւրեանց զօձս բառնան . և յորժամ զմահաբեր հրապոյրս լուեալ , ո՛չ գործեն ըղձարն , զմահացու դեղ ըմպեն , և ո՛չ վնասին : Եւ յորժամ բարի գործոց օրինակաւ զտկարացեալն 'ի բարիս հաստատեն , 'ի վր հիւանդաց ձեռս դնեն ,

106 . Համբարձաւ տէր օրհնութեամբ . և տէր մեր ձայնիւ փողոյ : Աւագաւուրեայ տէր 'ի վերայ հեթանոսաց . տէր նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ : սաղմ . խզ : Համբարձէ՛ք իշխանք ըզդրունս ձեր 'ի վեր . համբարձցին դրունք յաւիտենից . և մտցէ թագաւոր փառաց : Ո՞վ է սա թագաւոր փառաց . տէր հզօր զօրութեամբ իւրով տէր հզօր 'ի պատերազմի . Համբարձէ՛ք իշխանք զդրունս ձեր 'ի վեր . համբարձցին դրունք յաւիտենից , և մտցէ թագաւոր փառաց : Ո՞վ է սա թագաւոր փառաց , տէր զօրութեանց՝ սա ինքն է թագաւոր փառաց : սաղմ . իդ : Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ յեդովմայ կարմրութի՞ն ձորձոց իւրոց 'ի բոսորայ , գեղեցիկ պատմուճանաւ , և բուռն զօրութեամբ : Ես խօսիմ զարդարութիւն , և իրաւունս փրկութեան : Ընդէ՞ր կարմիր են ձորձքդ , և ջանդերձքդ իբրև հնձանահարի լիոյ հնձանի կոխելոյ : Հնձան հարի միայն և 'ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս . կոխեցի զնոսա սրտմտութեամբ , և ճմլեցի զնոսա բարկութեամբ , և իջուցի յերկիր , և զարիւն զհանդերձս իմ թաթաւեցի : Զի հասեալ էր 'ի վերայ նոցա օր հատուցման . և ամ փրկութեան եկեալ հասեալ : Հայեցայ և ոչ ոք էր որ օգնէր . զմտաւ ածի , և ոչ ոք էր որ 'ի թիկունս հասանէր . փրկեաց զնոսա բազուկ իմ : եսայ . կգ :

106 . [illegible]

և բժշկեն : [illegible] :

Ըանխիծս այսուհիկ երաշ.քս ըղ միտս առաքելոց՝ իմանալ ըզգիրս , որք մարգարէանային վասն այնր տեառն : Եւ թէ քարոզել յանուն նորա ապաշխարութիւն . ամենայն անուանն , հրամանաւ , և զօրութեամբ արդեանց մահուանն քո տուեալ լինել յամենայն ազգս ապաշխարութեան , և թողութեան մեղաց : Եւ ես , ասէ , յետ քանի ինչ աւուրց՝ յաւուր յիսներորդի առաքեմ զհոգի սրբոյ : [illegible] : Ոչ մարտիկ զօրականաց , ոչ թոյլ տայ քո աշակերտացն 'ի ճակատ ելանել , յառաջ քան զզգեստաւորելն հոգւոյն սրբոյ : [illegible] : Օրհնեաց զնոսա , տէր գրեալ 'ի վերայ նոցա խաչիւ՝ ըստ սրբոյն դիմանկարօսն զօրմէ ասէ հեռանի մոս . զայն զայս եթող մեզ տէր 'ի համբառնալն իւրում առ հայր զի համբարձակ լիցուք ասել . նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց : Պարձան ուրախութեան , զի տեսանէին զքո վերադարձն իւրեանց փառաւոր յաղթութեամբ յերկինս ելանել : [illegible] : Համբարձաւ տէրն մեր քո օրհնութեամբ ամպս երկնից , և առաքելոցն երկրպագեալ դարձան յեէմ . միաբանութեամբ վերնատան զաղօթս : Միաբանեալ սբ առաքեալքն . միախոհ , և միակրօն , միաբանութեամբ տէրին 'ի սբ վերնատանն , և ակն ունէին զալստեան սբ հոգւոյն : [illegible] :

107 . Եւ եղիցի յետ այսորիկ հեղից յոգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն մարմնոյ , և մարգարէասցեն ուստերք ձեր , և դստերք ձեր . և ծերք ձեր երազեսցին , և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն : Եւ 'ի վերայ ծառայից իմոց , և 'ի վերայ աղախնայց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից յոգւոյ իմմէ , և մարգարէասցեն : և

107 . [illegible]

Որ յիններեակ յօբելինին , 'ի կատարման պենտէկոստէին : Առաքեցեր զքո սբ զհոգին , 'ի վերնատունն խորհրդին : Ըստ կանխագոյն խոստմանն բանին , և աւետեաց քոց հրամանին , մխիթարել զորբութիւն , աշակերտաց մետասանին : Յորում անտես , և անքննին , հրաշեաց նման հողմոյ ուժգին ,

եղիցի ամ որ կարգասցէ զա_
նուն ամն՝ կեցցէ ։ յովէլ ․ Բ ։

108 ․ Ասաց Տր ցՏր իմ նիստ
ը աջմէ իմմէ , մինչև եդից ըզ
թշնամիս քո պատուանդան ո_
տից քոց ։ Խորտակեսցէ յա_
ւուր բարկութե զթագաւորս ․
դատեսցէ զհեթանոսս , և բա
զում արասցէ զհարուածս , և
խորտակեսցէ զգլուխս բազ_
մաց յերկրի ։ Ուղխս՝ի ձա_
նապարհի արբցէ ․ վնկ և բարձր
արասցէ զգլուխս ։ սաղմ ․ ՃԺ
Այծ մեր յայտնապէս եկեսցէ ․
և Այծ մեր մի՛ դադարեսցէ ։ Հուր
առաջի նր բորբոքեսցէ , և
շուրջ զնովաւ մրրիկ յոյժ ։ Կո
չեսցէ զերկինս ՝ի վերուստ ․ և
զերկիր ՝ի դատել զժողովուրդ
իւր , ժողովել առ ինքն զՍրբս
իւր ։ սաղմ ․ ԽԹ ։
Յայնժամ ցնծասցեն ամ ծառք
անտառի յերեսաց Տն զի գայ , և
գայ նա՝ի դատել զերկիր ։ Դա
տէ զՏս արդարութբ , և զժո
ղովուրդս իւր ուղղութեամբ ։
սաղմ ․ ՂԵ ։

Հր նոցա ։ Եւ լցան ամենե_
քեան հոգւովն սբով , և խօ_
սէին յայլ լեզուս՝ որպէս և
հոգին տայր բարբառել նո_
ցա ։ գործ ․ Բ ։

108 ․ Եւ յորժամ եկեսցէ
Որդի մարդոյ փառօք իւրովք ,
և ամ հրեշտակք ընդ նմա ։
Յայնժամ նստցէ յաթոռ փա
ռաց իւրոց , և ժողովեսցին
առաջի նր ամ ազգք ։ Եւ
մեկնեսցէ զնոսա ՝ի միմեանց՝
որպէս հովիւ զի մեկնեսցէ
զօդիս յայծեաց , և կացուս
ցէ զօդիսն ընդ աջմէ , և զայ
ծիսն ՝ի ձախմէ ։ Յայնժամ
ասասցէ Թագաւորն ցայնոսիկ ,
որք ընդ աջմէն իցեն ․ Եկայք
օրհնեալք Հօր իմոյ , ժառանգե
ցէք զպատրաստեալ ձեզ զար
քայութիւն ՝ի սկզբանէ աշխ ։
Յայնժամ ասասցէ և ցայնո_
սիկ , որք ընդ ահեկէն իցեն ․
Երթայք յինէն անիծեալք , ՝ի
հուրն յաւիտենական , որ
պատրաստեալ է սատանայի ,
և հրեշտակաց նր , և այլն ։
Եւ երթիցեն նոքա ՝ի տան_
ջանս յաւիտենականս , և
արդարքն ՝ի կեանսն յաւիտե
նականս ։ Մատթ ․ ԻԵ ։

եկից զտունն յորնստէին , մաք
րիչ բոցովլ ծախող չարին ։ Յոր
մէ պարգևք ամծային , հրեղէն
լեզուօք բաժանեցին ։ յն որդի ։

Յորժամ հայր և որդ հոգին ,
Երեքն յերկիր խոնարհեսցին ․
Երեք և զօրք վերին հոտին ,
մինչ զի թափուր մնայ երկին ։
Իսկ թագաւորդ՝ի մեծ բեմբին
նստի յաթոռ դատաստանին ։
Հովուին հանդէպ զամ ժողո
վին , հօտի նման ազգք երկրա
ծին ։ Ողերն յաջեայտ կար
գեսցին , ուլքն՝ի ձախմէ քում
մէ դասին ։ Անդ ամ գաղտ_
նիք յայտնին , զոր ՝ի ծածուկ
ասա գործեցին ․ Առաջի
և հօրքըյին ․ և հրեշտակացն
ամենայնին ․ միայն ոյք ասա
խոստովանին ․ լինին ծածկեալք ,
և ոչ յիշին ։ Եւ ամ որք յայնմ
աւուր , անապաշխար մեղօք
լինին , իւրաքանչիւր ոք զար_
ժանին , առցեն ՝ի քէն չափով
յանցին ։ Նաև բարւոյ կող_
մանն մասին , պարգևք բարեաց
՝ի քէն տացին , ըստ հաւատոյ , և
ըստ գործոյ , և ըստ շնորհաց աւա
զանին ։ յն որդին ։

Աղօ սքանչելագործութեան փրկչին մերոյ Բանք ։

Սքանչելագործութեանց փրկչին մերոյ նա_
խագուշակք եղեն մարգարէքն , ոչ միայն
բանիւք , այլ և սքանչելագործութբք ։ Իբր
զի որպ բանք նոցա նշանօքն զորս արարին ,
արժանահաւատք եղեն ․ սոյնպէս և բանք
քսի , որք առ ՝ի նմանէ բազում և մեծա_
մեծ նշանօք հաստատեցան , ես առաւել
արժանահաւատ տեսցին ինձ ։ Ըստի ա_
սէր տրն ․ Զգործսն , զոր ես գործեմ յանուն
Հօր իմոյ , նոքին են վկայեն զն իմ ․ յոհ ․ Ժ ․ 25 ։

Եւ ես ասէր ․ Դուք առաքեցէք առ յոհաննէս ,
և վկայեաց ճշմարտութե ․ այլ ես ունիմ զվկայու
թե մեծ ևս քան զյոհաննու , զգործսն , զորս ետ ինձ
հայր՝ զի կատարեցից զնոսա , նոքին են գործքն զոր
գործեմ , վկայեն վասն իմ , եթէ հայր առաքեաց
զիս ։ յոհ ․ Ե ․ 33 ․ և 36 ։ Այլ արդ՝ զգուշմարին
սքանչելեաց մարգարէից՝ յերկրորդում մա
սին կարգեցաք , վասն այսորիկ զփրկչինն
միայն կարգեմք աստ ։

Բանք մարգարէից ։

Ո_
րոցագործք ձեռք լքեալք ,
և ծունկք կթուցեալք ․ մխի_
թարեցարուք կարճամիտք սրբ
տիւք ․ զօրացարուք , և մի երկն

Բանք սբ աւետարանին ։

Իսկ յոհաննէս իբրև
լուաւ ՝ի բանտին ըզ_
գործսն քսի , առաքեաց ՝ի
ձեռն աշակերտացն իւրոց

Աղօ յեկեղեցւոյ ։

Ու ՝ի վկայութեանց եկեղեցւոյ
յայսմ վայրի ոչ առ իւրաքան
չիւր բան սքանչելեացն՝ առան
ձին բանս պէտք են մեզ յա_

չէք : Ի հաւատն քո մեր հա-
ւատացաք զդատաստան, և հա-
տուցէ . ինքնին եկեսցէ, և
փրկեսցէ զմեզ : Յայնժամ
վազեսցէ կաղն իբրև զեղջերու
և պարզ լիցի լեզու ծանրախօ-
սաց : Զի ջուր բղխեսցէ յա-
նապատի, և գետ ՚ի ծարաւուտ
երկրի : եսայ, լե . 3 : Տր բա-
նայ զաչս կուրաց, և կանգ-
նէ զգլորեալս տր : սաղմ .
ճխե . 8 :

Աւետարանել աղքատաց ա-
ռաքեաց զիս . բժշկել զբեկեալս
սրտիւք, քարոզել գերեաց թո-
ղութիւն, և կուրաց տե-
սանել . եսայ . կա :

և ասէ ցնա, դու ես որ գա-
լոցն էիր, եթէ այլում ակնկալ-
ցուք : Մատթ . ժա . 2 : Ի նմին
՚ի նմին ժամու բժշկեաց զբազումս
՚ի հիւանդութեանց, և յախտից
չարաց . և ի դիւաց բազմաց
շնորհեաց տեսանել : Պա-
տասխանի ետ նոցա, և ասէ .
երթայք պատմեցէք յովհաննու
զոր տեսէք, և լուայք . զի
կոյրք տեսանեն . կաղք գնան,
բորոտք սրբին, խուլք լսեն,
մեռեալք յառնեն, և աղքատք
աւետարանին, և երանի իցէ,
որ ոչ գայթակղեսցի յիս : Ի-
բրև գնացին աշակերտքն յով-
հաննու, ասէ ցժողովուրդսն,
ամէն ասեմ ձեզ, մեծ ՚ի ծը-
նունդս կանանց մարգարէ
քան զյովհաննէս ոչ ոք է,
բայց փոքրիկն յարքայութեանն
այ մեծ է քան զնա : ղուկ . է :

ռաջ բերել ՚ի վկայութիւն . զի
աստ ոչ ներէ կարգ գրոյս ՚ի
հրահանգութեանց անտի նր առ-
աքանչելիս փրկչին ունել խորհր-
դածութիւն : Մանաւանդ զի
և այս իսկ բաւական է . զի
(ըստ և առ տմ ազգս յայտնի
է), որ եկեղեցին կաթուղիկէ
ունի ոչ միայն զաւետարանն
փրկչին, ՚ի չորից աւետարան-
չաց գրեալ, և զայլ նոր կտակարա-
նաց գիրս բովանդակ, այլ և
զհին կտակարանաց գիրս զբո-
լորին : Իսկ այնպէս զհին, և
զնոր կտակարանաց բովանդա-
կութիւն ունի իւր սեպհական
բան հաւատոյ . և որդւոց իւ-
րոց ՚ի սահման կարգեալ է զա-
ւանդն քրիստոնէական :

Ցանկ սքանչելեաց փրկչին մերոյ :

Բազումք են սքանչելիք և նշանք փրկ-
չին մերոյ յի.քի, զոր ՚ի սակս հաւա-
տոյ թէ զանց արարին որք աւետարանիչքն
գրել : Այլ այնչափ ինչ գրեցին, զի մեք հա-
ւատասցուք, թէ յս է քս որդի այ, և ըզ-
կեանս յաւիտենականս ընկալցուք յանուն
նր . ըստ զայս յայտ առնէ որքն յովհաննէս .
գլ . ի . հմր . 3 . և 25 : Իսկ մեք ՚ի գրե-
լոցն ինչ ինչ յիշատակեսցուք :

Զառաջինն զզուարթս երկնաւոր զօրացն ՚ի
ծննդեան իւրում միջոց յերկնից ՚ի տեսիլ հով-
ուացն, ՚ի փառաւորութիւն այ : ղուկ . բ :
Զմոգսն սքանչելահրաշ աստեղբ եած յա-
րևելից առ ինքն յերկրպագութիւն : մատթ .
բ : Ի հարսանիսն որ ՚ի կանա գալիլեաց-
ւոց, զջուրն գինի արար . յովհ . բ : Ի յորս
ձկանց սիմոնի և անդրեայ հրաշագործեաց .
ղուկ . ե : Զզոքանչն սիմոնի զտենդն վաղվա-
զակի փարատեաց . մատթ . ը : Զհիւանդ
ծառայ հարիւրապետին բժշկեաց : մատ . ը :
Զանդամալոյծն ողջացոյց : մարկ . բ . և
յով . ե : Զխռովութիւն ծովու սաստեալ
հանդարտեցոյց . մարկ . դ : Ի վր ծովուն
գնաց . մատթ . ժդ : Գնացոյց և զպետ-
րոս . ՚ի նոյն : Զդիւահարսն ազատեաց :
մատթ . ը : Զմեռեալն ողջացոյց : մատթ .
թ . Զդուստր յայրոս իշխանին զմեռեալն
յարոյց : մատթ . թ : Յարոյց և զմե-
ռեալ պատանին զորդի այրի կնոջ միոյ :
ղուկ . է : Այլև զղազար չորեքօրեայ մե-
ռեալն յարոյց : յոհ . ժա . Զբազում կոյրս
լուսաւորեաց : մատ . թ : մարկ . ը : և յոհ .
թ : Զայր մի համր դիւահար բժշկեաց .
մատթ . թ : Զգօսացեալ ձեռն ողջացոյց :
մատ . ժբ : Զայսահար դուստր քանանաց-
ւոյն ՚ի դիւէն ազատեաց : մատթ . ժե :
Զհինգ նկանակսն, և զերկուս ձկունսն
օրհնեալ բազմացոյց՝ մինչև կերին, և յա-
գեցան արք հինգ հազարք, թող զկանայս,
և զմանկունս . և բարձին զնշխարս կոտո-
րոցն երկոտասան սակառի լի : մատթ . ժդ :
Յայլում նուագի ևս զեօթն նկանակս, և
զսակաւ ձկունս օրհնեալ բազմացոյց . կե-
րին, և յագեցան չորք հազարք, և յաւե-
լաւ ՚ի նոցանէ եօթն զամբիւղ լի : մատթ .
ժե : Իսկ եղև զի ելեալ ՚ի լեառն, նստէր
անդ . մատեան առ նա ժողովուրդք բա-
զումք, որք ունէին ընդ իւրեանս կաղս, կոյրս,
համերս, միակողմանիս, և այլս բազումս :
ընկեցին զնս առ ոտս նր, և բժշկեաց զնս,
մինչև զարմանալ ժողովրդոցն, որք տեսա-
նէին, զի համերք խօսէին, կաղք գնային,
միակողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին,
և փառաւոր առնէին զած իէլի : մատթ .
ժե .

ժե : Սրա՛ զայնոսիկ, զորս յաւուրն չարչարանաց իւրոց արար : Նա որ եւս էքան զայսոսիկ. յետ երիր աւուր մահուան իւրոյ՝ ինքնին յարեաւ 'ի մեռելոց : մատթ. իը. մարկ. ժզ : Նա ոչ եթէ ինքն միայն սքանչելագործէր, այլ եւ զաշակերտս իւր այսմ զօրութեան հաղորդս առնէր, յանուն իւր առնել սքանչելիս. որպէս եւ գրեալ է, թէ կոչեալ առ ինքն զերկոտասան աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց, հանել զնոսա, եւ բժշկել զամ ախտս, եւ զամ հիւանդութիւնս : մատթ. Ժ : Նա եւ ելեալ քարոզեցին զի ապաշխարեսցեն. եւ դեւս բազումս հանէին. եւ օծանէին իւղով զբազում հիւանդս, եւ բժշկէին զնոսա : մարկ. Զ :

Առ բանս Տէրունին Մերոյ յոր յոյ :

Իսկ զհոգեւոր բանից Տն իմաստից ըղդոյզն նշոյլն բացատրելով ասեմք, թէ ուսուցանէր տրն մեր 'ի միտ առնուլ մեզ. թէ մի է ած տր մեր արարիչ ամի. եւ նախախնամիչ. (1) : Եւ չիք ոք ինքնին բարի, բայց մի ած. (2) : Եւ նա ինքն է, որ զմարդն 'ի սկզբանէ արարածոց ըստ պատկերի իւրում արար, եւ ընդ հրեշտակաց նոցա 'ի ժառանգութիւն երկնից արքայութե իւրոյ կարգեաց. (3) : Եւ 'ի սմին յայսմ բարերարութե իւրում անանց անփոփոխ սահմանեալ է մարդոյ, զի կամ մնասցէ իւր սէր տուէ փոյթ արասցէ ածային պատուիրանաց պահպանութե պատրաստել զանձն այսմ խոստման արժանաւորիլ, եւ կամ 'ի պատիժ ստոնգամութե իւրոյ՝ ընդ սատանայի, եւ ընդ հրեշտակաց նր 'ի հուրն յաւիտենական մատնեսցի. (4) : Եւ վն այսորիկ պարտ է ամ ումեք ապաշխարել. (5) : Եւ զախորժակս սրտի իւրոյ յերկնելեաց ասուլ 'ի բաց վճարեալ, բոլորով սրտիւ յած դառնալ. (6) : Եւ անպայման կամօք 'ի նա յարիլ՝ իբրեւ 'ի ծայրագոյն բարի, եւ 'ի տր ամի, եւ սիրել զնա յամ սրտէ, յամ անձնէ, յամ զօրութէ, եւ յամ մտաց. (7) : Եւ ածային սիրոյն եռանդիւ զամ հանդամանս կենաց իւրոց՝ ընդ պատուիրանաց նր կարգել. (8) : Եւ պատրաստ լինիլ զի թէ դէպ լիցի իրիք բուռն հակառակ ելանել մեզ առ պատուիրանացն պահպանութե, զանձինս մեր կորուսանել. (9) : Գիտելով ստուգիւ, զի լայն եւ ընդարձակ է ճանապարհն որ տանի 'ի կորուստ, եւ անձուկ է դուռն, եւ նեղ ճանապարհն որ տանի 'ի

ժե

կեանս, 'ի լայն եւ յընդարձակ կենաց խոյս տալ, եւ ջանալ մտանել ընդ դուռն նեղ. (10) : Որինակ վարուց մերոց ունիլ զառաջնորդն կենաց զյս քս զկատարիչն հաւատոյ, որ ետ զանձն վն մեր 'ի մահ խաչի. քանզի զնա ետ մեզ հայրն երկնաւոր, ճանապարհ, ճշմարտութի, եւ կեանք. (11) : Զի զհետ երթիցուք հետոց նր. իբր զի որպէս նա եղեւ յրդի, նոյնպէս եւ մեք կեցցուք ընդ մեր իւրաքանչիւր կարգի համեստ կենաց. (12) : Քանզի կերպարանակից առնել զմեզ 'ի փառս խոստացեալ է, որպէս եւ նոյն ինքն ասէ. (13) : Եւ զի առանց ածային օգնականութեն, ոչ կարեմք ընդ աւետարանի նր կեալ, պատուիրէ մեզ ստէպ աղօթս առնել հաւատով. (14) : Եւ խոստացաւ տալ մեզ զոր հայցեմք, եթէ վն յս, եւ առ ած իցէ հայցեալն մեր. (15) : Սն որոյ եթէ ճշմարտիւ կամիմք ածային երանելի կենացն 'ի հանդերձեալն ժառանգ լինիլ, պարտիմք եւ յաստի կեանս անպայման ըստ րութե զած խնդրել, ըն է. հաճոյից նց զմեզ ամ իրօք նուիրել. եւ կատարի այս շնորհօք տն, եթէ յայս եղիցի առաջին փոյթն մեր. իսկ զայլ ամ յայս կարգեսցուք. (16) : Եւ զի կամք մեր առ բարին իբր առ հասարակ ձգի, իսկ առ աւետարանական ճշմարտութե հաւատով մեզ ըստուգեալն՝ ոչ հաստատութե յարի, եւ բարի առաջադրութիք մեր յետ փոքր ժամու աղաւաղին, յոյժ կարեւոր է մեզ ածպաշտութեն կրթութի, որ լինի աղօթիւք. (17) : Եւ խոկմամբ խորհրդոց ածպաշտութե. (18) : Իսկ թէ որչափ զօրաւոր է ածաձիր խոկումն այս, յայտ առնէ մեզ դաւիթ, յայն՝ զի ասէ. Երանեալ է այր, որոյ յօրէնս տն են կամք նր, եւ յօրէնս նր խորհեսցի նա 'ի տուէ, եւ 'ի գիշերի. եւ եղիցի նա որպէս ծառ որ տնկեալ է 'ի գնացս ջուրց. որ զպտուղ իւր 'ի ժամու տացէ, եւ տերեւ նորա մի' թափեսցի. եւ զամենայն զոր ինչ արասցէ, յաջողեսցի նմա : սաղմ. ա : (19) : Առ սոյն խոստումն 'ի չարէ ուսոյց, զի ոչ միայն 'ի գործոց մեղաց, որք լինին ընդդէմ յս, կամ ընկերաց, այլ եւ 'ի ցանկութեց նց զգուշացեալ, զամօքն, եւ զխորհուրդս նց ընդ սերմանել չարին 'ի մեզ, 'ի բաց մերժեսցուք. (20) : Նաեւ ծանոյց. թէ ոչ միայն վն տեսակաւոր չար բանից, այլ եւ յաղագս դատարկ բանից համարս տալոց են մարդիկ յաւուրն

դա-

դատաստանի ․ (21) ։ Իսկ ոչ զի յուղիղ յանկեղծաւոր վախճանէ շարժեալ արասցուք զգործս մեր բարիս , ուսոյց մեզ , զի զնոյն գործս մեր բարիս ՚ի յորդորմանէ սիրոյն այ ՚ի փառս նր միայն արասցուք , և ոչ առ ՚ի ցոյց մարդկան , և վն զփառս առ ՚ի նոցանէ ընդունելոյ ․ (22) ։

Եւ համօրէն յայլ բանս փրկչին՝ են պատուիրանք , կամ խրատք , կամ խոստմունք , կմ սպառնալիք , կամ սքն խորհրդոց սահմանադրութիք , կամ մարգարէութիք ․ կմ առ պատրաստ լինելոյ յօր մահուան , կամ վն դատաստանի , և դժոխոց , և արքայութե , և վն այլ ածային իրաց ․ և ամենեքեան յայտնապէս գիտ են , և առ ած ։

Բացատրութիւն վկայութեանց Եւն , զորս ուր եդեալ եմք , ոչ ներէր տեղին անդէն բացատրել , յաղագս երկարութեան մեկնութեան ։

Բան ։

Եօթանասուն եօթներորդք համառօտեցան ՚ի վր ժողովրդեան քո , և ՚ի վր քաղաքին սբյ ․ և այլն որ ՚ի կարգին ։ Դան ․ Թ ․ 24 ։ Բացատրութի մարգարէութես այսորիկ ․ որ գուշակէ զստոյգ երբն գալստեան քի , և կատարելոյ զխորհրդոյն փրկութե մերոյ , և անհաւան ազգին հրէից յերկրէն նոցա վտարելոյ ․ ըստ իմաստուն թարգմանչաց սբ գրոց , անտարակոյս այսպէս է ։

Մեկնութի ։ Եօթներորդն՝ զեօթն ամ նշանակէ ․ և վն այսորիկ եօթանասուն եօթներորդքն զչորեքհարիւր իննսուն ամ նշանակեն , ոչ թուելով զայսքան իմանալ ։ Եւ ապա տեսանեմք ․ զի յելից բանին ․ այսինքն , յետ ելանելոյ հրամանին արտաշէսի արքային պարսից վասն շինութե երէմի , չորեքհարիւր իննսուն ամք անցեալ են մինչև ՚ի կատարումն խորհրդոց փրկագործութեն քնի , և բաւական քարոզութե աւետարանի նր առաքելովք առ ազգն հրէից ։

Մն զի ՚ի վաթսուն և հինգ եօթներորդումն ծնաւ փրկիչն ․ և ՚ի վաթսուն և ինն եօթներորդին մկրտեցաւ ․ և ՚ի յաւելեալ այսմ եօթներորդին կիսում մեռաւ ․ ուստի եղեն վաթսուն և ինն և կէս եօթներորդք ։ Արդ՝ ՚ի նմին կիսում , զոր ասացաք , ըստ մեռանիլ փրկչին բարձան զոհք , և նուէրք , ոչ և հերձումն վարագուրի տաճարին նշանակեաց զայս ։

Իսկ զմնացեալ կէս յետին եօթներորդին այսորիկ , յորում սկսեալ էր փրկիչն զօրացուցանել զուխտն առ ինէն , բազմաց , որ է բազմօք ըստ թարգմանչաց , ըստ բազում նշանոք և արուեստիւք , կատարեցին առաքեալք նր ․ որք մնացին յէմ զամս երիս , և քարոզեցին հրէից ․ և հաստատեցին զճշմարտութիւն քնի նշանոք և արուեստիւք ․ Բայց նկատել պարտ է , զի հրեշտակն , որ յայտնեաց դանիէլի զխորհուրդս զայս , յառաջադոյն զթիւս ամ ամացն միանգամայն եդ , զի ասաց ․ Եօթանասուն եօթներորդք համառօտեցան ՚ի վր ժողովրդեան քո , և ՚ի վր քաղաքին սբյ ․ ՚ի վախճանել մեղաց , և ՚ի կնքել անօրէնութեանց , և ՚ի ջնջել անիրաւութեանց , և ՚ի քաւել ամբարշտութեանց ։ Իբր թէ այսքան ամք են մինչև ՚ի ժամանակն ջնջելոյ մեղաց , անօրէնութեց , անիրաւութեց , և ամբարշտութեց մինչև քաւութն քնի ․ Եւ ՚ի գալ յաւիտենական արդարութե ․ ըստ քնի որ զճառագայթս արդարութե իւրոյ սփռեսցէ յամ յաւիտեանս ․ այս է , յառաջ , և զկնի ։ Եւ ՚ի կնքել տեսլեան , և մարգարէի ․ ըստ ՚ի խափանիլ հին օրինաց , Եւ յօծանել սրբութեանց , ըստ է քի , որ հոգւով սբվ օծցի ՚ի քահանայ , ՚ի թագաւոր , ՚ի մարգարէ , ՚ի վարդապետ , յօրէնսդիր , և ՚ի փրկիչ ծի ։ Եւ յետ միանգամայն դնելոյն՝ սկսաւ մասնաւոր ասել զնոյն թիւս ամացն ․ բայց ոչ միանգամայն , այլ բաժանելով ՚ի Բ մասունս ասաց ․ մինչև յօծեալ առաջնորդն՝ որ է քս , եօթներորդք եօթն , և եօթներորդք վաթսուն և երկու ։ ըստ եբրայական ոճի՝ զնուազն յառաջագոյն եդեալ , և զյաւելեալն զկնի ։ Եւ այսուհետև բանիւ ծանոյց , թէ յաւարտիլ թուոյս այսորիկ ․ որ է վաթսուն և ինն եօթներորդ , լինի գալուստն քի ։ Եւ ստուգիւ կատարեցաւ այս ․ քանզի թէպէտ քս ՚ի յաւարտիլ վաթսուն և հինգ եօթներորդաց ծնաւ ․ բայց մինչև յերեսներորդ ամն հասակի իւրոյ ոչ եղև յայտնի տանն իէլի ․ այլ միայն արդարոց ոմանց առանձին ․ վն այսորիկ հրեշտակն ոչ զայս ժամանակս , այլ զաւարտ վաթսուն և ինն եօթներորդաց նշանակեաց լինիլ ժամանակ գալստեանքն ։

Զի իբրև եկն ՚ի մկրտութի , յայտնեցաւ տանն իէլի , քանզի յերկնից յհօրն վկայեցաւ ձայնիւ ․ թէ դա է որդի իմ սիրելի , ըստ որ հաճեցայ ․ և հոգւոյն սբյ աղաւնակերպ իջանելն ՚ի վր նր , զլինիլն նր օծեալ հոգւով սրբով ստուգեաց ։ Մն որոյ և սբն յովհաննէս մկրտիչ ասաց ։ Եւ ես ոչ գի-

-տէի զնա . այլ զի յայտնի լիցի Իսրայէլի , վասն այնո-րիկ եկի ես ջրով մկրտել : յոհ . ա . 31 : Ապա ասաց հրեշտակն : Եւ յետ վաթսուն և երկուց եօթներորդաց բարձցի օծութիւն . ա̄յ սպանցի.քս : ՚Ի մէջ այսորիկ գիտել պարտ է . զի այս վաթսուն և երկու եօթներորդս՝ նոյն է , զոր յառաջ քան զայս ասաց . բայց յայսմ նուագի զեօթն եօթներորդսն ոչ նախակարգեաց . սակայն զօրութեամբ ծանոյց . որովհետև այս ոչ է յաւելեալ ՚ի վ̄ր այնմ . զի թէ յաւելեալ էր , ապա ՚ի սկզբան եղեալ բովանդակութ̄ն այն , զոր եօթանասուն եօթներորդ գոլ ասուցեալ , և ասաց , թէ համառօտեցան ժողովրդեան քում , ոչ լինէր ճշմարիտ . և այսպէս անմարթ է այլ ազգ իմանալ : Ապա այսուիկ ծանոյց . թէ յետ անցանելոյ եօթն եօթներդի , և վաթսուն և երկուց եօթներորդաց , օծութի̄ն , որ է օծեալ առաջնորդն , բարձցի սպանմամբ : Սակայն ոչ պարտ է իմանալ առժամայն . այլ ՚ի կիսում եօթներորդի միոյ ՚ի վ̄ր յաւելլոյ , որ է երեք ամ և կէս . որպ̄ և հրեշտակն յետ սուղ ինչ բանի յաւել ՚ի վ̄ր , թէ ՚ի կէս եօթներորդին՝ բարձցին զոհք , և նուէրք : Ո՛ զի ՚ի կիսում այս յետին եօթներորդիս , մահուամբ ք̄ի դադարեցան օրէնք , և զօրութիւնք զոհից . որպ̄ և ցելումն վարագուրի տաճարին զայն նշանակեաց : Իսկ յետ լրանալոյ այս կիսոյս՝ և լինելոյ եօթներորդի , որով լրացան եօթանասուն եօթներորդքն , զհետ եկն աւերումն երմի , և տաճարին , և գերութի̄ն ա̄մ ազգին հրէից ՚ի հեթանոսս . բայց ոչ վաղվաղակի , այլ յետ քառասուն և երկու ամաց զկնի չարչարանացն ք̄ի :

Կորիւն առեւծու յուդա , ՚ի շառաւիղէ ելեր . և այլն որ ՚ի կարգին : ծնն . խթ . 9 :

Յուդայիւ նշանակի ք̄ս յազգէ յուդայ ծագեալ : Ո՛ որոյ՝ կորեան առիւծու անուամբ անյաղթելի քաջութի̄ն , և զօրութի̄ն ն̄ր նշանակի : ՚Ի շառաւիղէ ելեր , ասէ . զի է առանց սերման ՚ի կուսէն մարիամայ յառաջեկեալ : Ննջեր բազմեցար , ննջեցեր իբրև զառիւծ , և իբրև զկորիւն առիւծու . ո՞ յարուսցանիցէ զնա : Որ լատինս այսպէս է . Ահա բազմեցար , հանգուցեալ ննջեցեր որպէս զառիւծ , և իբրև զմատակ առիւծ , ո՞ յարուսցէ զնա : ՚Ի երկոցունց թարգմանութեցն իմ̄ց զք̄ի ՚ի խաչ ելանելն , զմեռանելն , որ է հանգչիլ , և զթաղելն նշանակէ : Զի ք̄ս ՚ի խաչ ելեալ աւարեաց և թափեաց զգերութի̄ն ազգի մարդկան ՚ի ձեռաց սատանայի : Իսկ մեռանելն ն̄ր վ̄ս այնորիկ համարեալ , և ննջման բառիւ նշանակի , զի որպ̄ հանգուցեալն , կամ ննջեալն ինքնին յառնէ . սոյնպէս և ք̄ս թէպէտ և մեռաւ մարդկապէս . բայց կենդանի մնացեալ ա̄ծապէս , ինքնին յարեաւ ՚ի մեռելոց : Ո՛չ պակասեսցէ իշխան ՚ի յուդայ , և ոչ պետ յերանաց ն̄ր . մինչև եկեսցեն նմա հանդերձեալքն . ՚Ի այլ թարգմանութե գրեալ է . մինչև եկեսցէ որ առաքելոցն է , կամ գալոցն է : այսինքն , մինչև եկեսցէ մեսիայն . քանզի յառաջ մեսիայն՝ անուանիւր որ առաքելոցն է . որ գալոցն է : Ո՛ նոյն նշանակէ և հանդերձեալքն . զի որ գալոցն է , հանդերձեալ ասի : Որդ՝ բանիւս այսուիկ յայտնի նշանօք կշտամբէին անհաւան հրեայք . զի առ գալստեամբն ք̄ի սպառ բառնիլ իշխանութի̄ն և պետութի̄ն ՚ի ցեղէն յուդայ : Եւ թէպէտ առ ժամանակօք կայսերութեն յունաց՝ զօրագլուխ ազգին հրէից եղեն մակաբայեցիք . բայց թագն թագաւորութե միշտ առ յուդայ մնաց . զի ցեղն յուդայ զմակաբայեցիս յաղագս նախանձայուզութե , և արութե ն̄ր ընտրեաց լինել զօրագլուխ , իմաստակալ և գործակալ իւր : Եւ նա է ակնկալութիւն հեթանոսաց : Այսուիկ նշանակի , թէ ք̄ս է փրկիչ ոչ միայն հրէից , այլ և հեթանոսոյ . իբր զի ը̄ուանիցին զնա հաւատով իբրև սաստիկ փափաքանօք ակնկալեն ըղձալի : Կապեսցէ զորթոյ զյաւանակ իւր . և զփաւակէն զյաւանակ էշոյն : Նշանակի , թէ ք̄ս կապանօք հաւատոյ՝ յուսոյ՝ և սիրոյ կապեսցէ ը̄ ինքն , որ է որթ ճշմարիտ , զժողովուրդն իւրեանն , և զժողովուրդն յա̄մ հեթանոսաց կոչեցեալ : Լուասցէ գինեաւ զպատմուճան իւր : այսինքն զմարմին իւր լուացէ արեամբ իւրով . զոր վ̄ս սիրոյ եկեղեցւոյ իւրոյ հեղու : Եւ արեամբ խաղողոյ զհանդերձ իւր : Արիւն խաղողոյ է գինի արեանն ք̄ի . իսկ հանդերձ է եկեղեցին . զի ք̄ս եկեղեցեաւն իբրև հանդերձիւ զգեստաւորի : Զուարթագին են աչք ն̄ր ՚ի գինւոյ : Այսուիկ նշանակի գեղեցկութի̄ն ք̄ի . և առանձնապէս նշանակի սուր և զօրաւոր նախատեսութի̄ն ն̄ր , որով զեկեղեցի իւր խնամէ և կառավարէ : Եւ սպիտակ ատամունք իւր քան զկաթն : Այսուիկ նշանակի աւետարանին ք̄ի քաղցրութե , և վարդապետութե քաղցրութի̄ն , ողջմտութի̄ն , մաքրութի̄ն և պայծառութի̄ն :

Ընդ

Ընդ զոհս, և ընդ պատարագս ոչ հաճեցար․ լսելիս հատուածեցեր ինձ, և այլն։ սաղ․ լԹ․ 7։

Այսինքն, ի զոհս և ընդ պատարագս, որք ըստ օրինացն մատուցեալ լինէին, ոչ հաճեցար։ Այլ զմարդկային կերպարանս զգենուլ ինձ կամեցար․ և զականջս հաստատեցեր ինձ, իբր Թէ զհնազանդութի, այս զի ես հնազանդութբ զիս քեզ պտրաստ մատուցից․ զի դու զողջակէզս, և զմեղաց զոհս ոչ խնդրեցեր․ այլ միայն զիս խնդրեցեր քեզ պատարագ։ Յայնժամ ասացի, Ահաւասիկ գամ․ ՚ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ։ Այսինքն․ յայնժամ տեսեալ իմ զայս կամս քո, ասացի, Թէ ահաւասիկ գամ առնուլ զմարմին․ քանզի ՚ի գիրս կենաց՝ յորում նախասահմանեալքն յոյց գրեալ կան, յառաջագոյն գրեալն ես եմ։ Այլ և ծննդոց գրոց առաջին բանն զիս նշանակէ․ այն և զսաղմոսի առաջին գլխոյ բանն որ է, Երանեալ է այր, և այլն․ վսն իմ ասէ հոգին սբ։ Եւ վսն իմ իսկ է այն, Թէ յօրէնս տն էն կամք նր․ և յօրէնս նր խորհեսցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի, և այլն որ ՚ի կարգին։ Առնել զկամս քո Ած իմ կամեցայ, և այլն։ Այս ինքնին յայտնի է։

Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն ՚ի քէն է, ելս եդ ՚ի սրտի իւրում ՚ի հովիտս արտասուաց ՚ի տեղւոջ յորում ուխտեաց։ սաղմ․ ՁԳ․ 6։

Այսինքն․ երանեալ է նա, որոյ առ ՚ի քէն է օգնութի շնորհաց․ և ՚ի կենցաղս յայս, որ է հովիտ արտասուաց, յորում ուխտեաց ծառայել տն, զառաքինական գործս եդ ՚ի միտ իւրում իբրև զսանդուղս։

Օրհնութիւնս տացէ որ զօրէնսն տուէ․ գնասցէ նա ՚ի զօրութենէ ՚ի զօրութիւն, և երևեսցի Ած հրեշտակաց ՚ի սիոն։ սաղմ․ ՁԳ․ 8։ Այսինքն, օրհնադիրն Ած՝ զօրհնութի, այս զշնորհս տայ նմա․ որով օրըստօրէ յաստիճանէ յաստիճան առաւելեալ յառաքինութիւնս ՚ի վեր ելանէ․ և նոյն ինքն Ած հրեշտակաց երևի նմա ՚ի սիոն․ այս յարքայութե երկնից։

Ասաց տր ցտր իմ․ նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զԹշնամիս քո պատուանդան ոտից քոց։ սաղմ․ ՃԹ․ 2։

Ասէ դաւիթ, Թէ ասաց տր ած հայր՝ ցորդին իւր, (որ է տր իմ ըստ աստուածութեն, և որդի իմ ըստ մարդկութեն) ՚ի համբառնալն նր յերկինս։ Նիստ ըստ աջմէ իմմէ․ մինչև զԹշնամիս քո զհրեայս, և զհեթանոսս ՚ի կատարածի ժմս եդից պատուանդան ոտից քոց․ այս, կատարելապէս ստորարկից քեզ։ Զի որք անսան հաւատոյ քում, զնոսա ափրոյլ․ իսկ որք ոչ, զնս արդար պատժովն ՚ի ներքոյ ոտից քոց եդից։

Գաւազան զօրութե առաքեսցէ քեզ տր ՚ի սիոնէ, և տիրեսցես դու ՚ի մէջ Թշնամեաց քոց։ սաղ․ ՃԹ․ 3։ Այսինքն, գաւազան արքայական իշխանութե քեզ սկսանի ՚ի սիոնէ, իբր յեկեղ, զի անտի սկսանին առաքեալք քո հոգւոյն սբյ գործակցութբ քարոզել զերկնային Թագաւորութի քո, և անտի տարածի ըստ ամ աշխարհ տէրութի քո․ և տիրեսցես դու ՚ի մէջ Թշնամեաց քոց, այս հրէից և հեթանոսաց հակառակորդաց քոց։ Ընդ քեզ է իշխանութի։ Այսինքն․ ընդ քեզ է, և ՚ի քէն անմեկնելի է հայրն Ած․ որ է սկիզբն յաւիտենական ծննդեան քոյ։ Յաւուր զօրութե, իբր Թէ յաւուր դատաստանին, յորժամ զօրութբ, իշխանութբ, և փառօք հօր գաս ՚ի դատաստան, հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւր։ ՚Ի վայելչութե սբց քոց։ Այսինքն․ ՚ի պայծառութե, և ՚ի խնդութե ընտրելոց քոց․ որք անլուսոսեր լուսով պայծառացեալք, իբրև զարեգակն փայլեն յարքայութե քում։ Յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։ Այսինքն․ ասաց քեզ հայրն յաւիտենական, Թէ ես ՚ի յարգանդէ բնական աստուածութե իմոյ յառաջ քան զամ հրեշտակս՝ և զհրեշտակապետս, յառաջ քան զարեգակն, և զլուսին, և յառաջ քան զամ արարածս, աստուածային ծննդեամբ իմով ծնայ զքեզ․ զի դու ես Ճառագայթ փառաց, և նկարագիր էութե իմոյ։ եբր․ ա․ 3։ Երդուաւ տր․ և ոչ եւս զղջասցի, Թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի։ Այսինքն, երդուաւ տր ած հայրն ամենակալ անփոփոխելի, Թէ դու ես ոչ միայն Թագաւոր, այլ և քահանայ յաւիտենական, ոչ ըստ կարգին Ահարոնի, այլ ըստ կարգին Մելքիսեդեկի, որ մատոյց ած ՚ի պատարագ զհաց, և զգ-

գլխոյ : Նստ տր ընդ աջմէ քումմէ : Այսինքն տր ած հայրն ամենակալ՝ է ը աջմէ քումմէ , որպ և դու ես ը աջմէ նր իբրև համագոյակից , համազօր , իշխանակից , հաւասար , և մշտնջենակից : Խորտակեաց յաւուր բարկութե . և այլն : Ինքնին յայտնի է :

Զուղխս 'ի ճանապարհի արբցէ , վնս այնորիկ բարձրասցէ գլուխն : Ուղխքն են հեղեղատից ջուրք յորդք՝ յարձակմնեցայք . և նշանակեն առօք հալածանք , նախատինք . և վիշտք : Աւստի ասէ , թէ զուղխս . զի զհալածանս , զնախատինս , և զչարչարանս կրըեսցէ 'ի ճանապարհի աստի կենաց . և զի զայս ամ հնազանդութբ հօր խոնարհ երկնաւորի վս փրկութե մերոյ կրեսցէ : վսկ բարձրասցի 'ի փառս 'ի վեր քան զամ :

Ես կացայ թագաւոր 'ի նմանէ 'ի վերայ լերին սիովնի սրբոյ նր 'ի պատմել զհրամանս տն : սաղմ . բ :

Այսինքն , ես կացուցայ , ոչ 'ի մարդկանէ . այլ 'ի մնէ այ հօրն , թագաւոր և գերագոյն օրէնսդիր 'ի վր սիոն լերին , զի 'ի վր ը հանուր եկեղեցւոյն հաւատացելոց , պատմել , և բացատրել զհրամանս տն : Քանզի սիոնն կոչիւր լեառն՝ որ էր 'ի մէջ քաղաքին երուսաղէմի . յորոյ վր էր ամրոցն դաւթի . զի զայն էառ դաւիթ . և եղև օրինակ եկեղեցւոյն քսի :

Տր ասաց ցիս որդի իմ ես դու , և ես այսօր ծնայ զքեզ : Այսինքն , տր ած հայր իմ ասաց ցիս և ասէ . դու որդի իմ ես բնութբ , և ես այսօր ծնայ զքեզ . զի ոչ 'ի ժամանակի . այլ 'ի յաւիտենականութե , որ է այսօր ինչ միշտ նոյն և անփոփոխ ներկայ :

Խնդրեա յինէն , և տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութիւն , և իշխանութիւն քեզ ընդ ամ ծագս երկրի : զի . քանզի դու որդի իմ ես սիրելի , խնդրեա յինէն զինչ և կամիս . զի ես ոչ եթէ միայն զհրէայս , այլ և զհեթանոսս տամ քեզ 'ի ժառանգութի , որպ զի թագաւորութիւնքս , և եկեղեցի քո կացուսցի ոչ միայն 'ի հրէից , այլ և յամ ազգաց . և իշխանութի քո տիրեսցէ ը ամ տիեզերս . որպ ցուցանի այս և յոհ . ժա . 52 :

Փրկեցեր զիս տր 'ի հակառակութէ ժողովրդոց , և կացուցեր զիս գլուխ հեթանոսաց : սաղմ . ժէ . 44 :

Այսինքն . փրկեցեր զիս հայր իմ երկնաւոր 'ի հակառակութէ կամակոր ժողովրդոյն հրէից , և կացուցեր զիս գլուխ , զի իշխան հեթանոսաց հաւատացելոց :

Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի ծառայեաց ինձ , և 'ի լուր ականջաց լուաւ ինձ :

Այսինքն . ազգն հեթանոսաց , զոր ես յառաջ ոչ ճանաչէի իմ ժողովուրդ . 'ի լըսել իւրեանց զաւետարանական բանս իմ , հաւատացին , և ինձ ծառայք եղեն . և հրամանաց իմոց 'ի լուր ականջաց հնազանդք եղեն :

Որդիք օտարաց ստեցին ինձ . որդիք օտարաց մաշեցան և կաղացան 'ի շաւղաց իւրեանց : Անօրէն հրէայքդ , որք յառաջ որդիք այ էին . յետոյ առ նախանձու 'ի մահ մատնել զիս կամեցեալ , եղեն որդիք օտարաց . զի դիւաց . դոքա ստեցին ինձ , քանզի 'ի ճըշմարտութե ոչ մնացին , այլ զբանս մարգարեիցն արհամարհեցին . վս որոյ և մեղօք հնոյն ադամայ մաշեցան , և կաղացան 'ի շաւղացն , զոր դու երկնաւոր հայր իմ , նախահարցն նց ցուցեալ էիր :

Առաքեաց զբան իւր , և բժշկեաց զնոսա . և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց : սաղմ . ճզ :
Այսինքն . առաքեաց զմիածին որդին իւր . և բժշկեաց զնոսա 'ի ցաւոց , և 'ի հիւանդութեց . և փրկեաց զնս յապականութէ մեղաց , և 'ի յաւիտենական մահուանէ , և 'ի գժոխոց :

Վէմն զոր անարգեցին շինողքն , նա եղև գլուխ անկեան : սաղմ . ճժէ : Այսինքն . վէմն (խորհրդաբար՝ վասն տանն այ հիմն լինելոյ այսպէս կոչեցեալ) զոր դուք , և փարիսեցիք , և այլ գլխաւորք ժողովրդեանն հրէից , դպրութբ , և իշխանութբ իւրեանց 'ի շինութի տանն այ կարգեալք . անարգեցիք ասելով վս քսի , թէ ոչ կամիմք թագաւորել դմա 'ի վր մեր , նա եղև գլուխ անկեան տանն այ . զհրէայս , և զհեթանոսս 'ի մի շինուած այ միացուցեալ :
'Ի տնէ եղև այս , և է սքանչելի առաջի աչաց մերոց : Յայտնի է :

Արի տր , 'ի հանգիստ քո . դու , և տապանակ կտակի սրբութե քոյ : սաղմ . ճլա : Այսինքն . արի՝ արի տր յս քս յետ կատարելոյ զփրկագործ տնօրէնութիս քո . համբարձիր յերկինս 'ի քո անձեռ հանգիստ . և տուր զհետ քո զտապանակ կտակի սրբութե քո . զի զմարիամ զամենօրհնեալ մայր քո , և կամ զսբ եկեղեցի :

Ո՜րչափ անուշ է տէր, և չափ ո՜րչափ անուշ յորդանս տէր · ու քինանոյսս ։ սաղմոս · Ձ · 4 ։

Ո՛րչափ անուշն է Տէրս ։ Սյունիկ ցուցանել, թէ ոչինչ անուշն է, որ կատարելապէս զբը նութիւն մեր բացատրիցէ · այլ անուշամբքն մեր այնչափ ինչ իմանամք զմեզ · որչափ ինչ արարածքն մեր համեմատութեամբ իւրն երևեցուցանեն, որ ՚ի բովանդակութիւն իւրեանց զկաթիլ մի ՚ի ծովէ է · Թ առելոյն եսայեայ · Այս հաւատ ո՜րչափ անուշն յորդանս տէր ։ Սյաուէիկ ծանուցանել, թէ մեծ ունի զօրութիւն · և ատել մակաբերէ, թէ ՚ի յաձնութենէն յառալ անձինք ։

Ահաւասիկ ՚ի մէջ ատեան հանեալ իմ, ընտրեալ, և հաճեցայ, և հանգուցեալ յոյժ ։ Ո զօրէնսդ պարզապէս ժողովուրդ ՚ի մէջ նոյ, այնպէս անձնեսցէ դեղել նո ՚ի հարցանել, և հատ նո յորդանս հարցանել ։ եսայ · ծբ · 13 ։

Յայսմ մարգարէն ՚ի դէմս մեր հօր՝ խօսի զօրդւոյն, թէ ահա մանուկ իմ, վ՛ն առեալ ծառայական կերպին ․՚ի մէտ առցէ · մի · իմաստութեամբ զկամս և զհրամանս իմ արասցէ · և զփրկագործութիւնն կատարեսցէ ։ Ա երասցի · մի երկնային վարդապետութեամբ, և մեծային սքանչելագործութեամբ, և մեծ չնորհօք՝ զոր յանմի ցուցցէ, բարձրասցի, և փառաւորեսցի յոյժ՝ մինչև մեծ ժողովուրդքն զնա իբրև զմեսիայ ընդունիցին, և զնա յերուսաղէմ ոստովք արմաւենեաց իբրև ըզ թագաւոր յաղթող մուծցեն ։

ՄԱՐՏ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ:

Նախախնամութիւն յաղագս երից առաջնեայց մարդկան:

Ըստ կարգին որ 'ի սկզբան գըրոյս եդաւ, առ լրումն մասինս այսորիկ՝ կարգին մտածութիւնք 'ի վերայ չորից իրաց. զորս յառաջնում մասին բացատրեցաք. և յերկրորդումն և յերրորդումն վկայութիւնք ածային գրոց ստուգեցաք: Յորոց առաջինն է, թէ մարդն ստեղծաւ յայ ը՟ պատկերի, և ըստ նմանութեան այ. և առաւելեալ 'ի նոյն շնորհօք, ոչ զի եթէ պահպանութբ պատուիրանաց հպատակ կացցէ նմա, վերառցի 'ի հաղորդութի ածային փառացն 'ի յաւիտեան: Երկրորդն է, թէ վն զի ած է տր, և մարդն է ը՟ ա՟մի ծառայ նր. արժան և իրաւ եղև նմա, զի յառաջագոյն զշնորհս միայն ընկալեալ, զածպաշտութե վարս վարեսցէ 'ի վր երկրի. և ապա ողորմութբ ա՟ն վերառցի 'ի վայելումն փառացն այ: Երրորդն է, թէ մեղաւ մարդն, և մերկացաւ յածային շնորհաց. և եղև ստրուկ ծառայ սատանայի. և արժանի յաւիտենական դժոխոց: Իսկ չորրորդն է, թէ շնորհեցաւ մեզ յածային գթութէ միածին որդին այ փրկիչ. որ մարմնացեալ 'ի սբ կուսէն, եղև առաջնորդ կենաց. և նորոգեաց 'ի մեզ զճշմարիտ ածպաշտութիւն օրինակաւ վարուց իւրոց, և վարդապետութբ. և 'ի կատարումն ա՟մի մահուամբ խաչի պատարագաւ անձին իւրոյ փրկեաց զմեզ, և նուիրեաց երկնաւոր հօր իւրում. վն որոյ 'ի չորից աստի խորհրդեաց՝ առեալ լինին նիւթք մտածելեացն որք աստ առաջադրին: Նախ՝ կարգին մտածութիւնքն 'ի վր ստեղծման մարդոյ ըստ պատկերի այ: Զհետ սր ը՟ կարգի առաջնոյ ձառին կարգին մտածութիւնքն 'ի վերայ ածպաշտութե: Նա յարին 'ի սոսա մտածութիւնք բանից, որովք ստուգիմք, թէ մեք ը՟ ա՟մի այ եմք: Ապա մտածութիւնքն երկնից արքայութե: Ապա մտածութի 'ի վր գերբնական կենաց: Ապա վասն զգուշանալոյ 'ի մեղաց: Ապա մտածութիւնք 'ի վր մարդեղութե բանին. և փրկելոյ նր զմեզ հնազանդութբ մահու խաչի:

Մտածութիւնք 'ի վր ստեղծմանութե մարդոյ ը՟ պատկերին այ:

Առաջին օրինակ մտածութեան:

'Ի վերայ բանից ինչ, որովք ստուգի, թէ մարդն եղեալ է ը՟ պատկերի այ:

Մասն առաջին:

Մտածեա, թէ որպիսի մեծագործ խորհրդով ստեղծ ած զմարդն: Զի 'ի վր ստեղծման այլ արարածոց գըրեալ է: Ծնն. ա. 3. և 6. թէ ասաց ած, եղիցի այս ինչ, և այն ինչ, և եղեն: Իսկ վն ստեղծման մարդոյն գրեալ է. Ծնն. ա. 26. Ասաց ած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում, և ըստ նմանութեան. և արար ած զմարդն 'ի պատկեր իւր. ըստ պատկերի այ արար զնա: Ապա խնդրեա, թէ զինչ իրօք եղև մարդն 'ի պատկեր այ. և ծանիր, զի ած 'ի բոլոր էութե իւրում՝ է որ էն, որ կեայ, և իմանայ. ուստի զմարդն յիմացական աստեղծանի գոյացուցանելով, կերպիւ իմն բոլորովին ընութե իւրոյ նմանեցոյց. և այսոք 'ի պատկեր իւր արար զնա. ոչ ասեն վարդապետք, թէ մարդն այսորիկ՝ զի ոչ միայն է, և կեայ, այլ և իմանայ, այնոք նմանի այ, մինչև ունիլ զնմանութի երևեցուցիչ ածային տեսակի: Ով անձառ մարդասիրութե արարչին մերոյ: Տես ով անձն իմ հեգ, թէ որպիսի, և որչափ պատուական ստեղծ զքեզ: Երկրպագեա նմա, և հայցեա 'ի նմանէ, բարւոք ճանաչել զինքն, և սիրել զնա յամ սրտէ:

Մաս

Աւուր Երեքշաբթի ։

Մտածեա՛, և խնդրեա՛, թէ զի՞նչ այլ իրք են 'ի մարդն, որով է՛ պատկերի և է՛ նման նութեան այն Եղե . որպ զի և յայտնագոյն ծա նիցես զխորհուրդս զայս ։ քանզի որպ ուսու_ ցանէ մեզ Թովմաս . 1 . խն . 93 . յդ . 6 . այսուհետև ես, զի է 'ի մարդն ծագումն բա_ նի ըստ մտաց, և բղխումն սիրոյ ըստ կա_ մաց, է 'ի նմա պատկեր անեղ Երրորդու_ թեան . քանզի ամենութիւն է Երեքանձնեայ է ծագման բանին 'ի Հօրէ, և է բղխման սիրոյ յերկաքանչիւրմէ . մի զի ամ հայր՝ որ է ծայրագոյն իմացական, անսկիզբն, և անզբաւ իմացողութբ . մշտ ներգործութբ տեսանելով զէութի իւր՝ ծնանի զբանն առ ձառ, որ է միածին որդի իւր համագոյ . և նոյն ինքն է՛ որդւոյ իւրում մշտ ներգոր_ ծութբ սիրելով զամենութի իւր բղխէ զսէր, որ է հոգին սբ ։ Իսկ մե այսորին պատկեր Երեքանձնեայ ամենութեան յայնժամ կեր_ պաւորագոյն լինի յոգւոջ մարդոյ, յորժամ ներգործութբ մտածէ զամ . և 'ի մտածու թէ ասոր բղխի 'ի սրտի նր սէր առ նա, և սիրէ զնա ։ Ապա ո՞րպ զի մի՛ աղօտասցի . այլ առաւել պայծառասցի խորհուրդ հրաշազեղ պատկերիս ամենութե 'ի հոգիքդ, փոյթ ա_ րասջիր կրթութբ ամպաշտօնէ առէպ խոր հիլ զամենայնին բարութիւն, և սիրել զնա . զի զայս որչափ յաւելցես, այնչափ առա_ ւելցի ամենամանութի 'ի քեզ ։

Աւուր Երրորդ ։

Մտածեա՛, և խնդրեա՛ . թէ մի՛ էր առեղծ ամ զմարդն այսպիսի ։ Յայտ է 'ի սբ. գրոց. թէ մինչ՝ զի որդեգիր իւր արասցէ զն_ նա շնորհօք, և յետոյ՝ եթէ այսմ ոչ առոււն ցանեսցէ, այլ հպատակ կացցէ ամենայնին հրա մանաց, 'ի վեր առցէ զնա յամենայնին երանե լի կենաց իւրոց կցորդուի, նման իւր առ_ նելով զնա ամենակերպ Թագաւորութբ, բերկ րութբ, և փառօք ։ Սիլ անպատում ան_ բաւ զեղումն սիրոյ Ինքնաբուն բարւոյն ։ Ընդ որ սքանչացեալ սբ. Ներսէս շնորհալին ասէ . շարական ։ Զհանդուրժեալ բնութբ բար ւոյն՝ ունիլ միայն զանձառ բարիս, այլ ստեղ ծեալ զմարդ յիւր պատկերին ։

Պտուղ ։

Պտուղն, զոր 'ի մտածութենէ աստի քաղել պարտիմք, է երկնչիլ 'ի կորուսանելոյ մե_ րոց զորդեգրական ժառանգութիւն ամենայն փառաց 'ի յաւիտեան ։ Ու որ հարկաւոր է մեզ յելս մեր աստի գտանիլ շնորհօք ամենա մանն է՛ պատկերի նր ։ Սոյ 'ի միտ առ զկշտամ բութիւն դաւթի, որ ասէ . Մարդ 'ի պատուի էր, և ոչ իմացաւ . հաւասարեցաւ անասնոց անբանից . և նմանեցաւ նոցա ։ Իսկ պատճառն է, զի վարք մարդոյ ոչ է իբրև զգեստ ինչ, որ արտա_ քոյ է մարդոյ . այլ է ներքին որակութի . և մի այսորիկ որպիսի վարս բերէ մարդ յանձին իւրում . այնպիսի իմն լինի ներքսապէս Եթէ զքն նր վարս բերէ յինքեան, լինի ամենամանութբ կերպաւորեալ . իսկ եթէ զվարս հակառակայն նր բերէ, նր վատթա րութբն լինի վատթարեալ ։ Օ որ օրինակ. եթէ հպարտութբ, կամ ատելութբ, և կամ նախանձու զնմանութի դիւաց յանձին բերէ ։ Եթէ բարկութբ, զառիւծուց՝ և զշանց ։ Եթէ ագահութբ, զխլրդանց ։ Եթէ գողութբ, զմկանց ։ Եթէ ծուլութբ, զշո_ ղոտայ ։ սոյնպէս և այլ մոլութբ զայլոց ։ Աստի ասէ ոսկեբերանն . ամ դաղան զմի ինչ բարս չարութե յանձին իւրում կրէ ։ իսկ մարդ՝ որ զսկիզբն իմաստութե յիւրմէ մերժէ, և 'ի շնորհացն նր զատեալ գտանի, զամ բարս չարեաց յանձին իւրում բարձեալ բերէ . զի այնու հետև ոչ դազան թոռնա_ ւոր, և ոչ անասուն անմիտ արժան է ասել. այլ ձիւաղ բիւրակերպ բիւրագոյն ախտա_ կացեալ ։ Օ այսպիսի բորբոք 'ի միտ առեալ, դու քեզէն տուր զիրաւն . զիարդ ամ զայսպիսին դիւային գազանաց ոչ մատնեսցէ, և ոչ 'ի տանե ջանս գժոխոց առաքեսցէ . և ո՞րպ յերկնից արքայութի իւր ընկալցի ։ Սի թէ յարքայու թե իւրում դաղարս դիւացելոց, գազանա ցելոց, և անասնացելոց ունիցի ։ Օ ինչ միա բանութի է քն ը դիւացելոց, և անասնացե_ լոց ։ Սրբ նախազգոյշ առնէ զմեզ դաւիթ. սաղմ . լա . 9 . ասելով . Մի՛ լինիք որպէս զձի, և զջորի . զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն ։

Երկրորդ օրինակ մտածութեան ։

Ի վ՟ր այլ բանից լինելոյ մարդոյն ը՟ պատկերի ա՟յ ։

Մասն առաջին ։

Մտախոհ լեր բարւոք, և քննեա՛, թէ մինչև ստեղծեալ էր զքեզ ա՟ծ, զինչ էիր ։ Յայտ է, թէ ոչինչ էիր ամենևին ։ Եւ ապա տես. զի ա՟ծ՝ որ ոչ ինչ իմիք կարօտի, ստեղծ զքեզ յոչնչէ յիւր պատկեր ։ Եւ ՚ի կազմելն զքեզ ը՟ հոգւոյդ այսպիսի, ոչ միայն ետ քեզ զմարմին, քան զայլ կենդանեացն յոյժ պատուական, այլ և ետ քեզ ըզ հոգի անմահութեանն, ոչ սոսկ զգայական, այլ բանական. որ է իմացական, և անձնիշխանական զօրութբ պերճացեալ ։ Եւ շնորհելով քեզ զայսպիսի հոգի՝ արար զքեզ կերպիւ իմն ա՟մ արարածոց կատարելութեանց համառօտ բովանդակիչ ։ Զի այլ ա՟մ արարածք կամ են մարմնաւոր գոյացութի ինչ միայն, որպիսի են տարերքն, և ա՟մ անհոգի տարրեղէնքն ։ Կամ են բուսականք, որպիսի են տունկքն ։ Կամ են զգայական միայն, որպիսի են անբան կենդանիքն ։ Եւ կամ են ոգիք իմացականք, որպիսի են հրեշտակք ։ Իսկ մարդն ը՟ տարերցն է մարմնեղէն գոյացութի. ը՟ տնկոց է բոյս. ը՟ անխօս կենդանեացն է զգայուն. և գոլով բանական՝ ը՟ հրեշտակաց է իմացական ։ Աքանչացիր ը՟ ա՟ծային հանճարն. և ը՟ սէր նր՟ առ քեզ, որով զքեզ այդպիսի էաւորութբ գոյացոյց, որ զա՟մ եղելոց զկատարելութիւնս ունի յինքեան սեւօրէն ։ Շնորհս մատո՛ նմա, և առաջադրեա՛ ա՟մ զօրութբ քով ծառայել նմա ։

Մասն Երկրորդ ։

Մտածեա՛ և զայս, զի ո՟ղ ատե՟րբ յոլհան նէս զամենակալն. ա՟ծ կազմելով զքեզ կենդանի բանական, արար զքեզ իմացական, և ը՟ ինքեան կարողական ։ ՟ի է անձնիշխանական՝ ը՟ իւրում նմանութե. և այնո՟ կացոյց զ՟ր ՚ի վ՟ր գործածութե կարողութեց՝ և զօրութեց քոց ։ Զի որ՟ ա՟ծ անձնիշխան է ՚ի գործել, կամ ոչ գործել. և գործէ ըստ խորհրդոց կամաց իւրոց ։ եփես . ա . 11 . սոյնպէս և ՚ի մարդն տպաւորեաց զնմանութի անձնիշխանութե իւրոյ. որով անձնիշխան է ՚ի գործել, կամ ոչ գործել, և ունի գործել կամ ոչ գործել՝ ը՟ խորհրդոյ կամաց իւրոց . ը՟ այնմ

էկղէս . ժէ . 15 ։ ա՟ծ ՚ի սկզբանէ հաստատեաց զմարդն, և եթող զնա ՚ի ձեռս խորհրդոց իւրոց . յաւել զպատուիրանս, և զհրամանս իւր . եթէ կամիցիս զպատուիրանն պահել, պահեսցեն զքեզ ։ Զայսպիսի բարւոք ՚ի մտի առեալ՝ շնորհս մատո՛ յայսպիսի մեծահանճարութի զքեզ բարձրացուցանողին . երկրպագեա՛ նմա, և յանձն առ՛ զայս ազատութիքս նմա . զի նոյն ինքն միշտ երասանակալ սրտիքս եղեալ, կառավարեսցէ զքեզ . և մի՛ թողցէ զքեզ երթալ զհետ ցանկութե անձինքոյ ։ Ուստի ասա՛ նմա ։ Օրէնսդիր արա՛ ինձ տէր ՚ի ճանապարհի քում . և առաջնորդեա՛ ինձ ՚ի շաւիղս ուղիղս ։ սաղմ . իզ . 11 ։

Մասն Երրորդ ։

Մտածեա՛ և զայս . զի մարդոյ ը՟ պատկերի ա՟յ լինելն, երրակի է, ը՟ բնութբ, ըշ՟ նորհօք, և երանական փառօք ։ Զառաջինն որ է բնութբ, ը՟ ունին ա՟մ մարդիկ ՚ի ծննդենէ . զի ամենեքեան էապէս լինին բանական ։ Բայց պատկերս այս թէպէտ է անեղծանելի, սակայն է նուազ կերպարանի իբրև առաջին արկուած ինչ նկարագրութե պատկերի ։ Ուստի պիտոյ է սմա տեսակաւորիլ և պայծառանալ նիւթով հանձարաբար շնորհաց, զոր իւրաքանչիւր հաւատացեալ ը՟ ունի ծննդեամբ աւազանին . զի ը՟ նոյն պետրոսի, հաճոյարար շնորհն է հաղորդութի ա՟ծեղէն բնութե, այս է նմանութբ ։ Ուստի որք ՚ի շնորհս են, և մանաւանդ՝ որք ներգործութբ խորհին զա՟ծ, և սիրեն, յայտնագոյն ունին յոգիս իւրեանց զպատկեր և զնմանութիւն ա՟յ ։ ա՟ռ թոմմաս . 1 . խն . 93 . յօդ . 7 . և 8 ։ Քանզի ա՟ծ միշտ իմանայ զինքն և սիրէ իբրև անբաւ բարի՝ ո՟ղ և է ։ Բայց զի ՚ի շնորհս ա՟յ եղեալքն՝ մինչ դեռ յաստի կեանս են, զա՟ծ ոչ տեսանեն . այսր աղագաւ զնա ոչ վերջին կատարեալ սիրով սիրեն . ուստի և պատկերն ա՟յ ՚ի նոսա յայսմիկ կայի ոչ գոլով կատարելագոյն, ոչ ունի վերջին ա՟ծակերպութիւն նմանեցուցանել զնա ա՟յ ։ Իսկ ՚ի հանդերձեալն յորժամ միտք նց՟ լուսով փառացն զօրացեալ վերանան, և էութիւն ա՟յ իբրև իմանալի տեսակաւ տեսակաւորեալ, դէմ յանդիման տեսանեն զա՟ծ, և սիրեն . յայնժամ պատկերն և նմանութիւն ա՟յ ՚ի նոսա առաւել պայծառանայ, և այնո՟ յոյժ կատարելագոյն նմանութբ նմանին ա՟յ . ը՟ այնմ . ա . յով . գ . 2 ։ գիտեմք զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա

նմա լինելոց եմք . զի տեսանելոց եմք զնա որպէս և էն ։

Պտուղ ։

Պարտ է մեզ ստէպ զգաստութեամբ խորհել զայս . թէ որք ըստ չափու իմն շնորհաց իբրև կցորդք եղեալք նմանօղ լինին քրիստոսի՝ այն անդրանիկ եղբօր, նոքա են որդիք արքայութեան ։ ըստ այնմ . հռոմ . Ը . 29 ։ Զոր յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակիցս լինել պատկերի որդւոյն իւրոյ . զի եղիցի նա անդրանիկ ՚ի մէջ եղբարց բազմաց ։ Ուստի վայ է նմա՝ որ յետ իւր յաստի կենաց գնալ յաւիտենին քրիստոսի օտար վարուք, և աննման կերպարանօք . զի ո՞ր յոյս կայցէ նմա, և զինչ համաձայնութիւն վարուց ունիցի՝ ընդունելի լինելոյ նմա, յորժամ տեսցէ զինքն [illegible] մեղօք և մոլութեամբ գլխովին յանկարծ կերպարանս փոխեալ . որով հետև դատաւոր ամենեցուն է նոյն ինքն քրիստոս անդրանիկն յոր դէմ այ . և բնաւ իրաւամբք ունի ասել ցայնպիսին . ո՞վ չար և վատ, եթէ մարթէր ինձ անխնայել ՚ի քեզ, և յերեսաց իմոց ոչ ՚ի բաց մերժել . զի արդ հնար էր ինձ և քեզ ՚ի միասին լինել . զի ես խոնարհ եմ, և դու հպարտ . ես եղբայրասէր, և դու եղբայրատեաց, և նախանձալլուկ . ես հեզ, և դու բարկացօղ . ես աշխատեալ արդիւնարար, իսկ դու յոյլ և վատնօղ արդեանց . ես պահեցօղ, իսկ դու խրախճանասէր . ես ողջախոհ, իսկ դու բղջախոհ . ես գթած, և բարերար . իսկ դու անգութ և չարարար . ես իմոցս առատաբաշխ . իսկ դու կծծի, և յօժար ՚ի յառ, և ոչ ՚ի տուր . ես անյիշաչար . իսկ դու ոխակալ, և վրէժխնդիր . ես աղօթասէր . իսկ դու ձանձրոյթ և տաղտուկ ՚ի յաղօթս . ես համեստ, իսկ դու անպարկեշտ ՚ի խորհուրդս, ՚ի բանս, և ՚ի գործս քո . ես յամ ժամ զկամս հօր իմոյ առնօղ . իսկ դու կամապաշտ, և նուիրեալ սատանայի, մարմնոյ, և աշխարհի . ես վն փրկութեան քոյ ՚ի խաչ ելեալ . իսկ դու հանդարտեամբ մարմնոյ հեշտացեալ . ես հանապազ հօր իմոյ փառաւորիչ . իսկ դու զփառս անձին քո խնդրօղ ։ Ուստի ոչ ինչ նմանութիւն վարուց, և համաձայնութիւն ը ես գտանեմ ՚ի քեզ, այլ ը սատանայի . վասն արդար իրաւամբք ասեմ . ՚ի բաց գնա յերեսաց իմոց . և լեր ը նմանակցօքն քո ը դևան ՚ի դժոխս ։ Ով ահաւոր արդար դատաստանին քի . ընդդէմ որում ոչ ոք ՚ի մեղաւորաց ունիցի պատասխանի պատճառել . այլ ամ անօրէն խցցէ

ժէ

զբերան իւր, և իջցէ լալով յանդունդս դժոխոց ։

Երկրորդ Մտածութիւն ։

՚Ի վերայ վարուց ածպաշտութեան ։

Առաջին օրինակ Մտածութեան ։

Մասն առաջին ։

Մտածեա՛, թէ զինչ իցէ իրօք ածպաշտ վարքն . որով մարդ կատարելագոյն ուղիղ լինի առ ած, արդար՝ և հաճոյ այ ։ Նա ծանիր, զի ածպաշտ վարքն է շնորհօք այն ճանաչել զած ամենատէր . և զինքն, և զիւրս ոչ տիրապէս իւր, այլ ը տէրն այ ։ Նա ը սմին այսմ ճշմարտութեան գործադրիչ խորհրդով կամաց, զանձն իւր՝ և զոր միանգամ անձին իւրոյ են, իբրև զիրս այ ը հրամանաց և ը հաճոյից նր վարել ։ Նա առ այ կամոն նր զինքն, և զիւրսն՝ պատրաստ կամօք երկիւղիւ և սիրով ՚ի պահանջել հրամանաց նր նմա մատուցանել . զի վն վկայեաց ած յաղագս յոբայ, թէ է այր անարատ՝ ճշմարիտ՝ ածպաշտ . այ և գրեալ է . յոբ . ա . 8 . և բ . 3 ։ Իսկ թէ խնդրիցես . յինչ իրաւանց պարտ է մարդոյ այսպէս կարգիլ առ ած, ծանի՛ր . զի ած է արարիչ ամի՝ ըստ ամի . և ամենատէր . իսկ մարդն է ամ իրօք գործ նր . և ծառայ նր . ը այնմ . սաղ . ճժե . 16 . ո տր, ես ծառայ քո եմ . ծառայ՝ և որդի աղախնոյ քոյ . և ը այնմ առակ . ժզ . 4 ։ ամ ինչ գործեաց տր վս իւր ։ Նաև ած իրաւունս ունի ոչ միայն զբարիս շնորհել . այլ և զշնորհեալսն ՚ի բաց բառնալ, և զհակառակս նոցին բերել . ոպ, զվշտս, և զանարգութիւնս, զչարչարանս, և զմահ . որպէս զայս խոստովանեցաւ երանելին յոբ . և իրօք ստոր եարկ զանձն իւր այ իբր այսպիսի տն, ասելով . տր ետ և տր եառ . որպէս տն հաճոյ թուեցաւ, նոյնպէս և եղև . եղիցի անուն տն օրհնեալ ։ յոբ . ա . 21 ։ Նաև ասաց . եթէ զբարիսն ընկալաք ՚ի ձեռանէ տն, չարեացն ոչ համբերիցեմք ։ յոբ . բ . 10 ։

Մասն երկրորդ ։

Մտածեա՛, զի այս իրաւունք ամենատեառն պարտին ՚ի մր իւրաքանչիւր մարդոյ հանդիսանալ . այս զի ցուցցի և ծանիցի ամենապետութիւն նր . և փորձիւ յայտնեսցի հաւատարմութիւն և կատարեալ ածպաշտութիւն ծառայից նր . և անհաւատարմութիւն,

և ամպարշտութիւն ապստամբելոյն 'ի նոր-
մանէ · և այնպէս 'ի պսակէն զհաւատա-
րիմսն , և'ի պատուէն զապստամբսն երևես
ցի ածային արդարութիւն ։ Ուստի զիւրա-
քանչիւր մարդ գիտակ բարւոյ և չարի , զի
կայցութէ , և զի իւր տուեալ զօրութէ և շը-
նորհաց , փորձէ ամփոփմամբ բարեաց , և
պէսպէս վշտօք մարմնոյ՝ կամ հոգւոյ · ոմն զի
ընտիրքն հանդիսասցին , և խոտանքն յան
դիմանեսցին ։ Յայտ եղև այս յառաջին ծնօղս
մեր · ծնն · Է · և Գ · զորս յետ ածակերպ ձո
խացուցանելոյ , և շնորհելոյ նր զդրախտն
փափկութէ , և զամ երկիր , ամփոփեաց 'ի նո
ցանէ զպտուղն միոյ 'ի ծառոց՝ պատուէր
տուեալ չուտել'ի նմանէ ։ Օրով սահմանաւ
եթէ չէր նր անցեալ , հանդերձեալ էր ած
զնոսա և մեծամեծ շնորհօք և փառօք
ձոխացուցանել ։ Յայտ եղև 'ի մեծամեծ
ծառայս այ , ոմն'ի հաբէլ · զորմէ գրեալ է ·
ծնն · Դ · 4 ։ Թէ հայեցաւ ած 'ի հաբէլ և 'ի
պատարագս նր ։ Նա յետ այսորիկ՝ ոմն գրեալ է ,
Թոյլ ետ սպանանել յայնպիսի ժամանա-
կի , յորժամ յոյժ հարկաւոր էր նի ապ-
րիլն նր · բայց ած զայսպիսի մահուամբ
հանդիսանալն նր յածպաշտութէ լաւ հա-
մարեցաւ քան զկեալն նր , և զնուլ զծսսերն
դովք ։ Ուստի եղև առաջին արդար , կոյս ,
և առաջին մարտիրոս ։ Յայտ եղև և 'ի
յաբրահամ այսու , զի հրամայեաց նմա
ած զորդի իւր զոր սիրէր զիսահակ ողջա-
կէզ առնել · և 'ի ձեռնամուխ լինելն նո-
րա յայս գործ · ձայն ետ թէ մի՛ ձգեր զձեռն
քո 'ի պատանեակդ · զի այժմ գիտացի , եթէ երկն-
չիս դու յայ · և ոչ խնայեցեր յորդւոյ քո սի-
րելւոյ վասն իմ ։ ծննդ · իբ · 12 ։ Յայտ ա-
րարեալ , թէ այնու հանդիսանայ եր-
կիւղած լինելն մարդոյ , եթէ անձին իւ-
րոյ՝ և ամ իւրոց ոչ զինքն տիրապէս , այլ
զած ունի տր · և է պատրաստ յամի զոյն այ
ընծայել հնազանդութբ ։

Յայտ եղև և 'ի յոբ · զի սմա յառաջագոյն
շնորհեաց ած զբարեբաստութիւն մեծ · և յե-
տոյ յորժամ փորձեաց զնա ամփոփմամբ այնր
ամի հաւատարիմ գտաւ · ուստի անկեալ
'ի վր երեսաց երկիրեպագ այն , ասելով ։
Մերկ եկի ես յորովայնէ մօր իմոյ · և մերկ դարձայց անդր
ընդ · տր ետ , և տր էառ · որպէս տն հա-
ճոյ թուեցաւ , նոյնպէս և եղև · եղիցի անուն տն
օրհնեալ ։ յոբ · ա · 20 ։ Դռլ և ասաց · եթէ
զբարիս ընկալաք 'ի տնէ , չարեացս ոչ համբերիցեմք ։
Յայտ արարեալ թէ պարտ է և իրաւ է ·

զի որք զբարիսն ընկալաք'ի տնէ , զչարիսն
և ընդունիցիմք 'ի նմանէ · որով կատարե
լապէս տրութի ամենապետութէ նր 'ի վր
մեր հանդիսացի ։

Մասն Երրորդ ։

Մտածեա՛ և զիշխանականկդ տիրապետու-
թիւն 'ի վր իրաց քոց , և տես թէ ոմն դու
ինքն կամիս , զի որք միանգամ քո իրք են , զի
հաձոյից քոց կայցեն , և զի խորհրդոյ կամից
քոց վարեսցին 'ի գործ ։ Քզի եթէ ծառայք ի-
ցենքո , ոչ կամիս , և ոչ արդար համարիս , թէ
ինքնագլուխ ինքնակամ կայցեն , և գործես
ցեն · կի առանց հրամանաց քոց յայլմէ , և
առ այլ վարեսցին ։ Սոյնպէս և եթէ անբանա
կան , և անկենդան ինչք ենքո , ոչ կամիս ,
թէ նոքա ինքնին , և կամ յափշտակութբ
իմն եղիցին այլոյ · մանաւանդ այնոքիկ զորս
դու ձարտարապետեալ իցես , կամ կազմեալ
յօրինեալ իցես յանօթ · և այն զի դու զնո
սա ոչ զի ամի արարեալ ես 'ի չգոյից գոյա-
ցուցանելով · այլ կազմեալ ես զնոսա յիրաց
զորս արարեալ է ած , և ածային գործակցու-
թբն իսկ կազմեալ ես , և ոչ ինքնին առանց նր ։
Նա զիարդ լինիցի , թէ դու քրիստոնեայդ ,
որ զի նմանութէ ածութէ ստեղծար 'ի
նմանէ · և միշտ 'ի նմանէ , և նովաւ , և 'ի
նմա կենդանի ես , շարժիս , և գործես ,
յայսմ ամի զանձնքո՝ և զքոյս՝ զոր յայ ու-
նիս , ոչ առ հաձոյս նորա կարգեսցես ,
և ոչ նուիրեսցես նմա ածպաշտութեամբ ·
այլ ըստ կամաց հաձոյից քոց կեցեալ ,
ինքնագլուխ անձամբ անձին վարեսցիս ·
անփոյթ եղեալ զած զարարիչն քո խնդ-
րել ։ և յայսպիսի անզգամութենդ իցես
ածապաշտ , ուղիղ և արդար , հաձոյ
այ , և ընդունելի արքայութե նր ։ Նա մի թէ
արքայութիւն երկնից ժողովարան անզգա-
մաց , կամ անխտիր անձանց իցէ · և կամ
մարթ իցէ այ ոչ գիտել թէ զինչ գործէ ,
կամ զո՛րպիսի ոք ընդունի 'ի յաւիտենական
փառսն իւր ։ Ոչ ապաքէն յետին անմիտ է
այնպիսին , որ ոչ իմանայ , թէ այս անհնա
րին հետևանայ 'ի դնելոյն , թէ ած զձշ
մարիտ ածպաշտութէ ստուգանօղ ան-
նուէրսն ոչ մերժէ , այլ գթութբ ընդունի յար
քայութիւն իւր ։

Պտուղ ։

Ըստ մեծի ազդեցութէ բանից մտածու-
թեանս այսորիկ հարկաւոր է խելամտութի

ապացուցութեան սորա · և զի նմին սակս կարգել գործով զինքն և զիւրսն առ Աստուած · և զի նմին այսմ կարգելոյ՝ ոչ ում ինքնիշխան՝ այլ իբրև զպաշտօնեայ ամենայնի, զիւր իւր իբրև զԱստուծոյ 'ի հաճոյից նորա յորդորել առ Աստուած վարել · և զայս իւրաքանչիւր հաստատեալ զի կարգի, և զի կացուն իւրում մնաւսելով :

Երկրորդ օրինակ մտածութեան ·

Մասն առաջին :

Մտածեա՛ և ստուգեա՛ · զի որք 'ի վարս Աստուածպաշտութեան, որ 'ի նախընթացս միտածութեան բացատրեցաւ, զանձինս իւրեանց շնորհօք Աստուծոյ մարզեն · նոքա ճշմարտիւ զԱստուած ամենայնիւ անձանց իւրեանց ունին և ցուցանեն · զի ոչ միայն բարիս շնորհելոյ, այլ և չարիս բերելոյ · ընդունելով 'ի նմանէ ոչ միայն զբարիս յօժարութեամբ, այլ և զչարիս համբերութեամբ և գոհութեամբ, զի օրինակին յոբայ : որ և առաքեալն՝ զնա մատուցանէ մեզ յօրինակ · ասելով · յակոբ · ե · 11 : Զհամբերութիւն յոբայ լուարուք : զորոյ զհաւատարիմ Աստուածպաշտութեան զհանդէսն համբերութեամբ պայծառացեալ տեսանես 'ի նախընթացս մտածութեան : Ընդ որ և Աստուած յոյժ հաճեալ գովեաց զնա ասելով · յոբ · ա · 3 : Ոչ գոյ իբրև զնա 'ի վերայ երկրի այր արդար ճշմարիտ Աստուածպաշտ, մեկնեալ յամենայն չարութենէ մեղաց :

Մասն երկրորդ :

Մտածեա՛, զի որ զայսպիսի վարս Աստուածպաշտութեան կատարելապէս վարէ, այնպիսին զի սրտի, և զի կամացն Աստուծոյ միայն կեայ · և այս յայտ է աստի · զի 'ի յընդունելութեան բարեաց ունի մարդն ոչ պարզապէս միայն զի կամացն Աստուծոյ կեալ, այլ զի կամացն Աստուծոյ, և միանգամայն զի կամաց իւրոց զի կամօքն նորա կեալ · բայց 'ի յամփոփման բարեաց, և յանպիտանութեան ոչ ինչ գոյ զի կամաց մարդոյ · այլ բոլորն է զի կամաց Աստուծոյ : Նաև զի 'ի մարդն միտք և կամքն նորա են տիրողականք Աստուծոյ որ ինչ է 'ի նմա, և նորա · վասն 'ի կեանս մարդոյ զի կամացն Աստուծոյ՝ զերկուս զայսոսիկ զենլով սիրոյն Աստուծոյ, զինքն զլխովին պատրաստ կենդանի մատուցանէ հաճոյից նորա : Եթէ ես մարդոյ այսոքիկ զինքն և զիւրսն Աստուած շնորհօք Աստուծոյ, ոչ տիրապէս 'ի սէր անձին իւրոյ, այլ 'ի սէրն Աստուծոյ վարել · և այնպէս զԱստուծոյն Աստուծոյ տայ · և ոչ ինքեան, կամ այլում ումեք զբաւէ : Նաև ունի այսպիսին ճշմարտիւ ա-

սել զի պօղոսի : կենդանի եմ այսուհետև՝ ոչ ես այլ կենդանի է յիս Քրիստոս : գաղ · բ · 20 :

Մասն երրորդ :

Մտածեա՛ և զայս · զի որ յայսպիսի վարս Աստուածպաշտութեան կրթի, այնպիսին շնորհօք Աստուծոյ առ Աստուած հրամանս և հաճոյս Աստուծոյ զինքն ընծայել, անխափան յամենայն՝ պատրաստ կայ : Բանզի զի՞նչ է, որ խափան լինի մարդոյ առնել զհրամանս և զհաճոյս Աստուծոյ · ոչ ապաքէն երկիւղն կրից չարեաց, և կորստեան բարեաց · Իսկ կրթեալն յԱստուածպաշտութեան իրաւունս և մեծամեծ բարիս անձին համարի, թէ ընդունի յԱստուծոյ և զչարիս, և զկորուստ կենցաղական բարեաց : Ապաքաջայայտ է, թէ յամենի յաջողական է նմա զի հաճոյիցն Աստուծոյ զնալ : Օ այսպիսեաց է բանն այն որ դրեալ է · գործ · ժբ · 22 · Վասն զիտութեան որդւոյ յեսսեայ՝ այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն կամս իմ : ուստի ասէ առաքեալն · ա · տիմ · դ · 8 : Աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս կենաց ունի՝ զարդիս՝ և զհանդերձելոցն :

Պտուղ :

Օգուտ մեծ է յուշի ունիլ զայս · թէ որք զբարիսն յԱստուծոյ ընկալեալք, չարեացն ոչ համբերեն 'ի պահանջել պահպանութեան պատուիրանացն, յաւուրն դատաստանի 'ի խնդրելն նորա զարքայութիւն երկնից՝ պատասխանի տուեալ լինի : Յիշեա՛ զի ընկալար դու զբարիսն անդէն 'ի կեանս քում · իսկ սոքա՝ որոց տուեալ լինի արքայութիւն երկնից, ընկալան յայնժամ զչարչարանս · վասն սոքա այժմ մտանեն 'ի հանդիստն յաւիտենից · և քեզ մնայ տանջիլ զի յանցանաց քոց 'ի դըժոխս յաւիտեանս յաւիտենից :

Երրորդ մտածութիւն :

'Ի վերայ երից սկզբանաւոր իրաւանցն և ստացութեանցն Աստուծոյ, որովք Աստուծոյ եմք մեք · վասն պարտիմք առ զեամբք ես լինիլ Աստուծոյ :

Վկայութիւն, եթէ առաջին իմն շնորհ Աստուծոյ է բարւոք ճանաչողութեան այս ճշմարտութեան :

Տայ նոցա սիրտ ճանաչել զիս, թէ ես եմ տէր · և եղիցին ինձ 'ի ժողովուրդ, և ես եղէց նոցա յԱստուած · երեմ · իդ · 7 : Ետուց զօրէն իմ 'ի վերայ զանաչի նոցա, և զօրհնութիւն իմ 'ի վերայ որդւոց նոցա, և զշնորհ ձայնելն իբրև զխոտ չորաբեր · և

ներքս պատ 'ի մէջ ջրոյ փնտրեցի ։ Մ՛ինչ առնէ, քո եմ ես ․ և փրկեա զիս խորհրդոյս բարերար յանուն քո յաղագս ․ և փրկեա զիս զի հանցէ չարամէ խորհրդոց քո եմ ես ․ և յանուան քո խորհրդոյս բարերար ։
Եսայ ․ խդ ․ 3 ։

Օրհնեալ բանն որով հաստատեցաւ յասաղ առանց անձին խորհուրդ զայս Ճշմարտութեան ։

Մասն առաջին ։

Սծ է արարիչ իմ Քս Տր որ ինչ է յիս․ զի չիք ինչ յիս, որ ոչ իցէ յՆյ արարեալ, և շնորհեալ․ Քս այսմ, գործ ․ ժէ ․ 25 ։ Նա տայ ամենեցուն, և շունչ ․ և զամ ինչ ։ Եւ միշտ (Քս որ գրոյն, գործ ․ իէ ․ 28 ։) Նովաւ շարժիմք ․ կեամք, և եմք ։ Եւ դարձեալ հռոմ ․ ժա ․ 36 ։ 'Ի նմանէ, և նովաւ, և 'ի նոյն ամ ։ Իսկ արդ՝ եթէ զիս Քս Տր որ ինչ է յիս՝ ած է արարել, և նովաւ կենդանի եմ, և գործեմ ․ ապա Քս Տր իմ եմ ես ․ Քս այսմ առաւել ․ ժդ ․ 4 ․ զամ ինչ գործեաց Տր վն իւր ։ Ապա իրաւունք են 'ի վր իմ, զի ես իմ եղէց արդեամբք ․ և լինիմ այսպ, եթէ 'ի յած կեցից, և ոչ 'ի յիս, և ոչ յայլ ինչ արարածս ։ Յդ, Քս Տր Քս կամաց նր վարեցից զիս ․ և ոչ Քս կամս մարմնոյ և արեան ․ այլ և ոչ Քս թելադրութեանց իմոց որք ինքնիշխան ․ այլ Քս հրամանաց, կամ Քս խրատուցն իմ ։ Աստի ասէ ներքին բեռնադրող առ Տր ։ Ամն քոյ արարեր զամ ինչ Տր ․ և որ կամի զօրութեան խորհրդոյն, և ոչ քեզ, անկանի 'ի մէջ ամ երկրի փող ոչինչ ։ Եւ ներքին օրհնութիւն ասէ ․ որ ստեղծ զքեզ առանց քո, ոչ հաճեցի զքեզ առանց քո ․ այլ մի դարձի, թէ ոչինչ մնայ քեզ որոշուրեալ լինելոյ ․ զի պարտ զքեզ նմա բոլոր, ծառայելոյ զքեզ և զնա բոլոր ։ Քս երգոյն երգոց ․ Գ ․ 2 ։ Ես սիրեցելոյն իմում ․ և սիրեցեալն իմ ինձ, որ հովուէ 'ի մէջ շուշանաց ։

Մասն երկրորդ ։

Սծ եղև ինձ փրկիչ Քս Տր ․ Քս այսմ, տիտ ․ Բ ․ 11 ։ Երևեցաւ շնորհն Այ փրկիչ ամ մարդկան ։ Եւ Քս այսմ ․ Ա ․ տիմ ․ Բ ․ 6 ։ Եւ տուեալ զանձն փրկանս ընդ ամենեցուն ։ Եւ Տրն ասէ ․ յոհ ․ ժԲ ․ 32 ․ յորժամ բարձրացայց յերկրէ՝ զամենեսեան ձգեցից առ իս ։ զի ես ընդ սկզբնական մեղօք, անօրէնութեամբ յղացայ ․ և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ ։ սաղ ․ Ծ ․ 7 ․ և այսպէս դերի էի սատանայի, և բաժին յաւիտենական դժոխոց ։ Եւ Քս ծնեալ իմ մարդ եղեալ ․ և 'ի խաչ ելեալ, փրկկեաց զիս այսուհետև, և շնորհեաց ինձ Քս ծորէն կեալ կեանս ։ Իսկ արդ՝ եթէ Քս ած այսպէս փրկեալ է զիս, որպ ցուցանէ Քս ծայրն գիրք ․ ապա և այսուհետև Քս իմ եմ ես բոլորվին ․ և ոչ անձին իմոյ տիրապէս, և ոչ այլում ․ Քս այսմ ․ Ա ․ կորն ․ Զ ․ 19 ․ Չէք անձանց Տր ․ զանզի գնոց գնեցայք ։ Եւ Քս այսմ ․ Բ ․ կորն ․ Ե ․ 15 ․ 'ի վր ամենեցուն մեռաւ Քս ․ զի որք կենդանին իցեն, մի անձանց իցեն կենդանի ․ այլ այնմ որ 'ի վր նոցայն մեռաւ, և յարեաւ ։ Ապա իրաւունք են 'ի վր իմ ․ զի ես զգործածութե անձին իմոյ, և Տր որ յիս, ոչ Քս կամս իմ վարեցից ․ այլ Քս կամացն յն քն փրկչին իմոյ ։ ըստ այսմ ․ գաղ ․ Բ ․ 20 ․ կենդանի եմ այսու հետև ոչ ես, այլ կենդանի է յիս Քս ։ Աստի ասէ ներքին բեռնադրող ․ Զի բաւէ արժանի է մահու, որ կամիցի կեալ քեզ Քս ․ և որ զքեզ ոչ իմանայ՝ խելագարի ։ և դարձեալ ասէ ․ եթէ զիս ըստ բոլորին պարտիմ նուիրել Այ վն ստեղծելոյն զիս ․ զի՞նչ յաւելից նմա վասն վերստին ստեղծելոյն զիս ըստ այսմ եղանակի ։

Մասն երրորդ ։

Սծ խօսելով հաւատով զիս իւր, նշանադրեաց է զիս առնել իւր ընտանի 'ի վայելուչս երանելի յաւիտենական կենաց իւրոց ․ Քս այսմ ․ ովսեայ ․ Բ ․ 20 ․ խօսեցայց զքեզ ինձ հաւատով ։ Եւ Քս այսմ ․ Բ ․ կոր ․ ժա ․ 2 ։ Խօսեցայ զքեզ առն միում, կոյս սրբոյ յանդիման կացուցանել Քն ։ Եւ արար ինձ զշնորհս զայս ․ կոչելով զիս 'ի հաւատ իւր, և սրբելով զիս իւր, և կնքելով շնորհօք 'ի ձեռն աւազանին մկրտութեան ծննդեան՝ լինիլ ժառանգ երկնից արքայութե ․ որպ գրէ զայս Տր առաքեալն առ տիտոս ․ Գ ․ 5 ։ Աստի և յանուանէ իւրմէ անուանեաց զիս քրիստոնեայ ․ յդ է, քնեան ։ Ապա և այսուհետև Քս Տր իմ եմ ես ․ և իրաւունս ունի ած 'ի վր իմ ․ զի ես ոչ սոսկ բանիւ, այլ արդեամբք, յդ անձին գործածութե յանուն նր եղէց իւր ․ և զգուշացայց 'ի տիրապէս լինելոյ իմ, կամ այլում ։ Եւ վտանգ մեծ է ինձ, եթէ ոչ հաստատեցից զիս 'ի լինիլ նմա՝ գործունեայ առաջադրութբ, և վարժմամբ ․ մի գուցէ 'ի հեռանալն և յօտարանալն իմ 'ի նմանէ, մերժեսցէ զիս յերեսաց իւրոց 'ի յաւիտեան ․ զի ասէ դաւիթ ․ սաղմ ․ ՀԲ ․ 27 ․ Ահաւասիկ որք հեռի արարին զանձինս իւրեանց 'ի քէն, կորիցեն ․ սատակեցեր զամենեսեան որք ապստամբ եղեն 'ի քէն ։ Ապա ինձ մերձենալ առ ած բարի է, և դնել առ Տր զյոյս իմ ։ սաղ ․ ՀԲ ․ 28 ․ և աւել ընդ նմին ․ Սիրեցից զքեզ Տր

զօրութիւն իմ, որ հաստատիչ իմ, ապաւէն իմ, և փրկիչ իմ : սաղմ. ժէ. 2 : Զի՞նչ կայ իմ յերկինս. կամ 'ի քէն զի՞նչ կամէի յերկրի : Նուաղեցաւ սիրտ իմ, և մարմին իմ. Աստուած սրտի իմոյ. բաժին իմ Աստուած յաւիտեան : սաղ. հբ. 25 : Սիրելին իմ ինձ, և ես նմա, որ հովուէ 'ի մէջ շուշանաց : երգ. զ. 2 :

Պտուղ մտածութեան :

Շնորհս մատուցանեմ Աստուծոյ վասն այսպիսի բարերարութեան նորա. և գործունեայ բազմաօք փոյթ արասջիր արժանաւորք լինիլ Աստուծոյ, ըստ ամենահաճոյ գործովք : Բայց թէ ասասցես, զի որպէս յաջողեսցի ինձ այդ, ծանի՛ր. զի թէ կրօնաւոր ես դու, քեզ արդէն ամենահաճոյ գործքն որոշեալ են յԱստուծոյ յաջողելի. և մնայ քեզ ոչ ըստ հաճոյից քոց անձամբ անձին վարել զքեզ, այլ յառաջնորդէ կրօնին իբրև 'ի փոխանորդէ Աստուծոյ վարիլ յամենայնի : Զի դու ուխտիւ աղքատութեան, յամենայն երկրաւոր ընչից հրաժարեալ, զամենայն իսկ մատուցեր Աստուծոյ : Ուստի ոչինչ պարտիս յայնցանէ ընդունիլ. բայց զոր ինչ քեզ մատակարարէ 'ի ձեռն կրօնին : Եւ ուխտիւ ողջախոհութեան հրաժարեալ ես 'ի հեշտալեաց մարմնոյ՝ և յանձին դիւրութենէ. ուստի զի և ըստ այսմ Աստուծոյ իցես արդեամբք, պարտ է քեզ կեալ այնմ, որ և գրէ առաքեալն. գաղ. ե. 24 : Որք Քրիստոսին են, զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին հանդերձ կրիւք և ցանկութեամբք հանդերձ : Եւ այսմ մարմնով և մտօք սուրբ պահել զքեզ հոգասցես. ա. կորն. է. 34 : Զի եղիցի սուրբ հոգւով և մարմնով : Եւ ուխտիւ հնազանդութեան հրաժարեցեր ես 'ի սեպհական կամաց. և 'ի զատողութենէ, և զգլխովին նուիրեցեր ես զքեզ Աստուծոյ, լինիլ պատրաստ յամենայնի լսել ձայնի նորա՝ լսելով ձայնի փոխանորդի նորա. որ է առաջնորդ սուրբ ուխտին. և ոչ միայն զհանապազորդեան, և զհասարակաց բարի գործս հրամայէ առնել. այլ և զայլ գործս բարիս : Ուստի 'ի առնելն քո զամենայն հրամանս՝ և զխրատս առաջնորդին սիրով իբրև 'ի Տեառնէ Աստուծոյ քեզ հասեալ, առնես զկամս Աստուծոյ. և վարիս 'ի կամացն Աստուծոյ : Բայց զի և 'ի կարծիքականս թէ իցեն արդեօք բարի, կամ ոչ, իրաւունք են 'ի վերայ քոյ՝ թողուլ զկարծիս քո, և զհետ երթալ առաջնորդին կարծեաց աներկևան հնազանդութեամբ : Զի նա ասաց առ առաջնորդս. ղուկ. ժ. 16 : Որ լսէ ձեզ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ : Իսկ եթէ ոչ ես կրօնաւոր, յետ ուսանելոյ քոյ զխորհուրդս հաւատոյ, յուսոյ, և սիրոյ. զպատուիրանս Աստուծոյ, և զօրէնս խորհրդոց եկեղեցւոյ, և ամենայն բանից մտադիր լինելոյ, մնայ քեզ առնել աղաչել զՏէր, շնորհել քեզ զճանաչութիւն այնց իրաց, և զյաջողութիւն գործոյ, որք առանձնապէս առ առանձին փրկութիւն հոգւոյ քոյ պատկանին, և ապահով առնել զայն :

Պատրաստեալ մտածութիւն 'ի նոյն, թէ որպիսի վարուց կենաց՝ է պէտ լինել արժանեաց :

Մտծն առաջին :

Մտածեա՛ ով անձն իմ, թէ որ է Աստուծոյ լինիլ արժանաւորք : Եւ ծանիցես զայս 'ի բանէ առաքելոյն՝ զոր ասէ. բ. կորն. ե : 'ի վերայ ամենեցուն մեռաւ Քրիստոս, զի որք կենդանի իցեն, մի առ յանձինս իցեն կենդանի, այլ այնմ, որ 'ի վերայ նոցայն մեռաւ, և յարեաւ : Եւ միտ բանին է, թէ այսու՝ զի Քրիստոս մեռանելովն իւրով վասն մեր՝ կենդանացոյց զմեզ, իրաւունս ունի 'ի վերայ մեր. զի մեք ոչ անձանց մերոց, այլ Քրիստոսի իցեմք կենդանի : Ուստի պարտիս 'ի միտ առնուլ, թէ որպիսի կազմութեամբ վարուց լինի այս : Եւ ծանի՛ր. զի լինի այսու, եթէ վարժութեամբ, և շնորհօք հոգւոյն սրբոյ զիղձս զխորհուրդս, զբանս, և զգործս մեր, որովք ըզ կեանս վարեմք, ունիցիմք առ Քրիստոս սրբեալ և կարգեալ. իբր զի սիրտ մեր՝ և միտք մեր 'ի բաց թօթափեալ զանհաճոյսն Քրիստոսի, զհաճոյս նորա խորհեսցի : Եւ բանք մեր նոյնպէս սրբեալ յանհաճոյիցն Քրիստոսի, զհաճոյսն նորա խօսեսցին. և գործք մեր զգուշացեալ 'ի մեղաց, պարապեսցին յիրս կարգեալս առ Քրիստոս : որք կամ են պարզ ամենայն պաշտամանց գործք. և կամ են գործք առնելիք 'ի կարևոր պէտս դարմանոյ անձանց մերոց՝ վասն ծառայելոյ Քրիստոսի. և կամ գործք 'ի սոյնպիսի պէտս այլոց անձանց 'ի Քրիստոսէ յԱստուծոյ մեզ յանձնելոց : առ որս 'ի յորդորմանէ սիրոյն Քրիստոսի իցեմք յօժարեալ, և ոչ յախտէ ինչ, կամ վայրապար : Բայց նաև ևս՝ թէ որ է անձին իւրում, և ոչ Քրիստոսի կենդանի լինիլն. և ծանիցես, զի այս է. յորժամ Քրիստոնեայն անփոյթ եղեալ յուշ առնել անձին իւրում՝ թէ ինքն Քրիստոսի է, և որդի ուխտից արքայութեան երկնից, մոռանայ զուխտ և զորդեգրութիւն իւր Աստուծոյ. և այնպէս առ ինչ և յօժարի 'ի մարմնոյ և յարենէ՝ և 'ի յանձնասէր կամաց իւրոց, յայն խորհուրդս, 'ի բանս, և 'ի գործս պատաղի. որպիսի են խորհուրդքն, և բանքն, և գործքն, որք առ մարմնոյ հեշտութիւն, կամ առ փառս անձին

ձին

ձին , և կամ առ ամօթի մեծութիս , և ոչ առ յաւիտենական փրկութիւն անձին կամ ընկերաց կարգին : Նոյնպիսի են , որք 'ի քրիստոնէութեան ունին զկերպարանս աստուածպաշտութեան . և 'ի զօրութենէ նորա ուրացեալ են : Բ . Տիմ . Գ . 5 .

Մասն Երկրորդ :

Մտածեա՛ . զի որ ցանկայ Տն ամենայնքն լինել արդեամբք՝ կեալ 'ի հաճոյս Նր յամի , պարտ է նմա հաստատել զայս 'ի սրտի իւրում ման պայման կամօք , և ոչ պայմանաւորաւ : Նմին եւ . ո՞ր է պայմանաւորն , և ո՞ր անպայմանն . ծանիր , զի որ շնորհօք Այն այնպէս հաստատէ 'ի սրտի իւրում կեալ 'ի քն , և 'ի հաճոյս Նր . զի թէ և զրկեսցի յամենայնէ և իցէ բարեաց կենցաղոյս՝ եւ և 'ի կենաց իւրոց դառն մահուամբ , ոչ մեկնի 'ի հաճոյից Նր . այսպիսի քրիստոնէի կամքն է անպայման 'ի քս յս : Իսկ որ 'ի հասանելն կորստեան իրի ինչ իւրոյ՝ զոր օրինակ հանդստեան անձին , կամ փառաց , և կամ կենաց . անցանէ զհաճոյիւք Քի մահուչափ մեղօք . յայտ լինի այսուհետև . թէ կամքն Նր ոչ էր անպայման կեալ 'ի հաճոյսն Քի : այլ թէ և ոչ ներգործութեամբ , սակայն զօրութեամբ ծածկապէս ունէր զայս պայման . իբր թէ ցորչափ ոչ հասցէ ինքեան անարգել , կամ զրկել 'ի հեշտութենէ ինչ , և 'ի կենաց . կեցցէ 'ի հաճոյս Նր . իսկ եթէ հասցեն՝ թողցէ զհաճոյս նորա : Ո՛վ ամբարշտութեան մեծի : Նոյնպիսիքն են 'ի կեղծաւորաց անտի . զոր գերեզմանաց բռելոց նմանեցուցեր , խորագոյնս կշտամբէր Տրն . և վայ տայր Նց : Մատ . իգ . 27 : Որքա զանձինս իւրեանց առաւել սիրեն քան զԱծ . թէպէտ և ոչ ներգործութեամբ , դիտողապէս . սակայն զօրութեամբ : Նոյն Աճ զպէսպէս փորձութիւնս առաքէ . որպէս զի յայտնի եղիցին հանդիսին նոքա , որք անպայման կամօք սիրելով զԱծ՝ ճշմարտիւ սիրեն զնա . որպէս աբրահամ , յոբ , և համօրէն մարտիրոսք , և այլ արդարք : Իսկ այնք՝ որք զօրութեամբ իւիք պայմանս ունին . որպէս բազումք՝ որք վասն զերծանելոյ 'ի վշտաց ինչ , կամ յանարգանաց՝ մահու չափ մեղօք մեղանչեն :

Մասն Երրորդ :

Մտածեա՛ և զայս , և ծանիր ստուգիւ . զի միայն բանիւ , կամ մտօք ասելն . թէ դիտեմ առնել զգործս զայս , և կամ ասեմ զբանս իմ զայս 'ի փառս Այ . ոչ առնէ , և ոչ ուղղէ զբանն , կամ զգործն մարդոյ՝ առ փառսն Այ . այլ պիտոյ է , զի գործն իցէ 'ի սեռէ իւրմէ բարի . և կամ գոնէ ոչ իւիք իցէ անկարգ : Երկրորդ՝ զի մարդ շարժմամբ հոգւոյն շնորհաց , կամ 'ի յԱծային սիրոյն յօժարեալ իցէ առ այն գործ , և առ այն բան . զի որպէս ուսուցանեն իմաստասէրք , բարոյական գործ մարդոյ առ այն ուղղի և եղերի իբր առ վախճան , յորմէ կամքն Նր շարժի : Աստի եթէ կամք մարդոյն 'ի սիրոյ , և 'ի փառացն Այ , և 'ի հաճոյից Նր ոչ իցէ շարժեալ 'ի գործ ինչ , կամ 'ի բան , որ միայն շնորհօքն Այ լինի . այլ սկզբնաբար 'ի հաճոյից ինչ անձին իւրոյ յօժարեալ . առ ոչ ինչ օգտէ ասելն , թէ դիտեմ առնել՝ կամ ասել զայս 'ի փառս Այ , քանզի ոչ 'ի փառս Այ , այլ առ այն ուղղի և կատարի գործն , յորմէ 'ի ներքս սիրտն Նր յօժարեալ է առնել , կամ ասել զայն : Ոի ոչ արքայութիւնն Այ ոչ է բանիւք . այլ զօրութեամբ : Ա . Կոր . Դ . 20 . այսինքն իրօք . սոյնպէս և դիտելն և կարգելն մարդոյ զբանս և զգործս իւր առ արքայութիւն , որ է ինքն Այ . ոչ լինի սոսկ բանիւ , այլ իրօք . այսինքն իրապէս շարժմամբ սրտի սկզբնաբար , կամ տիրապէս 'ի նմանէ . և այս լինի շնորհօք Այ : Այլ որ կամի զբանս և զգործս իւր ստուգապէս առ Այ կարգել , պարտի հոգևոր կրթութեամբ զսիրտ իւր յախորժմանէ հաճոյից անձին իւրոյ դատարկել . և զԱծ միայն ծայրագոյն ըղձալի ունել . և նշանաց հաճոյից Նր սպասել . և յայնմանէ վարիլ 'ի խօսիլ , և 'ի գործել : Այս ասէ հոգին սբ ցմեզ . առակաց . Գ . 23 : Որդեակ , տուր ինձ զսիրտ քո . և աչք քո զճանապարհս իմ պահեսցեն : Ուստի այս հարկաւոր կրթութիւն առ հոգևոր արդիւնս , որ է ուղղել զբանս և զգործս առ Այ՝ շնորհօք Նր , գրեթէ միշտ յաջողեալ է այնմ կրօնաւորի , որ ոչ գործէ ինչ բայց եթէ յառաջնորդէն իւրոյ հրամանէ :

Պտուղ :

Մարզեա՛ զքեզ բանիւ Տն՝ զոր ասէ . յոհ . Գ . 16 : այնպէս սիրեաց Այ զաշխարհ , մինչև զՈրդին իւր միածին ետ . զի ամ որ հաւատայ 'ի նա մի կորիցէ . այլ ընկալցի զկեանս յաւիտենականս : Իսկ զգուշութեամբ քննեա զքեզ , մի՛ գուցէ զօրութիւն իմն պայմանի եղեալ իցէ սիրելոյ զԱծ , և պահելոյ զպատուիրանս Նր . քանզի Այ գոլով 'ի վեր քան զմեզ , և քան զայլ ամ սիրելի , պայմանաւ սիրելն զնա է ոչ ճշմարտիւ սիրել . այլ մանաւանդ արհամարհել

սատ_

ստորադաս առնելով զնա քան զինքն, և քան զարարածն զայն, վ̃ն որոյ պայման դնի։ Աստի ասէպ հայցեմ 'ի տ̃նէ շնորհել քեզ անսպասման կամօք սիրել զնա. զի նա ան-չափ սիրով՝ և անսպասման կամօք կամելով փրկել զմեզ, զանձն իւր ետ 'ի փրկանս ան-ձանց մերոց։ Աստի ասէ առաքեալն. Հռ-ոմ. ը̃. 35. Ո՞ հեռացուսցէ զմեզ 'ի սիրոյն քի̃, նեղութի̃, թէ անձկութի̃, թէ հալածանք, թէ սով, թէ մերկութի̃. թէ վիշտ, թէ սուր, որպէս և գր-եալ է։ Վասն քո մեռանիմք զօրհանապազ, համա-րեցաք իբրև զոչխար 'ի սպանումն։ Այլ յայսմ ա̃մ առաւել յաղթեմք նովաւ, որ սիրեացն զմեզ. քանզի հաւաստեալ եմ, եթէ ո՛չ մահ, և ոչ կեանք, և ոչ հրեշ-տակք. և ո՛չ իշխանութի̃ք. և ոչ զօրութի̃ք, և ո՛չ որ կանն, և ոչ հանդերձեալքն, և ո՛չ կարողութի̃, և ոչ բարձրութի̃. և ո՛չ խորութի̃. և ո՛չ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի այ̃, որ 'ի քս̃ յս̃ 'ի տր̃ մեր։

Չորրորդ մտածութի̃.

'Ի վ̃ր վարձուցն. զոր յաւիտենից պատրաստեալ է այ̃ պարգևել նց̃. որք արդեամբք զանձինս իւրեանց ընծայեն այ̃ արարչի, փրկչի, և երանացուցչի։

Նախընթաց բանք ինչ 'ի վ̃ր մտածելեացն յառաջի կայս, թէ որք են, և քանի ինչ։

Իմ'ա առ 'նախ՝ և խորհեա՛ց. զի յոր-ժամ հաճոյ եղև մարդասիրութեն այ̃ ը̃ պատկերի իւրում ստեղծել զմեզ, եդ 'ի մտի մինչև 'ի ժառանգութի արքայութե իւրոյ վեր ածուլ զմեզ։ Զի ո՞րպ և գրեալ է. ա̃. Կորն. բ̃. 9։ զոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, պատրաս-տեաց այ̃ սիրելեաց իւրոց պարգևել։ Վ̃ն որոյ ստացաւ զմեզ փրկիչն մեր արեամբ իւրով՝ ոչ յերկրաւոր, այլ յերկնաւոր. ո՛չ 'ի մարմ-նաւոր կամ 'ի շնչաւոր, այլ 'ի հոգևոր յանմախձան կեանս. որ 'ի վեր է ևս քան զհրեշտակային կեանս բնաւոր։ Զի է այ̃ծային երանելի անձուկ ընտանի կենակ-ցութի. և միանգամայն այ̃ծային փառացն և ուրախութեցն ա̃մի վայելումն՝ ո՞րպ սիրելի որդ-ւոց ը̃ հօր. վ̃ն որոյ և անուանի յաւիտե-նական կեանք, և երկնից արքայութի. ո՞րպ խոստացաւ մեզ փրկիչն մեր ասելով։ Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս և հայր իմ ուխտեաց ինձ զար-քայութի։ Ղուկ. իբ̃. 29։ Եւ թէ ուր եմ ես, անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Յոհ. ժբ̃. 26։ Եւ առ հայր ասէ. Հայր զորս ետուր ինձ, կամիմ. զի ուր եմ ես, և դոքա ընդ իս իցեն. զի տեսանիցեն զփառսն իմ։ Յոհ. ժէ̃. 24։ Եւ հոգևոր հարսն ասէ, երգոց. ա̃. 3։ Տարաւ զիս արքայ 'ի սենեակ իւր. ցնծասցուք և ուրախ լիցուք 'ի քեզ։ Սմին ծի աւետեաց անձառ անպատում երանու-թեցն. յոր յոյս՝ անսպասման ուրախութե լը-ցեալ դաւիթ, աղաղակէր. սաղմ. հբ̃. 25։ Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս. կամ 'ի քէն զի՞նչ ևս խնդրեցից յերկրի. Նուաղեցաւ սիրտ իմ, և մար-մին իմ. այ̃ սրտի իմոյ, բաժին իմ այ̃ յաւիտեան։ Բայց ո՞րպ զի գտնէ փոքր մի 'ի խոկումն այնց կենաց զարթիցէ միտքս 'ի թմրութե, զվեց ինչ խորհելի ունիս դնել առաջի. այս ինքն է. Զ տեղին փառաց. Զ փառս հոգւոյ երանելոյն։ Զ լինելն նման այ̃։ Զ փառս մարմնոյ։ Զ փառս և զհանգիստ զգայարանացն. և Զ փառս և զհրճուանս՝ զոր իւրաքանչիւրն երանելոց յընկերացն փառ-աւորութե ընդունի։ Բ՞ղէ յառնեաց միան-գամ հաւատոյ աչօք, նկատել թէ ո՞րպ և որ չափ պատուէ և փառաւորէ այ̃ զսիրելիս իւր։

Առաջին մտածութի̃.

'Ի վ̃ր փառաց արքայութեն երկնից.

Զերկնային մտածելոյ զտեղին փառաց. և զփառս հոգւոյ երանելոյն. և զլինելն նման այ̃։

Մասն առաջին.

Զառաջինն մտածեա՛. զի տեղին փառաց երանելեացն է 'ի վերոյ ք̃ զա̃մ շար-ժական երկինս. երկնից երկինք անշարժ. բոլորովին լուսաւոր. որոյ լոյսն ո՛չ է 'ի լու-սաւորաց ինչ. այլ է անդստին լուսաւոր. քան զարեգակն պայծառատեսիլ. 'ի սկզբա-նէ աշխարհի ստեղծեալ յայ̃ տուն փառաց հանդերձեալ պատրաստեալ 'ի նմանէ 'ի զուար-ճութի իւրոց սիրելեաց. անպատմելի փափուկ. զուարճացուցիչ ա̃մ զգայարանաց։ Եւ յա՛յ է յարկն՝ ը̃ որ ուժգին փափագմամբ ասէր դաւիթ. սաղմ. ձգ̃. 2։ որպէս սիրելի են յարկք քո տր̃ զօրութեանց, ցանկայ՝ և փափագէ անձն իմ 'ի գա-ւիթս քո. սիրտ իմ, և մարմին իմ ցնծասցեն առ այ̃ կենդանի։ Եւ զե՞րմ յովհաննէս 'ի նմանութի քա-ղաքի տեսեալ զնա, գրէ. քառակուսի էր քա-ղաքն ասէ, և շինուած պարսպին նր̃ յասպիս. և ինքն ոսկի մաքուր նման ապակւոյ. և հի-մունք պարսպին նր̃ յա̃մ ակամբք պատուականօք զարդա-րեալ։ Եւ ընդարձակութի նր̃ ոսկի մաքուր որպէս ապակի պայծառ։ Եւ քաղաքին ոչ էին պէտք արեգա-կան, և լուսնի, զի լուսաւորեսցեն զնա. քանզի փառքն այ̃ լուսաւորէին զնա յա̃մ ժամ։ Եւ բա-

րուք

րուք ասէ · Գ · 24 · որպէս զի մեծ է տունն այ, և ընդարձակ տեղի ստացուածոց նր · մեծ է, և ոչ գոյ բաւ · բարձր է, և անչափ ։ Իսկ արդ եթէ յերկրի աստ, որ ստորին յարկն է երկնային ապարանից, գտանին այնքան զուարճալիք՝ եղծանելի կենաց մարդկան պիտանի ընձալիք · ապա զինչ, և քանի պատրաստեալ ճոխութիւնք զուարճալեաց պարտ է մեզ իմանալ թէ են յերկինս · ուր աթոռն է այ · և յարկ ցնծութեան սերովբէից՝ և քերովբէից, իշխանութեանց, և պետութեանց, և ամ երանեալ հոգւոց ։

Մասն երկրորդ ։

Մտածեա · զի փառք հոգւոյն է ժառանգելն նր զայութիւն 'ի տեսութիւն, և 'ի ըղձայլումն ։ Ո՞ զի 'ի վարձ երից այսյին առաքինութեանց · ոչ է · հաւատոյ, յուսոյ, և սիրոյ, պարգևէ այ զերիս օժիտս · որոց առաջին է տեսութիւն այութեան · քանզի հոգին լուսով փառաց լուսաւորեալ, լինի այս կերպ · և նովաւ միտքն զօրացեալ, վերանայ 'ի տեսութիւն այութեան · և տեսանէ զնա դէմ յանդիման · ըստ այնմ · Ա · յոհան · Գ · 2 ։ յորժամ նա յայտնեսցի, նմանն նմա լինելոց եմք · զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն ։ Այս տեսութիւն այն լինիցն ձգեալ զհոգին սիրով, ծովահանդոյն ուրախութբ լնու ։ Երկրորդն է ըմբռնումն · որով երանեալ հոգին հասանի առ այութիւն · ոչ իբրև թէ պարփակելով զանչափութիւն նր տեսութբ · այլ ունողութբ իմն անմեկնելի յիւրմէ ունելով · միշտ տեսանել զնա, սիրել, և ըղձայլել նովաւ 'ի յաւիտեան · ըստ այնմ · Երգ · Գ · 4 ։ Գտի զոր սիրեաց անձն իմ · կալայ զնա, և ոչ թողից ։ Յաշխարհի աստ տեսութիւն սիրելւոյն ոչ լնու զփափագ սրտի սիրողին · զի այնու ոչ լինի իրօք 'ի ներքս 'ի սրտի սիրողին · բայց այս տեսութբ իւրով 'ի յարքայութե բնակի 'ի ներքս 'ի սիրալից սրտի երանելւոյն իրօք · այս է, ունելութբ փառաց · և նա բնակի յայս ։ ըստ այնմ · Ա · յոհ · Դ · 16 ։ Աստուած սէր է · և որ կայ 'ի սէրն, բնակեալ է յայս, և այս 'ի նմա բնակէ ։ Եւ ըստ այնմ · յոհ · ԺԴ · 20 ։ Զի ես 'ի հայր իմում · և դուք յիս · և ես 'ի ձեզ ։ Երրորդն է զմայլումն · որ է անձառելի խնդութիւն 'ի վայելումն քաղցր տեսութեան երեսացն այ · ըստ այնմ · սաղմ · Ի · 7 ։ Տացես ըղնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից · և ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց ։ Եւ ըստ այնմ · ԺԶ · 15 ։ Ես արդարութբ երևեցայց երեսաց քոց, և յագեցայց յերևել փառաց քոց ։ Եւ դարձեալ · սաղմ · ԼԵ · 9 ։ արբեսցեն նոքա 'ի պարարտութենէ տան քոյ, և ուղխիւ փափկութեան քոյ տացես ըմպել նոցա ։ Ո՜ի յայտ է, թէ որչափ առաւել ներքսագոյն լինի բերկրեցուցիչն յիմանալի զգայութիս, և յախորժելս հոգւոյն, այնչափ առաւել լինի բերկրութիւն ։ Իսկ այս է անբաւ բերկրեցուցիչ յամ եղելոց · և անպատմելի իմն կերպիւ ներքսագոյն 'ի ներքս բնակի 'ի հոգին երանելւոյն՝ յիմանալի զգայութիս և յախորժակս նորին ։ ըստ այնմ, որ նստի 'ի վր աթոռոյն բնակեալ է 'ի նս, ոչ քաղցիցեն, և ոչ ծարաւեսցեն ։ Այս յայսպիսի բնակութե այութեանն 'ի հոգւի երանելւոյն՝ որ երևելի է, անձառ խնդութբ լցեալ լինի սիրտ նր ։ Մանաւանդ զի այ է անհամեմատ առաւել գեղեցիկ, քան զամ գեղեցիկ՝ որ կարասցէ լինել · և է յոյժ ցանկալի հոգւոյ մերում 'ի վեր քան զամ ցանկալի · զի ամ գեղեցկութեանց արարչապետն է նոյն ինքն այ · ոչ ասի իմաստ · ԺԳ · 3 ։ Իսկ թէպէտ մեք այժմ յաստի կեանս, ոչ իմանալով թէ որպիսի գեղեցիկ է այ, և որչափ ցանկալի հոգւոյ մերում, օտարանամք 'ի նմանէ · և ոչ ցանկամք տեսութե նր · քանզի և ոչ գտանէ օրինակաւ իմն ըղպայծառ ծանօթութի ունիմք զնմանէ, այլ միայն զտեղեկութի ինչ յոյժ նսեմ և մթին՝ յաղագս հոգւոյս մեր եղծանելի մարմնով ծանրանալոյ, և մնաց մերոց բազում հողով վարանելոյ · ոչ ասէ իմաստունն · իմաս · Թ · 15 ։ Բայց 'ի հանդերձեալն ոչ լինի այսպէս · այլ հոգին յելս իւր 'ի մարմնոյ՝ ըստ պատշաճեալ ինքեան կերպին իմանայ, թէ որպիսի ինչ, և որչափ ցանկալի է այ · և յայնժամ անպատմելի փափաքանօք տենչայ տեսանել զնա ։ Ուստի ասէ 'ոքն թովմաս, թէ բնական հոգւոյն յարին 'ի յայս է բնական · և է յոյժ մեծ · զի է ծայրագոյն երջանկութի նր, որ է միջակէտն յօժարութե սրտի իւրոյ · ըստ այնմ · սաղ · ՀԲ · 26 ։ Այ սրտի իմոյ, բաժին իմ այ յաւիտեան ։ Ուստի յայնժմ ամ ուժգնութբ ձգի հոգին տեսանել զնա, և միանալ սիրով ը նմա 'ի յաւիտեան ։

Մասն երրորդ ։

Մտածեա, թէ որչափ մեծ եղիցի ուրախութիւն հոգւոյն, յորժամ յամենակալէն այ, որ է անբաւ լոյս իմանալի, լուսով փառաց պայծառացուցեալ, տեսցէ զերեսս նր · և ամ սիրով սրտի միասցի ը նմա ։ Մանաւանդ՝ զի յայնժամ ոչ օտար, այլ իւր իսկ

տեսականաւ առաջեղեալ լինի մտաց երանելոյ հոգւոյն. և անընդմիջաբար միանայ ընդ մտաց նորա՝ յոյժ առաւել քան զոր այժմ լինի առաջեղեալն աչաց միացեալ ընդ նմա, և յայտ յանդիմանն երևեալ. վասն զի ոչ որպէս այժմն մթին լինի տեսութիւն մտաց, այլ ի մեծ պայծառութիւն յայտնագոյն. ուստի դէմ յանդիման տեսանէ զԱստուած, և զԱստուած զոր և տեսանէ։ Այն այս միացումն հոգւոյ ընդ լոյս Աստուծոյ է՝ որով երանեալքն ի փառս լինին նման նմա. Ա Յովհ. Գ. 2։ Գիտեմք զի յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք. զի տեսանելոց եմք զնա որպէս և էն։ Եւ Ա. Սաղ. ԺԶ. 6։ Ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց. յագեցայց յերևել փառաց քոց։ Եւ ընդ այնմ. Հռովմ. Ը. 29։ զորս յառաջագոյն ճանաչէր, յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակիցս լինել պատկերի որդւոյ իւրոյ. զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց։ Որպէս նաև ի մեզ. զի որպէս շողով արեգական լուսաւորեալ, լինի իբրև բոլորովին լոյս. սոյնպէս և երանեալ հոգին փառօքն անեղ լուսոյ Աստուծոյ, լինի աստուածանման։ Նոյն է այն երանութիւնն, յորում Աստուած սպասաւորելոյն իւրոյ պատուէ զերանեալ հոգին։ Ընդ այնմ. Բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտեսցէ զնոսա։ Որդ սպասաւորութիւն այս ոչ այլ ինչ է, բայց եթէ ցուցանելն նորա զԱստուածային երեսս իւր. Սաղ. Ի. 7. ուրախ արասցես զնա յուրախութեան երեսաց քոց։ Եւ ընդ այնմ. ԼԵ. 9. արբեսցին նոքա ի պարարտութենէ տան քո, և զհեղեղս փափկութեան քո տացես ըմպել նոցա։ Եւ այս ևս. զի Աստուած բնակելովն ի հոգի արդարոյն՝ փառաւոր առնէ զնա Աստուածեղէն փառօք. իմաստութեամբ Աստուածեղէն իմաստութեամբ, իշխանութեամբ Աստուածային իշխանութեամբ. հզօր Աստուածային հզօր զօրութեամբ. գեղեցիկ Աստուածային անեղ գեղեցկութեամբ, փառելով զնովաւ անբաւ լուսովն իւրոյ Աստուծոյ։ Եւ ի վերայ այսր Աստուծոյ հայրական խնամով, և մայրենի գթով պատրաստ է առնել նմա, զինչ և կամեսցի նա. զի որպէս Աստուած զոր ինչ կամի ի ձեռն ունի, և զինչ և հաճեսցի առնել առնէ,

սոյնպէս և երանեալ հոգին՝ նոյնպէս ։

Երկրորդ Մտածութիւն ։

'Ի վերայ փառաց երկնից արքայութեան ։

Օրինակ մտածելոյ զփառս մարմնոյ երանելեացն. զփառս զգայարանաց նոցին, և զփառսն, որ յերկնաւորութենէ ։

Մասն առաջին ։

Մտածեա և զփառս մարմնոյ երանելեացն։ Յորս առաջինն է գեղեցկութիւն. որ լինի չափակցութեամբ անդամոց, բարեչափութեամբ հասակի, վայելչութեամբ գունոյ, և պայծառութեամբ։ Վասն զի հոգիք արդարոց ի հատուցման յարութեան առնուն զմարմինս ամբողջ, և անարատ. բարեչափ հասակաւ, վայելչագեղ. և պայծառատեսիլ իբրև զարեգակն. Մատթ. ԺԳ. 43. արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից։ Եւ զայս յանձին իւրում եցոյց Տէրն մեր յայլակերպութեան իւրում ի լերանն Թաբօր։ Երկրորդն է նրբութիւն. բայց այսպիսի մարմինս երանելոյն ոչ լինի անզգալի, կամ աներևոյթ. այլ միայն պատշաճէ լինել առ Աստուծոյ կամս հոգւոյն հպատակ լինել. զոր օրինակ առանց վնասու և աշխատութեան ի զանազան ձևս և ի կերպս կամաց նորա կերպարանել. սոյնպէս և առ այլ պատշաճ որ բամնաւորութիւնս պատրաստական լինել։ Նաև ստի զտեսիլ իւր, և զգեղ վայելչութեան իւրոյ ոչ կորուսանէ. այլ լինի շօշափելի զգալի, երևելի, և շօշափելի, որպէս և Տէր եցոյց զայս յիւրում յարութեան։ Երրորդն է անկրելութիւն. այս է անչարչարութիւն, որով մարմինս երանելոյն այնպէս տիրեսցի և սպասեսցի ի հոգւոյն. մինչև ոչ ինչ հակառակ կարասցէ իշխել նմա, կամ վնասել. ոչ հուր, ոչ ջուր, ոչ սուր, և ոչ այլ ինչ վնասակար։ Նաև ունիցի այնչափ զօրեղութիւն, և քաջութիւն, զի թէ կամք եղիցին նմա զբոլոր գունդս երկրի շարժել, շարժեսցէ. որպէս ասէ Անսելմոս։ Չորրորդն է թեթևութիւն, որով մարմինն նորա լինի ազատ յամենայն ծանրութենէ զոր այժմ ունիմք։ Ուստի երագութեամբ ի քթթել ական գնայ հասանի ուր կամի՝ օժտեալ թեթևութեամբ ի ձեռն Աստուածային զօրութեան որչափ և երկարագունեաց բացատութիւն իցէ ի միջի։ Զի ասէ Անսելմոս. անյիշատակ եղիցի տարածութիւն՝ մինչև հատանել երագութեամբ հրեշտակաց. որք յերկնից յերկիր, և յերկրէ յերկինս շարժին քան զաչն հատանեն ։

Հինգերորդն է թափանցութիւն․ որով փառաւորեալ մարմինն կարէ թափանցել ընդ այլ մարմին առանց հերձելոյ ինչ, կամ ծակ առնելոյ ՚ի նմա, և վնասելոյ․ զոր օրինակ անցանել ընդ որմս, և ընդ այլ սոյնպիսի թանձր դիմադրելեաց իսկոյն առանց դժուարութեան, և վնասու․ որպէս եցոյց զայս Տէրն մեր յետ յարութեան իւրոյ՝ յորժամ դրօքն փակելովք եմուտ ՚ի վերնատունն ։ Եւ ոչ միայն ՚ի ստորին մարմինս, այլ և ընդ լուսեղէն երկինն կարեն թափանցել ։ Սակայն միոյ փառաւորեալ մարմնոյ ոչ թափանցէ ՚ի միւս փառաւորեալն․ զի այս ոչ է պատեհ ։

Մաս Երկրորդ ։

Մտածեա՛ և զփառս, և զբերկրութիւն զգայարանացն երանելեաց ։ Քանզի և զգայարանք նոցին յետ յարութեան ՚ի գործ ածելն ՚ի քաղցր և ՚ի զուարճալի ներգործութիւնս․ որպէս ասէ սբն Թովմաս ։ Աչաց երանեալքն տեսեալ զգեղեցկութիւն և ըզպայծառութիւն երկնից, և զընկերաց, և զմարմնացեալ բանին, անպատմելի զուարճութեամբ բերկրին․ և այս է փառաւորութիւն աչաց ։ Այլ և անդ ախորժական ձայնիւ բարբառով բերանոյ փառաբանեն զԱծ․ ըստ այնմ․ սաղ․ ՃԽԹ․ 5․ պարծեսցին սուրբք փառօք, և ցնծասցեն ՚ի հանգիստս իւրեանց․ և բարձր արասցեն զԱծ բերանովք իւրեանց ։ Ականջք որոյ միշտ զնորոգ քաղցրաձայն երգս դասուց իւրեանց լուեալ հրճուին․ և այս է փառաւորութիւն լսելեաց ։ Այլ և հոտոտելիքն զանուշահոտութիւն մարմնոյ իւրեանց՝ և ընկերաց զգացեալ, բերկրին ։ Ի վերայ նորին Թովմայի Ագուինացւոյն պատմի․ թէ յորժամ բացին զգերեզմանն նորա, բուրեաց անուշահոտութիւն այնչափ սաստիկ․ մինչև մերձ եղելոցն թուէր, թէ բացաւ պահարան անուշահոտ խնկոց ։ Զսոյն զայս և զայլոց սրբոց գրեալ են պատմիչք ։ Իսկ արդ եթէ մինչև են փառաւորեալ մարմինք սրբոց, այսպիսի են․ ո՞րչափ ևս յետ փառաւորութեան ։ Այլ և ճաշակելիքն նոցա յանոյշ հիւթոյ, զորս ՚ի կոկորդս իւրեանց ունին, յարաժամ բերկրին․ և այս է փառք ճաշակելեաց ։ Իսկ շօշափելիքն զքաղցր և զբերկրալի հանգիստն մարմնոյ իւրեանց զգացեալ զուարճանան ։ Եւ քանզի ճշմարիտ են այս ամ բանք, զի ասէ դաւիթ․ սաղմ․ ՁԳ․ 3․ սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ Աստուած կենդանի․ ապա զմտաւ ած, թէ որչափ մեծ եղիցի զուարճութիւն արդարոյն, յորժամ ոչ միայն մի զգայարանն, այլ, տեսանելիքն․ այլ և լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, և բովանդակ իսկ մարմինն և հոգին ամ ուժգնութեամբ մտցեն ՚ի բերկրութիւնս համեմատ զգայարանաց մարմնոյն, և կարողութեանց հոգւոյն ։ Զի անդ եղիցի լիութիւն ամ բարեաց, առանց նուազութեան․ երիտասարդութիւն՝ առանց ծերութեան․ առողջութիւն՝ առանց տկարութեան․ անմահութիւն առանց մահկանացութեան․ գեղեցկութիւն՝ առանց տգեղութեան․ ազատութիւն՝ առանց ծառայութեան․ հանգիստ առանց աշխատութեան․ խաղաղութիւն՝ առանց վրդովութեան․ իմաստութիւն՝ առանց տգիտութեան․ պատիւ՝ առանց արհամարհութեան․ փառաւորութիւն՝ առանց սնոտիապաշտութեան․ և խրախութիւն անվերջ՝ առանց տաղտկութեան ։

Մաս Երրորդ ։

Մտածեա՛ ևս զուրախութիւն երանելեաց․ որ լինի ՚ի զուարճալի ընկերութենէ․ յաղագս պատուականութեան նոցա, և բազմութեան, և յաղագս սիրոյն՝ զոր առ միմեանս ունին ։ Վասն զի ամենեքեան են արքայորդիք թագաւորեալք ։ Եւ բազմութիւն նոցա է իբր անհամար ։ Որոց ընտանութիւն և սէրն առ միմեանս՝ է այնչափ սաստիկ, մինչ զի իւրաքանչիւրն զփառս՝ և զուրախութիւն այլոց իւր համարի․ և վասն այսորիկ ըստ այնչափ բազմութեան նոցա՝ բազմանայ և ուրախութիւն նոցա իւրաքանչիւր, զոր ընդունին ՚ի փառաց և ՚ի զուարճութենէ իրերաց ։ Քանզի ժառանգութիւն արքայութեան ամենեցուն մի է, և բոլորն է իւրաքանչիւր ումեք ։ Անդ ամենեքեան հրճուին իբրև որդիք Այ․ հարազատ ծնունդք վերին սիոնի նմանել փառօք․ զի փառք նոցա, և ուրախութիւն լինի որպէս և վայել է հօր նոցա, և մօրն իւրեանց վերին սիոնի․ ըստ այնմ․ սաղմ․ ՁԱ․ 6 ։ Ես ասացի թէ ածք էք․ կամ որդիք բարձրելոյն ամենեքեան ։ Մտածեա՛ և զայս․ թէ որչափ մեծ ուրախութիւն լինի յասելն Այ ՚ի սիրտս իւրաքանչիւր նոցա․ թէ ես ընտրեցի զքեզ ՚ի բիւրուց յառաջ քան զլինելն քո․ ես սիրեցի, և սահմանեցի զքեզ կերպարանակից լինել պատկերի որդւոյ իմոյ միածնի ՚ի փառս ։ Ես ստեղծի․ և ես կոչեցի զքեզ՝ և սրբեցի արեամբ միածնի որդւոյ իմոյ․ ես հեղի ՚ի քեզ զշնորհ

նորհ . և յաջողեցի գործել զբարիս արժանաւորս արքայութեան ։ Նաև զգուշացայ պահել զքեզ յայսմ և յայնմ վտանգէ կորստեան, առանձին ողորմութբ . և ընկալայ զքեզ 'ի ժառանգութի այս ամ փառաց իմոց, յոր վայելես յաւիտեան ։

Հինգերորդ Մտածութիւն ։

'Ի վր գերընաբար կատարելագործեալ կենաց ըստ շնորհաց, և զի երանելի փառաց. զորս 'ի միտ առնուլն է յոյժ օգտակար առ ուղղութի վարուց ։

Հոգին է ած . և երկրպագուացն նր հոգւով և ճշմարտութբ պարտ է երկրպագանել ։ յոհ . դ . 24 ։

Ոպ ուսուցանեն ամաբանք . բնութին հրեշտակայինն, այլ և մարդկայնոյն զի բանականին նկատեալ իբրև զեր բնաբար ևս կատարելի, է զուգանակ շնորհաց . և զի շնորհօք է զուգանակ երանելի փառաց ։ Այլ զի զի այսոցիկ կրկնակի զերբնաբար կատարելագործեալ կեանս ընկալցին յայս մի զհետ միւսոյ ։

Մասն առաջին ։

Գերբնաբար կատարելագործեալ կեանքն է ամօրէն կեալ ։ Նաև այս է կրկնակի ։ Մին է, որ յաստի կեանս անկատար իմն հաղորդութբ ընկալեալ լինի յայս օծութբ հաճոյարար շնորհաց . զի այսմ . ա . յոհ . բ . 20 ։ Եւ դուք օծութիւն ունիք առ 'ի սրբոյն ։ Եւ զայս զուգանի մարդ, յորժամ մկրտութբ առաջանին 'ի նք հոգւոյն 'ի շնորհս ծնեալ որդեգրի որդի այ . և զուգանակ լինի վարել 'ի հոգւոյն ած ։ զի այսմ . հռովմ . ը . 14 ։ Որք հոգւովն այ վարին, նոքա են որդիք այ ։ Եւ այսպիսի կենօք ամօրէն կեան նոքա՝ որք զի շնորհացն զոր ունին, հոգւովն այ վարին . զի որք ո՛չ զի խորհրդոց և կամաց տիրապէս 'ի մարմնոյ և յարենէ շնչելոյ՝ վարս վարեն . այլ զի խորհրդոց և կամեցողութե, զոր հոգին ած 'ի միտս, և 'ի կամս նոցա շնչէ ։ Նաև այսմ ունիմք մեզ օրինակ ըզնաւն կառավարեալ կողմնացուցիւ . քանզի զոր օրինակ սլաքն կողմնացուցի օծութբ միոյ կողմանն մագնիսիւ՝ միշտ 'ի հիւսիսային բևեռ ասողն ձգէ՝ հայի այնու կողմամբն . և ղեկավարն զիմաստ ուղղութե ընթացից նաւին աստի ընկալեալ, ուղղութբ վարէ զնաւն . և այնպէս ուղիղ ընթանայ, ցորչափ բուռն արդել ինչ ընթացից նորա ո՛չ ընդ առաջ ելանէ ։ Սոյնպէս իւրաքանչիւր քրիստոնեայ 'ի սկզբանէ զուանելոյ իւրոյ զհաճոյարար շնորհս այ, օծեալ լինի նովաւ 'ի բանական մասին հոգւոյ իւրոյ . և 'ի յարդարիլ հոգւոյն նոքօք, պատրաստական լինի մարդն հոգւովն այ վարիլ. որով միայն, և ոչ առանց նր լինի մարդն գործադրիչ ամահաճոյ գործոց ։ Նաև ցորչափ հոգւովն այ վարի՝ որդիանք հպատակ այ կեցեալ, ամօրէն կեայ ։

Մասն երկրորդ ։

Երկրորդ կերպիւ ամօրէն կեալն՝ ընկալեալ լինի 'ի հանդերձեալն՝ ոչ անկատար, այլ կատարեալ հաղորդութբ 'ի ձեռն լուսոյ փառաց ։ Նաև այսուհիկ վերջին լրութբ ամօրէն կեան երանեալքն 'ի յարքայութե, զի որում լուսով փառաց ամակերպ և ամատես եղեալք, բոլորովիմբ հոգւովն այ վարին ։ Ոչ իբր թէ բնական զօրութիւք նոցին՝ որպիսի են միտք և կամք, խափանին . և փոխանակ նոցա զայլ բարձրագոյն զօրութիս ընկալեալ՝ նոքօք վարեն զկեանս, և վայելեն յանձառ յանսպառ բարիսն . այլ բնակելով ամութեն յոգիս նց, զամ գործս իւրեանց 'ի նմանէ վարեցեալ գործեն ։

Օրինակ իմն, զի ո՞ր օդն շողով արեգական լցեալ, արեգակնօրէն գործէ . և որպէս ձեռն արհեստիւ վարեալ արհեստօրէն գործէ . և ո՞ր յորժամ զանգուած պղնձոյ պատեալ լինի ոսկւով, յայնմ հետէ որքան թէլք ելուզանին 'ի նմանէ, համակ ոսկեպատ եղեալք՝ ոսկեհուռ ոսկեթել ելանեն, և ոչ ինչ մերկ յոսկւոյ . սոյնպէս բընակելով ամութեն յոգիս նց փառօք, ամայնութբ իմն օծեալ լինին նոյն զօրութիւք նոցա՝ որովք կեան . և նովին օծութբ ամ կենսական ներգործութիւք նոցին 'ի յաւիտեանս յաւիտենից ամայնութբ օծեալ՝ յառաջ գան . և այսպէս միշտ ամօրէն կեան ։

Յերկուց աստի ամօրէն կենաց ճառելոց երկրորդն է վարձ առաջնոյն . զի նց պարգևի ամօրէն կեալն փառօք յարքայութեն երկնից 'ի յաւիտեան, որք յառաջիկայս ամօրէն կեան զի չափու շնորհացն, զոր ընկալեալ են, և 'ի շնորհս վախճանին . իսկ ոչ նց, որք անփոյթ եղեալ զայնու, մարմնասէր զի մարմնոյ վարին . և կորուսեալ մեղօք զշնորհսն, մերկ 'ի շնորհաց վախճանին ։ Ոչ ապա բան մեր ոչ է զաղայոց, այլ ըզ-

չափահաս անձանց ։

Մտածեա՛ զողբալի չարն, որով մարդ զայսպիսի շնորհօք ա̃ծօրէն կելոյ ստանդանելով՝ ո՛չ զգուշանայ, ո՛չ անսայ, և ոչ մտադիր լինի հոգւոյն շնորհացն՝ վարիլ 'ի նմանէ. որով լինի ա̃ծօրէն կեն. այլ զիջանէ վարիլ 'ի մարմնոյ մեղաց՝ ըստ մեղաց. և այսպէս զօրհնօք 'որ հոգւոյն յանցուցեն, կորուսանէ զշնորհն յաստի կեանս ա̃ծօրէն կելոյ. և զարդ լինանն փառաց յարքայութեն ա̃ծօրէն կելոյ. և ո՛չ իմանայ, թէ յորպիսի թշուառութենց յինչ շնորհս վեր առեալ է ա̃ծ զինքն. և յորպիսի փառաց և հանգստեան ժառանգութեն կոչեալ է. և կորուսանէ ։

Մ̃ն մտածեա՛. զի մեք յառաջագոյն 'ի պատիժ մեղաց առաջին ծնողաց մերոց ամենեքեան առ հասարակ չունեաք զհոգին 'որ առաջնորդել մեզ, և վարել զմեզ յա̃ծահաճոյ վարս՝ և յա̃ծային օրէնսն արդարուե. այլ գնայաք մարմնով, որ վարէր զմեզ. զի մարմինն ոչ միայն տկար է առ ա̃ծային օրէնսն արդարուե ըստ ինքեան, այլ և ծըրգեալ սկզբնական մեղաց լուցկիճն ցանկութե, եղեալ է մարմին մեղաց. և այսպէս անհնարին էր մեզ ազատիլ 'ի մեղաց, և արդարանալ ։ Բայց ա̃ծ, որ մեծն է ողորմութբ, գթացեալ 'ի մեզ՝ առաքեաց զմիածին որդին իւր յաշխարհ. որ էառ զմարմին անսակաւնման մերումս մարմնոյ. որ 'ի մեզ է մարմին մեղաց. բայց 'ի նմա ոչ եղև մարմին մեղաց, այլ ճշմարիտ մարմին առանց մեղաց ։ Եւ բոլորովին առանց մեղաց կեցեալ՝ զիւր անմեղ մարմինն որ էր նման մերումս մարմնոյ մեղաց, մատնեաց մահու խաչի. և 'ի նմա դատապարտեալ սպան ըզ մեղս, վճարելով զպարտս մեղաց մերոց. և սփռելով 'ի մեզ զ̃որ հոգին շնորհաց՝ և արդարութե. որպէս զի եղիցի մեզ զօրն արդարութիւն ունել և պահել՝ ոչ գնալով յայսմ հետէ ըստ մարմնոյ մեղաց. այլ մահացուցանելով զմարմին մեղաց՝ գնալ ըստ հոգւոյն շնորհաց և արդարութե՝ վարեցեալ 'ի նոյն հոգւոյն, զոր էհեղ 'ի մեզ առատա̃պ 'ի մկրտութե ։ Վասնի ո̃ր ասէ առաքեալն. Գաղ. Ե. 24. Որք քրիստոսին են, զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կրքօք՝ և ցանկութբք հանդերձ ։

Իսկ որք ոչ մահացուցանելով զմարմին մեղաց՝ գնան ըստ մարմնոյ, որ ապականեալն է լուցկիւ բորբոքման մեղաց, տկարանան գնալ ըստ օրէնսն արդարութե. և դառնալով 'ի մեղս՝ 'ի բաց վարեն յանձանց իւրեանց զհոգին շնորհաց և սրբութե. զի ո̃ր ասէ առաքեալն, Հռովմ. Ը. 5. Որք ըստ մարմնոյն են, զմարմնոյն խորհին. և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն ։ Զի խորհուրդ մարմնոյ մահ է, և խորհուրդ հոգւոյն կեանք և խաղաղութիւն. քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յա̃ծ. զի օրինացն ա̃յ ոչ հնազանդի. նաև կարէ իսկ ոչ ։ Զի որք մարմնովքն են, ա̃յ հաճոյ լինել ոչ կարեն. այսինքն որք զմարմին ոչ մահացուցանեն, այլ խորհրդովն ո̃ր վարին, ա̃յ հաճոյ լինել ոչ կարեն ։

Եւ ապա ասէ ։ Բայց դուք ոչ էք մարմնով, այլ հոգւով, եթէ իցէ հոգին ա̃յ 'ի ձեզ բնակեալ ։ Ապա եթէ ոք զհոգին քի̃ ոչ ունի, նա չէ նորա ։ այսինքն, դուք 'ի մկրտութե ձերում 'ի քս̃ մեռայք ըստ մարմնոյ մեղաց՝ և թաղեցայք 'ի մահն քի̃. վ̃ն ոչ էք մարմնով, այլ հոգւով. զի ոչ ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյն կեայք, եթէ մահուչափ մեղօք ոչ էք մերժեալ, այլ ունիք զնա 'ի ձեզ բնակեալ ։ Ապա եթէ ոք 'ի ձէնջ մերժեալ է մեղօք յիւրմէ զհոգին քի̃ ա̃յ, բանս իմ այս՝ ոչ է առ նա ։

Եւ սուղ ինչ յետոյ 'ի 12. համարն ասէ. Այսուհետեւ եղբարք, պարտապանք եմք ոչ մարմնոյ ըստ մարմնոյ կեալ. զի եթէ ըստ մարմնոյ կեցջիք, մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք, կեցջիք ։ Զի որք հոգւովն ա̃յ վարին, նոքա են որդիք ա̃յ ։ Մ̃ն այսուհետև մեծաւ զգաստութբ զգոյշ լիջուք, զի իցեմք 'ի շնորհս. և 'ի հոգւոյն շնորհաց վարեցեալ՝ ա̃ծօրէն կեցցուք իբրև որդիք ա̃յ. մի դուցէ մարմնով ըստ մարմնոյ վարեցեալ՝ դիւօրէն կեցցուք 'ի կորուստ յաւիտենից ։

Մաս Երրորդ ։

Սերտ հաւատով 'ի միտ առցուք զայս ճշմարտութի, թէ մարդոյ այլ կատարած կենաց ոչ գոյ բաց յերկուց. որոց մինն է արքայութին երկնից յաւիտենական. և միւսն դժոխք անվախճան ։ Արքայութին երկնից ստուգեալ է մեզ յա̃յ, թէ 'ի սկզբանէ ա̃շխ պատրաստեալ է վասն որդւոցն ա̃յ, և ոչ վ̃ն որդւոց աշխարհիս այսորիկ, կամ մարմնոյ և սատանայի. զի վ̃ն 'ոց 'ի պատրաստի է հուրն յաւիտենական ։ Իսկ ըստ առաքելոյն առ Հռովմ. Ը. 14. որք հոգւովն ա̃յ վարին, նոքա են որդիք ա̃յ. և ոչ որք այլ ազգ վարին ։

Մ՟Ոյ և Տ՟ն մեր յորժամ եկեալ էր փառօք իւ-
րովք դատել զաշխարհս ամ՟, մեկնեաց զնոսա
իրաւամբք յերկուս. և կացուսցէ յաջմէ իւր
մի և յահեկէ ։ Զ արդարսն յաջմէ. վ՟ն զի
'ի հոգւոյն շնորհաց վարեցեալ՝ ա՟ծօրէն կե-
ցին. որ՟պ և ինքն որ էր և է ա՟ծ, 'ի վարս իւր
ը՟ մարդկութե՛ն, 'ի հոգւոյն ս՟բյ վարիւր.
որ՟պ յայտ է. մատ. գ. 1 ։ մարկ. ա. 12 ։ և
ղուկ. դ. 1 ։ Իսկ զմեղաւորս 'ի ձախմէ,
զի հակառակ ս՟բ հոգւոյն, ք՟ս է, մարմ-
նաւոր, շնչաւոր, և դիւական վարս վարե-
լով՝ ընդդարձակութ՟, դիւօրէն կեցին. և
վասն այսորիկ իրաւամբք ընդ նոսա դա-
տապարտին. ը՟ այնմ. մատթ. իե. 41.
Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենա-
կան, որ պատրաստեալ է սատանայի, և հրեշտակաց
նորա ։

Եւ այլ առաւել յայտնի իրաւացի բան.
զի որ՟պ նա՝ ը՟ մարդկութե՛ն իւրում, հոգւով
ս՟բով գերբնապէս յղացեալ ծնաւ 'ի ս՟բ կու-
սէն. սոյնպ՟ և մեք գերբնական ծննդեամբ
որբոյ աւազանին, որ լինի 'ի ջրոյ և 'ի հոգ-
ւոյն ս՟բյ, եղաք որդիք ա՟յ ։ Արդ և սոյն
պէս ոչ բնական, այլ գերբնական բարի վա-
րուք ա՟ծօրէն կեցեալ յաստի կեանս, գերբ-
նապէս վերառեալ լինիմք յարքայութ՟ն
երկնից. ուր վերջին լրութ՟ ա՟ծօրէն կեան
երանեալ քն, ը՟ որում լուսով փառաց ա՟ծա-
կերպ և ա՟ծատեսեղեալք՝ բոլորովին հոգ-
ւովն ա՟յ վարին ։

Բայց արդ՝ այսչափ բանիցս ասացելոց կա-
րեմ համարիմ յաւելուլ և զայս, թէ հա-
ճոյարար շնորհն՝ առանց որոյ ոչ լինի ա՟ծօ-
րէն կեալ՝ և փրկիլ, բաժանի 'ի յունակա-
կան. և 'ի ներգործական ։ ունակականն է,
որ արդարացուցանէ զհոգին. և հաճոյ առնէ
ա՟յ տեսակաբար և մնացապէս ։ Իսկ ներգոր-
ծականն ոչ տեսակաբար, այլ առնուլաբար որ՟պ
գործողութի ուրուք օգնողի, կանգնեցուցա-
նողի, և ձեռնկալութ՟ ընթացուցանողի ։
Վասն այն շարժութ՟ն, որով ա՟ծ օգ-
նական լինի մարդոյ՝ 'ի գործել զայնոսիկ
գործս, որք 'ի վեր են քան զզօրութի բնու-
թե՛՝ գոլով 'ի կարգի առ յաւիտենական ե-
րանութ՟ն, է ներգործական շնորհ ։ Որ՟պ
ս՟բն Թովմաս, և այլ ա՟ծաբանք ուսու-
ցանեն. և վկայութ՟ ս՟բ գրոց և եկեղեցւոյ
հաստատեն, թէ որ ունի զարդարացուցիչ
շնորհ, ոչ կարէ գործել ը՟ նմին, եթէ ոչ
ներգործական շնորհն կանխեսցէ, և օգ-
նեսցէ նմա ։ Վասն ասէ ս՟բն օգոստինոս,
որ՟պ մարմնաւոր աչք՝ թէպէտ և ամենևին
առողջ իցէ, եթէ զպայծառութի լուսոյ ոչ
ունիցի իւր օգնական, ոչ կարէ տեսանել.
սոյնպէս և մարդ լիով արդարացեալ, եթէ
ոչ օժանդակեսցի յա՟յ լուսով յաւիտենական
արդարուե, ուղիղ կեալ ոչ կարէ ։ Եւ ս՟բն
Թովմաս ասէ. թէ նա՝ որ ունի զշնորհ, ինք-
նին առանց շնորհին օգնկնուե. ք՟ի. առանց
շարժելոյ յա՟յ առ 'ի ուղիղ գործել, ոչ կարէ
գործել զբարի, և խորշիլ 'ի մեղաց. զի 'ի յա
ռաջին կեանս ողջացուցանի մարդն շնոր-
հօք՝ ը՟ միտացն միայն. և մնայ ապականու-
և շաղախումն 'ի մարմնի, որով ծառայէ օ-
րինացն մեղաց. որ՟պ ասի հռովմայեցւոց. է ։
Մ՟նայ ևս նսեմութի խմն յիմացութե. նա
զի կատարելապէս ոչ ճանաչելով զմեզ, ոչ
կարեմք լիապէս ճանաչել, թէ զինչ պիտոյ
է մեզ. և վ՟ն հարկ է մեզ՝ զի յա՟յ ուղղի-
ցիմք, և պաշտպանիցիմք. որ զա՟մ գիտէ,
և զա՟մ կարէ ։ Վ՟ոյ ևս եղելոցն 'ի շնորհս՝
յարմարի ասել. Եղիցին կամք քո. և այլն.
և թէ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա
զմեզ 'ի չարէ. և վ՟ն այսորիկ հարկ է
մեզ մնածութե կրթութ՟ մարզիլ 'ի զգու-
շութի, և 'ի պատրաստականութի ը՟ թևօք
ս՟բ հոգւոյն վարելոյ, և ոչ տալոյ զտեղի
սատանայի ։

Վեցերորդ հատուածն ։

Եօթնեակ օրինակօք կարգեալ, յաղագս
չարութե մեղաց ։

Առաջին օրինակ ։

Յաղագս վնասուց մեղաց. և օգտի
խորշելոյ 'ի մեղաց ։

Մասն առաջին ։

Ստածեա՛, թէ ո՛րչափ մեծ վնաս
է մեղանչելն մահուչափ, կմ՟ հաւա-
նիլն մահուչափ մեղաց ։ Զի մարդն
այսուհետև կորուսանէ զշնորհն, և զսէրն ա՟յ,
որ է կեանք հոգւոյ. և մեռանի հոգւով.
ը՟ այնմ. հռով. զ. 23. Թոշակք մեղաց մահ է.
այլ շնորհքն ա՟յ կեանք յաւիտենից 'ի ք՟ս յս՟ 'ի տ՟ր մեր.
Զրկի 'ի լինելոյն բնակարան ա՟ծութե՛ն.
և լինի բնակարան այսոյն պղծոյ. և դրա-
հի լինիլ միոյն ը՟ սատանայի. զի ասէ տ՟րն.
մատթ. ժբ. 43. Յորժամ այսն պիղծ ելանէ
'ի մարդոյ, շրջի ընդ անջրդին տեղիս. խնդրէ հան-
գիստ, և ոչ գտանէ. յայնժամ ասէ. դարձայց 'ի
տուն իմ ուստի ելի. և եկեալ գտանէ զնա պարա-
պորդ

պորտ հարբեալ և յարդարեալ . և հրեալ ընդդէմ անոր : Նաև այնմ գործակցի ը նմա 'ի չլինել և 'ի շահել զգործս . և արկանել ը նմա 'ի հուրն յաւիտենական : Սոյն վկայէ զայս զոր ասէ Մարգարէն . երեմ . Բ . 19 : Չարիք քո կշտամբեսցեն զքեզ . և ծանիցես , և տեսցես , թէ չար և դառն է քեզ թողուլ զՏէր Աստուած քո :

Սահմ . երկրորդ :

Սահմանեա , թէ որչափ մեծ բարի է փախչել 'ի մահուչափ մեղաց : Զի որ զգուշացեալ 'ի մեղաց՝ է 'ի շնորհս այ , կայ 'ի սէր նր . և ամենայն երրորդութիւն բնակեալ է 'ի հոգի նր : որպէս ասէ տէրն մեր . յոհ . ԺԴ . 23 : Եթէ ոք սիրէ զիս , զբանս իմ պահեսցէ . և առ նա եկեսցուք . և օթեվանս առ նմա արասցուք : Նաև 'ի փորձին խռովել յորժամ ոչ հաւանի մեղաց , յաղթէ զփորձիչն իւր զսատանայ . և փառաւոր առնէ զամենայն երրորդութիւն . և ուրախ առնէ զնա 'ի վր իւր . որպէս ասէ տէրն . առակ . ԻԳ . 15 . Որդեակ . եթէ իմաստուն լինիցի սիրտ քո . ուրախ արասցես և զիմ սիրտ : Գործակից լինի նմա քս 'ի գործս արդիւնաւորս արքայութեան . ըստ այնմ . հռոմ . Ը . 28 . Որոց սիրեն զած , յամ գործակից լինի 'ի բարիս : Նաև զայն սատանայ , զոր յաղթեաց , 'ի ներքոյ ոտից իւրոց ունիցի 'ի յաւիտեան . ըստ այնմ . սաղմ . Ղ . 13 : Եւ կոխեսցես զառիւծն և զվիշապն : Նաև և յաղթութիւն իւր լինի նմա մշտնջենաւոր պարծանք . ըստ այնմ , երգեցէք նմա պարծանս մշտնջենաւորս . որ հարկաւ յաղթել , և ոչ եղանց . առնել զչարս՝ և ո՛չ արար : Նաև և զաթոռ փառաց ժառանգեսցէ . զի ասէ տէրն . յայտ . Գ . 21 . որ յաղթէ . տաց նմա նստել ընդ իս յաթոռ իմ , որպէս ես յաղթեցի և նստայ յաթոռ հօր իմոյ :

Սահմ . երրորդ :

Սահմանեա , զի քանիցս անգամ յաղթեսցես զհրապոյրս մեղաց , և ոչ հաւանեսցես սատանայի խորհրդոց , զայնքան պսակ յաւիտենական փառաց շահեսցես անձին քում . որպէս գրեալ է 'ի հարանց վարս , զաշակերտէ ծերոյ ուրումն , թէ 'ի գիշերի միում եօթն անգամ յաղթեալ խորհրդոց անհնազանդութեան , զեօթն պսակս շահեցաւ յերկնից . զոր տեսեալ այն հոգևոր ծերն զարմացաւ : Նաև զի յաղթելով մեղաց՝ փառաւորես զած . և ի՛նքն փառաւորիս 'ի նմանէ . զի ասի . ա . թագաւ . Բ . 30 . Զփառաւորիչս իմ փառաւորեցից : Ուրախ առնես և զզգաստ հրեշտակս , և առանձին խնդութբ զպահապանն քո զսրբազնացուցանես . որպէս ասի 'ի գիրս առաքինութեանց , թէ բարի հրեշտակք , և չար հրեշտակք տեսանեն զպատերազմն մեր . բարիքն՝ զի թէ յաղթեսցուք , ուրախասցեն . և չարքն՝ զի թէ անկանիցիմք , ուրախ լիցին : Նաև տէրն ասէ . յոհ . ԺԶ . 33 . քաջալերեցարուք . զի ես յաղթեցի աշխի : Նաև առաքեալն ասէ . եբրայ . ԺԲ . 1 . համբերութբ ընթասցուք 'ի պատերազմս , որ առաջի կայ մեզ . հայեսցուք 'ի զօրագլուխն հաւատոց , և 'ի կատարիչն յս . որ փոխանակ ուրախութեան , որ նմա առաջի կայր , յանձն էառ զխաչ . ամօթ ոչ համարեալ , զի մի լքանիցիք . զի չև ևս արեամբ չափ պատերազմեալ հակառակ կայցէք մեղաց : Նաև տէրն ասէ յայտ . Գ . 5 . որ յաղթէ , այսպէս զգեցցի սպիտակս . և ոչ ջնջեցից զանուն նր 'ի դպրութենէ կենաց . և խոստովանեցայց զանուն նր առաջի հօր իմոյ , և հրեշտակաց :

Պտուղ :

Քննեա զքեզ . և եթէ ծանիցես զքեզ անկեալ 'ի ծանր մեղս ինչ , նախ մաքրեա առ մբ խորհուրդն ապաշխարութեան արժանաւոր զղջմամբ , և առաջադրութբ . որպէս զի վերստին ընկալցի զքեզ տր 'ի շնորհս , և 'ի սէր իւր : Երկրորդ նկատեա և տես , թէ որքեն կիրք , և նիւթք , որք ստէպ առիթ լինին քեզ մահուչափ մեղաց . և յառաջ կապես ընդդէմ նոցա զինեալ օգնականութբ այն 'ի բաց հերքել զնոսա զինուք հաւատոյ , յուսոյ , և սիրոյն այ . և շնորհօք այն յաղթեսցես հնարիցն սատանայի . որ միշտ 'ի նիւթս , 'ի կիրս , և յայլ առիթս ըմբռնել զքեզ դարանի :

Երկրորդ օրինակ :

Թէ մարդ մեղանչելով 'ի բաց վարէ յիւր մէ զհոգին սբ . և ընդունի զսատանայ . այլ և անիծանի յայ :

Սահմ . առաջին :

Սահմանեա . զի ցորչափ ժամանակ ոչ է մեղուցեալ քրիստոնեայն , հոգին սբ հեղմամբ շնորհաց , և սիրոյ իւրոյ՝ կայ 'ի սրտի նր բնակեալ . որպէս ասէ առաքեալն , ա . կորն . Գ . 16 . տաճար այ էք . և հոգին այ բնակեալ է 'ի ձեզ : Իսկ յորժամ մահուչափ մեղանչէ՝ 'ի բաց վարէ զնա յանձնէ իւրմէ . և ընդունի յինքն զոգի իշխանին դիւաց զայն չար , որ յաներևոյթս լլկէ զնա որպէս չար

խորհրդովք · և ախտիւք մեղաց · որպէս և գրեալ է զՍաւուղայ · Ա · Թագ · ԺԳ · 14 : Թէ Հոգին Տն վերացաւ 'ի Սաւուղայ · և խեղդէր զնա այս չար : Ո՛ ի այն երևելի պատուհասն եղև օրինակ՝ աներևոյթ պատուհասին՝ որ հասանի այլոց մեղուցելոց · զի որպէս ասէ առաքեալն · Հռոմ · ԺԵ · 4 · որ ինչ գրեցաւ , 'ի մեր վարդապետութիւն գրեցաւ : Ուստի ասէ · Եփես · Դ · 30 · Եւ մի տրտմեցուցանէք զՀոգին Սբ Այ · որով կնքեցայք յաւուրն փրկութեան :

Մասն երկրորդ :

Մտածեա՛ · զի որ մահուչափ մեղանչէ , խնկոյն անիծանի յԱյ յաներևոյթս · որպէս եղև ադամայ , եւայի , և կայենի անիծանիլ յայտնի : Եւ այսպէս անջատելով յԱյ՝ որ է կեանք հոգւոյ , մեռանի հոգւով · և այնուհետև հոգի նր տգեղացեալ իբրև դի անկենդան , գարշելի լինի Այ , և հրեշտակաց : Ի՛ սր հեռանան 'ի նմանէ Այ , և հրեշտակք · և վաղվաղակի դիմեն 'ի վր նորա դևք իբրև ագռաւք 'ի վր դիշոյ · և կոտեն զնա ըստ պէսպէս չար խորհրդովք · և այնպէս առաւել պղծացուցանեն զնա , մինչ լինել փութով Թաղելի 'ի դժոխս : Ո՛՜ զի հոս չար խորհրդոց նորա՝ և վարուց՝ տաղտկացուցանեն զԱծ , և զհրեշտակս : և սատանեն զԱծ՝ փութանակի իջուցանել զնա 'ի դժոխս : Որպէս ասէ դաւիթ · սաղմ · ՀԷ · 7 : Եւ եղէ որպէս 'ի ձորոյ աներևութին նոյա · զի գնացին նոքա ըստ խորհրդոց սրտից իւրեանց : Եւ դարձեալ ասէ · սաղմ · ԾԲ · 13 : Յաւէժս , և 'ի տրտմութիւն մտանեցէն · Ամ մեղաւորք · 'ի նաւադարձի բարկութեան պատուեցին · և մի գտցին :

Մասն երրորդ :

Մտածեա՛ · զի որ պատերազմելով ընդդէմ մեղաց՝ յաղթօղ լինի , յաներևոյթս օրհնի յԱյ · զի գրեալ է : Աշխատասէր եղիցիք այսօր առաջի երեսաց Տեառն , և օրհնեսցէ զձեզ · Ուստի և որպէս յաւուր դատաստանին 'ի հրաւիրել իւրում զարդարոյն յարքայութիւն երկնից , անուանէ զնոսա օրհնեալս հօր իւրոյ · զի ասէ · Եկայք օրհնեալք հօր իմոյ , ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի սկզբանէ աշխ :

⁂

Պտուղ :

'Ի մտի առեալ զայս Այ պատուհաս մեղաց · փութա՛ արժանաւոր ապաշխարութբ սրբել զանձն քո · և զգուշանալ 'ի վերստին մեղանչելոյ : Իսկ եթէ ոչ ստոյգ երևին քեզ այսչափ մեծամեծ վնասքն մեղաց · տես , մի՛ գուցէ կուրի իմն անձնասիրութբ զգածեալ , զԱծ ոչ ճանաչես · և 'ի տխրմն հեշտալեաց մարմնոյ խրեալ , առ երկնային իմանալի բարեաց ոկարանաս միոջ և բաղձանօք ամբառնալ · և այնպէս անզգած Թողեալ զբանականութիւն , յորում զքեզ 'ի պատկեր իւր ստեղծ Այ , զիջեալես անբանից հաւասարիլ և նմանիլ նոցա : Բայց ծանի՛ր · զի 'ի մահուան քում ոչ եղծանի հոգի քո իբրև զանասնոցն · այլ անեղծ մնայ · և դու ես 'ի մասին հոգւոյդ անեղծ մնացեալ , դատիս 'ի քէն · և փոխանակ անարգանացդ , զոր առնես նմա մեղօք , յանշէջ դեհենն հրոյն մատնիս յաւիտեան : Եւ մի՛ կարծեր , թէ 'ի տանջելն հոգւոյդ 'ի դժոխս դու ոչ ռուժամայն տանջիս · այլ դու իսկ Թէպէտ ոչ ըս բոլորիդ , բայց 'ի մասին հոգւոյդ տանջիս 'ի դժոխս · որպէս յայտ է այս 'ի յանառակն մեծատանէն · որ պապակէր 'ի տապոյ հրոյն դժոխոց · որպէս պատմի · Ղուկ · ԺԶ :

Նորոգ օրինակ :

Ոչ է մարդ մեղանչելով անարգէ զԱծ · և զորդին Այ առ ոտն հարկանէ · և զհոգին շնորհաց Թշնամանէ · կորուսանէ զշնորհսն , և զսէրն Այ · և զարդիւնս անցեալ բարեաց գործոց իւրոց :

Մասն առաջին :

Մտածեա՛ · զի որ մահուչափ մեղանչէ , արհամարհէ զԱծ և անարգէ զնա · որպէս ասէ առաքեալն · Հռոմ · Բ · 23 · յանցանել ըստ օրէնսն զԱծ անարգես : քանզի յորժամ ոք հաւանի մեղաց , առաւել պատուական համարի զանձն իւր՝ կամ զմարմին իւր՝ քան զԱծ · որովհետև յանձն առնու զառնացուցանել զԱծ , քան զրկել զանձն իւր յիրէ ինչ զոր ախորժէ : Ուստի ասաց Այ ցերոբովամ · Գ · Թագ · ԺԴ · 9 · Եւ զիս ընկեցեր յետս 'ի մարմնոյ քումմէ : Եւ զի ինչ սոսկալի առաւել քան զայս : Վս այսորիկ ասի , Եկղ · Իա · 2 · և 3 · Իբրև յերեսաց օձի փախիր 'ի մեղաց · Եթէ մերձեսցիս առ նոսա , ընդմանեսցեն զքեզ · Ատա_

ծառայք առաւօտու աստուծոյ նր, առաքելոյն պետրոսի
ծառայիս ։ Եւ թէ մերձեցիս, ըմբռնեա_
ցեն զքեզ, ասէ. ոչ զի ոչ միայն 'ի գործե_
լոյ զմեղսն փախիցուք, այլ և 'ի մտածու_
թէ նոյ և 'ի խորհելոյ հեռի լիցուք ։ զի, ոչ ասէ առաքեալն. հռոմ. ը. 6. Խոր_
հուրդ մարմնոյ մահ է ։

Մասն երկրորդ ։

Մտածեա. զի որ մահուչափ մեղանչէ. ըստ առաքելոյն, եբր. Ժ. 29. զորդին այ առ ոտն հարկանէ. և զարեան նորոյ ուխտին նր, որով յառաջագոյն սրբեալն էր, խառնակ համարի. և զշնորհաց հոգին թշնամանէ ։ Զանզի ախորժելովն 'ի մեղս, և նովաւ ապականելով զհոգի իւր, առ ոչինչ համարի զփրկիչն և զորբին իւր 'ի մեղաց հեղմամբ արեան նր. միանգամայն և զհոգին նր հանէ և վարէ 'ի բնակութէ սրտի իւրոյ. և զի՞նչ քան զայս մեծագոյն ոճիր և ամբարշտութի ։ Ուստի ասէ առաքեալն. եբր. Ժ. 29. Որչափ՝ որչափ սաստիկ պատժոց արժանի համարեցէք զայն, որ զորդին այ առ ոտն եհար. և զարեան նորոյ ուխտին խառնակ համարեցաւ, որով և սրբեցաւն. և զհոգին շնորհաց թշնամանեաց ։
Ահա մեծ է անկանել 'ի ձեռս այ կենդանւոյ ։

Մասն երրորդ ։

Մտածեա. զի որ մահուչափ մեղանչէ, կորուսանէ զսէրն այ, և զարդիւնս ամ բարեգործութեց իւրոց, զորս յառաջ քան ըզմեղսն արարեալ է. և մնայ 'ի նմա միայն հաճատ առանց գործոց մեռեալ, ըստ սրբոյն յակոբայ. բ. 26. Ուստի ասէ տէրն զմահուչափ մեղուցելոյն. եզեկ. ԺԳ. 13. Ամ արդարութիւնք նորա ոչ յիշեսցին. այլ անօրէնութեամբ նորով զոր արար, նովին մեռցի ։ Կորուսանէ և զհաձոյարար շնորհն հոգւոյն սրբոյ. որ է առհաւատչեայ և գրաւական ժառանգութե արքայութե երկնից ։ Նաև ընդունի զկնիք յաւիտենական դատապարտութե, վաղվաղակի, կամ սուղ ինչ անագան արկանել 'ի հուրն յաւիտենական 'ի դժոխս. ուր որդն ոչ մեռանի. և հուրն ոչ շիջանի ։ Մի՛ յետինս անմտութե մեղաւորաց անձին. որ զայսպիսի անհնարին պատուհաս զմտաւ ածեալ ոչ ածեալ, դիմէ 'ի ծոցակս մեղաց յաղագս դոյզն անուշութե, որ կայ 'ի խայծ նր ։

Պտուղ ։

Նաև արդ՝ քննեա զկեանս քո. և տես, թէ քանիցս անգամ մեղուցեալես ծանր մեղօք ։ Փութա՛ եւ ձանաչել զնիւթս, և զառիթս, որովք անկեալես 'ի նոյնս ։ Մրդեօք վա մարդկան հաճոյից, թէ առ երկիւղի անգոսնելոյ նոցա մեղար ։ Մրդեօք վա 'ի նեղութենէ ինչ զերծանելոյ. թէ վա զմարմին քո հեշտութբ իմն զուարձացուցանելոյ մեղար ։ Նաև ծանի՛ր. զի վա որոյ իրի մեղար, զնոյնն քան զած առաւել սիրելի, և ընդունելի համարեցար ։ Միանգամայն և զանստանելի դարշութիւն մեղաց քոց ըստ հեղման արեան որդւոյն այ 'ի վր քոյ, և ընդ տուչութէ հոգւոյն սբյ 'ի սրտէ քոյ՝ միահաղոյն ունել յանձին քում յանդգնեցար ։ Արդ դարձ՛ 'ի սրտէ առ այն. և փութա՛ արժանաւոր ապաշխարութբ քաւել ։ Նաև զինեա զանձն քո յայսմհետէ պատերազմել ոչ միայն ընդդէմ գործոց՝ և խորհրդոց մեղաց, այլև ընդդէմ առթից, և պատճառաց նոցա, մտաւորական աղօթիւք, և քննութբ սրտի կրթելով զանձն քո 'ի հոգևոր պատերազմ ։

Չորրորդ օրինակ ։

Եւ թէ մարդ մեղանչելով կորուսանէ զորդեգրութի իւր այ. և զնմանութիւն որդւոյ նր, և զեղբայրութիւն. և յարի 'ի սատանայ ։ Նաև թէ զհետ այս չարեացս որչափ այլ մեծամեծ չարիք հասանեն նմա ։

Մասն առաջին ։

Մտածեա. զի քրիստոնեայն որ ոչ է 'ի մեղս. այլ կայ 'ի շնորհս այ, է որդեգիր այ հօր. ըստ այնմ, գաղ. դ. 6. և. 7 ։ Առաքեաց այ զհոգի որդւոյ իւրոյ 'ի սիրտս մեր. որ աղաղակէ աբբայ հայր. այսուհետև ոչ ես ծառայ այլ որդի, և ժառանգ այ ։ Նաև շնորհօք իբրև նմանակից միածնի որդւոյն այ և եղբայր, սիրելի է նմա. և ընտանի պահապանի իւրում հրեշտակի ։ Զի ասէ տէրն. մարկ. գ. 35. որ առնիցէ զկամս այ. նա է իմ եղբայր, և քոյր՝ և մայր ։ Իսկ յորժամ մահուչափ մեղանչէ, նախ մերժէ յիւրմէ զորդեգրութի իւր այ, և զեղբայրութիւն քի ։ Նաև դրաւէ զանձն յորդիութի բելիարայ. զի 'ի սբ գիրս մեղուցեալքն որդիք բելիարայ անուանին. դատ. ի. 13 ։ Երկրորդ՝ եղծանէ յանձնէ իւրմէ զնմանակցու_

թի որդւոյն այ, և զգենու զնմանութիւն սատանայի ։ Զի որպէս շնորհն է կնիք նմանութեան այ, նոյնպէս և մեղքն է կնիք նմանութեան սատանայի․ ուստի ըստ Տեառն թովմայի, կնքով շնորհաց զանազանին որդիքն արքայութեան 'ի յորդւոցն կորստեան, որք ունին զնշան և զկնիք գազանին ։ յայտն․ ժգ․ 17 ։ Երրորդ, հեռանայ 'ի յընտանութենէ պահապան հրեշտակին, և յարի 'ի սատանայ․ վայ ասի զմեղուցելոյն․ սատանայ կացցէ ընդ աջմէ նր ։ սաղ․ ճը․ 6 ։

Մտած․ Երկրորդ ։

Մտածեա՛, թէ որչափ մեծ վնաս է մերժելն զորդեգրութիւն այ՝ մեղօք ։ Զի պատիժն մերժելոյ զշնորհս զայս՝ է զրկիլ՝ 'ի տեսութենէ երեսացն այ 'ի յաւիտեան․ որ արդարև յետին դժնդակն է 'ի տանջանս դժոխոց ։ Բայց ով ոչ ոք կարէ յաստի կեանս պատմել, թէ ով գեղեցիկ, և որչափ բարի է ած, և որքան ցանկալի է հոգւոյ մերում տեսութիւն երեսաց նր․ սոյնպէս ոչ ոք կարէ ծանուցանել, թէ որչափ սաստիկ տանջանք լինի դատապարտեալ հոգւոյն զրկիլն յերանելի տեսութենէ երեսաց ածութեան ։ Արդ՝ ըստ Տեառն թովմայի՝ յարիլն բանական հոգւոյն 'ի յած՝ է բնական, և է յոյժ ցանկալի նմա․ զի է ծայրագոյն երջանկութիւն նր, առ որ ձկտի ամ ուժգնութբ գոյութե իւրոյ․ վն յետ աստի կենացս յորժամ վասն մեղաց իւրոց մերժի 'ի նմանէ յաւիտեան, լինի այս նմա տանջանք անբաւ և անհուն․ ով անհնարին անտանելի պատուհասիս ։

Մտած․ Երրորդ ։

Մտածեա՛․ թէ որչափ մեծ վնաս է մարդոյ յարիլն 'ի սատանայ հաւանելով մահուչափ մեղաց, առ որ հրապուրէ նոյն դաղտամարտ թշնամին ։ Զի որ համոզանաց նր զիջեալ հաւանի՝ և յաղթի, մատնէ զանձն իւր 'ի ձեռս նորա ։ բր․ բ․ պետ․ բ․ 19 ։ որով ոք յաղթեսցի նովին և ծառայ է ։ Եւ զի դևքն են դահիճք դատաստանին այ․ ուստի զորս 'ի մարդկանէ յաղթեն, զնոսա 'ի ներքոյ իւրեանց ունելով 'ի դժոխս՝ տանջեն զնոսա ահարկու տեսլեամբ իւրեանց՝ և նախատելով ։ Արդ՝ քաջայայտ է, ըստ բազում պատմութեանց դժնեայ տեսութեան նց, թէ մինն իսկ 'ի դիւաց բաւական է զլիհն դատապարտելոյ՝ անտանելի դժոխս առնել․

ժթ

իսկ որչափ ևս բազմութիւն նց ։ Եւ արդ՝ նախատէ դևն յատկապէս զնա՝ զոր ինքն որսացեալ է 'ի մեղս, և ասէ․ վա՛հ որ բազում անգամ զօրանայիր ընդդէմ իմ․ և զիարդ 'ի ձեռն չնչին փառաց, և կամ 'ի ձեռն դոյզն հեշտութեան համոզեալ՝ ըմբռնեցար ։ վա՛յ քեզ անմիտ, որ թերև անբան անասուն անփոյթ եղեր 'ի հաղբից իմոց զգուշանալ․ և արդ ո՛չ ևս կարես 'ի ձեռաց իմոց ելանել ։ Ո՞ւր է որդեգրութիւնդ այ, և գերակայութիւնդ շնորհօք․ որովք ձոխանայիր 'ի վր իմ կոխան ոտից քոց առնել զիս․ զոր մերժելով հրապուրանօք իմովք՝ եղեր կոխան ոտից իմոց․ և մնասցես այսպէս յաւիտեան ։

Պտուղ ։

Խղճահարեա՛ զքեզ․ և տես, զի եթէ ծանր մեղացն հաւանեալ ես, ստուգիւ դառնացուցեալ ես զած․ և յանփոփոխ երանելի ընտանութենէն այ 'ի բաց ընկեցեալ ես․ և յարեցեալ 'ի սատանայ․ ով բանք մտածութենդ ստուգեն ։ Եւ այնպէս յաւիտենական դատապարտութեան գրաւեալ ես զքեզ․ և միայն կախեալ կաս 'ի նրբագոյն թելէ կենացս․ և զայն ևս մահն սրէ զմանգաղ իւր հատանել 'ի քէն․ և դևն արդէն զմագիլս իւր ձգեալ է զքև՝ յափշտակել զքեզ, և տանիլ 'ի դժոխային տուն իւր ։ Բայց միայն գթութիւն այ ոչ թողու տալ նմա՝ մինչև լցցի չափն յանդգնութեան քոյ․ և յայնմ հետէ այլ ոչ ևս սպասէ դարձմանն քում․ այլ 'ի գործ ածէ զօրեալ բարկութիւն իւր 'ի վր քոյ․ և յայնժամ ոչ ուստեք ունիցիս զփրկութիւն ։ Աղերսեա՛ մինչ դեռ գոյ ժամանակ, դարձի՛ր առ ած յամ սրտէ քումմէ․ և հաստատեա՛ շնորհօք նր յայսմ հետէ ուղղել զվարս քո․ և կեալ միշտ յերկիւղն, և 'ի սէրն այ ։

Հինգերորդ օրինակ ։

Ի վերայ այնց վնասուց մեղաց, որովք դժուարին լինի մեղուցելոյն դառնալ առ ած ։

Մտած․ առաջին ։

Մտածեա՛, զի մեղանչելն մահուչափ բերէ ընդ իւր և զայս չար․ զի դժուարին առնէ մեղուցելոյն դառնալ առ ած․ և դիւրահաւ առնէ զնա առ վերստին անկումն ։ Բանզի զխնացականն խաւարեցուցանէ․ և զախորժակն առ երկնային բարիսն խամ-

ըացուցանէ ։ Ուստի ասէ առաքեալն, Եփես. Դ. 18. Որոյ խաւարեալ են մտօք, և օտարացեալ են 'ի կենաց Այ ... վս կուրութե սրտից նոցա ։ Մնզի միտքն առ երկնային ճշմարիտ բարիսն կուրանայ. և զգայութիւն ախտիւ ցանկութե զգածեալ, առաւել ցանկալի համարի զխաբուսիկ զուարճացուցիչս մարմնոյ քան զԱծ, և քան զյաւիտենական արքայութեան երկնից վայելումն ։ Մյ և անկանի յերեսացն Այ. և օտարացեալ 'ի նմանէ, ոչ յօժարի յիշել զԱծ յաղագս առատանաց խղճին մտաց. որպ եղև կայենի յետ մեղանչելոյ նր. ուստի գրեալ է վասն նորա. Ծննդ. Դ. 16. Ել կայէն յերեսաց Տն. և բնակեցաւ յերկրին նայեդ ։ Նա այնպէս առաւել սուզի 'ի տղմս մեղաց. և 'ի կապանս սատանայի ։

Մաս Երկրորդ ։

Մտածեա՛ և զայս սոսկալի ։ Որքանիցս անգամ մեղք ինչ թողանի, այնքանիցս նուազի մեղուցելոյն արժանաւորին թողութե. և որչափ աճի թիւն մեղաց, այնչափ աճի չարութիւն մեղուցելոյն ։ Ուստի որպ հնացեալ վէրք մարմնոյն լինին անբուժելի. սոյնպէս և հնացեալ վէրք հոգւոյն՝ 'ի բազում հնացեալսն 'ի մեղս՝ լինին անբժշկելի ։ Որքանալի 'ի յանձնել մարդոյ 'ի մեղս՝ գործողութիւնքն մեղաց պատճառեն զունակութի. այս ինքն է զախորժական սովորութի. և ախորժական սովորութիւն զասաւելի յօժարութի և զկցորդութի 'ի մեղս ։ Ուստի չար ունակութիւնքն լինին առաւել հզօրք 'ի ձգել զնա 'ի մեղս. և շնորհն զոր երբեմն դարձմամբ ընդունի, թէպէտ ոչ 'ի կողմանէ շնորհացն, բայց 'ի կողմանէ իւրմէ լինի անզօր ծուլնեաց, մինչ որ գործակցութի մեղսասէրին լինի թոյլ, և կամքն մեղկ, և ոչ քաջութբ զինի ընդդէմ մեղաց ։ ախտք, և կիրք լինին առաւել ապստամբք. և դևքն առաւել զօրանան ընդդէմ նմա. և յանդուգն խստութբ բռնանան 'ի վը նր. և զուն գործեն առնել նմա չդառնալ 'ի մեղաց, և յանձնել 'ի մեղս ։ Նա զինչ առաւել զգուշալի վտանգ քան զայս ։

Մաս Երրորդ ։

Մտածեա՛ զև առաւել զարհուրելին ։ Զի մարդն ինքնին անկանի 'ի մեղս. բայց ոչ ինքնին, այլ ձեռնկալութբ Այ կանգնի ։ Նակ զայս ձեռնկալու լինելս իւր, որ է գերբնական ծրի շնորհ, չափով սահմանեալ է Այ խորհրդովն իւր մարդոյ. ուրեմն բազում, և ուրեմն սակաւ անգամ ։ Նա յորժամ չափն ուրուք լցեալ լինի, այլ ոչ ևս յաւելու Այ ձեռնկալու լինել նմ, զի ճշմարտիւ դարձցի 'ի մեղաց ։ Ըմ. ամովս. ա. 3. 'Ի վը երից ամբարշտութեանց տմասկեա, և 'ի վը չորից, ոչ դարձուցից զնա ։ Մնկ որ գրգռելի վերստին մեղանչել, պարտի երկնչել. մի գուցէ լցեալ իցէ չափն. և այնու հետև ոչ ևս ձեռնկալու լիցի նմա Այ. և այնպէս ոչ ճշմարտիւ դարձցի 'ի մեղաց ։ Մնզի թէև 'ի խորհուրդ ապաշխարութե մտասցիցի ոք, եթէ ոչ գերբնական զղջմամբ (որ լինի գերբնական ձեռնտուութբն Այ) խոստովանեսցի զմեղս իւր, ոչ ընդունի զթողութի մեղաց. զի սոսկ բնական ներգործութբ ոչ փրկի մդ. այլ ծրի գերբնակն յԱյ ընկալեալ շնորհօք ։ Ուստի ասէ Տէրն մեր. յոհ. Զ. 44. Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ հայրն, որ զիս առաքեաց, ձգեսցէ զնա ։ Մնկ յոյժ բազումք են 'ի դժոխս, որք յուսով խոստովանութե ասացին 'ի միտս իւրեանց, թէ արարից այսանգամ ևս զայս մեղս. և յետոյ խոստովանեցայց ։ Բայց Այ արդար դատաստանաւ ոչ ետ նց զայն ծրի ձեռնտուութիւն առ գերբնական զղջումն. և այնպէս բնական զղջմամբ միայն խոստովանեալք ոչ երբէք արձակեցան 'ի մեղաց. և յայն մեղս մեռեալք՝ իջին 'ի դժոխս. Ուստի ասէ առաքեալն. ա. կորն. Ժ. 22. Եթէ նախանձ ինչ արկանիցեմք Տն. միթէ զօրագոյնք իցեմք քան զնա ։ Նա սիրաքն ասէ. Մի յաւելուցուր մեղս 'ի վը մեղաց. և մի ասասցես. գթութի Տն մեծ է. բազմութե մեղաց իմոց ողորմեսցի. զի ողորմութի, և բարկութի 'ի նմանէ վաղ հասանեն ։

Պտուղ ։

Եթէ 'ի քննելդ ճանաչեսցես զքեզ՝ յուսով խոստովանութե սովորեալ 'ի ծանր մեղս ինչ անկանել, զոր բազում անգամ խոստովանեալ, վերստին գործես զնոյն. ծանիր, զի վս այդպիսի մարդոյ գրեալ է, թէ եդ մեռ 'ի ձախ պատառ իւր. և ձող 'ի դժոխս պատարագ իւր ։ Աւուակ. Ը. 18. Մյ առ 'ի պատասխել 'ի վտանգէ ատի մեծէ. մինչդ արա շնորհօք Այ կատարեալ զղջումն. և առանձին իմն աղօթիւք յանձն արա զքեզ ամենօրհնեալ կուսին մարիամու, պահել զքեզ 'ի հնարից սատանայի. վս զի նմանեալես դու այնմ, որ կայ 'ի բերան խոր դբոյ. յոր թէ կամեսցի թշնամին, գլորաւ ձգեսցէ զնա ։ Նա յետ պատշաճաւոր պատրաստութբ խոստովանութեդ՝

Թնդ՝ յիւրաքանչիւր առաւօտու զանազան կերպիւ նորոգեա զառաջադրութիւն . զոր օրինակ : Յառաջնումն աւուր այսպէս . այսօր 'ի պատիւ ած հօր ոչ կամիմ գործել զսովորեալ մեղսն իմ : Յերկրորդում . 'ի պատիւ որդւոյն ած : Յերրորդում , 'ի պատիւ հոգւոյն սբյ : 'Ի չորրորդումն սկսեալ 'ի սբ ածածնէն , 'ի պատիւ այլ իւրաքանչիւր սրբոց առաջադրեա ոչ գործել զայն չարաչար սովորեալն քո . բարեխօս ունելով զնոսա մա քոյ առ ած : Նա 'ի մէջ աւուրն իսկ ժամէ 'ի ժամ նորոգեա զառաջադրութիւն նախակարգեալ կերպիւն . և յուսա 'ի տր , և նա օգնէ քեզ . և պահէ զքեզ . ոպ ասէ սաղմոսերգուն . սղմս . ՃԻ . 3 : Մի տար 'ի սասանութիւն զոտն քո . և մի՛ նիրհեսցէ պահապան քո . ոչ ննջեսցէ ոչէք , և ոչ ննջեսցէ պահապանն իսրայէլի . և այլն որ 'ի կարգին :

Վեցերորդ օրինակ :

'Ի վերայ խորամանկութե սատանայի . և 'ի վր շահիցն որք լինին յաղթելով պատերազմաց մեղաց :

Մաս առաջին :

Մտածեա . զի սատանայ միշտ կենցաղական հաճելի իրօք ինչ հրապուրէ զմարդն 'ի մեղս . զոր օրինակ . փառօք ինչ , կամ հեշտալեօք մարմնոյ : Նա ոպ որսորդն թաքուցանէ զկարթն ընդ ուտելեաւ իմն . նոյնպէս և նա , որ է աներևոյթ որսորդ դժոխոց , ընդ առաջի մարդոյ զուտ փառաց պայծառութի , և կամ զմարմնոյ հեշտութի . թաքուցանելով ընդ սոքօք զմեծամեծ վնասն . որք են մահ հոգւոյ . կորուստ սիրոյն ած . զրկումն 'ի շնորհաց որդեգրութե . խայթ խղճի մտաց . և վտանգ յաւիտենական դժոխոց : Վն այսորիկ գլուխն առաքելոց ասէ : ա պետ . Ե . 8 : Զգաստ լերուք և հսկեցէք . զի ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ . շրջի և խնդրէ , թէ զո՛ կլանիցէ , որում 'ի դէմ հարկանիցէք հաստատեալք հաւատով : Նա տրն ասէ . յայտն . Բ . 17 : Որ յաղթէ , տաց նմա ուտել 'ի մանանայէն թաքուցելոյ :

Մաս երկրորդ :

Մտածեա . զի խաբեբայ բանսարկուն 'ի պատերազմին ընդդէմ քրիստոնէին բաժանէ զկարողութի նր 'ի կարողութենէ ած՝ ասելով . տկար ես . ոչ կարես միշտ հաստատուն մնալ յառաջադրութեն քում՝ ոչ հաւանելոյ այս ինչ , կամ այն ինչ մեղաց . և զի ինչ օգուտ է , թէ այժմ ոչ հաւանեցիս : Բայց ըղձեմ այսմ ունիս դու յուսով օգնականութեն ած զինել զանձն քո , և ասել ըս առաքելոյն . թէպէտ ես ինև միայն առ ոչ ինչ կարող եմ . բայց յամ կարող եմ այնու , որ զօրացուցանէ զիս . փիլիպ . Դ . 13 : Նա առ քն ասել : սաղ . ԺԷ . 2 . և 30 : Սիրեցից զքեզ տր , զօրութիւն իմ . հաստատութիւն իմ . ապաւէն իմ , և փրկիչ իմ : Ի քեզ փրկեցայց 'ի փորձութենէ իմմէ . աստուծով իմով անցից ընդ պարիսպ : Նա քն ասէ յաղագս քոյ . սաղմոս . Ղ . 15 : Կարդասցէ առ իս . և ես լուայց նմա . և առ նմա եղէց 'ի նեղութեան : Փրկեցից և փառաւոր արարից զնա . երկայնաւուրբ լցուցից զնա . և ցուցից նմա զփրկութիւն իմ :

Մաս երրորդ :

Մտածեա . զի որ յուսացեալ յօգնութիւն ածային՝ հանապազորդէ ընդդիմանալ մեղաց , հանապազորդի օրհնութիւն ած 'ի մէ նր . և այսուհետև յաստիճանէ յաստիճան կատարելութե ածային սիրոյն յառաջ գնայ հասանել մինչև ցերևումն ած . ըս այնմ : սաղմոս . ՁԳ . 8 : զօրհնութիւնս տացէ՝ որ զօրէնսն ետ . գնասցեն 'ի զօրութենէ 'ի զօրութիւն . և երևեսցի ած աստուածոց 'ի սիոն : Ուստի քանիցս անգամ յաղթես խորհրդոց մահուչափ մեղաց , այնչափ յառաջանաս զարգանալ 'ի սէրն ած . և հասեալ 'ի չափ հոգևոր հասակի , ցանկալի լինիս քի ընդունիլ առ իւր յարքայութիւն երկնից . ոպ և նոյն ինքն ասէ : յոհ . ԺԴ . 21 : Որ սիրէ զիս , սիրեսցի 'ի հօրէ իմմէ . և ես սիրեցից զնա . և երևեցուցից նմա զիս : Նա դարձեալ ասէ . յայտ . Բ . 10 : Եղիր հաւատարիմ մինչև 'ի մահ . և տաց քեզ զպսակն կենաց :

Պտուղ :

Յաւարտել մտածուես այսորիկ , զննեա զքեզ . և տես . մի՛ գուցէ իբրև թէ ոչ գոյ սատանայ , անփոյթ ես զգուշանալ 'ի դարանաց , և 'ի պէսպէս որոգայթից նր . զի նա է որ տիրապէս պատերազմի ընդ մեզ . իսկ մարմին մեր , և աշխ , են զէնք նր : Վն այս 'ի յաղթել պատերազմաց մեղաց , հարկաւոր է ծառայից ած ջանալ ոչ միայն զչարութիւն մեղաց , այլև ստուգութբ յուշի ունել , թէ այն յիշեցուցմունք մեղաց , որք ստէպ լինին 'ի խորհուրդս մեր , են փորձութիք սատանայի , որ ստէպ նախանձեալ ընդ փրկութիւն հոգւոց մերոց , գուն գործէ որոշել զմեզ յած . և առնել իւր գերի , ըմբռ_

ըմբռնելով զմեզ 'ի մեղս ինչ մահուչափ ։ Պարտ է գիտել և զայս . զի սատանայ ո՛չ է 'ի ներքս ածօղ մեղաց , այլ միայն յիշեցուցանօղ մեղաց . զոր եթէ ոք 'ի բաց մերժեսցէ 'ի մտաց իւրոց՝ և ոչ որոճեսցէ , յետս դառնայ ամօթով ։ Նա զայս ևս . զի սատանայ է օձ դիւրասահելի 'ի ներքս , որոյ եթէ ոք ոչ ընդդիմասցի գլխոյն , բովանդակն մտանէ 'ի ներքս 'ի սիրտն , և թունիւ հաւանեալ մեղացն սպանանէ զհոգին ։ Վ՟ս որոյ պարտ է ծ՟ային ա՟յ մեծաւ արիութե՟բ 'ի բաց մերժել փութով զչար խորհուրդս , որք ծնչին 'ի նմանէ ։

Եօթներորդ օրէնք ։

Ո՛չ է որպէս մասնաւոր ձեռնկալութե՟ն ա՟յ կալոտի մարդ առ 'ի ոչ անկանել 'ի մեղս . և թէ զի՞արդ , և ո՞ւմ առնէ ա՟ծ զայս շնորհ ։

Մասն առաջին ։

Մտածեա՛ , զի կրկին է ա՟ծային դերբնական ձեռնկալութի՟ն , որով մարդն յաղթէ փորձութե՟ն մեղաց . առանց որոյ ո՛չ կարէ ։ Առաջինն է շնորհ հասարակ և բաւական . որով կարէ մարդ յաղթել փորձութե՟ , եթէ ո՟չ պարտ է , այնպէս 'ի գործ ածիցէ ։ Երկրորդն է մասնաւոր . և այս է առատ և գործունեայ . որով գործունեաբար ը՟դդիմացեալ յաղթէ մարդ փորձութե՟ մեղաց , և պահպանի 'ի շնորհս ա՟յ ։ Արդ՝ զառաջինն տայ ամենեցուն . ը՟ս այնմ , արասցէ ընդ փորձութեան և զելս , զի համբերել կարասջիք ։ Իսկ զերկրորդն ո՛չ ամենեցուն տայ . և ո՛չ միշտ . այլ ո՛ւմ կամի , և քանիցս անգամ տալ կամի . զի զայս ոչ է պարտական ա՟ծ տալ . վ՟ս զի այս է մասնաւոր , և է առատաձեռնութի՟ 'ի վեր քան զհասարակ շնորհն ։ Բայց ծանիր . զի թէպէտ առաջնովն կարէ ոք ընդդիմանալ փորձութե՟ , և ոչ յաղթել . սակայն բազում անգամ ոչ ը՟դդիմասցի՝ եթէ ա՟ծ ոչ տայցէ և զերկրո՟դն , որ է մասնաւոր շնորհ ։ Սակայն որ չունելով զերկրո՟դն յաղթի և անկանի 'ի մեղս , իւր է մեղքն . զի ո՛չ եթէ առաջնովն ոչ կարացէ ընդդիմանալ . այլ կարասցէ՝ եթէ կամեսցի և 'ի գործ ածցէ զայն ո՟չ պարտն է . ուստի վ՟ս այնր ոչ կարասցէ ը՟դդիմանալ առանց երկրորդին՝ զի ոչ կամեսցի ։ Բայց եթէ ա՟ծ տայր նմա զայս երկրորդս , ո՛չ անկանէր , այլ յաղթէր . սակայն ո՟չ ասացաք , տալն զայս՝ է առատաձեռնութի՟ իւ՟ն մասնաւոր . և վ՟ն ո՛չ ամենեցուն առ հասարակ , այլ ոմանց տայ որոց և կամի ։ Նա տայ նոցա , որք առատաձեռն լինին առ ա՟ծ . քանզի գրեալ է ։ սաղմ . ժէ . 26 ։ Ընդ սրբոյ սուրբ եղիցիս . ընդ առն անմեղի անմեղ եղիցիս . ընդ ընտրելոյն ընտրեալ եղիցիս . և ընդ թեւրին թեւրեսցիս ։ Յայլ թարգմանութիւնս ասի . ընդ տարապայծեանին տարապայծեան եղիցիս ։ Սակայն թէպէտ և չլինէր գրեալ այս , տակաւին իմանիւր . քանզի զոր օրինակ , որ ոչ ուղղութե՟բ մտանէ առ աղբիւրն բարի , առ այնպիսին ոչ ուղիղ 'ի հանդիպոյ լինի աղբիւրն բարի . և ո՛չ հեղու 'ի նա զջուր իւր բարի . ըստ այսմ օրինակի նշանակէ ասելն . և ընդ թեւրին թեւրեսցիս . և ոչ նշանակէ ասել , թէ ա՟ծ յինքեան թիւրի ։ Սոյնպէս ևս որ ոչ առատաձեռնութե՟բ վարի առ ա՟ծ , ո՛չ ունեսցի զա՟ծ առ ինքն առատաձեռն . իսկ որ առատաձեռնութե՟բ վարի առ ա՟ծ , ա՟ծ ևս առատաձեռն լինի առ նա , տալ նմա զառանձին շնորհս ։

Մասն երկրորդ ։

Մտածեա՛ և խնդրեա՛ . թէ ո՞ր լինի ոք առատաձեռն առ ա՟ծ ։ Նա ծանիր . զի ը՟ս որքն գրիգորի ա՟ծաբանին , ո՟չ որ տայ ուրեք աւելի.քան զոր պարտական է , լինի առ նա առատաձեռն . սոյնպէս որ առ հաճոյս ա՟յ առնէ աւելի.քան զոր հարկ է , լինի առատաձեռն առ ա՟ծ . զոր օրինակ ։ Որ խորշի՝ ո՛չ միայն 'ի մահուչափ մեղաց , այլ և 'ի ներելեաց , և ո՛չ գործէ զնոսա կամակար միտօք ։ Որ խորշի ո՛չ միայն 'ի մեղաց , այլ և յայնցանէ որք հուպ են մեղաց . և որք առիթք լինին մեղաց . և կամ հոլացուցանեն զսէրն առ ա՟ծ ։ Որք վ՟ս հաղորդ լինելոյ չարչարանաց փրկչին՝ հրաժարին 'ի հանդստենէ ինչ մարմնոյ , և յայլ հաճոյից անձանց ։ Որք զպատիւ , և զշնորհս առ 'ի մարդկանէ մատուցեալս՝ ո՛չ կամին ը՟ռնուլ , այլ ցանկան ա՟յ ընծայել . իսկ զհակառակն այսոցիկ ըղձանօք ընդունին ։ Որք ո՛չ ժլատութե՟բ անխայեն 'ի ժամանակն պարապելոյ 'ի հոգևորս . և ո՛չ զլաւ ժամանակն տան զբօսանաց , կամ այլ գործոյ . իսկ ըզ վատթարն , և զանարգն թողուն ա՟ծային պաշտամանց ։ Որք զպաշտօնն ա՟ծային պատարագին , և ժամակարգութե՟ , և միւս բակեան աղօթից , և փառաբանութեց ա՟յ ա՟ծածնին ո՛չ շտապ կատարեն . և ո՛չ այնո՟չ իբր զի վճարեսցի՝ և իբր 'ի բեռանէ ինչ ա-

զատուԹի եղիցի . այլ անխորժանօք միշտ իր ոչ լինելոյ՝ և պաշտելոյ զմեծ վայելչուԹի նր՝ սիրով կատարեն : Նա որք ոչ պահանջեն յայլոց բարի առնել ինքեանց , այլ ինքեանք միշտ բարի առնել այլոց ցանկան . և ամ չարի համբերել պատրաստք են . Ըստ այնմ բանի Տն . մատԹ . Ե . 39 : Մի՛ կալ հակառակ չարին . այլ եԹէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո , դարձո՛ նմա և զմիւսն : Նա ըստ այնմ . Ա . կոր . Զ . 7 . և 8 : ընդէ՞ր ոչ դուք զրկիք , և ո՛չ դուք առաւել նեղիք . այլ դուք զրկէք , և նեղէք . և այդ զեղբարս ձեր : Նա այսպիսիքն առատաձեռն լինին առ Ած . և Ած ևս առատաձեռն եղեալ առ նոսա՝ բազում անգամ տայ նոց ՚ի մէջ հասարակ շնորհաց զմասնաւոր շնորհս , և զառանձին ձեռնկալուԹիս ՚ի դէպ ժամանակի փորձուԹե , որով յաղԹեն մարմնոյ , աշխի , և սատանայի . և ո՛չ անկանին ՚ի մեղս :

Մասն երրորդ :

Մտածեա՛ և քննեա՛ զքեզ , Թէ արդեօք այսպիսի վարուք իցե՞ս և դու առատաձեռն առ Ած : Նա Թէ չես , ո՞չ կամիս Թէ առատաձեռն եղիցի առ քեզ Ած : ՆաԹէ դու այն չափ ժլատ ես , մինչ զի չափես , Թուես , և ճշդիւ քննես , Թէ արդեօք պարտակա՞ն ես դու առնել զայս , կամ զայն բարեգործուԹի . և կրել զայս՝ կամ զայն վիշտ . և Թէ արդեօք այս ինչ գործ իցէ՞ մահուչափ մեղք զի խորշիցիս , Թէ ներելի : Նա այսու՞իկ յայտնի ցուցանես , Թէ ժլատ ես առ Ած . քանզի անխայես տալ նմա աւելի ինչ քան զոր պարտական ես տալ . և դուցէ Թէ յայնմանէ ևս զոր պարտական ես տալ՝ պակասիս : Մի որոյ և Ած եղիցի առ քեզ ժլատ . և ոչ տացէ քեզ՝ եԹէ ոչ միայն զօգնուԹիս հարկաւոր և զհասարակ . որ կոչի բաւական , զոր ամենեցուն տայ . այլ ո՛չ զմասնաւորն զառատն և զգործադիրն . զոր ոչ է պարտական ամենեցուն տալ . այլ ՚ի դէպ է առատաձեռնից տալ : Նա դու ոչ ունելով զայս , կարասցես յաղԹել . և անկանել ՚ի մահուչափ մեղս . և ՚ի նմին մեռանել . և կորնչել յաւիտեան :

Պտուղ :

Յետ ստուգելոյ ՚ի միտս քո զմտածեալ ճշմարտուԹիւնս , տես , Թէ յինչ ծառայուԹիս ոչ սովորեալ ես առնել զժլատուԹի . և նշանակեա՛ զնոսին . դիջի՛ր ՚ի մէջ նց . և արա՛ զմասնաւոր առաջադրուԹի այլ ո՛չ ևս առնել զժլատուԹի յայն ծառայուԹիս . այլ առատապէս վարիլ : Նա յիւրաքանչիւր առաւօտու նորոգեա՛ զառաջադրուԹիդ զանազան կերպիւ . զոր օրինակ յառաջնում աւուր ասա՛ ցանձն քո : այսօր մի սիրոյն այ հօր՝ ոչ կամիմ լինիլ ժլատ առ Ած : և յանձն արա՛ զառաջադրուԹիդ նմա : Յերկրորդումն ասա՛ . այսօր մի սիրոյ միածնի որդւոյն այ ո՛չ կամիմ լինիլ ժլատ առ Ած : Յերրորդումն ասա , այսօր մի սիրոյ հոգւոյն սրբ ո՛չ կամիմ լինիլ ժլատ առ Ած : Ի չորրորդումն , և յայլսն , մի իւրաքանչիւր մասանց չարչարանաց Տն մերոյ յսի քսի :

Առ եօԹներորդ մտածուԹեան , յառաջաբանուԹի :

Կարգ ընձեռուածոց մատենիս պահանջէր դրել յեօԹներորդումն զմտածուԹիս ՚ի մէջ փրկագործ տնօրէնուԹեց և չարչարանաց և մահու Տն մերոյ յսի քսի : Բայց մի զի այդէն արարեալ է մեր զայսպիսի մտածուԹիս մանաւանդ ՚ի մէջ չարչարանացն քսի . որ և ուրոյն ՚ի փոքր գիրս տպագրեցաւ յամի Տն , 1759 . մի յայսմ մայրի ՚ի համառօտն փուԹացեալ , բաղձամք գոնէ գրել զմտածուԹի ինչ ՚ի մէջ կանխաւ յանձնառնլոյ փրկչին մերոյ , և մօրն նր կուսին մարիամու զչարչարանսն , զորս կրեցին : Այլ նախ բազում օգտուԹի հարկաւոր է մեզ ՚ի միտ առնուլ զբան մեղաց նախնւոյն մերոյ , և զմեծուԹի վնասուց որք նմա՝ և նովաւ ՚ի մեզ ձգեցան . մի զի մտածուԹի այսոցիկ ունիմք պայծառագոյն ճանաչել զմեծուԹի սիրոյ և ողորմուԹե փրկչին մերոյ . որով յանձն եառ հնազանդուԹե պատարագաւն իւրով փրկել զնա , և զմեզ : Իսկ առ մտածուԹի մեղացն նախահօրն առաջադրի մեզ նախ մտածել . Թէ զորպիսի մեծամեծ բարիս ընկալեալ էր յայ նախահայրն , և կորոյս մեղօք : և զհետ այսորիկ, Թէ զիա՞րդ՝ և ո՛րպէս կորոյս մեղօք :

Մասն առաջին :

Մտածեա՛ . զի առաջին մարդն ո՛չ եԹէ մերկ ՚ի շնորհաց ՚ի բնականսն միայն Թողեալ եղև . այլ ՚ի մէջ բնականացն առատագոյն ևս ընկալաւ զգերբնական շնորհս : Քանզի մարդոյ առ ՚ի արժանաւորիլ արքայուԹե երկնից ո՛չ է բաւական այս միայն, զի ոչ ինչ մեղաց կցորդուԹի ունիցի . այլ և հար_

հարկաւոր է նմա, զի զօրաւոր ունականն շնորհն որդեգրութե, որ է նմանութի ածային բնութե․ միանգամայն և զնմ հեղեալ առաքինութիւնս որք ե նմա 'ի հոգւոյն սբյ հեղմանէն, ունիցի ։

Եւ ոմ զի ե առաքինութեցս այսոցիկ առնելով զգործս արդիւնաւորս արքայութեն երկնից 'ի վայելումն նորին վերաւեալ լիցի, կարօտի և զնոյն հոգւոյն շնորհաց յօգն իւր ունել բնակեալ․ և 'ի նմանէ վարիլ․ ե այնմ, հոգին քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ․ սաղմոս․ ճխբ․ 10 ։ Ասուի այս ամենայն ձրիւք բարեխնամութեն ածային զնախասահմանեղն ձոխացուցեալ պերճացոյց ։ Որում և առանձին իմն բարերարութե մարդասիրեալ, ե սրբարար շնորհացն զպարգև ամբողջութե բնութե հաստատեց 'ի յուժգնութե ոգւոյ նորա ։ որով զզգայական բաղձանս իւր, որք են ցանկականն և ցասմնականն, խոկ և զբոլոր մարմին իւր այնպէս ե հրութե արկանէր՝ մինչև ոչինչ հանդիպիլ 'ի նոսա ընդդէմ կամաց իւրոց ։ Այս պարգև ամբողջութե բնութե ծագիւր 'ի սրբարար շնորհաց՝ ցորչափ վերին բանն մարդոյ հպատակէր այ ։ Արդ՝ թէպէտ և այսչափ շնորհօք զօրութե և պարգևօք ամրացուցաւ մարդն ընդդէմ մեղաց․ բայց յայսմ ամի գթեալ անկաւ յանցանելով զպատուիրանաւն այ․ և մեծ եղև արհամարհանքն զոր այսու ձգեաց ընդդէմ մեծավայելչութե նր․ զորոյ զբանն մեծութե առ 'ի զգուշութի մեզ՝ պիտոյիմք բարւոք խոկմամբ 'ի միտ առնուլ ։ Ոի մարդն բացարձակ իրաւամբք այ պարտի այնմ և այնչափ սիրով և խոնարհութե ենթարկել զանձն իւր հրութեն այ, մինչև զինչ և իցէ վնասուք և չարչարանօք մահու ևս, ո՛չ յանցանել երբեք զպատուիրանաւ նր ։ Նախ՝ վասն զի նր վեհագոյն մեծավայելչութիւն յանհունս գերազանցեալ զամենայն՝ որ այլ են 'ի նմանէ, յաղթէ պատուհականութե ։ Երկրորդ․ զի մարդն ստեղծուած ինչ է նր յոչնչէ․ և գոյն նր և գործունէութիւն կախեալ կայ 'ի հանապազորդ տուչութեն նր ։ Ամ մեծի և ահաւոր հրութեն այ ։ Եւ առաջին մարդն անըն դուշացեալ անփոյթ եղև այնպէս յարգոյ ունել զհրութիւն 'ի վր իւր հրմ՝ ոմ պարտէր․ և այն անփոյթ լինելն բացառական տրամադրուի իմն եղև նմա առ յանցանսն ։ Եւ յորժմ յանցեաւ, նոյն ժամայն հոգին այ պարգևիչն ամ շնորհաց հեռացաւ 'ի նմանէ ։

Եւ յայսմիկ պարտիմք մտածել և զայս ։ զի շնորհն առաջին կացութե՝ տուեալ եղև բնութե 'ի սկզբան լինելութե նր․ և բանակ բնութենն հաղորդելի անձանց՝ իբրև ձիրք բնութե յարարչէն մատուցեալ նմա ։

Ոի թէպէտ նախահայրն որ ստեղծաւ, եղև մի միայն անհատ մարդկային բնութե․ բայց 'ի ստեղծանելն նր՝ բնութիւն մարդկային իբրև հաղորդելի այլոց անձանց բազմաց՝ 'ի նմա ստեղծաւ իբրև 'ի սկզբան հաղորդող իմն այլոց ամենեցուն ։ Ասի 'ի մեղանչել նախահօրն՝ ոչ միայն նա յանձին իւրում, այլ և մարդկային բնութի մերկացաւ 'ի սրբարար յանմահութե շնորհաց․ միանգամայն և յառաքինութեցն որք կից են ընդ նմ․ և 'ի պարգևէ ամբողջութե բնութե, յանկրակ անութե․ և 'ի զերծ գոլոյն 'ի տգիտութե, և 'ի ցանկութե ։ Եւ ոչ միայն յայս ձրի պարգևացս մերկացաւ, այլ և 'ի բնական նմին վիրաւորեցաւ․ և վէրքն են չորք․ տգիտութի 'ի միտս․ չարութի 'ի կամս․ տկարութի 'ի ցասմնականն․ և ցանկութի 'ի ցանկականն․ և 'ի նշան այսմ կերք ամօթոյն յարձակեալ 'ի վր յանդիմաներ զնա ։ Ասն զի յապստամբելն բանի՝ և կամաց մարդոյն յայ՝ լուծաւ այնուհետև հպատակութիւն ցանկականին՝ և ցասմնականին առ բանն․ և մարմնոյն՝ առ հոգին ։ Եւ այնպէս ախտացեալ մարդն ողջոյն, տկարացաւ առ գործս բարիս հաճոյարարս այ․ և դիւրասահ եղև առ գործս մեղաց ։ Եւ իբրև այսչափ ներդևեաց զնա մեղաւորն թշնամին, առեալ զախտացեալ մասունս հոգւոյն և մարմնոյն՝ շինեաց 'ի ներքս նր զամրոց իբրև զմիջնաբերդ իւր․ ոմ զի ոչ միայն արտաքուստ անցաւոր վայելչութե ձիւ, այլ և ներքուստ 'ի ներքս դրդութե ախտից և ցանկութեց 'ի մեղսասէր կամս իւր գերեսցէ զնա անօրէնն․ և այնպէս յոժ դժուարին լիցի մարդոյ խորշիլ 'ի մեղաց․ և կեալ ուղիղ վարուք ։ Ոմ զայս ունիմք բարւոք իմանալ օրինակաւ միջնաբերդին․ որ պատմի 'ի գիրս․ ա․ մակ․ ա․ 41․ և ա․ 18 ։ Եւ ո՛չ միայն գերի եղև մարդն այնպէս ի խորամանկ թշնամւոյն սերմնդովքն իւրով․ այլ և դատապարտ մահու ե մարմնոյ, և մահու ե հոգւոյ, և կրելոյ զանվախճան տանջանս դժոխոց․ վն զի մեղք նր ընդդէմ պատուիրանաց ածային մեծավայելչութեն գործեցան ։

Եւ արդ՝ այսչափ բանք զվնասուց նախնւոյն մերոյ մեղօք, որք 'ի մեզ ձգեցան, առ այս գրել

գրեթէ եղեն • ո՜վ զի զխորհուրդ փրկչութեն պտղաբերել 'ի մեզ , զախտացեալսն անտի զբոյս բարուց մերոց՝ զհեստն և զանձնասէրն՝ ուղղելի և սրբելի տեսանելով , միաւորա_կան աղօթիւք և շնորհօք վնորոգումն վա_րուց 'ի նմանէ ընկալցուք ։ Զի մեք յառա_ջին մարդոյն մեղուցելոյ սերեալք , ըստ բնա_կան բնութեն ձգեալ եմք 'ի մեզ զսկզբնա_կան մեղս • և զապականութիւն կարգի 'ի զօրութիւնս հոգւոյ մերոյ , որ զվատթա_րուն 'ի վերնագոյնս նոցին • որք են բանն՝ և կամքն • և զապստամբութի 'ի ստորնա_գոյնսն , որք են ցասմնականն և ցանկականն լուցկան մեղաց • որ ըստ սրբոյն Թովմայի՝ է ունականական յանկութի զգայական բաղձա_նաց • որոյ ներգործութիւն ձգեալ տարածի առ ամ զգայութիս ներքինս՝ և արտաքինս։ Եւ 'ի զգածիլն նոցա բազմադիմի զգածմամբ նորին , դէպ լինի բանին առաւել խաւարիլ և կամացն թմբրիլ • և յայնժամ եթէ ըդ_ձեռնկալութի 'ի նմանէ ոչ ընկալցին , զիջա_նեն 'ի հաւանութիւն մեղաց ։ Եւ յուշ լի_ցի այս • զի թէպէտ սկզբնական մեղքն 'ի մկրտութե բառնի սրբարար շնորհօք • բայց յայնմանէ յառաջ եկեալ ապստամբու_թիւն , որով ցանկականն և ցասմնականն ընդվզին ընդդէմ բանի և կամաց մար_դոյն , ոչ բառնի • այլ մնայ 'ի մարտ և 'ի կրթութի առաքինութեց • և 'ի շահիլ զվարձս ։

Մասն Երկրորդ ։

Եւ արդ՝ յետ մտածելոյ մերոյ զայս վայր գրեթէ պատիժս մեղաց նախահօրն , ըստ որով բոլոր ազգ մարդկան դատեցաւ կորստեան • 'ի միտ ածցուք զանձառ զանբաւ բարերա_րութիւն այ առ մեզ եղեալ • և զարմասցուք թէ ո՜վ նա՝ որ է ամենազօր ամենատէր անեղ միշտ եակ ,'ի շնչին մարդոյն , որ իւր մեղօքն յանդերձ անդունդս կորստեան կործան ան_կաւ , ոչ արգել զգութ սրտի իւրոյ • այլ կա_մեցաւ հրաշալի մարդասիրութե գործովք թո_ղուլ զմեղս նր • սրբել զնա շնորհօք • և առ իւր ընդունիլ զնա սիրով ։ Ո՜վ խորք գթոյ և ողորմութեն այ ։ Բայց քանզի , որպ ասի սաղ_մոսի • ձը • 15 • յարդարութիւն և յիրաւունս հաստատեալ է աթոռ նորա • այն է թէպէտ ... նր • վնկ առանց վնասուցն վճարութի ընդու_նելոյ՝ թողուլ զյանցանս մարդոյն , և հաշ_տիլ ոչ կամէր • այլ պահանջէր արդարութի նր , զի լիցի 'ի կողմանէ մարդոյն վճարումն

աղաչանօք և ընծայութբ պատարագի մե_ծի որոյ գին լիցէ անբաւ • և այնպէս զփրը_կութի մարդկան փրկանօք լինել կամէր ։ Նախ՝ զի արդարութեն նր վայելէր այսմ առնել ։ Երկրորդ , զի թէ առանց վճարու_թեն շնորհիւր փրկութի , ոչինչ խտիր լինէր 'ի մէջ մեղուցելոյն և ոչ մեղուցելոյն • և այն_պէս կարգն արդարութեն , զոր 'ի վր ամ տիեզերաց 'ի գործ ածէ այ , աղաւաղեալ լինէր ։ Աստի հայրն երկնաւոր 'ի խորհր_դեան կամաց իւրոց փրկելոյ զմարդն , ան_բաւ իմաստութբ իւրով տեսանէր • զի ամե_նավճիտ արդարութի իւր այսպէս լինիլ պա_հանջէր • և համանգամայն տեսանէր , զի ոչ ոք սոսկ մդ , կամ այլ գերագոյն սոսկ ստեղծ_ուած՝ այսպիսի պատարագ իրաւամբք պա_հանջեալ յարդարութեն , իսկութբն իւրով կարէր լինիլ • և կամ մատուցանող նր լինե_լոյ արժանաւորիլ ։ Եւ այսպէս բանն փրկ_կութեան մարդկան յայս էր ապաստան , զի եթէ հաճեսցի անբաւ բարութիւն այութեն յայս զիջանել , շնորհեսցէ • զի միածին որդին այ հօր՝ 'ի փրկութի մարդ_կան լիցի որդի մարդոյ • և այնպէս եղեալ ճշմարիտ մարդ , և ճշհորդեալ ըստ ամ կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց , և լեալ հնազանդ հօրն երկնաւորի յամի մին_չև 'ի մահ խաչի , զանձն իւր պատարագ հը_նազանդութեն մատուցէ հաճոյից նր 'ի քա_ւութի անհնազանդութբ մեղուցեալ մար_դոյն • և այսպէս ամ հարկաւորքն առ փրկ_կութի ազգի մարդկան 'ի ձեռն նր յաջո_ղեալ կատարեսցին 'ի փառս այութեն ։ Զայս տեսեալ ինքնաբան բարին ամենախնամ մարդասէրն , ոչ անխնայեաց յորդին իւր միա_ծին՝ շնորհել զնա լինիլ վս մեր ճշմարիտ մարդ • և այնպէս մահուամբ խաչի փրկել զմեզ ։ Այլ մեծաւ ողորմութբ նոյն միած_նին իւրով և հոգւովն սրբով հաճեցաւ այց առնել գրաւելոյս մեզ 'ի կորուստն ան_հնարին • և վերածել զմեզ 'ի փրկութի , և 'ի կեանսն յաւիտենից ։ Աստի փրկ_կիչն մեր առեալ զճշմարիտ մարմին 'ի սբ կուսէն մարիամայ՝ եղև ճշմարիտ մարդ ։ Եւ զհաւատացեալսն իւր միութբ սի_րոյ ընտանութեն իբրև խորհրդական մար_մին յինքն իբրև 'ի գլուխ յօդեալ միաւորել զմի մարդ կացոյց ինքեամբ ։ Եւ յայսպիսի կարգի լեալ իբրև երաշխաւոր վճարելոյ ըզ_պարտս մեղաց մերոց՝ եղև պարտական և պարտ , քահանայապետ և պատարագ • Եւ

լեալ

լեալ հնազանդ մահուչափ և մահու խաչի երկնաւոր հօր իւրում, մատոյց զանձն իւր պատարագ հնազանդութեան՝ ի քաւութիւն յան-ցանաց անհնազանդութեան մարդոյն · որով հաշտեցաւ հայրն երկնաւոր ընդ մարդկան : Նոյն արար զմեզ միածնի իւրում ժառանգա-կից՝ ժառանգ ամենայն բարեացն իւրոց յանձառ երկնից արքայութեան :

Մտածութիւն 'ի վերայ կանխաւ յանձնառու-թեան փրկչին մերոյ, և մօր նորա կուսին Մա-րիամու՝ զչարչարանսն, զորս կրեցին :

Մասն առաջին :

Մտածեա նախ, զի յորժամ որդին այ առաքեցաւ յերկնաւոր հօրէ իւր-մէ, մարմնանալ 'ի Մարիամայ սրբոյ կուսէն վասն փրկութեան մերոյ, յառաջնում վայր-կենի յայնմիկ՝ յորում յարգանդի նո-րա եղև մարդ, համանգամայն երանելի հայեցողութեամբն իւրով ետես՝ զի կամք երկ-նաւոր հօրն առ 'ի հաշտիլ ընդ մարդկան քա-ւութեամբ մեղաց, զզոհս և զպատարագս յա-նասնոց ինքեան ոչ կամէր · այլ խնդրէր ըզ հնազանդութիւն իւր մինչև 'ի մահ խաչի · Եւ և ընտրելոցն իւրոց որք հասեալ իցեն ազատական կամաւ վարիլ 'ի փրկութիւն յաւիտենից՝ պէսպէս կրիւք խաչի կատարիլ : Իբրև ետես զայս միածինն 'ի միտս և 'ի կամս նորա · թէ այսպէս լինիլ հաճոյ է նմա, նոյն ժամայն յանձն եառ զայն կատարել : Եւ խմանի այս 'ի բանի յայնմ · զոր 'ի դէմս որդւոյն միածնի գրէ առաքեալն պօղոս առ Եբրայեցիս · Ժ · 5 · Ի մտանել Քրիստոսի յաշ-խարհ ասէ · զզոհս և զպատարագս ոչ կամեցար · բայց զմարմին հաստատեցեր ինձ : Եւ յետ սուղ ինչ բանի գրէ : Ապա ասէ · ահաւասիկ գամ առնել զկամս քո այ : Եւ բանս այս մեկնութեամբ պարզաբանի այսպէս : Առ 'ի քաւել զմեղս մարդկան և հաշտիլ ընդ նոսա՝ զզոհս և զպատարագս ոչ կամեցար ո հայր իմ · այլ զմարմին հաստատեցեր ինձ, այսինքն զմարդկութիւն · յորում լսելիս հաստատե-ցեր ինձ՝ լսել քեզ հնազանդութեամբ 'ի կատա-րումն այսորիկ՝ և ամենայն հաճոյից քոց · ահաւա-սիկ գամ առնել զկամս քո այ իմ : Ո՛վ ան-հաս խոկութեան սիրոյ և հնազանդութեան որդ-ւոյն այ առ հայր իւր երկնաւոր · որով յա-ռաջնում վայրկենի գոյանալոյ իւրոյ ըստ մարդկութեան, 'ի հայեցողութեան իւրում յանձայլին միտս և 'ի կամս նորա՝ փոյթ եղև նմա յառա-

ժթ

ջադոյն ունիլ զտեսութիւն հաճոյից նորա · և յանձն առեալ զմահ խաչի առ կատարումն նորա՝ նուիրել զինքն իւրովք հանդերձ ամենայն հա-ճոյից նորա ըստ վերոգրեալ բանին, թէ ա-հաւասիկ գամ առնել զկամս քո այ · Եբր · Ժ · 9 : Այս իւրովքն հանդերձ նուիրումն ան-ձին՝ օրինակեցաւ այնու · զի յորժամ ե-մուտ նոյ 'ի տապանն, բովանդակ ընտա-նեօքն եմուտ անդ · որպէս հրամայեաց նմա այ նոյի · Ծննդ · Է · 1 · և տապանն էր շինեալ 'ի չորեքկուսի փայտից ըստ պատուիրելոյ այն, որ ասաց ցնոյ, թէ արա քեզ տապան 'ի չո-րեքկուսի փայտից : Ծննդ · Զ · 14 · որ եղև 'ի նշանակ խաչին քն : Եւ ոչ ոք փրկեցաւ յՋրհեղեղէ անտի, բայց միայն նոյ, և որք ընդ նմա էին 'ի տապանի անդ :

Նկատեա և զայս հրաշալի · զի զփոյթս զայս զոր յայնժամ եդ 'ի միտի, զօրհանա-պազ ունէր · որպէս և երբեմն աշակերտաց իւ-րոց ասէր : Մկրտութեամբ մի ունիմ մկրտել · և զիարդ տագնապիմ մինչև կատարեսցի : Ղուկաս · ԺԲ · 50 : Այլ և մարգարէիւ զնոյն յառաջ ասացեալ էր · Ես 'ի տանջանս պատրաստ եմ · և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ : Սաղ-մոս · ԼԷ · 18 : Եւ յորժամ մերձ էին թշնամիք նորա գալ՝ ունիլ զինքն, ասաց ցաշակերտսն իւր · Զի ծանիցէ աշխարհ, թէ սիրեմ զհայր · և որպէս պատուիրեաց ինձ հայր, այնպէս առնեմ · Արիք գնասցուք աս-տի : Յով · ԺԴ · 30 : այսինքն գնասցուք անդ, ուր գան ունիլ զիս :

Պտուղ :

Ի մտածութենէ աստի զայս իմաստ ունիմք յոգւոյս մեր ընդունիլ · թէ 'ի հոգս իրաց առաջին փոյթն մեր հարկ է թէ իցէ բար-ւոք ճանաչել զած, և զհաճոյս կամաց նորա · և զհետ այսորիկ զսկզբնադոյն պարապումն կենաց մերոց պարտ է առ այս կարգել · իսկ զայլ իրաց զփոյթն և զպարապումն յետինորդ 'ի կարգի ունիլ · որպէս և տէրն ասաց · Խնդրեցէք նախ զարքայութիւն այ, և զարդարութիւն նորա · և այդ ամենայն յաւելցի ձեզ : Մատթ · Զ · 33 : Եւ զգոյշ լինիլ պարտ է · զի եթէ զփոյթս հոգա-լեաց ոչ այսպէս նկատեալ 'ի կարգի դիցուք, դժուարաւ լինի մեզ ներհուն լինիլ ճանաչ-ման այ մերոյ, և հաճոյից նորա · առանց որոյ հազիւ երբէք լինի մեզ արժանի խոկ-մամբ խորհիլ զած, և զհաճոյս կամաց նորա կատարել · յորմէ կախեալ կայ յաւիտե-նական փրկութիւն մեր : Զի որպէս ցուցեալ

է

է այս մեզ 'ի տ՟ն ․ որ լսէ զձայն ն՟ոյ , և 'ի սրտի ն՟ր զանշէջ տեղին ունիցին հոգք ս՟ին , հոգքն այնորիկ հեղձուցանեն զձայն ․ և ան պտուղ լինի ։ Մ՟եկ յոյժ զգոյշ լինել պարտիմք ․ զի մի առ կենցաղականս եղիցի առաջին զօրաւոր փոյթն մեր ․ և առ ա՟ծայինս եղիցի յետին անզօր փոյթն մեր ։

Մաս Երկրորդ ․

Մտածեա ․ զի ո՟րպ ասէ ն՟րսն բեռնարդի նոս սենացին ․ ն՟րբ կոյսն մարիամ եղև խաչակից ք՟ի 'ի ժամէ անտի իսկ նորին յղութեան ։ Եւ հաւաստի առնէ զայս բանիւք ․ զորս ունիս տեսանել 'ի նախածանուցման բանից գրոշածոյս ։ Համաձայնի այսմ և յայտնութիւն եղեալ առ երանուհի կոյսն վերոնիգայ բինասկեցի յօգոստինեան կարգէ ։ Յորում հ՟չակ տ՟ն 'ի կարգի այլոց բանից իւրոց ասաց նմա և զայս ․ ԲԱՅՑ ԳԻՏԱՍՋԻՐ ․ ԶԻ ԳԱԲՐԻԷԼ ԶԱ՟Մ ԽՈՐՀՈՒՐԴՍ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ , ԵՒ ՏԱՌԱՊԱՆԱ ՑԷ , ԵՒ ԶԱ՟Մ ՎԱՐՍ ՓՐԿՉԻՆ՝ ՅԱՅՏՆԵԱՑ ԵՐԱՆԵԼՒՈՅՆ ՅԱՒԱՂՋԱՆ ՅՂՈՒԹԵԱՆ ԻՒՐ ․ ԶՈՐՍ ՀՐԱՄԱՆԱՒ Տ՟Ն ԼՌԵՑԻՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՔՆ ։ Իսկ արդ՝ թէև թուէր ցի ումեք , թէ ոչ սաստիկ կսկիծ սրտի եղև ն՟րբ կուսին՝ կանխաւ լուր խաչի և մահուան միածնի իւրոյ ․ բայց զայս ո՛չ է ճշմարիտ կարծել յետ ծնանելոյն զնա ։ Քզի յայն ժամ արդէն կուսական ծննդեամբ որդւոյն ա՟ծ մայրենի սիրոյն գորով գթոյ սրտի ն՟ր առ նա գոյացեալ սաստկացեալ էր ։ Ուստի բանիւք երկուց սրբոցս այսոցիկ խելամուտ լինիմք , թէ յորժամ լուաւ ն՟րբ կոյսն 'ի սիմէոնէ ․ ԹԷ ԱՀԱ ՍԱ ԿԱՅ 'Ի ԳԼՈՐՈՒՄՆ ԵՒ 'Ի ԿԱՆԳՆՈՒՄՆ ԲԱԶՄԱՑ 'Ի ՄԷՋ ԻՂԻ , ԵՒ 'Ի ՆՇԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՒԹ ․ ԵՒ ԸՆԴ ՔՈ ԻՍԿ ԱՆՁՆ ԱՆՑՑԷ ՍՈՒՐ ․ ԶԻ ՅԱՅՏՆԵՍՑԻՆ 'Ի Բ՟ԶՄՑ ՍՐՏԻՑ ԽՈՐՀՈՒՐԴՔ ․ ՂՈՒԿ ․ Բ ։ յայնժամ անմոռաց ունելով զծանուցեալսն 'ի ս՟րբյն գաբրիէլէ , առաւել ներգործեցաւ 'ի միտս ն՟ր բանն խորհրդոյ խաչի և մահուան միածնի իւրոյ ․ և այնպէս կարեվէր ցաւով խոցեցաւ սիրտ նորա ։ Եւ յայնմ հետէ , ո՟րպ ասէ ն՟րսն բեռնարդոս՝ վարեաց նա զկեանս առաւել վշտալից քան զմահ ․ զի կենդանի կացեալ համբերէր ցաւոյ , որ դառնագոյն էր քան զմահ ։ Եւ թէ ո՟րպ , 'ի միտ առ ․ զի քանիցս անգամ տեսանէր զորդի իւր միածին այնո՟րպ պատուական , զոր և ստուգիւ ճանաչէր՝ թէ նա է ք՟ս որդին ա՟յ , և մխիթարիւր , մխիթարութիւն զոր ընդունէր 'ի նմանէ՝ փոխիւր 'ի դառնութի ․ մտածելով՝ թէ յետոյ 'ի խաչ ելանելոց է նա ։ Եւ այսպէս ն՟րբ կոյսն միշտ տարաւ բևեռեալ 'ի սրտի զսուրն զայն՝ զա՟մ ժամանակս կենաց իւրոց ․ ո՟րպ զայս նոյն ինքն յայտնեաց սրբուհւոյն բրիգիտայ , թէ ցաւն այն մինչև վերափոխեցայ ես մարմնով և հոգւով յերկինս , ոչ երբէք պակասեաց 'ի սրտէ իմմէ ։ Եւ պատճառն է ․ զի որ ցաւի ա՟ծ չարչարանս և ա՟ծ մահ սիրելւոյ իւրոյ , որչափ առաւել ճանաչէ զազնուութիւն ն՟ր՝ և սիրէ , այնչափ առաւել սաստիկ լինի կսկիծն և ցաւն սրտի ն՟ր առ նա ։ Իսկ յայտ է , թէ ոչ ո՛ք 'ի մերձաւոր ն՟րբց տ՟ն մերոյ յի՟ ք՟ի այնչափ ստուգիւ գիտող եղև նմա՝ թէ ո՛ է նա ․ և կամ այնչափ գորովալից գթով սրտի սիրող եղև նըմա , ո՟րպ կուսական ծննդեամբ մայր ն՟ր ն՟րբ կոյսն մարիամ ․ և այսու՟իկ խելամուտ լինիմք , թէ անհամեմատ առաւել սաստիկ եղև կսկիծն սրտի ա՟ծածնին քան զոր կարէր ընդպէս տանիլ , և կենդանի մնալ ․ ուստի ոչ ընդպէս , այլ սքանչելապէս տարեալ կենդանի մնաց ։

Մտածելի է և այս ․ զի ամենամ՟օր կոյսն անճառելի ա՟ծային սիրով առաւելեալ , ա՟մ իրօք բոլորովին նուիրեալ էր զինքն հաճոյից հօրն երկնաւորի ․ և զի նախածանուցմամբ հրեշտակի գիտէր , թէ ք՟ս ի յերկնաւոր հօրէ իւրմէ սահմանեալ է մահուամբ խաչի փրկել զա՟շս ․ վ՟ոկ մեծաւ ա՟ծասիրութբ ըզնա , և զանձն իւր ա՟ծ պատարագաւ ն՟ր հաճոյից ա՟ծային կամացն նուիրելով կենդանի նահատակութբ հանդիսակից եղև նմա ։ Յետ մտածութե ցաւոց ն՟ր ըղձալի է մեզ մտածել ևս զվ՟ս այսր ընկալեալ փառս ն՟ր առանձինն ։ Պատմէ սրբուհին բրիգիտա , թէ երբեմն յորժամ կայի ես յաղօթս յաւուր տօնի տ՟ն համբառնալոյն , յափշտակեցայ հոգւով 'ի տեսիլ ինչ ։ Թուէր ինձ տեսանել յերկինս տաճար մեծաշէն ․ ուր կայր սուրբ ա՟ծածինն ունելով 'ի գիրկս իւր զա՟ծորդին ․ և բազմութի հրեշտակաց առաջի ն՟ր ․ և 'ի միջի ն՟ց մի ո՟մն 'ի հրեշտակաց առաւել լուսափայլ՝ ունէր 'ի ձեռս իւր սուր մի մեծ բովանդակ արեամբ թաթաւեալ՝ յօրինակ սրոյն ցաւոց մարիամու , որ 'ի ս՟րբյն սիմէոնէ եղև գուշակեալ ։ Յայնժամ վայրի այն ա՟մ հրեշտակաց հոյլք քաղցր եղանակաւ երգէին ասելով ։ ԱՀԱ ՓԱՌՔ ՄԱՐԻԱՄՈՒ , ՈՐՈՎ ՎԱՐՁԱՏՐԻ ՅԵՐԿԻՆՍ ՍՈՒՐ ՑԱՒՈՑ Ն՟Ր , ԶՈՐ ՅԱՆՁԻՆ ԷԱՌ 'Ի ՉԱՐՉԱՐԱՆՍ ՈՐԴՒՈՅՆ ․ ահա՝ թէ որչափ պատիւ և փառք հատուցանի թագուհւոյն երկնից վ՟ս սրոյ ցաւոցն , զոր յանձն էառ վ՟ս որդւոյ իւրոյ սիրելւոյ 'ի չարչարանս ն՟ր ։

Աղօթք առ սբ Աստուածածինն , յետ Հաղորդութեան ցաւոց սրտի նր հաղորդակցելի :

Ընդ այսպիսի և ը այսչափ սաստիկ կըսկծագին ցաւս սրտի քո՝ որ Աստուածածին . զոր ը չարչարանս և ը մահ միածնի քոյ կրեցեր , ցաւխմ սրտի մտօք . և ցան կամ ես քան զոյն կսկծանօք սրտի կարեվէր ցաւիլ : Այլ քանզի ՚ի հնն ոչ մեծ պարգև եղև քեզ այս , որ է կերպարանակից չարչարանաց միածնի որդւոյն ոչ լինել . յոր և առանձին իմն արիութը , և եռանդգիւ սիրոյ հաճոյից բարձրելոյն , զնա՝ և ըղ քեզ առ խաչին ամենահաճոյ նուէր մատուցեր : Սնկ երանեմ քեզ որ Աստուածածին . և գոհանամ ընդ քեզ զնէ յաղագս մեծի պարգևիս այսորիկ , որով անձառելի արժանաւորութը պայծառացաւ Աստուածմայրութն քո : Այլ հայցեմ ՚ի գթութէդ՝ զկենսաբեր մահն նր խաչին , և զքոյին սրտի զվէրսն մատուցանել նմա վս իմ նուէր . և ընդունիլ ինձ ՚ի նմանէ զներումն մեղաց . և զցաւակցութիւն չարչարանաց նորա՝ և քոյին սրտի , ՚ի փառս անբաւ ողորմութն իւրոյ . ամէն :

Յաւելեալ լինին և այլ պիտանի բանք առ խոկումն առաջադրեալք :

Եւ Հաւաքին Սրտածութե :

Յայսմիկ մարզիմք սոսկ յուշի ունիլ զբարերարութիւնս ոյ ըստ բնական բարեաց , որով սոսկ ՚ի գոյութի , ՚ի սեր , և ՚ի գովութի նր ձգիմք շնորհօք :

Յոյս անշնորհակալին որպէս ձմեռային սառն հալեսցի . եւ ծորեսցի որպէս ջուր անպիտան . ասէ իմաստունն . իմաստ . ժզ . 29 : Արդ զի մի այս վտանգ հասցէ անձին քում , մտածեա զարարչական բարերարութիւնս ոյ մի ըստ միոջէ . ո՞յ է , զկամս ստեղծելոյն . զստեղծեալն զքեզ ՚ի չքոյէ մարդ ՚ի պատկեր և ՚ի նմանութի իւր : Փոյթ ունիցիր պայծառ իմն ցողութը սոսուգիւ ՚ի միտ առնուլ , թէ որ

չափ բարի և ցանկալի է գոլն մարդ . որ գոլով ը պատկերի ոյ և ը նմանութն նր՝ ունի զիմացութի իմանալոյ զնմ . և զանձնիշխան կամս : Խորհեա՛ց և ըհակառակն սորա զչնչութիւնն . և քննեալ ծանի՛ր . զի եթէ Ած ոչ էր կամեցեալ գոյացուցանել զքեզ , ոչինչ էիր , և միշտ ոչինչ մնայիր . և ոչ երբեք գոյանայիր : Այլ առաջին մեծ չարն բազմաց լինի այս . զի ՚ի մանկութէ ոչ սոսուգեն՝ ՚ի միտ զայս ստեղծնեբգործական վարժմամբ , թէ եթէ Ած ոչ էր կամեցեալ գոյացուցանել զիս , ոչ ինչ էի , և միշտ ոչինչ մընայի : Այլ զօրութը իմն համարին զինքեանս հարկաւորանն գոյացեալս , և կանխաւ հարկաւորանն գոյանալոց , և իրաւամբք զնմ ինչ ունիլ . և ոչ ՚ի միտ առնուն , թէ միայն Ած է ինքնին էակ և նմ բարի . իսկ այլ նմ ինչ ՚ի նմանէ ը կամելոյ նր եղև , և ոչ ՚ի հարկէ : Իսկ թէ այսպիսի ազնուական գոլն առ ինչ ես գերագոյն բարի դիմէ և ձգի հասանել , զայս ունիս ՚ի մտածութէ գերբնական բարեաց բարերարութեցն ՚ի միտ առնուլ : Այժմ մտածեա՛ զննամարկելն արարչին , և զպահպանելն զքեզ ՚ի գոլն , զապրեցուցանելն զքեզ ՚ի մեծամեծ վտանգից . և զշընորհելն նր քեզ զվայելելն ՚ի սոսեալ գոլն , և ՚ի զօրութիւն գործելոյ զկենդանական ներ գործութիս . որք են զգալ , իմանալ , և կամիլ զպատշաճեալ բարին . և խորշիլ ՚ի չարէն . մտավարժ լինիլ , և ուսանիլ . և յայտ սիկ անուշութը զարգանալ :

Ընդ այսոցիկ շնորհեաց՝ և շնորհէ նա և զարտաքին գործոց զօրութիս , և զհամեստ վայելումն ՚ի բազում արտաքին բարիս . ը որում շնորհեալ է քեզ զերկնիս երկնայնովք , զօդս օդայնովք , զծով ծովայնովք , և զերկիր երկրայնովք . զորոց զվայելումն ունիս պարգևօք խելամտութե , առողջութե , յաջողութե , և ձեռնհասութե նր յամ կենդանական շարժմունս ներքինս՝ և արտաքինս . զի ով կեամք , շարժիմք , և եմք . և առանց նր ոչինչ գործել կարեմք . ը այսմ . գործ . ժէ . 27 :

Աստ ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւրաքանչիւր ՚ի մէնջ . զի նովաւ կեամք , շարժիմք , և եմք : Այլ ը այսմ փիլիպ . ը . 13 : Աճ է , որ յաջողէ ՚ի ձեզ զկամելն , և զառնելն վասն հաճութե :

Յուշ լիցի և յանձնեսն ոյ զքեզ խնամոց հրեշտակի . ըստ այսմ . սաղմոսի . Ղ . 11 :

Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վասն քո պահել զքեզ յամենայն ճանապարհս քո : ՚Ի բազուկս իւրեանց բարձցեն զքեզ . զի մի երբեք հար-

ցես

ցես զքարի զոտն քո ։ 'Ի վը իժից և քարբից գնա_
ցես դու ․ և առ ոտն կոխեսցես զառեւծն և զվի_
շապն ։ Եւ տրն ասէ ․ Զգոյշ լերուք ․ մի արհա
մարհիցէք զմի 'ի փոքրկանցս յայսցանէ ․ ասեմ ձեզ , զի
հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս
Հօր իմոյ , որ յերկինսն է ․ մատթ ․ ժը ․ 10 ։
Յաւարտիլ մտածութե այս տմ բարերա_
րութեց՝ մտածելով զապերախտութի քո ,
մի՛ տ դիր այսմ բանի ․ զոր ասէ տծ ։ Որդիս
ծնայ և բարձրացուցի ․ և նոքա զիս անարգեցին ։
եսայ ․ ա ․ 2 ։ Եւ մարգարէն ասէ ։ Ո՞ այդ տն
հատուցանէք այդպէս ․ ոչ նա է հայրն՝ որ ստացաւ
զքեզ , արար զքեզ , և հաստատեաց զքեզ ։ Թողեր զած
որ ծնաւ զքեզ ․ մոռացար զկերակրիչն քո ։ Բ ․ օրի ․
լբ ։ Ապաշաւեա՛ 'ի վը զանցարարութեդ բը_
տեպ յուշի ունելոյ զայս , թէ յոյ ես ըստ տմի
ստեղծեալ ․ և ջերմապէս գոհացիր զարար
չական բարերարութե նր ․ և անկեալ ա_
ռաջի՝ նուիրեա զքեզ բոլոր տրութե նր ․
ըստ այնմ ․ որ ասէ ․ Տուք այսուհետև զկայսերն կայ_
սեր ․ և զԱյն Այ ․ մատթ ․ իբ ․ 21 ։ Եւ սրն
օգոստինոս ասէ ․ որ ստեղծ զքեզ ամբողջ ․
պահանջէ զքեզ ամբողջ ։ այլ մի՛ տրտմիր ,
թէ ոչինչ մնասցէ քեզ՝ որով ուրախ լիցիս ․
զի տալով զքեզ նմա բոլոր , ժառանգես ըզ
քեզ և զնա բոլոր ։

Երկրորդ Մտածութիւն ։

Յայսմիկ մարզիմք յուշի ունիլ զբարե_
րարութիւն այ ․ ըստ պարգեւման զերկնա_
կան բարեաց , որով ստէպ 'ի գոհութի , և
'ի սէր նր ձգիմք շնորհօք ։

Որպէս սիրեաց տծ զաշխարհ , մինչև զորդին
իւր միածին ետ ․ զի ամ որ հաւատայ 'ի նա՝
մի կորիցէ ․ այլ ընկալցի զկեանս յաւիտենականս ․
յոհ ․ գ ․ 16 ։ Մանուկ ծնաւ մեզ ․ որդի տուա_
մեզ ․ որոյ իշխանութիւն իւր եղև 'ի վը ուսոց իւրոց ․
և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ ․
սքանչելի խորհրդական՝ տծ հզօր՝ իշխան՝ հայր հան
դերձելոյ աշխարհին ․ եսայ ․ թ ․ 6 ։ Որդի մարդոյ
ոչ եկն պաշտօն առնուլ ․ այլ պաշտել ․ և տալ զանձն
իւր փրկանս փոխանակ բազմաց ։ մատթ ․ ի ․ 28 ։
Ապա մտածեա զշնորհելն այ մեզ յետին
թշուառութե կորուսելոցս՝ զյնքն փրկիչ ։
Եւ ես թէ զինչ արար մեզ քս ․ յորոց փըր
կեաց ․ և իւ փրկեաց ։ Վանզի յետ մեղաց
նախահօրն , յորում ամենեքին մեղաք ,
որդիք մարդկան առ հասարակ անօրէնութե
'ի մեղս յղացեալ , գերի այսոյն չարի , և
բաժին յաւիտենական դժոխոց ծնանէին ․
և լուցկի ախտին բոլորովին զգածեալք 'ի
պէսպէս անառակ վարս թաւալէին ․ և այն
պէս 'ի դարշ աղտեղութիս և 'ի չարութիս
մեռեալք , զանդունդս դժոխոց ընուին ։
Արդ՝ յայսպիսի անհնարին աղէտս կորս_
տեան մերոյ մարդասիրութի հօրն երկ_
նաւորի հայեցեալ՝ գթացաւ 'ի վը մեր ․ և
ետ մեզ զմիածին որդին իւր փրկիչ ։ Սա
'ի խոստմունս և 'ի նախատակից անօրէնու_
թիւն , որովք փրկեաց զմեզ , պարտիմք ըս_
տէպ մտածել զխաչին ․ և զայլ կսկծալին
չարչարանսն ․ զհեղումն արեան , և զկենդա
նարար մահ նր ։ Ով ի նա յաղագս փրկութե
մարդկան 'ի խորհրդեան մարդեղութե՝
զհաւատացեալս իւր իբրև խորհրդական
մարմին յինքն իբրև 'ի գլուխ յօդեալ միա_
ւորեալ , զմի նոր մարդ կացոյց ինքեամբ ։
Եւ յայսպիսի կարգի ըմբռն վարկաւ զանձն
իւր զանմեղ զանպարտ մատուցանել վը
մեր իւրոցս անբաւ պարտեօք պարտաւորե_
լոց՝ պարտատուն և պարտ ․ և այն տմ կրեաց
վճարել իբրև իւր՝ զանբաւ պարտս մերոյ
անհնազանդութե , ոչ հարկաւ մատուցեալ
զանձն ․ այլ կամաւ՝ 'ի սիրոյ , և 'ի հնա_
զանդութե հօրն երկնաւորի ։ Որպ յայտ ա_
րար զայս յասելն , յոհ ․ ժդ ․ 31 ․ զի ծանիցէ
աշխարհ եթէ սիրեմ զհայր ․ և որպէս պատուիրեաց
ինձ հայր , այնպէս առնեմ ․ Յա՛րիք գնասցուք աս
տի ։ Եւ այնպէս 'ի կատարումն փրկութե
մերոյ զանձն իւր իբրև 'ի մէնջ 'ի ծառայից
ամենակատար ամենահաճոյ մշտնջենաւոր
պատարագ հնազանդութե մատուցեալ 'ի
խաչին առ տծ հայր ․ ոչ միայն հաշտեցոյց
զնա ընդ մեզ , և 'ի յաւիտենական դժոխոց դա
տապարտութե փրկեաց զմեզ ․ այլ և որդե
գրութե շնորհօք ժառանգ արար փառաց
նր , և ժառանգակից իւր ։
Ապա յարեաւ յերրորդում աւուր՝ արդարա
ցուցանել զմեզ ․ ըն ։ հռովմ ․ դ ․ 25 ։ Մատ
նեցաւ վս յանցանաց մերոց ․ և յարեաւ վասն զմեզ
արդարացուցանելոյ ։ Եւ համբարձեալ նովին
մարմնով յերկինս՝ նստի ընդ աջմէ այ հօր ,
իբրև առ 'ի մէնջ մշտնջենաւոր պատա_
րագ ունիլ զինքն առ հայր՝ ըն տմ բարութե
և հաճոյից կամաց տծութեն ․ այս է , պա
տարագ պաշտաման , և գոհութե ․ պատա_
րագ քաւչարար , հաշտարար , խաղաղարար ,
և տմ բարեաց շնորհաց՝ և փրկութե ըստ_
նողական ․ ըն այնմ , հռոմ ․ ը ․ 34 ։ Ո՞ է յն որ
մեռան , մանաւանդ թէ յարուցեալ իսկ է ․ և է ընդ
աջմէ այ ․ որ և բարեխօս իսկ է վը մեր ։ Արդ՝ ոչ

մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն ք՟ի ․ նեղութի՟ , թէ անձկու-
թի՟ ․ և այլն ․ որպէս և գրեալ է , վասն քո մեռանիմք
զօր հանապազ ․ համարեցաք որպէս ոչխար 'ի սպանդ ։
Զայս ա՟մ բարութ 'ի միտ առեալ , մեծ ա-
ռաքեալն , որ գրեալ է ․ Եկղ ․ ԻԹ ․ 20 ․
Զկնի որ երաշխաւորէ մի մտածէ ․ զի ես փոխա-
նակ քո զանձն էտու ։ Եւ ասա՛ ըՆ ո՟րյն բեռնար
դոսի ․ եթէ պարտիմ զիս նմա վ՟ն առնելոյն
զիս ; զինչ յաւելից վ՟ն նորոգելոյն զիս ․ քանզ
զի ոչ այնպէս դիւրաւ նորոգեցայ՝ ո՟ւ արա
րայ ․ զի վ՟ն առնելոյն՝ ասէ գիր ․ Ասաց և
եղեն ․ այլ 'ի նորոգելն ասաց բազում ինչ ․
արար զզարմանալիս ․ և կրեաց զխստագոյնս
և զանարժանս ։ 'Ի յառաջին գործն՝ ետ զիս
ինձ ․ և յերկրորդն՝ զինքն ․ և ըՆ տալն զինքն՝
դարձեալ ետ զիս ինձ ։ Արդ՝ եթէ վ՟ն տա-
լոյ ն՟ր բոլոր զիս ինձ՝ և վերստին տալոյն՝
պարտական եմ նմա տալ զիս բոլոր , զի՞նչ
հատուցից նմա վ՟ն տալոյ ն՟ր զինքն ինձ ։
Յաւելայսմ և զգաւթիս ․ սաղ ․ ՃԺԵ ․ 12 ․
Զի՞նչ տաց տեառն ըՆ ըՆդ ամ՟ զոր ետ ինձ ․
զբաժակ փրկութե՟ ընկալայց ․ և զանուն ըՆ կարդա
ցից ։

Երրորդ մտածութի՟ ։

Յայսմիկ ունիմք և զայլ մեծամեծ բարե-
րարութեց փրկչին մերոյ բանս
մտածել ։

Ես եմ լոյս աշխարհի , որ գայ զկնի իմ , ընդ խա-
ւար մի գնասցէ , այլ ընկալցի զլոյսն կենաց ։
յով ․ Ը ․ 12 ։ Ես եմ ճանապարհ , և ճշմարտութի՟ ,
և կեանք ․ ոչ ոք գայ առ հայր , եթէ ոչ ինև ։ յով ․
ԺԴ ․ 6 ։ Հաշեցաւ 'ի չորագլուխն հասարակ , և
'ի կատարիչն յս՟ , որ փոխանակ ուրախութեն որ նմա
առաջի կայր , յանձն էառ զխաչ ։ եբր ․ ԺԲ ․ 2 ։
Եւ արդ մտածեա՛ զխորհուրդ բանիցս այ-
սոցիկ ․ որք ցուցանեն թէ ք՟ս առեալ եղև
մեզ յա՟յ հօրէ լոյս , որ աւետարանաւ իւր
բով , և օրանչելեօք լուսաւորեաց զմիտս մեր
առ ուղիղ ճանաչել զա՟ծ , և վճիռ ա՟ծպաշ-
տութե՟ յարիլ 'ի նա ։ Սոսի վարուքն իւ-
րովք եղև մեզ ճանապարհ առ ա՟ծ հայր ․ և
աւետարանաւն՝ ճշմարտութի և ուղղութի
առ նա ․ և խաչիւ իւրով 'ի յաւիտենից մահ
ուանէն փրկելով՝ եղև կեանք ։
Նա ինքն առեալ եղև մեզ ա՟մ գործոց բա
րեաց կատարիչ , այսինքն ․ լրութե՟ պարգևիչ ։
Տես այս զի արդ ։ Ի՞նչ անզլի ընտրեաց նոր ժո
ղովուրդ ինքեան զհաւատացեալս իւր ․ և
շնորհօք յինքն յօղեալ , կայոյց ինքեան մե

զմի նոր մարդ խորհրդաւոր ․ որոյ գլուխ է
նոյն ինքն յս՟ ք՟ս ․ և մարմին է մի միայն ո՟ւ
կաթողիկէ եկեղեցին ․ ուստի ասէ առա-
քեալն ․ ա՟ռ ․ կորն ․ ԺԲ ․ 27 ։ Դուք մարմին
ք՟ի էք , և անդամք յանդամոց ն՟ր ։ Եւ այսուհետ
ինքն մեր եղև , որ՟ գլուխն է մարմնոյն ․ և
մեք ն՟ր եղաք , որ՟ մարմինն ա՟մ անդամօքն
է գլխոյն ։
Եւ ըՆ կարգի այսմ տնօրէնութեն իւրոյ՝
զա՟մ արդարութի՝ զոր դերադանց իսկութ՟
կատարելով՝ 'ի կիրս խաչի մահու իւրոյ բո
լորեալ աւարտեաց , զայն ա՟մ իբրև գլուխ
խորհրդաւոր մարմնոյ իւրոյ , որոյ անդամք
եմք մեք , վ՟ն մեր ևս գիտեալ կատարեաց ։
Զի նա միշտ յուշի ունելով զայս , թէ մեզ
առեալ եղև ինքն յերկնաւոր հօրէ իւրմէ , և
մեզ ծնաւ մարմնացեալ 'ի ո՟րյ կուսէն ․ ըՆ
եսայ ․ Թ ․ 6 ․ Մանուկ ծնաւ մեզ , որդի տուաւ
մեզ , զա՟մ գործս , և զկիրս չարչարանաց իւրոց
'ի փառս ա՟ծութե՟ և յօգուտ մեզ՝ 'ի շնորհս
և յարդիւնս յաւիտենական ուղերձէր առ
հայր ։ Ըստ առաքեալն ․ եբր ․ Է ․ 14 ․ ասէ ․
բազմանորդք եղաք ․․․ ։ Եւ ․ ա՟ռ ․ կոր ․ Է ․ 23 ․
ասէ ․ Ամե՟ն ինչ ձեր է , դուք ք՟ի ․․․ ։ Յայտ
արարեալ թէ մեք քո եմք ա՟մի , և ք՟ս մեր
է բոլորովին ․ և այսպէս մեր են անսպառ
գանձք արդեանց ն՟ր ․ որ՟ և հոգևոր հարսն
ասէ ․ երգոց , Է ․ 10 ․ Ես եղբօրորդւոյ իմոյ ,
և առ իս դարձ ն՟ր ։ Եւ մեկնիչն 'ի դէմս ն՟ր
ասէ ․ Որ՟ ես նմա եմ , նոյնպէս և նա ըՆ ա՟մի
լինի ինձ , և զինքն բոլոր առ իս դարձուցա
նէ , լինել զիս առատաձիր բարեօք՝ շնոր-
հօք՝ և պարգևօք ։
Եւ այսպէս զա՟մ զնեղքն և զարտօքն բա
րեգործութեն մեր ․ Յս՟ , զապաշխարութիս ,
զպահս , զաղօթս , զհաւատ , զյոյս , զսէր ,
զարդարութի , զողորմութի , զխոնարհու
թի , զհնազանդութի , զհամբերութի ,
զժուժկալութի , և զայլ ա՟մ պահպանութիս
ա՟ծային պատուիրանաց ․ որք յանուն իւր կա
տարին 'ի մէնջ , նա ինքն լրութ՟ ա՟մ ար-
դարութե՟ իւրոյ լրացուցեալ , տեսակաւո
րեալ , վայելչացուցեալ , և հաճոյացուցեալ
ընծայէ հօրն երկնաւորի , և այնպէս ընդու
նելի լինին նմա ։ Ըստ առաքեալն ․ կող ․
Գ ․ 17 ․ ասէ ․ Զա՟մ զոր և առնիցէք բանիւք
և արդեամբք , զա՟մ յանուն ըՆ յս՟ արասջիք ։ Եւ
ոչ միայն զլրումն ա՟մ գործոց բարեաց 'ի լը
րութե՟ անտի ն՟ր ընդունիմք ․ այլ և սկիզբն
և յառաջացումն նց՟ 'ի նմանէ , և նովաւ ,
և ոչ առանց ն՟ր լինին 'ի մեզ ․ որ՟ այսմ մար

դա-

պարէական օրինակ եղև կացուցումն յոխե փայ յիշխանութե . զի յորժամ փարաւոն կացոյց զյովսէփ 'ի վր ամ երկրի Թագաւորութե իւրոյ՝ ասաց ցնա : Ահաւասիկ ես կարգեմ . տանից քո ոչ հնազանդեսցէ ժողովուրդ իմ . և զքեզ կացուցի 'ի վր ամ երկրիս եգիպտացւոց : Եւ առ ժողովուրդ երկրին ասաց : Երթայք առ յովսէփ . ծնն . խա . 44 : Նոյնպէս կատարեցաւ խորհուրդն օրինակիս 'ի համբարձման փրկչին մերոյ յերկինս . յորժամ հայրն երկնաւոր նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս 'ի վր ամ իշխանութե և պետութե, և զօրութե, և տէրութե, և ամ անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ, այլ և 'ի հանդերձեալումն, և զամ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նր : Եւ զնա ետ գլուխ 'ի վր ամ իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նր, և լրումն, որ զամ յամենայն : եփես . ա . 20 :

Նոյն յետ այսորիկ ասէ առաքեալն : Եւ զմեզ որք մեռեալքն էաք 'ի մեղս մեր և յանցանս . . . յորս և մեք . . . . . ած՝ որ մեծն է ողորմութբ, վս բազում սիրոյն զոր սիրեաց զմեզ, կենդանիս արար ընդ մեզ 'ի քս . ընդ նմին յարոյց, և ընդ նմին նստոյց յերկնաւորս 'ի քս . զի ցուցցէ 'ի յաւիտեանսն որ գալոց են, զառաւել մեծութի շնորհաց իւրոց քաղցրութբ 'ի մեզ 'ի քս յս . զի շնորհօք նր էք փրկեալք՝ 'ի ձեռն հաւատոց : եփես . բ : Ո այսպիսի բարւոք խոկալով, տես թէ ո՜րչափ քս մեր եղև, և մեք քոյ, և ո՜րչափ մեծ շնորհ է այս : Նոյ ասա 'ի սրտէ առ քս : Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս . կամ 'ի քէն զինչ կամեցայ յերկրի . նուաղեցաւ սիրտ իմ և մարմին իմ, ած սրտի իմոյ, բաժին իմ ած յաւիտեան :

Չորրորդ մտածութի :

Յայսմիկ ունիմք և զայլ բազում բարերարութիս փրկչին մերոյ մտածել :

Ել 'ի բարձունս, և գերեաց զգերութի . եա առար, բաշխեաց պարգևս, և ետ որդւոց մարդկան . սաղմ . կէ . 19 : Զի եղիցին նր ծառայեալք ամենեքեան, լցեալ ամենայն լրութեամբ : երգոց . է . 14 :

Նա խմաստից այսց բանից՝ և ևս մտածեա զբարերարութիս ամ , որք յորդեցան , և յորդին 'ի մեզ 'ի ձեռն նո մերոյ յսի քսի : Յորս են սր առաքելոն նր , և կոչեն ըզմեզ 'ի սր հաւատ իւր , և 'ի մկրտութի , և յայլ որ խորհուրդս . որք իբրև յորաբուղխ աղբիւրք շնորհաց 'ի հինգ սրբոց վիրաւորեալն քո 'ի խաչին՝ մն սիրոյ մերոյ բաց եալ եղեն մեզ . ըմ . եսայ . ժբ . 3 . Նառէք զջուր ուրախութե յաղբերացն փրկութե : Նոյնպիսի սր խորհուրդս անբաւանէս գերագոյն է ամենասր խորհուրդն հաղորդութե, զոր շնորհեաց մեզ յս խաչաս իրելով զմեզ . յոհ . ժգ . 1 : յորում և ինքն մատուցանի 'ի մէնջ այ հօր պատարագ պաշտաման գոհացողական , քաւչական , և ամ բարեաց ընդունողական :

Մտածեա և զառնչութի հոգւոյն սրյ եօթն արփեան պարգևօք նր , և արդարացուցիչ շնորհօք , որ է հաղորդութի իմն ածեղէն բնութե , և որդեգրութի այ հօր : Ո հեղեալ ամբխութիս ունակականս . և զներգործական շնորհս ըղխմանալոյ մեզաց , և 'ի գործ ածելոյ զունակական շնորհս , և զառաքինութիս : Ո բարի խորհրդոց հնչումն , և զ բարի խորձի մտաց ազդումն : Ո ուսումն հոգևոր զխտելեաց առ փրկութի , և զհամառօտ բովանդակութիւն իւրաց փրկութե 'ի հայեցողութի . զոր օրըստօրէ նորոգ մտաբերութբ հարկաւոր է մեզ խոկալ :

Նոյ առ քաջ իմացումն , թէ մինչև շնորհեալ էր մեզ զայսպիսի շնորհս , ո՜րպիսի և ո՜րչափ զարշ և վատթար էր հոգին մեր առաջի այ , և հրեշտակաց . տես զօրինակն՝ զոր նրն եզեկիէլ առեալ յայ ցուցանէ մեզ ասելով : Այսպէս ասէ տր ած . արմատ քո և ծնունդ յերկրէ քանանացւոց . հայր քո ամորհացի, և մայր քո քետացի . . : Ընկեցեալ դնէիր ընդ երեսս դաշտին վասն խոտորնակ մտաց քոց յաւուրն յորում ծնար : Անցի առ քև, և տեսի աղտեղ թաթաւեալ . . . և էիր մերկ և խայտառակ . . . տարածեցի զթևս իմ 'ի վր քոյ, և ծածկեցի զխայտառակութիւնս քո . . : Եւ լուացի զքեզ ջրով, և սրբեցի զքեզ յարենէ քումմէ : Եւ օծի զքեզ իւղով, և զգեցուցի քեզ պէսպէսս . և ագուցի քեզ երկնագոյն, և ածի ընդ մէջ քո զբեհեզ, և արկի զքև մետաքս : Եւ եդի ապարանջանս 'ի ձեռս քո, և մանեակ 'ի պարանոց քո . եդի քեզ գինդս, և գեղազարդանս յականջս քո . և պսակ պարծանաց 'ի գլուխ քո . . : Եւ կերեր նաշիհ և իւղ և մեղր . և եղեր գեղեցիկ յոյժ յոյժ . . . . զի էր կատարեալ վայելչութե գեղոյ քո, զոր յօրինեցի 'ի վր քո : եզեկ . ժզ . 3 :

Խոկարդ՝ եթէ ըս օրինակիս ըս այսմիկ մինչ դեռ տկարքն էաք և այնչափ տխեղծ , զարշ , և զազիր մեղօք , քս ատացաւ զմեզ մահուամբ խաչի յիւր ընտանիս , և այնչափ շնորհօք գերապանծ արարեալ , հրեշտակաց իւրոց հաւասարեաց , ո՜րչափ ևս այժմ որ է 'ի փառս իւր , ըղձանայ առատացուցանել 'ի մեզ զշնորհս և զողորմութի իւր :

իւր ։ Յուշ լիցի քեզ յաւէտ գեղեցիկ նա-
խանձն նախագուշակն փրկչին մերոյ ․ և
տես թէ նա յետ հասանելոյն փառաց, որ-
պիսի գթով յայտնեաց զինքն եղբարց իւ-
րոց, որք մատնաւորք լեալ էին նմա ․ և
որչափ խնամս և բարերարութիս արար ն՟ց,
և ընտանեացն ամենեցուն ։

Ասէ ս՟րբն կիպրիանոս, թէ տ՟րն մեր յետ
յարութե իւրոյ բացեալ եթող զծակս խոց-
ուածոց իւրոց՝ ծանուցանել մեզ, թէ մի-
նացին այնուքիկ մեզ իբրև աղբիւրք բղխիչք
գանձուց շնորհաց ․ և բղխեն մեծագոյն ա-
ռատութ՟բ, և ոչ երբեք կարեն ցամաքիլ ․
Ո՟ղ և ոմն 'ի հարց առ բանս այս երգոյն ։
Ձեռք ն՟ր ձախարակեալք ոսկեղէնք՝ լցեալ ականէք
Թարշշայ ։ ասէ ․ ձեռք նորա լի են ակամբք
պատուականօք, որք քանզի են ծակո-
տեալք, թափին պարգևք, և շնորհք ն՟ր 'ի
մեզ ։ Նաև մ՟ծ այսր ա՟մի անկեալ առաջի ն՟ր
ջերմ սիրով գոհութի մատո՟, և նուիրեա՟
զքեզ նմա զ՟ ա՟մի ։

Հինգերորդ Մտածութիւն ։

'Ի վերայ խորհելեաց ինչ ․ որք շնոր-
հօք ա՟ն ներգործեն 'ի հոգիս մեր
զերկիւղն ա՟յ ․

Որպէս գթայ հայր 'ի վ՟ր որդւոց իւրոց ․ այնպէս գթ-
ացաւ տ՟ր յերկիւղածս իւր ․ սաղ ․ ճբ ․ 13 ։ Նա
յո՞ հանգեայց՝ եթէ ոչ 'ի հեզս՝ և 'ի խոնարհս ․ և
որ դողայ 'ի բանից իմոց ․ եսայ ․ կզ ․ 2 ։ Յեր-
կիւղէ քումմէ յղացեալ երկնեցաք ․ և ծնաք զհոգի
փրկութե ․ եսայ ․ իզ ․ 18 ։

Մտածեա նախ, զի ասէ տ՟րն մեր ։
Զի՞նչ օգուտ է մարդոյ ․ թէ զաշխարհ
ա՟մ շահեսցի ․ և զանձն իւր տուժեսցէ ․
մատթ ․ ժզ ․ 26 ։ Այսուհետև բանիւ խելա-
մուտ լինիմք, թէ 'ի վեր քան զամենայն
գործ փութոյ ոչ գոյ մեզ այլ՝ քան մտադիւր
իմացողութ՟բ 'ի մտի ունիլ միշտ, թէ ստեղծ-
ուած ա՟յ եմք մեք ․ որ զմեզ 'ի կեանս յայս
շնորհօք և պատուիրանօք առ հասանելութի ե-
րանելի կենաց իւրոց է կարգեալ ։ Բայց զ՟
ազատ անձնիշխանութե մերոյ 'ի մէջ երկուց,
ա՟յ կենաց և մահու վիճակաց է եդեալ ․ զ՟
այնմ ․ էկղէս ․ ժե ․ 18 ․ առաջի մարդոյ կեանք,
և մահ ․ որ հաճոյասցի, տացի նմա ։ Ի մին այսոց
վիճակաց է վերածիլ 'ի վայելումն ա՟ծութե
զ՟ ա՟յ փառօք, եթէ զկեանս մեր առաջի-
կայ՝ 'ի կարգի շնորհացն վճարեսցուք ։ Նա
միւսն է զրկիլ յայսմանէ, և արկանիլ ընդ-
դատամնայի 'ի գեհեանն անշէջ՝ թէ զքննու-
թ՟բ վարուց մերոց անփոյթ եղեալ, 'ի լրա-
տուանգանութե կարգի շնորհացն մեռցուք ։
Զ այսց երկուց վիճակաց զյաւիտենականու-
թ՟ին երանուհին Թերեզիա յօգուտ ժամս
աւուրն խորհեալ յառանձնութե, ասէր
և կրկնէր զբառս զայսոսիկ ․ 'ի յաւիտեան,
'ի յաւիտեան ․ միշտ, միշտ ․ ոչ երբեք, ոչ
երբեք ։ Նաև այսուհետև շնորհօք ա՟ն յաղթեալ
թուլութե և անհոգութե ջերմապէս յա-
ռաջ ընթանայր 'ի ն՟ր վարս իւր ։ Բայց ե-
ղուկ մեզ որք զոգիս մեր 'ի զբաղումն ան-
ցաւորաց ընկղմեալ՝ անփոյթ եմք խոկմամբ
այն յաւիտենական վիճակացն՝ զվարս մեր
առ յաւիտենական կենաց վիճակն ուղղել ․
և այսմ կուրութ՟բ առ վիճակն յաւիտենական
մահուն ընթանամք ․ և ոչ իմանամք ։

Մտածեա երկրորդ, և ստուգելով սակա ․
զի այս անհոգութի յայն չուառութիւն արկեալ
է զմեզ, որով թէպէտ և ոչ ներգործութ՟բ
բանի, բայց գործածութ՟բ վարուց մերոց
իբրև մեծ ինչ և պատուական համարիմք
զմեզ առ ա՟ծ ․ և այնպէս 'ի բանէ յայսմա-
նէ՝ որ գրեալ է, թէ ա՟ծ զանհոգացեալս
լքանէ, ոչ երկնչիմք ․ և ոչ ստէպ հոգևոր
կրթութ՟բ յուշ առնեմք մեզ, թէ ոչ ինք-
նին եմք մեք այսպիսի ինչ՝ որպիսի ինչ ա-
սանեմք զմեզ ․ և ոչ եմք տիրապէս տ՟ր ան-
ձանց մերոց ։ Այլ գոյ ա՟ծ յաւիտենից՝ ա-
րարիչ ա՟մի ․ յորմէ եմք ստեղծեալ ․ և միշտ
նովաւ կեամք, շարժիմք, խորհիմք, խօ-
սիմք, և գործեմք ։ Նա նա ինքն միայն է
տիրապէս տ՟ր մեր, և համօրէն այլ ա՟մ ա-
րարածոց ։ Որ սաստիկ նախանձայուզու-
թ՟բ փառաց տ՟րութե իւրոյ ասէ ․ եսայ ․
խբ ․ 8 ․ Ես տ՟ր ա՟ծ, այս է անուն իմ ․ զփառս իմ
այլում ոչ տաց ։ Նաև երեմ ․ թ ․ 23 ․ ասէ ․
Մի պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր ․ ․ ․ ․ ․
այլ յայն պարծեսցի՝ որ պարծին, իմանալ՝ և ճանաչել
զիս, թէ ես եմ տ՟ր ․ որ առնեմ զիրաւունս՝ և զողոր-
մութիւն, և զարդարութիւն 'ի վ՟ր երկրի ․ և 'ի նոյնս են կամք
իմ ։ Զ այս բանս, իմանալ և ճանաչել զիս, թէ
ես եմ տ՟ր ․ յոյժ բազում անգամ կրկնէ յայս
գիր, և յեզեկիէլին ։ Նաև ցուցանէ, թէ
կամի՝ զի ա՟մ մարդկեղէն արարածք գործու-
նեայ ճանաչմամբ ճանաչելով զծայրագոյն
տ՟րութի ա՟ծութե իւրոյ՝ և զսեպհականն
անդաստին ոչնչութի իւրեանց՝ հպատակեա-
ցեն զինքեանս յա՟մի և զ՟ ա՟մի հաճոյից մեծ-
վայելչութե տ՟րութե իւրոյ ․ որով 'ի յուզ-
ղու-

ղութէ և 'ի ճշմարտութէ հաստատեալ՝ կեցցեն 'ի յաւիտեանս. ապա թէ ոչ, կորիցեն զկորուստն յաւիտենական:

Մտածեա երրորդ, զի զայս նախանձայուզութի փոյթ տրութէ իւրոյ 'ի սկզբանէ իսկ սահղծման ցի 'ի գործ եած ած 'ի վր ամենայն հրեշտակին՝ և առաջին մարդոյն, յորժամ յղգս զանցանելոյ նց զենթարկութի, որ սուղ իւնչ բացատրեցաւ, 'ի բաց ընկեց զնոսա 'ի պետական պերճութէ, և յերեսաց իւրոց. և փոխանակ նց զխոնարհս բարձրացոյց. ըս այնմ. ղուկ. Ա. 51. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց. եւ բարձրացոյց զխոնարհս: Ո՛վ ի միածնի որդւոյ իւրում զմարդկութի զգեցուցեալ 'ի զարմէ դաւթի, ըստ լիս հաստատեաց նմա հնազանդութբ զամ հաճոյս ածութեն կատարել. որպ և անուանմբ դաւթի ասաց վս նր, գործ. ԺԳ. 22. գտի զդաւիթ որդի յեսսեայ այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամ զկամս իմ: Նաև առ նա ասաց, մարկ. Ա. 12. դու ես որդի իմ սիրելի. ընդ քեզ հաճեցայ: Նաև յետոյ. մատթ. ԺԷ. 5. առ աշակերտեալս նր ասաց վս նր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. դմա լուարուք: Ո՛վ նա 'ի սկզբանէ իսկ գոլոյ իւրոյ ըս մարդկութէ յամի բաց ամի զանձն իւր հաճոյից ածայլին տրութէ հօրն երկնաւորի հնազանդութբ ենթարկեալ մինչև 'ի մահ խաչի, եղև փրկիչ ազգի մարդկան, և գլուխ ամ ընտրելոց 'ի մարդկանէ. միանգամայն և իշխան 'ի վր ամ պետութեցն երկնից, և երկրի. որպ և ասաց մատթ. ԻԸ. 18. տուաւ ինձ ամ իշխանութի յերկինս՝ եւ յերկրի: Նաև մի ասիցես, թէ զայս իշխանութի ածութբ միայն ունէր իւր սեպհական: Վասնզի նաև 'ի մարդկութեն արդեամբ հնազանդութէ ստացաւ զայն. ըս այնմ, փիլիպ. Բ. 8. խոնարհեցոյց զանձն լեալ հնազանդ մահու չափ եւ մահու խաչի. վսն որոյ եւ ած զնա առաւել բարձրացոյց. եւ շնորհեաց նմա անուն, որ 'ի վեր է քան զամ անուն. զի յանուն յսի քսի ամ ծունր կրկնեսցի երկնաւորաց՝ եւ երկրաւորաց, եւ սանդարամետականաց. եւ ամ լեզու խոստովան լիցի, թէ տր յս քս է 'ի փառս այ հօր: Նաև զայս, զի խաչիւ կատարեսցի որդւոյն այ զվերոյ գրեալսն, և զաղաչանելն նր զիշխանութիւն սատանայի, և զմահու, և զդժոխոց, նախանձ ամենակալ հօրն անսորինեաց. որպ զի այսուհիկ առաւել ցուցցի, թէ ինքն միայն է տր ած: Որպէս քահանայն 'ի պատարագամատոյց աղօթսն զփրկագործ տնօրէնութիս փրկչին մերոյ յիշատակեալ, յայս աւարտէ. ասելով. եւ զմիաբան դժոխոց աղաղակեալ հզօրագոյնս, զգեղ միայն ծանուցեալ մեղ ճշմարիտ ած զքեզ կենդանեաց, եւ մեռելոց:

Մտածեա չորրորդ՝ զևս ահաւոր բանս, և զգործս երևելի իրօք արարեալս յնյ: Դարեթէ հիացմամբ իմն ըս միտս ընկալցիս, թէ զիարդ ած 'ի վերոյգրեալ ազնիւ սահղծուածս իւր 'ի մասնաւոր իմն ենթարկութէ տրութէ իւրոյ վրիպեալս՝ ոչ անխնայեաց, այլ այնպէս սաստիկ պատուհասիւք պատժեաց: Դարուք 'ի միտ առ զայս. զի ամ իմացական արարածոցն այ ծայրագոյն հարկաւոր ուղղութին է այս. յս գործունեայ ճանաչմամբ ճանաչել, թէ նա միայն է տր. և այնպէս ամ հաճութբ կամաց ենթարկիլ նմա. առանց որոյ որչափ և ազնիւք մեծամեծք և բազումք իցեն, իբրև ոչինչ են նմա. ըս, եսայ. Խ. 15. Ամ հեթանոսք իբրեւ զկաթիլ մի 'ի դուլէ են, եւ իբրեւ զշիթ մի 'ի կշռոց համարեցան. եւ իբրեւ զթուք 'ի բերանոյ համարեսցին: Նաև յաւելու. Ամ հեթանոսք ոչինչ են. եւ յոչինչ համարեցան նմա. արդ՝ որում նմանեցուցէք զտր: Նաև դու անձն իմ երրորդ երկրի՝ այդպիսի աներկիւղ ստունդանօղ՝ և անհոգ վարուքդ անխայելի ի մն համարիս զքեզ նմա. ով զարհուրելի շուարութենս: Նայց արդ՝ որպ զի և ես ստուդագոյն ծանիցես զմեծութի ինքն իշխան տրութեն այ՝ և զանպիտանութիս մեր նմա, մտածեա զայս, թէ քանի բիւրաւորաց նախնի դարուն ոչ շնորհեաց ած զկոչումն 'ի հաւատ փրկչին, առանց որոյ չիք փրկութի: Նաև յետ այսորիկ որքան ես բազմաց սկսեալ առ ժամանակօք աբրահամու մինչև 'ի քարոզութին առաքելոց՝ յաղնաթիւ ազգաց մարդկան թոյլ ետ անօրէն կռապաշտութբ 'ի պէսպէս անառակ խայտառակ վարս թաւալիլ. և այնպէս մեռեալ զանդունդս դժոխոց ինուլ: Նաև յաբրահամէ սկսեալ՝ զայլ ամ ազգօք զանցարարեալ, զմի միայն ազգ 'ի զաւակէ նր ընտրեալ՝ եառ յիւր ժողովուրդ: Սակայն և յայնմ ժողովրդենէ սակաւս ընկալաւ 'ի հաւատ միածնի իւրոյ քարոզութբ նր՝ և աշակերտացն. ըս, եսայ. Ժ. 22. Եթէ եղիցի ժողովուրդ իմ իբրեւ զաւազ ծովու, աճիւնք մնացորդք դարձցին 'ի նոյանէ. զի բան մի հատեալ եւ համառօտ արդարութբ. զի բանն համառօտ արասցէ տր զօրութեանց ընդ ամ տիեզերս: Ով ահաւոր մեծամեծութբ և անչափ պատուհականութբ ածութեն. ով սոսկալի և միանգամայն արդարակորով ընտրութեա նր: Նաև դու իմա-

մացեալ զայս՝ դեռևս պատուհական համա-
րիս զքեզ առ ած . և ապշութբ իմն յանհո-
գութն ընկղմեալ ոչ երկնչիս . և ոչ զարթ-
նուս ՚ի քննել զբանս զայս , և զվարս քո .
զհամրդ ոչ յիշես՝ զոր ասէ արդարն յոբ . Թ.
28 . վէրէպար օմնիա օբէրա մէա , սցիէնս՝ Քէ
նօն բարցէրէս դէլինգուէնդի : Նոյն զոր ասէ հոգին
սբ , առակաց . ժա . 31 . Սի իուսդուս ին դէռ-
ռա րէցիբիդ . գուանդօ մակիս իմբիուս էդ բէգգադօր :

Մտածեա հինգերորդ՝ զայս հաւատոյ բան, զի եթէ և դու ես հարցանելոյն միոյ յաշա-
կերտացն՝ ասասցես առ փրկիչն մեր յս . այ
Նումգուիդ էկօ սում՝ բէր աբսէնդէս էսսէն : յայտ է թէ
և քեզ զնոյն ասէ , զոր ասաց նմա . Հանդա-
քուս , ասէ , Տոմինէ ընդ դուանին նէղ . ասէմ յէղ.
զի բազումք խնդրեսցեն մտանել , և ոչ կարասցեն.
յորմէ հետէ մտցէ տանուտէրն և փակեսցէ զդուռն :
ղուկ . ժգ . 23 : Նաև այսմ յայտնի է պատ
ճառն . զի հարկ է փրկելեացն գոլ ՚ի քս յս,
և կերպարանակից լինել նմա կենօք . ոչ և
սիրելի աշակերտն նր ասէ . ա . յոհ . բ . 6.
Որ ասէ ՚ի նմա բնակել, պա գոլ ՚ի քս յս , որպէս
նա գնաց՝ որպէս և նոյն գնայ : Իսկ թէ նա
ոչ գնաց , ցուցանէ առաքեալն , եբր . ժբ .
2 . Պայերգունք ասէ , ՚ի զօրագլուխն հաւատոյ՝ և
՚ի կատարիչն յս . որ փոխանակ ուրախութեան՝ որ նմա
առաջի կայր , յանձն էառ զխաչ . արհամարհեաց զա-
մօթ . նստա ընդաջմէ աթոռոյն այ . ոչէ ածէք զմբ
արտ : Նաև առ հռովմայեցիս . ը . 17 . ասէ . եթէ
չարչարանացն կցորդ լինիցիմք , սպա և փառացն : Նաև
դու անձն իմ ողորմելի , զբանս զայսոսիկ
քաջիմ անգամ լուեալ՝ զօր ամ խոյս տալով ՚ի
կցորդութէ կրից խաչին , ես լայնն ընթա-
նաս . և իւ աներկեան համարիս զփրկու-
թիւնքո :

Մտածեա վեցերորդ . զի զայս , թէ ած
հայր՝ զխաչիւ միածնի իւրոյ փրկելիմն՝ ստու-
գիւ կրիւք նեղութեց փորձելով փրկէ , և
թէ զսակաւս իբր յանհամար բազմութէ
մարդկան առնու ՚ի փրկուլի , ահա ՚ի մար
գարէութէ զաքարիայի ևս . գլ . ժգ . 7 . կան
խաւ ծանույց . զոր տուն առ տուն յառաջ
բերեալ բացատրեացուք .

Բան : Օ արիէր սուր ՚ի հրա հովուի իմոյ . . . .
ասէ տր ամենակալ . հարից զհովիւն . և ցրուեսցին
խաշինքն :

Մեկն : Սրովն նշանակի բաժակն չարչարա-
նաց խաչի և մահու . զոր հայրն երկնաւոր
ետ նախ որդւոյ իւրում ըմպել վս փրկու-
թե մերոյ : Իսկ ցրուելն խաշանց՝ է թո-
ղուլն աշակերտաց զքս ՚ի չարչարանսն , և
ի

փախչիլ :

Բան : Նա դարձուցից զձեռն իմ ՚ի վր հովուաց :

Մեկն : Նայսհիկ իմանի ասել , թէ յետ ըմ-
պելոյ որդւոյ իմոյ զբաժակն խաչի , մատու-
ցանեմ զայս և աշակերտաց նր ՚ի դէպ ժա-
մանակի ՚ի լրումն արդեանց հոլովական
գործոց իւրաքանչիւր նց ՚ի վր ոչխարաց որդ-
ւոյ իմոյ . և այս յայտնապէս եղև , զի և նք
պէսպէս չարչարանօք մարտիրոսութբ կա-
տարեցան :

Բան : Նա եղիցի յամենայն յերկրի՝ ասէ տր . եր-
կու մասունք ՚ի նմա սատակեսցին՝ և պակասեսցին .
և երրորդն մնասցէ ՚ի նմա :

Մեկն : Նայս ոչ իմանի ասացեալ վս աշա-
կերտացն , և այնց որք հետևօղքեղեն նց .
որք և չարչարանօք մարտիրոսութբ կատա
րեցան ՚ի քս . այլ առհասարակ ՚ի վր հաւա
տացեալ ժողովրդեան . որոյ բազմութին ոչ
այնպէս միշտ բովանդակ մնաց , կամ մնաս
ցէ հաւատով և սիրով ՚ի քս յս՝ և փրկեսցի .
այլ այն իբրև երեք բաժին եղեալ , երկու
մասանց չափ յամպարշտութի փոխեսցին .
և այնպէս հոգւով մեռեալք պակասեսցին:
Կէսք՝ մահուչափ մեղաց գործովք միայն .
և կէսք՝ անհաւատութբ՝ միանգամայն և
անօրէն գործովք սատակեալք , կորիցեն .
և երրորդ մասն միայն սպահեսցի ՚ի քս յս :

Ուստի ասէ :

Բան : Նա երրորդն մնասցէ ՚ի նմա : Նա անցու-
ցից զերրորդ մասն ընդ հուր . և ջեռուցից զնո-
սա , որպէս ջեռնու արծաթ . և փորձեցից զնոսա , որ
պէս փորձի ոսկի : Նա կարդասցէ զանուն իմ . և ես
լուայց նմա . և ասացից , ժողովուրդ իմ է սա . և նա
ասասցէ . տր ած իմ ես դու :

Մեկն : Նայսհիկ ունիմք ՚ի միտ առնուլ ,
թէ այն երրորդն , զորմէ ասաց . թէ մնաս
ցէ , ոչ առանց փորձութեց մնայ ՚ի քս՝ և
փրկի . այլ ՚ի պէսպէս վիշտս՝ ՚ի նեղութիւ՝
և ՚ի տառապանս ներքինս և յարտաքինս
նուաձեալ , խոնարհութբ և երկայնմտու-
թբ համբերելով խաչառ , իբրև զարծաթ
ըստիր՝ և իբրև զոսկի հրով փորձեալ , ըու-
նելի լինի մեծ վայելչութե ածութեն , և
այնպէս փրկի :

Իսկ արդ՝ թէ փորձէ ած զեւրսն զանազան
եղանակաւ , ստուգի և այլ բազում վկայու-
թբ սբ գրոց : Վասնզի փորձեաց զաբրա-
համ հրամայելով նմա զորդին իւր սիրելի
զիսահակ ողջակէզ մատուցանել . և ՚ի ձր-
գելն զձեռս իւր ՚ի կատարումն հրամանացն
ասաց ցնա . այժմ գիտացի , Քէ երկիւղած ես դու
յայ .

չէր · որպէս պատմի Ծննդոց · ԻԲ · 1 · Փորձեաց և զայր · ո՛րպ յայտ է 'ի գիրս նր · Փորձեաց և զժողովուրդ իւր զինել · ո՛րպ ցուցանի · Բ · օրին · Ը · 2 · Յիշեսցես զամ ճանապարհն, զոր էած զքեզ Տր զամս քառասուն ընդ անապատն, զի չարչարեսցէ զքեզ և ճանաչիցէ, թէ զինչ կայցէ 'ի սրտի քում · եթէ պահեսցես զպատուիրանս նր, և թէ ոչ · և չարչարեաց զքեզ · և սովաբեկ արար զքեզ · և կերակրեաց զքեզ մանանայիւ · զի յայտ արասցէ քեզ, թէ ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ · այլ ամ բանիւ, որ ելանէ 'ի բերանոյ Այ, կեցցէ մարդ : Նոյն զարձեալ · 'ի գիրս դատաւորաց · Գ · 1 · և 4, ասի · Նոյն այս ազգք են, զորս եթող յեսու փորձել նոքօք զիսրայէլ ... Ո հինգ նախարարութիւն այլազգեաց · և զամ քանանացին · և այլն · և եղեն 'ի փորձել նոքօք զիսրայէլ · գիտել եթէ լսիցեն պատուիրանացն Տն : Նոյն վս եզեկիայ թագաւորին · Բ · մնաց · ԼԲ · 31 · գրեալ է · եթող զնա Տր փորձել զնա՝ և գիտել եթէ զինչ է 'ի սրտի նր · այս եղև 'ի ցուցանելն եզեկիայ զամ ինչ իւր հրեշտակացն՝ որք եկին 'ի բաբելոնէ : Նոյն իմաստ · Գ · 5 · ասի վս արդարոց · զի Այ փորձեաց զնոսա · և եգիտ ետր արժանիս · իբրև ոսկի 'ի բովս քննեաց զնս · և որպէս զողջակէզ պտղի ընկալաւ զնոսա : Նոյն Տոբի մեր, մատթ · Ժ · 34 · ասէ · մի համարիք եթէ եկի արկանել խաղաղութի յերկիր · ո՛չ եկի արկանել զխաղաղութի · այլ զսուր : Նոյն յոհ · ԺԶ · 33 · ասէ · զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղութի ունիցիք · յաշխարհի աստ նեղութի ունիցիք · այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի Աշխ : Նոյն 'ի յայտնութե · Բ · 10, ասէ · ահա հանդերձեալ է բանսարկուն արկանել 'ի ձեռնս 'ի բանտ, զի փորձեսցիք, և ունիցիք նեղութի աւուրս տասն · լե՛ր հաւատարիմ մինչև 'ի մահ · և տաց քեզ զպսակն կենաց :

Նոյն հոգևոր գթացեալ 'ի մեզ, նախապատրաստ լինիլ առ փորձութի, խրատէ զմեզ՝ ասելով · Եկղ · Բ · 1 · Որդեակ, եթէ մերձենաս ծառայել Այ, կա՛ց յարդարութե և յերկիւղի · և պատրաստեա՛ զանձն քո 'ի փորձութե : Ուղղեա՛ զսիրտ քո, և համբերեա՛ · խոնարհեցո՛ զունկն քո · և ընկա՛լ զբանս հանճարոյ · և մի՛ տագնապեսցիս 'ի ժամանակի անյաջողութե : Տո՛ւր համբերութի Այ · յարեցի՛ր Այ և համբերեա՛ · զի բարձրասցիս 'ի կատարածի կենաց քո : Ամ որ գայ 'ի վր քո, ընկա՛լ · և 'ի ցաւս տրտմութե քո համբերութի ունիցիս : Զի 'ի հուր փորձի ոսկի և արծաթ · իսկ մարդիկ ընդունելիք 'ի բովս խոնարհութե : Նոյն առակաց · Գ · 11 · ասի · Որդեակ, մի՛ անարգեր 'ի խրատու Տն · և մի՛ լքանիցիս յանդիմանել

'ի նմա

'ի նմանէ · զի զոր սիրէ Տր, խրատէ · տանջէ զամ որդի զոր ընդունի : Նոյն առաքելոյն առ եբրայեցիս, ԺԲ · 7 · 'ի սոյն յաւելու ասել · 'ի խրատու համբերութե կայք · իբրև յորդիս մատուցեալ է 'ի ձեզ Այ :

Նոյն 'ի վերոյ հարց գրեալ է · թէ ասաց հայրն անտոն ցհայրն պիմէն, թէ այս է մեծ առաքինութի մարդոյ · զի միշտ թողցէ ցէ զյանցանս իւր · և դիցէ առաջի Այ · և մնասցէ փորձութեց մինչև յօրն յետին որոշման շնչոյ · զի ուշք յանփորձից կարասցէ մտանել յարքայութի Այ :

ՄԱՍՆ [illegible]

Յաղագս հարկաւորութե, և բազում օգտութե մտաւորական աղօթից :

Գլուխ · Ա ·

Թէ զի՞նչ մտաւորական աղօթքն իցէ հարկաւոր և գործածնեայ միջնորդ առ Այ փրկութեան ..., և թէ որպէս զանազանի յայլ տեսակաց աղօթից :

Որպէս զի ծանիցի, թէ որչափ հարկաւոր է Այպաշտօն վարքն առ յաւիտենական փրկութի մարդոյ, և առ անձուկ ընտանութի առ Այ, պիտոյ է բարւոք 'ի միտ առնուլ զերկուս Այային բանս : Նախ՝ զայն, որ ասի 'ի գիրս իմաստ · Է · 28 · Ոչ զոք սիրէ Այ · բայց զայն՝ որ ընդ իմաստութե կեցցէ · Երկրորդ՝ զայն, որ ասի 'ի գիրս յոբայ · ԻԲ · 20 · Իսկ իմաստութի ուստի՞ գտաւ .... ծածկեալ է 'ի մարդկանէ · և 'ի թռչնոց երկնից ծածկեցաւ .... և Այ դիտաւ ընծայեցոյց զճանապարհ նր · և ինքն գիտէ զտեղի նր .... և ասէ ցմարդ · ահա Այպաշտութի է իմաստութի :

Յորոց բանից քաջայայտ է · թէ ո՛չ ո՛չ զոք սիրէ Այ՝ բայց զայն որ Ը իմաստութե կեցցէ, նոյնպէս ո՛չ զոք սիրէ Այ, բայց զայն՝ որ Ը Այպաշտութե կեցցէ : Ապա յայտ հարկաւոր է մեզ զԱյպաշտութե վարս ունիլ գործածութբ · որ է վարք ըստ Այ կամաց՝ և առ Այ սրբեալ ուղղեալ՝ և կարգեալ : Իսկ առ այս հարկաւոր է հոգևոր կրթութբ մարզիլ 'ի նոյն · և 'ի նմին իսկ կրթութե որչափ ընդ լինի, զգործս Այպաշտութե առնելով յանկատարէ առ կատա_

X

րեալն

ըեալն նկրտիլ . որպէս և առաքեալն գրելով առ տիմոթէոս՝ ասէ . Հրաժարեա՛ ի պղծոց յաճախ պառաւականաց : ա . տիմ . դ . 7 : Զի որպէս ասի, եսայ . կդ . 10 . ամ որ ոչ ունին զարդարութիւն , ոչ արդարոյ դատաստանի : Զի աստուածպաշտ վարք՝ իմանալ պարտ է աստ՝ զայնպիսի վարս , որով որ խորհրդով , բանիւ , և գործով ուղղեալ , սրբեալ , և կարգեալ է առ այ . ուստի որ կատարելապէս ճանաչէ զայն ըստ այնմ որ իւր՝ փրկիչ իւր՝ և այլ բարի և բաժին սրտի . որով միայն լցեալ լինի փափաքումն հոգւոյ իւրոյ , և անպայման սիրով հպատակէ զինքն պատուիրանաց և խրատուց նր գործովք , է և կոչի աստուածաշուն : Զ այսպիսեաց ասի . ը , տիմ . գ . 12 . Որք կամիցին աստուածպաշտութեամբ կեալ 'ի քս յս , 'ի հալածանս կացցեն : Նոյնպիսիքն 'ի սբ գիրս կոչին երկիւղածք յայ . ըստ այնմ , այժմ գիտացի՝ զի երկեւղած ես դու յայ . և ոչ խնայեցեր յորդւոյ քո սիրելւոյ վասն իմ . ծննդ . իբ . 12 : Նաև և արդարք . ըստ այնմ . և էին արդարք երկոքին առաջի այ . գնային յամ պատուիրանս և յիրաւունս տն անարատք : ղուկ . ա . 6 : Ուստի որ շնորհօք այն ըստ կանոնաց և ըստ կարգի իւրոյ՝ կեայ անարատ , է կատարեալ աստուածաշուն :

Վերադոյն ասացաք , թէ առ այս հարկաւոր է հոգևոր կրթութիւն իմն մարդկան : Արդ թէ խնդրեսցի՝ թէ որ իցէ այս հոգևոր կրթութիւն , ահա ունիմք ուսանել 'ի գիրս մտաւորական աղօթից . զի կրթութիւն այս է մտաւորական աղօթք՝ շնորհօք այն խոկութեան արարեալ , և ո՛չ զօր մի կամակար մտօք զանց արարեալ : Նաև սբն օգոստինոս . միտն խոկացող է սկիզբն ամ բարեաց . և այս մանաւանդ յաղօթս . քան զի զորօրինակ որ խոկայ՝ և 'ի միտ առնու զայս , թէ որչափ բարի է այ յինքեան . և որչափ բարերար և ողորմած եղև առ մեզ . որչափ սիրեաց և սիրէ զմեզ . և զորպիսի դառն վիշտս կրեաց այն մարդացեալ վն փրկութե մերոյ . նոյնհետայն բորբոքի սիրտ նր սիրել զնա յամ սրտէ . միայն թէ զուգընթաց իցէ հաւատն խոկման , առանց որոյ ոչինչ զօրէ խոկումն . վն զի կամք մարդոյ ոչ շարժի , բայց եթէ 'ի խորհեալ ճշմարտութէ , զորոյ ստուգութիւն միտքն ըմբռնէ : Նաև որ խոկայ զմեղս իւր , զթշուառութիս , զախտս , և զտկարութիւն անձին իւրոյ , սկսանի խոնարհիլ և արհամարհել զանձն իւր : Նաև որ բարւոք 'ի միտ առնու . թէ քանիցս և որչափ ծանր մեղօք դառնացոյց զայն , յայտնի տեսանէ զինքն արժանի այն վշտաց և պատժոց : Որ մտածէ զկարճութիւն մարդկային կենաց , և զտկարութիւն նր . միանգամայն և զունայնութիւն կենցաղոյս . և թէ որպէս այն ինչ մահուամբ վերջանայ ըն կենաց նորին . ըստ այնմ , եսայ . խ . 6 . ձայն՝ որ ասէ , գոչեա՛ : Եւ ասեմ , զի՞նչ գոչեցից : Եւ ասէ . գոչեա՛ , ամ մարմին խոտ է . և ամ փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ . ցամաքեցաւ խոտն . և թօթափեցաւ ծաղիկ նր . . . և բանն այն մնայ յաւիտեան : Նաև սաղմոսի . ճբ . 15 . Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր . որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկի : Զի էր 'ի նմա հողմ . և ոչ է . և ոչ ևս երևի տեղի նորա : Եթէ զայսպիսի ստուգութիւն կալցի 'ի մտի , և ոչ աղաւաղեսցէ , տեսանէ՝ զի ոչ այլ ինչ են կեանք մարդոյ , եթէ ո՛չ ճրագ . որ վառեալ միշտ սպառէ զինքն . և որչափ առաւել վառի , այնչափ շուտով սպառի :

Սբն բեռնարդոս յուսուցանել իւրում, թէ առ կատարելութիւն առաքինական վարուց ո՛չ է պարտ թուչելով ելանել , այլ քայլիւ . ասէ . ո՛չ ոք յանկարծ լինի ծայրագոյն . զի ո՛չ թռչելով , այլ ելանելով ըմբռնի գլուխ սանդղոյն : Արդ՝ երթալն և ելանելն առ կատարելութի լինի երկու ոտիւքս այսոքիւք . այս մտածութի և աղօթիւք . զի մտածութիւն ուսուցանէ , թէ զի՛նչ իցէ պակաս . և աղօթքն ընդունին՝ զի մի պակասեսցի . մտածութիւն ցուցանէ զճանապարհն . իսկ աղօթքն հասուցանեն անդ՝ ուր ցանկամք երթալ . այլ և մտածութի իմանամք զմերձեալ վտանգն . և աղօթիւք զերծանիմք : Սատանայ ջանայ խափանել զմարդն յայսպիսի մտածութէ . քանզի գիտէ , զի թէ արասցէ զայսպիսի մտածութիւն , լինի նմա այն սանձ . որով խորշի 'ի մեղաց . և լինի ջերմեռանդ առ պաշտօնն այ : Յորժամ կալան փղշտացիք զսամփսոն , առաջին զնայն՝ զոր արարին նմա , եղև այս . զի հանին զաչս նր զերկուսին : Զ այս ջանայ և դև առնել մարդոյ . զի որովհետև ոչ կարէ բառնալ զհաւատն նր . ջանայ՝ զի մի խոկասցէ զօր հաւատոյ . այլ այնպէս հաւատասցէ . որպէս թէ ո՛չ հաւատայր . և եղիցի նմ այն՝ որ գրեալն է . եսայ . զ . 9 . լսելով լուիջիք , և մի իմասջիք . և տեսանելով տեսջիք , և մի գիտասջիք : Մի և նոյն ձևով է անձին մարդոյ ոչ հաւատալն . և ոչ կամելն խոկալ զայն՝ զոր հաւատայ . զի որպէս ասէ սբն օգոստինոս . զորօրինակ ոչինչ օգուտ է բաց ունիլ զաչս կալով 'ի խաւարի . սոյն_

պէս

պէս ոչինչ օգուտ լինի կափուցեալ աչօք կալ 'ի լոյս : Մ՞ն այսորիկ յոյժ հարկաւոր է մտաւորական աղօթքն · զի բանայ զաչս հոգւոյ և մնայ 'ի լոյս հաւատոյ :

Յաղագս գործունէութեան և հարկաւորութեան այսր կրթութեան բազում են և 'ի սբ. գիրս վկայութիւնք : տե՛ս մեր ղուկ · ժբ · 56 · ասէ · կեղծաւորք , զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել · · · ընդէր և յանցանց ետ ոչ ընտրէք զարժանն : Բանզի յայսմիկ լինի խոկալ և բարւոք 'ի միտ առնուլ զամ , և զամենայն · որով լինի վարել 'ի սէր նր · ըստ այնմ , սաղմոսի · ՃԺԸ · 4 · 'ի խորհուրդս իմ վառեսցի հուր : Եւ դարձեալ ասէ · սաղմ · ՃԺԹ · 2 · երանի , որք քննեն զվկայութիւնս նր · բոլորով սրտիւ խնդրեսցեն զնա : Եւ 'ի · 59 · խորհեցայ 'ի ճանապարհս իմ · և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո : Եւ 'ի սկզբան սաղմոսի նորոյ ասէ · Երանեալ է այր , որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամպարշտաց · · · · Այլ յօրէնս տն են կամք նր · և յօրէնս նր խորհեսցի նա 'ի տուէ և 'ի գիշերի · և եղիցի նա որպէս ծառ՝ որ տնկեալ է 'ի գնացս ջուրց : Որ զպտուղ տացէ 'ի ժամու տայէ · և տերև նորա մի թափեսցի · և զամ զոր ինչ արասցէ , յաջողեսցի նմա : Ոչ այսպէս են ամպարիշտք , և ո՛չ այնպէս · այլ որպէս զփոշի , զոր հոսէ հողմ 'ի յե՞ս երեսաց երկրի : Եւ յեսայ · իզ · 8 · ասէ տր · Եւ խոկասցես 'ի դա , իզ 'ի գրեալսն , 'ի տուէ և 'ի գիշերի · զի իմասցիս առնել զամ գրեալսդ 'ի դմա · և ապա յաջողեսցիս՝ և ուղղեսցես զճանապարհս քո · և ապա իմացանիցես լինիցիս : Որով յայտնապէս ցուցանի , թէ մտաւորական աղօթիւք յաջողի՝ վարժի և հաստատի հոգևոր մարդն 'ի յամ ապաշխարութեան : Ուստի կարդինալ բելարմինոսն ասէ · բարոյապէս անկարելի է , թէ քրիստոնեայ ոք կարասցէ լնուլ զըպարտս քրիստոնէական կացութեան , եթէ ոչ յիւրաքանչիւր աւուր գոնէ ըստ չափու չորրորդ մասին ժամու արասցէ զմտաւորական աղօթս :

Գլուխ · Է :

Յաղագս եղանակի մտաւորական աղօթից , և հարկաւորութեան ձեռնարկութեան վարելոյ 'ի նմին :

Բայց ոչ զի յայտնի և յայտնակի հարկաւոր նպաստից կրթութեան այսորիկ մի վրիպեսցուք , հարկ է նախ՝ զի զառաջադեալ մտածելին մի հարևանցի , և մի մեղկ և լքեալ սրտիւ իբրև թմրեալ , այլ զգաստ մտադրութբ և հանդարտեամբ մտածեսցուք : Մերձաւորագոյն օգուտն խոկմանս այսորիկ է սաստիկ տենչն կատարելոյ զործոյ զբարին , զոր մտածութբ ստուգեն ծանեաւ անձին իւրում զոլ հարկաւոր առ ստանալ զառաքինութիւն ջանիւ , և կամ առ եղծումն մոլութեանց յաղթող զխմամբարտութբ : Իսկ թէ զիարդ , և իւ՞ իւ՞իք զայս սաստիկ տենչ մարթէ մեզ ունել յոգիս մեր , գիտել պարտ է · զի մարդն է բանական · և կամք նր է անձնիշխան · վ՞ոկ 'ի մարդկապէս վարելն իւրում ո՛չ գոյանայ 'ի սրտի նր սաստիկ տենչ , մանաւանդ առ իմանալ բարի ինչ , եթէ ոչ հարկեսցի 'ի ստուգեալ ճշմարտութէ իրին · զոր միտքն յանդիման առնէ կամ ցուցանէ կամացն · որ լինի ձեռնարկութբ :

Ուստի պարտ է գիտել · զի մտաւորական աղօթքն ոչ է պարզ համբարձումն մտաց առ այս · կամ սոսկ հայցուած , որով հայցեմք յայս զհարկաւորս առ փրկութի մեր : և ոչ իսկ է երկնաւոր հայեցուի ինչ այսնոց · այլ է խոկումն և խորհուրդ , որով քրիստոնեայն զբանս և զիրս յաւիտենական փրկութեան՝ զոր հաւատովն յաստուածային գրոց՝ ընթերցմամբ կամ լրիւ 'ի միտ ունի , յուշ ածեալ մտախոհ լինի , խոկայ , և խորհի · թէ զիարդ յաջողեսցի շնորհօք այնր զվարս իւր ըստ այնց ուղղել · և այնպէս լինել 'ի ճանապարհի փրկութեան : Իսկ յայսպիսի խորհրդեան զբան յաւիտենական կենաց , և զմիջոցս այսմ հասանելոյ , և զհակառակս սոցա հարկ է 'ի մէջ բերել · յորոց թէ ո՛յք ճըշմարիտ միջոցք են , և ո՛յք հակառակք , յայտ է թէ առանց ձեռնարկութեան ոչ է հնարաւոր ստուգիւ որոշել և հաստատել :

Իսկ պայծառ ձեռնարկութիւն է բան · յորում 'ի դնելոյ ումանց՝ այլ ինչ յայնցանէ հարկաւ հետևի : Արդ՝ ճշմարտութիւն ձեռնարկութեան 'ի հոգևոր վարուց նիւթս՝ ոչ միայն է անազարտելի · այլև ուժգին բռնադատէ զմարդն 'ի կացուցանել յիւրում զհետևեալն , եթէ քաջութբ ձեռնարկեսցէ ձեռնարկօղն · ապա թէ ոչ՝ ո՛չ ուժգին բռնադատէ : Արդ՝ նա քաջութբ ձեռնարկէ 'ի մտաւորական աղօթս · որ 'ի կազմութեան ձեռնարկութեան զերկոսին նախընթաց առաջարկութիւնս ո՛չ 'ի կարծ , այլ ստուգիւ դնէ · զի եթէ ոչ ստուգիւ , այլ 'ի կարծ դիցէ , հետևեալն ևս յայնցանէ ոչ տեսակաւորի տեսական ստուգութեան , այլ տեսակաւ անստուգութեան · և այսր աղագաւ անձ-

նիշխանն միտք և կամք իւր ոչ ունիցին բռնա
գատելն 'ի կացուցանել յիւրում զհետևեալն։
Իսկ այսպէս մնայ միայն 'ի բանի ճշմարիտ։
Օրինակ իմն · որ առնէ զձեռնարկութիւն
զայս։ Նաւաց որ մեր, որով հետև արարիք
միում եղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ ա-
րարիք։ Իսկ արդ՝ այս քրիստոնեայ է մի ոմն
յեղբարց ասացելոց 'ի նմանէ։ Ապա ուրեմն
զսէրն, կամ զբարերարութիւն զոր սմա առ-
նեմ, նմա առնեմ · և զոր ոչ առնեմ, նմա ոչ
առնեմ։ Որպէս հետևի և այս · ուրեմն
զվնաս զայս զոր սմա առնեմ, նմա առնեմ։
Ահա յայտնիկ օրինակս յայտնապէս երևի,
զի զօրաւոր ստուգութիւն հետևութեան է 'ի
զօրաւոր ստուգութենէ առաջարկութեանն։
Աստի պատճառն՝ որով սակաւ կամ ոչ ինչ
օգուտ ոք 'ի մտաւորական աղօթից, է ոչ
ստուգեալ միտք, և ոչ քաջութիւն սրտի զը-
նելոյ նոր զառաջարկութիւնս 'ի ձեռնարկու
թեն, զոր առնէ 'ի մտածութեն · և կամ բը-
նաւ ամենևին ոչ ձեռնարկելն։ Իսկ նուաղ
ստուգեալ միտք դնելն զառաջարկութիւն,
և բնաւ ոչ ձեռնարկելն գոնէ զօրութենականն
ձեռնարկութիւն, լինի 'ի նուաղութենէ հաւա
տոյ · և 'ի յանդգնութ համարելոյն մարդոյ ըն-
կեանս և զփրկութիւն հոգւոյ իւրոյ · վասն այսո
րիկ որ հանդերձեալ է առնել զմտաւորա-
կան աղօթս, ոչ միայն հարկաւոր է նմա՝
նախ նկատել զինքն առաջի այ ամենևին
անկարող առնելոյ զայս մի ծառայութիւն
այ, և հայցել 'ի նմանէ զօգնականութիւն ·
այլև պարտ նմա է բղխել 'ի խորոց սրտէ ըն-
ներգործութիւն հաւատոյ առ վկայութիւն այ,
որք են ամ բանք սբ գրոց · որ այսմ։ սաղ-
մոսի · Ճժը · 66 · զքաղցրութիւն, և զխրատ, և ըզ
գիտութիւն ուսո ինձ · զի 'ի պատուիրանս քո ես հա-
ւատացի։

Գլուխ · Գ ։

Յաղագս պատրաստութեան մտաւորական աղօթից, յորս
բաղկանամ պատճառաւք և վկայութիւնք գրոց մտածութեան
վարուց, և չարչարանաց տն մերոյ յի քի
տուեալ գուշակութեան պէտքըն,
և բաղձալիքն ։

Մտաւորական աղօթք՝ յօրինեալք ըստ զա-
նազանութեան մտածելեաց են բազումք։
Ոմն են՝ որոց մտածութիւքն լինին 'ի վերայ
չորից վերջնոց։ Այլ, որք լինին միայն 'ի վը
տանջանաց դժոխոց։ Այլ, որք լինին 'ի վը
հնդետասան անօրէնութեանց փրկչին մերոյ։
Այլ են՝ որք լինին միայն 'ի վը չարչարանաց
նորին։ Ամենեքեան իսկ բարի են, և օգտա
կար միջոց զգուշանալոյ 'ի մեղաց, և զա-
ռաքինի վարս ստանալոյ։ Այլ բազում
վկայութիւք սբ գրոց, և հոգևոր հարց ըն-
տրեալ է, թէ մտածութիւն վարուց և չար-
չարանաց տն մերոյ յի քի է առաւել զօր-
ծունեայ նպաստ որբելոյ զանձն 'ի մեղաց ·
և զմծապաշտ վարս վարելոյ, միանգամայն
և առ սէրն յի ջերմեռանդութիւ զարգանա
լոյ · որով ստացեալ լինի անձուկ ընտանու-
թիւն առ նա շնորհօք նր։

Տրն մեր՝ յոհ · Ը · 12, ասէ։ Ես եմ լոյս
աշխարհի · որ գայ զկնի իմ, ընդ խաւար մի գնասցէ ·
այլ ընկալցի զլոյսն կենաց։ 'Ի վը այսր բանից
թովմաս զեմբեանն 'ի սկզբան իւրոյ գրքկանն
ասէ։ Այսուհետև խրատիմք զհետ երթալ վա
րուց յի քի · եթէ կամիմք ճշմարտապէս
լուսաւորիլ, և յամ կուրութե սրտի զերծանիլ,
ծայրագոյն փոյթ մեր եղիցի զվարս յի քի
խորհիլ։ Այլ դարձեալ 'ի իմ, գլուխն ասէ ·
Յորժամ լիցինք քեզ առաջադրութիւն՝ զոր ա-
բարել ես · և դի'ր առաջի աչաց քոց զխա-
չեցելոյն պատկեր · և յոյժ պատկառեսցես
տեսանելով զվարս յի քի · զի չև ես զվարս
քո նմա նմանեցուցանել ջանացար։ Կրօնա
ւոր որ մտադիւր և ջերմ սրտիւ զամենայն
վարս և զչարչարանս տն մերոյ քի քի մտա-
ծէ, գտանէ 'ի նոսա առատապէս զայն՝
որ ինքեան օգտակար է և հարկաւոր · և ոչ
պիտի նմա խնդրել այլ ինչ լաւ քան զնա։
Ով թէ խաչեցեալն յս բնակէր 'ի սրտի մե-
րում, որքան փութով և բաւականապէս լի-
նէաք ուսեալ։ Դարձեալ յերկրորդ գիրս·
գլ · ա · Եթէ ոչ կարես մտածել զբարձրա
գոյն խորհուրդս, մտածեա զչարչարանս յի-
և յօժարութե բնակեաց 'ի վէրս նորին · յոր
եթէ ջերմապէս ապաւինեսցիս 'ի նեղու-
թիւս քո, մեծ քաջալերութիւն գտցես 'ի մէջ
նեղութեանց։

Ի գիրս թուոց իա · 8 · պատմի, թէ յորժամ
յանապատի էր իէլ, օձք կոտորէին եղեն
անդ · և հրամայեաց աճ մովսէսի առնել օձ
պղնձի, և դնել 'ի վը նշանակի · զի որք
հարցին յօձէ, հայեսցին 'ի նա, և կեցցեն ·
Եւ արար մովսէս զայն · և յորժամ ոք հար-
կանէր յօձէ, հայէր 'ի նա, և կեայր։ Այս
եղև առ նոսա յօրինակ խաչելութե տն մե-
րոյ յի · ոմ և նոյն ինքն տրն ասաց · յոհ · Գ ·
14։ Որպէս մովսէս բարձրացոյց զօձն յանապատի,
նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ · զի ամ

որ հաստատեալ 'ի նա՝ մի՛ խօրեսցէ , այլ ընծայեսցէ զինքն յաստուածայինն ։

Նա 'ի գիրս Ծննդոց . Լ . պատմի , թէ յակոբ դնէր զքերծեալ նկարէն գաւազանսն յաւազանս ջուրց յանդիման խաշանցն՝ յըմպել նոց զջուր , առ 'ի զկծելոյ նոց ըստ գաւազանացն . և խաշինքն 'ի յըմպելն հայեցեալ 'ի նոսա զկծելն , ըստ զգածելին ըստ գունոյ նկարէն գաւազանացն . և նկարէնս ծնանէին . և լինէր անանշանն լաբանու , և նշանաւորն յակոբայ ։ Գաւազանն նշանակէ զխաչն քի . և խաշինքն զհաւատացեալս նր , որք ասէսյ խոկալով զչարչարանս նր , նկարագրին նոքօք սիրոյ նոյ ։

Դարձեալ տէրն մեր յետ լուանալոյ զոտս աշակերտացն՝ ասաց նոցա . Գիտէ՞ք զինչ արարի ձեզ . յով . ժգ . 12 ։ Նա կացուցել զօր խորհուրդ մարմնոյ և արեան իւրոյ , ասաց . Զայս արասջիք առ իմոյ յիշատակի . ղուկ . իբ . 19 ։ և մ՛եկ առաքեալն . Ա կորն . ժա . 26 . ասէ ։ Որչափ անգամ ուտիցէք զհացս զայս , և զբաժակս ըմպիցէք , զմահ տն պատմեցէք մինչև եկեսցէ նա ։ Նա տէրն ղուկաս . Թ . 30 . 'ի պատմելն զայլակերպութիւն տն , թէ ահա արք երկու խօսէին ընդ նմա , որք էին Մովսէս և Եղիա երևեցեալ փառօք . ասէ 'ի մհ ։ և ասէին զելսն նորա , զոր կատարելոց էր յերուսաղէմ . այս է զչարչարանացն , ոմն գրեն մեկնիչք ։ Նա յաղագս կղէոպեանցն . լդ . 14 . ասէ ։ Նա նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամ անցիցն անցելոց . և եղեւ յամ միջէտայ , և երևոյր ընդ նոսա . և նոցա այլ խալիզել էին առ 'ի ճանաչելոյ զնա , և այլն . այս խօսէին ը միմեանս զչարչարանս նր , որով արժանաւորեցան ը չափու իմն տեսութե՝ կանխաւ տեսանել , խօսակցել ը նմա , և զխորհուրդս չարչարանաց նր իմանալ ։

Նա 'ի գիրն , որ կոչի աղբիւր բարի խորհրդոց , ասի ։ Որչափ սիրեքն զյիշատակ չարչարանաց իւրոց՝ մինչև նաև յերկինս՝ որ է տեղի ուրախութե և յարազուարճ ցնծութե , յիշեալ լինին չարչարանք նր ։ Գրեն ոմանք , թէ որ աւետարանիչն յովհաննէս յետ վերափոխմանն որ ածածնին յերկինս՝ յոյժ փափաքանօք հայցէր 'ի տնէ՝ տեսանել զնա ։ Նա առ 'ի լնուլ զանձուկն սրտի նր երևեցաւ որ կոյսն ընդ որդւոյ իւրում միածնի . և խօսէին ը միմեանս մայրն՝ և որդին զցաւոց և զտանջանաց , զորս վասն մեր կրեաց փրկիչն ։ Նա աղաչեաց զնա ար կոյսն զմեծամեծ պարգևս շնորհել նոց ամենեցուն՝ որք ջերմեռանդութբ մտածեն ըզ չարչարանս նր . և ընկալեալ յն զաղաչանս նր , ասաց տալ նոցա զչորս պարգևս ։ Նախ՝ ասաց տալ նոց զճշմարիտ զղջումն 'ի մհ անցեալ մեղաց իւրեանց ։ Երկրորդ՝ ասաց , ամրքեզ հրաման հայցելոյ յինէն վասն նոց զամ հարկաւոր պէտս հոգւոց նոց և մարմնոց ։ Երրորդ՝ տպաւորեցից , ասէ , զցաւն իմ՝ զոր կրեցի 'ի չարչարանս իմ , և զցաւն քո՝ զոր կրեցեր վասն իմ , 'ի սիրտս նոց 'ի ժամու մահուան իւրեանց ։ Չորրորդ՝ տաց նոց զմեծագոյն արդիւնս՝ և զվարձս յարքայութեն երկնից ։ Օ այս բարւօք գիտէր երանելի մեծն ալբերտոս , որ ասաց . առաւել օգուտ լինի հոգւոյ կարճատօտ իմն խոկումն չարչարանացն քի , քան զպահելն զամ մի ող ջոյն հացիւ լոկով և ջրով , և քան զճաղկելն զմարմինն արեամբ չափ յամ օր , քան զասել զսաղմոսն բովանդակ հանապազօր . քան զպետնախշտի լինիլ հանապազ , և քան զհս կել զամ գիրսն ։ 'Ի գիրս անուանեալ կղեր ծանաւէ , գրեալ է , թէ տէրն մեր յետ բզմ տեսլեանց սբյ կուսին գերդրուտայ , որով յորդորէր զնա կալ հաստատուն 'ի ջերմեռանդութե չարչարանաց իւրոց , երևեցաւ նմա , և ասէ ։ Տես զմուտս իմ , զի սակաւ ժամքն , յորս կախեալ կայի զխաչէն , այնչափ մեծապատիւ և պատուականս արարին զխաչն , մինչ զի լցան փառօք նր ամ տիեզերք . այսպէս յոր պատիւ փառաց բարձրասցի հոգին , որ զբազում ամս ունիցի 'ի միտ զյիշատակ իմ , և զչարչարանաց իմոց ։

Գլուխ . Դ ։

Նախ յորդորէ առ հանապազորդութե մտաբերան աղօթից . և թէ առ այս հարկաւոր է ամփոփել զմիտս 'ի պարապմունս հոգւոյ՝ և զքաղցրանաց , և յայնց՝ առ որս ոչ պարտաւորեն զմեզ կոչք մեր ։

Ասէ տէրն մեր . յոհ . Զ . 45 . ամ որ լուէ 'ի հօրէ , և ուսանի , գայ առ իս ։ Ուսայ երանելի լուր՝ և ուսումն պատրաստիլ յորդորէ զմեզ այն բանն , որ 'ի գիրս մտաւորական աղօթից գրեալ է . զի ասէ , եթէ կամիմք զի ած խօսեսցի 'ի սիրտ և 'ի հոգիս մեր , հարկաւոր է , զի և սիրտ և հոգի մեր խօսեսցի ը նմա . և այս լինի կրթութբ մտաւորական աղօթից ։ Ուստի ասէ ած ։ ովսեայ . Բ . 14 . Նարգեցից զնա իբրև զանապատ , և խօսեցայց 'ի սիրտ նր ։ և փրկիչն յոհ . Ժ . 14 . ասէ , ես եմ հովիւ քաջ , և ճանաչեմ զիմս . և ճանաչիմ յիմոցն . որով աղդ առնէ մեզ՝ թէ պարտիմք ճանաչել զնա

զնա, ոչ զխարդ եւ իցէ ճանաչմամբ. այլ այնպիսի ճանաչմամբ, որ ձգէ զմեզ երթալ իբրեւ ոչխար զհետ նր. եւ այս յաջողի մեզ մտաւորական աղօթիւք։

Եւ գործոց. ա. 4. ասի, պատուէր տայր նոցա յերուսաղէմէ մի մեկնել, այլ սպասել աւետեացն հօր։ Ուստիկ ունիմք իմանալ, թէ ոչ է պարտ մեզ անձապարել յարտաքին պաշտօնս, այլ սպասել հոգւոյն սրբոյ։ Ու այս է եւ բանն, որ ասի եզեկ. լզ. 26. տաց ձեզ սիրտ նոր. եւ զոգի նոր նորոգեցից 'ի ձեզ. եւ հանից զսիրտն քարեղէն 'ի մարմնոյ ձերմէ, եւ տաց ձեզ սիրտ մարմնեղէն։ Եւ զոգի իմ տաց ձեզ. եւ արարից, զի յարդարութիւն իմ գնասջիք, եւ զիրաւունս իմ պահեսջիք եւ արասջիք։ Եւ յետ սուղ ինչ բանից ասէ 'ի հմին. 31։ Եւ յիշեսջիք զճանապարհս ձեր չարս. եւ զգնացս ձեր զանբարիս. եւ դառնասջիք յերեսաց անօրէնութեանց ձերոց. եւ 'ի գարշելեացն ձերոց։ Եւ այս ամ յաջողի մեզ հանապազորդելովն 'ի մտաւորական աղօթս։ Եւ նորին ղուկաս, Ե. 15. ասէ. եւ յորդէր առաւել բանն զնմանէ. եւ ժողովէին ժողովուրդք բազումք լսել, եւ բժշկել 'ի հիւանդութեանց իւրեանց. եւ նա խոյս տայր յանապատ տեղիս. եւ կայր յաղօթս։ Եւ նորին մարկոս ա. 33. ասէ։ Եւ էր ամ քաղաքն ժողովեալ առ դրունսն. . եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել եւ գնաց յանապատ տեղի, եւ անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ նր սիմոն, եւ որք ընդ նմա էին. եւ իբրեւ գտին զնա, ասեն ցնա. թէ ամենեքին խնդրեն զքեզ։ Նա ասէ ցնոսա, եկայք երթիցուք եւ յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն. զի եւ անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ։ Մտադիւր խոկմամբ 'ի միտ առնուլ հարկաւոր է մեզ զայս խոյս տն մերոյ յարտաքին գործոց, որ հոգեւոր եւս էր. եւ զերթալն յանապատ տեղիս, եւ կալ յաղօթս։ քանզի զի՞նչ հարկ 'ի վր կայր զայս առնել, որովհետեւ հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթս այ, որ աղօթից իսկ ոչ կարօտէր։

Եւ դարձեալ՝ նորին ղուկաս. Ժ. 38. ասէ. Եւ մտանէր յն 'ի գեւղ մի. եւ կին ոմն անուն մարթա ընկալաւ զնա 'ի տուն իւրում։ Եւ նր էր քոյր մի՝ որում անուն էր մարիամ. որ եւ եկն նստաւ առ ոտսն տն. եւ լսէր զբանս նր։ Եւ մարթա զբաղեալ էր 'ի բզմ սպասու. եկն եկաց առ նմա, եւ ասէ. տր, ոչ ինչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ միայն եթող զիս 'ի սպասու. արդ՝ ասա դմա, զի օգնեսցէ ինձ։ Պատասխանի ետ նմա յն եւ ասէ. մարթա՛ մարթա՛, հոգաս, եւ զբաղեալ իմն զբաղեալ ես. բայց սակաւ ինչ պիտոյ է. մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի 'ի նմանէ։ Ու բանս այս ըղձալի է մեզ, եւ կարի հարկաւոր 'ի միտ առնուլ զպատմութեան այսորիկ զխորհուրդն սքանչելի, թէ էր աղագաւ խնդրէր մարթա, զի օգնեսցէ ինքեան մարիամ, եւ մի՛ թողցէ զինքն միայնակ 'ի սպասու. յորում տեսանեմք, զի թէպէտ ոչ վասն այլոյ, այլ միայն յաղագս յսի քսի ծայրագոյն սիրելւոյ իւրոյ զբաղէր. սակայն յայսմ տեղի ըղմիամտութին մարիամու յօգնականութի իւր ունիլ ժտէր. ստուգապէս զգործնականին կարօտութին սոյնպէս օգնականութէ հայեցողականին՝ մեզ նկարագրէր. իբր զի հայեցողականն ոչ կարէ իմն ընդհատեալ բացակայ լինել յիւրմէ։ Եւ պատճառն է, զի ոգի ոմն 'ի հարց նրց ցուցանէ։ Անզբաղին դիւրաւ յաջողին ներգործութիւնք ածային սիրոյն. Զբաղելոյն՝ դժուարաւ. զի մոռանայ բազում անգամ ուտել զհաց հոգւոյն, եւ թէ ուտէ՝ ոչ հեշտանայ։ Եւ այսպէս եթէ գործնականն յապաղեսցէ դիմել առ հայեցողականն, 'ի ձեռն անստաղութէ նքողեալ հոգին, որ լինի 'ի հանապազորդ ցնդելոյ հոգւոյն 'ի բազմադիմի գործս պաշտօնի իւրոյ, վտանգի։ Վասն այսորիկ հարկ 'ի վր կայ նմա սոսկ դիմել առ հայեցողականն՝ իբրեւ առ հոգեւոր կազդուրիչ եւ քաջալերիչ նորոգելոյ զօրութէ հոգւոյ իւրոյ. այլեւ իբրեւ առ հոգեւոր գործոց քաջ խորհրդական. որով զլուծումն տարակուսանց սոսկ դիպելոց՝ 'ի հոգւոյն շնորհաց ընկալցի։ Զի գործնականն՝ հաղորդութբ հայեցողականին պատրաստագոյն ունելով զսիրտ իւր առ ած, եւ այնպէս ը̄ թեւօք առանձին խնամոց նր նահանջեալ, ոչ ստարանայ 'ի նմանէ։ Եւ եւս զի 'ի ձեռն հայեցողականին լցեալ եւ առատացեալ քաղցրութբ ածային խնամոց, յորժամ բանայ զբերան իւր 'ի քարոզս ածուսոյց բանից, զեղու ընդ նմա եւ զհոգեւորն քաղցրութի. որով զոգիս ունկնդրողաց ամոքէ յընդունելութի, եւ 'ի պտղաբերութի բանին. ըմ. սաղ. ճխդ. 7. Զյիշատակ բզմ քաղցրութէ քոյ բղխեսցեն։ Եւ դարձեալ՝ 'ի սաղ. խդ. 11։ Լո՛ւր դուստր՝ եւ տե՛ս. խոնարհեցո՛ զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո, եւ զտուն հօր քո. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ։

Ու այս յորդորէ եւ թովմաս գեմբեան. գիրք. ա. գլ. ի։ զի ասէ. որ հրաժարի 'ի ծանօթից եւ 'ի բարեկամաց իւրոց, մերձենայ նմա ած ընդ հրեշտակաց սրբց։ Եւ 'ի նոյն ասէ. որ ըղձանայ առ ներքինս եւ

առ

առ հոգևորս ժամանել, պարտի՛ է քեզ յամ-
բոխէ խոտորիլ ։ որպէս Ճշմարտէ զայս Տէրն
Ղուկ . Բ . 49 ։ Նմանալի ասէ . զի՞ խնդրէիք
զիս . ոչ գիտէիք , եթէ՝ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ
լինել ։ Նմանիւս այսուհետև ուսանիմք յանդիմա-
նել զմեզ այսպէս . եթէ յոր խնդրեցեալ
'ի մէջ իւրոց ծանօթից՝ և դրացեաց , ոչ
գտաւ . զիա՞րդ մարթ լիցի քեզ 'ի մէջ
ծանօթից և դրացեաց քոց գտանել զԴա-
նա , զանց արարեալ՝ 'ի տան Հօր իւրոյ խնդ-
րել զնա ։ Նա տես , զի ասէ . ընդէ՞ր խնդ-
րէիք զիս լինել ընդ նոսա . միթէ ոչ գիտէիք
եթէ 'ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել .
խնկ է նոսա ոչ , բայց եթէ 'ի տան Հօր ի-
մոյ եղիցին և նոքա ։ Նաև յոհ . ԻԱ . 22 .
ասաց ցՊետրոս . քեզ զի՞ է , զի զՅոհան-
նէ . դու եկ զկնի իմ ։ Նաև դարձեալ Թով-
մաս զեմբեան . Գլ . ԺԲ . ասէ . պարտ է
մարդոյ այնպէս յարկեալ , որ զի մի՛ հար
կեսցի խնդրել յաճախապէս զմխիթարութի
մարդկային ։ Նաև գիրք . Գ . Գլ . Ե . ասէ .
'ի յիրս ոչ յանձնեալս քեզ մի՛ պատաղեցիր
Նաև գիրք . Ե . Գլ . Ե . ասէ ։ այր ներքին
առաւել համարի զհոգս անձին քան զամ
հոգս ։ Նաև գիրք . Ա . Գլ . ԺԱ . ասէ . ըղ
բազում խաղաղութի ունիլ կարեմք՝ եթէ
ոչ զբաղիմք 'ի բանս և 'ի գործս այլոց ,
որք ոչ առ պաշտօն մեր պատշաճին ։ Ո՞րպ
կարէ երկար տևել 'ի խաղաղութե նա՝ որ
'ի հոգս օտարաց մխի , զառիթս արտաքնոց
խնդրէ . և որ սակաւ , կամ հազիւ երբէք
զինքն 'ի ներքս ժողովէ ։ Դարձեալ 'ի նոյն .
'ի Գլ . Ի . ասէ . խնդրեա զպատշաճ ժամա
նակ պարապելոյ 'ի քեզ . և ստէպ մտածեա
զբարերարութիւնս այ ։ Եթէ խոտորեսցիս
յաւելորդաբանութե , և 'ի դատարկաշրջիկ
լինելոյ , և 'ի լսելոյ զնորագոյնս և զզրոյցս
ամբոխից , գտցես զբաւական և զպատշաճ
ժամանակ պարապելոյ 'ի բարի մտածութիւնս
Մեծամեծքն 'ի սրբոց որչափ հնար էր , յըն
կերակցութե մարդկան հրաժարէին , և այ
'ի յառանձնութե ծառայել ընտրէին ։ Նաև ասաց
ոմն . քանիցս անգամ եղէ 'ի մէջ մարդկան՝
գտայ մարդ փոքրագոյն ։ Զայս բազում
անգամ փորձառութբ տեսանեմք , երբ ըղ-
ժամ ինչ դատարկաբանեմք ։ Նաև 'ի նոյնն
ասէ . 'ի սենեկի քում գտանես՝ զոր արտաքս
կորուսեր ։ Նաև թէ , 'ի լռութե , և յան-
դորրութե յառաջանայ ջերմեռանդն առա
ւելուլ 'ի բարի վարս . և ուսանի զծածկեալ
խորհուրդս գրոց ։ Նոյնդ գտանէ զհեղուն

արտասուաց , որովք յիւրաքանչիւր գիշերի
լուանայ զինքն և մաքրէ . զի ստեղծողի իւ-
րում այնչափ ընտելանայ՝ որչափ յաշխար-
հայինն վրդովմանց հեռանայ ։ Նաև Տէր մեր ,
Ղուկ . ԻԱ . 36 . ասէ ։ արթուն կացէք այսու-
հետև . յամ ժամ աղօթս արարէք . զի արժանի լինիջիք
զերծանել յայնմ ամէ , որ լինելոց է , և կալ առա
ջի որդւոյ մարդոյ ։ Նաև ԺԲ . 37 . ասէ . Երանի
է իցէ ծառայիցն այնոցիկ , զորս եկեալ տէրն գտցէ ար
թունս . ամէն ասեմ ձեզ , զի գօտի ընդ մէջ ածցէ , և
բազմեցուսցէ զնոսա , և անցեալ պաշտեսցէ զնոսա ։
Նա եթէ յերկրորդ , կամ յերրորդ պահու ե-
կեսցէ և գտցէ այնպէս , երանելիք են ծառայքն այ-
նոքիկ ։ Նաև սակաւ ինչ յետոյ ասէ . Եւ դուք ե-
ղերուք պատրաստ . զի յորում ժամու ոչ համարի-
ցիք , գայ որդի մարդոյ ։ Ո՞րպ հարկաւոր է ըս
տէպ յուշ առնել մեզ զբանս զայս . զի բա-
զումք անփոյթ եղեալք զայսու զգուշացուց
մամբ այն , զյաւիտենական կորուստն յան
ձինս իւրեանց ընկալան ։ Յորս բազումք
յաղագս յանկարծ հասանելոյ 'ի վր , բոլո
րովին անպատրաստք , այլ 'ի մեղս մեռեալք
կորեան ։ Նաև այլք թէպէտ ոչ այնպէս յե-
ղակարծում ժամու , բայց 'ի մերձենալ մա
հուն՝ 'ի հարկէ , և ոչ շնորհօք 'ի վերոյն այ
կամեցեալ պատրաստել զինքեանս , ոչ
բաւական , այլ անբաւական անարժան
պատրաստութեամբ մեռեալք , կորեան ։
Նմլ որք զհանապազորդութիւն մտաւո-
րական աղօթից անվթար պահեն . բազում
ապահովութե ապահով լինին յայսպիսի վը-
տանգից շնորհօք այն . զի հանապազորդու-
թիւս այս է հանապազ պատրաստութե լը-
պանել զալստեան այն՝ ըստ հրամանաց նորա

Կիւրակէ . Է ։

Թէ որչափ ցանկալի է մտաւորական աղօթից օգտա
բերութիւն , ցուցանի բազում մեծամեծ բա-
րեօքն , որք պարգևին մեզ նովաւ . և մեծաւ կարօ
տութիւն , զոր ունիմք առ շնորհն , որ ամենայն օգ
նականութիւն անուանի ։

Յառաջ լիցի նախ , զի երեք ինչ են՝ որովք
նահանջի մարդն 'ի փութոյ առ փըր
կութիւն հոգւոյ իւրոյ ։ Առաջինն է յօժա-
րութի առ չարն . ըստ այնմ , Ծննդ . Ը . 21 .
միտք մարդոյ հաստատեալ են 'ի խնամս չարին 'ի մա
նկութէ իւրմէ . Երկրորդն է դժուարութի առ
բարին . ըստ այնմ . Հռոմ . Է . 18 . կամքն առա
ջի կան ինձ . և առնել զբարին ոչ ։ Իսկ երրորդն
է մթութի մտաց առ ճշմարտութի խոստա
ցեալ

ցեալ մշտնջենաւոր բարեացն , և սպառնացեալ անվախճան տանջանացն ։ Նաև որչափ առաւել լինի մթութիւն սոյն՝ այնչափ առաւել զօրանան երկու այնոքիկ ։ այսինքն յօժարութիւն առ չարն , և դժուարութիւն առ բարին ։ Նաև զայսոսիկ ունի մարդն յապականութէ սկզբնական մեղացն ։ զի ըստ ածաբանից , այնու մեղօք ոչ միայն մերկացաւ 'ի շնորհաց ։ այլև վիրաւորեցաւ 'ի բնականսն ։ զի միտքն եղեն մթին առ ածայինսն ։ անձնիշխանութիւն տկար առ բարին ։ և ցանկականն յանդուգն, և դժուարաւանձ առ չարն ։ յիշողութիւն և ուշն ցնդելի ։ երևակայութիւն անհանդարտ , և զգայարանքն հեշտաքըքիր ։ Այլ՝ որ ոչ փոյթ առնէ ընդդիմանալ մեղաց , և ոչ նկրտի կեալ ըստ ածային պատուիրանաց , ոչ ունի զինքն անպատիր առնել՝ պատճառս դնելով զընդդիմակս զայսոսիկ ։ քանզի 'ի կողմանէ իւրմէ ունի հնար ընդդիմել նոցա զածային օգնականութե շնորհն ։ և զայս առատութբ ընդունի 'ի նմանէ , 'ի ձեռն մտաւորական աղօթից մխանալով ընդ նմա ։ Ուստի ասէ Տրն ։ ղուկ ։ իբ ։ 40 ։ յաղօթս կացէք չմտանել 'ի փորձութիւն ։ Նաև դարձեալ՝ ասէ ։ մատթ ։ իա ։ 22 ։ ամ ինչ , զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուջիք ։

Երկրորդ յուշ լիցի , զի յերկուս սեռս բաժանի աղօթքն , 'ի ձայնաւոր , և 'ի մտաւորական ։ երկոքին ևս բարի են , և հարկաւոր հաւատացելոց ։ բայց մտաւորականն գերագոյն է քան զձայնաւորն , և զօրագոյն գործի է առ ուղղութի վարուց մերոց առ ած ։ զի որպէս ասէ սրն բեռնարդոս , մտածութիւն ուսուցանէ , թէ զի՞նչ է պակաս , և աղօթքն խնդրէ , զի մի պակասեսցի ։ Նաև սրն թովմաս ասէ ։ սկզբնական արտաքին պատճառ ջերմեռանդութե է ած ։ իսկ ներքին պատճառ 'ի մերս կողմանէ է մտածութիւն ։ ըստ այնմ ։ սաղմ ։ լը ։ 4 ։ 'Ի խորհրդոց իմ ջեռասցի հուր ։ Նաև առաքեալն ։ հռոմ ։ ը ։ 26 ։ ասէ ։ Հոգին 'ի թիկունս հասանէ տկարութեան մերում ։ զի զոր ինչ յաղօթս , որպէս արժանն իցէ , ոչ գիտեմք ։ այլ ինքն Հոգին բարեխօս լինի 'ի հեծութիւնս անմռունչս ։ ուր ասէ մեկնիչն ։ եթէ ասասցուք , թէ յաղօթս մեր որպէս արժանն է խնդրել յայ՝ ոչ գիտեմք ։ ահա յաղօթս ուղիղ դիտաւորութբ պարարեալ , հոգին սբ 'ի հեծութիւնս անմռունչս իբրև դատախազակ դնէ 'ի միտս մեր զբանն՝ զոր արժան է խօսել 'ի յաղօթս ։ Նաև զի յայսպիսի աղօթս՝ զոր խօսիմք առ ած , է խօսք ինչ 'ի նմանէ վն մեր առ ած ։ վասն որոյ ասէ , թէ բարեխօս լինի 'ի հեծութիւս անմռունչս ։ Ըստ լատինն է ։ 'Ի հեծութիւնս անպատմելիս ։ Իբր աղօթքն արարեալ որպէս արժանն է , յորում բարեխօսէ հոգին սբ , է անձառելի և անպատմելի ։ որպէս և աղօթքն՝ յորում աղօթողն յափշտակի մտօք 'ի տեսութի խորհրդոյն այ , որ է առանձին իմն պարգև աղօթից , է անպատմելի ։ ուստի և նա՝ որ կայ յաղօթս , ոչ գիտէ ստուգիւ , թէ արժանի այ իցէ և դիտաւորութիւն ունի՞ արդեօք յաղօթս իւր , թէ ոչ ։ բայց հոգին սբ՝ որ քննէ զսիրտս , գիտէ , թէ որպիսի ինչ դիտաւորութի է 'ի հոգւոջ նր ։ Արդ՝ 'ի հրաշալի բանից աստի ունիմք յայժմ յորդորիլ 'ի կրթութի մտաւորական աղօթից ։ և ոչ տարակուսիլ , թէ զի՞արդ մարթիցէ մեզ այսպէս կալ յաղօթս ։ զի զայս ոչ հրամայի մեզ յինքնին առնել , այլ ընդ թևօք հոգւոյն սբյ , որ յայտնի 'ի թիկունս հասանէ մեզ ։ Նաև յուշ լիցի յայսմ վայրի ։ զի ածաբանութիւն զմիտս ուսանողին 'ի ծանօթութի ածայնոցն իմանալեաց ցուցմամբ ձեռնարկութեց՝ կատարէ ըստ այսմ միայն , ըստ որում աներկեւանալի հաւաստի են այնոքիկ ։ Իսկ 'ի խոկման այ՝ և ածայնոց ընկալեալ տեսութիւն , որ է պարգև աղօթից , 'ի վերայ այսորիկ յաւելու պայծառագոյն հայեցողութբ ցուցանել զայնոսիկ՝ ըստ որում են ամ սիրով սրտի , և ամ ցանկութբ բաղձանաց յոգի հայեցողին ընդունելի ։ և վասն անձառելի իմն հեացուցմամբ՝ քաղցրութբ և զուարճացուցմամբ զհոգի հայեցողին զմայլեցուցեալ՝ ըմբռնեն , կամ նաև յափշտակեն ։ Միանգամայն իբրև 'ի մշտնջենաւոր ժառանգութի հայեցողին խոստացեալ քայ , անպատմելի ուրախութբ ուրախ առնեն զնա ։

Ուստի ասէ , յորում զառատագոյն շնչումն հոգւոյն սբ ընդունի աղօթողն 'ի միտս և 'ի կամս իւր ։ 'Ի միտս ընդունելով զօրանայ , և լուսաւորեալ պայծառանայ իմացութիւն առ ստուգութի հաւատալեացն՝ և յուսալեացն՝ որք են աներևոյթք ։ և հաւատայ , թէ է ճշմարիտ ած , որ է բոլորովին սիրելի և ցանկալի , և նա միայն լինի զամ ցանկութի հոգւոյ մերոյ ։ որպէս ասէ դաւիթ ։ սաղմ ։ հբ ։ 25 ։ Զի՞նչ կայ իմ յերկինս , կամ 'ի քէն զի՞նչ կամ խնդրեցից յերկրի ։ Նուաղեցաւ սիրտ իմ և մարմին իմ ։ ած սրտի իմոյ ։ բաժին իմ ած յաւիտենան ։

տեան ։ Ահաւասիկ՝ որք հեռի առնեն զանձինս իւրեանց 'ի քէն , կորիցեն ․ սատակեսցես զամենեսեան , որք ապստամբք եղեն 'ի քէն ։ Ինձ մերձենալ առ ած բարի է ․ և դնել առ տր յոյս իմ ։ Իսկ 'ի կամս իւր ընդունելով զշնչումն , զարթնու 'ի թմրութենէ ․ և սաստկութբ ածային սիրոյն առաստացեալ , ուժգին բորբոքի 'ի սիրել զած ․ և փութայ զվարս իւր ըստ ամ խորհրդոց՝ բանից՝ և գործոց առ ած կարգել ․ և այնպէս ըստ պատուիրանաց , և ըստ խորատուցն իւր կեալ ․ մերկանալ յամ կենցաղականաց 'ի սրտէ , և 'ի նա միայն պարապիլ ․ ասելով ըստ դաւթի ․ սաղ ․ իզ ․ 4 ։ Զմի խնդրեցի 'ի տեառնէ , և զնոյն աղաչեմ ․ բնակել ինձ 'ի տան տն զամ աւուրս կենաց իմոց ․ տեսանել ինձ զվայելչութիւն տն ։ Եւ ըստ նորին գրիգորի ․ տո՛ւր ինձ միշտ նեղուլ զքեզ , զի իցես հանապազ ընդ իս ։ Եւ միանգամայն ասեմ ․ 'ի սմա լինի միանալ ընդ այ , և վայելել 'ի քաղցր ճաշակն երկնային իրաց ։ ըստ այնմ ․ սաղմ ․ լգ ․ 9 ․ Ճաշակեցէք և տեսէք , զի քաղցր է տր ։ Յաղօթս յայս սրբի հոգին 'ի մեղաց ․ մաքրի խիղճն մտաց ․ յաղթի փորձութեան ․ փախնու տրտմութիւն ․ բերկրի սիրտն ․ մերժի մեղկութիւն , և բորբոքի բոց ածային սիրոյն ։ Սմա ունկնդիր են ականջքն այ , և յայտնին երկնային խորհուրդք ։ Հաւատա՛ հաւատա՛ , զի եթէ յամ օր արասցես զմտաւորական աղօթս , զայն բարին ընկալցիս և տեսցես ․ զոր ակն ոչ ետես , և ունկն ոչ լուաւ , և 'ի սիրտ ստունդամնողացն այսմ ոչ անկաւ ․ և զայնպիսի խորին խորհուրդս երկնից իմասցիս , զոր ոչ կարեն իմանալ այն ածաբանք , որք թէպէտ ուսեալ են զածաբանութի , բայց ոչ առնեն զմտաւորական աղօթս ։ Պատմի թէ 'ի մեծն նապօլիս էր ձկնորս մի ռամիկ՝ յոյժ աղօթասէր , որ 'ի ձեռն մտաւորական աղօթից այնչափ լուսաւորեալ էր հոգւով , մինչև բազում վարդապետաց հարցեալ նմ զբանս դժուարիմացս՝ կատարելապէս պատասխանէր նոցա 'ի հիացումն ամենեցուն ։

Գլուխ ․ Ը ․

Թէ ընդէր հարկաւոր է իւրաքանչիւր ումեք առնել երբեմն զքննութիւն բոլոր վարուց իւրոց ։

Որ կամի ըստ վերոյգրեալ յորդորմանց զհոգևոր կրթութիւն ածպաշտուէ 'ի գործ ածել , յուշ լիցի նմա այս ․ զի հարկաւոր է նմա յառաջագոյն առնել զմտադիր քննութի վարուց իւրոց , (եթէ չիցէ երբէք արարեալ զայսպիսի քննութի ,) առ 'ի գիտել , թէ ո՛ր կիրք , կամ մոլութի հզօրագոյն իշխէ անձին իւրում ․ և այնպ ստէպ գահավէժ առնէ զինքն 'ի ծանր յանցանս , խորհրդով , կամ բանիւ , և կամ գործով ։ Զփոյթ ունիցի ևս բարւոք ճանաչել , թէ ունի՛ արդեօք 'ի խառնուածոյ բնութեն իւրոյ , կամ 'ի սովորութենէ՝ սահիլ 'ի բանս կամ 'ի գործս դառնացուցիչս ընկերաց , որոց է կենակից ․ զի որպ ասէ փիլիսոփայն , որպիսի է իւրաքանչիւրոք , այնպիսի վախճան երևի նմա ։

Եւ եթէ գտցէ յանձին իւրում զմի ինչ յասացելոցս , ակիզբն արասցէ ընդդէմ այնմ պատերազմիլ առանձին իմն մտածութբ ․ և 'ի նմին մասնաւոր քննութբ 'ի միտ առցէ , թէ յաւուրն քանիցս զգետնէ զանձն իւր հզօրացեալ կիրքն այն ․ և բարւոք զղջմամբ և առաջադրութբ փոյթ ունիցի ուղղութեն ։ Այլև ընթերցանութբ հոգևոր գրոց , և կամ ստէպ յիշմամբ բանից ինչ ածայնոց գրոց զգաստացուցեալ զինքն , սպառազինեսցի կցցէ վանել զայնր ախտի ներգործութեց զարթուցումն , աղօթիւք և խնդրուածովք կանխեալ առ քս , և առ որ ածածինն ։ Եւ տեսցէ 'ի կրթութենս յայսմիկ յուսով առ քս , մինչև յոյժ տկարացեալ դիւրայաղթ լիցի կիրքն այն ․ և հակառակ նորին ներգործութիւն դիւրին ։ Ապա թէ ոչ , անգործունեայ լինի հոգևոր վարուց կրթութիւն ։

Եւ պատճառն է նախ , զի թէպէտ 'ի ձեռն մտ խորհրդոյ ապաշխարութեն քանիցս անգամ բաւական պատրաստութբ խոստովանի ոք , ընդունի զթողութի մեղաց ․ և զարդարացուցիչ շնորհս ունականն ․ բայց չար տրամադրութիւն , և պատրաստութիւն առ ներգործութիւն նոյն ախտից և մոլութեց 'ի սրտին նր մնալով , նուա՛զ արժանի առնէ զնա ստէպ ընդունելոյ առատապէս զներգործական շնորհսն , որ կոչի ածային օգնականութի ․ առանց որոյ ո՛չ ոք կարէ զհաճոյարար գործս բարիս առնել ։ Երկրորդ՝ զի այն մնացեալ վատթար տրամադրութիւք առնեն զնա անժրաջան , ծոյլ և թոյլ 'ի ներգործութիւնս հոգևոր կրթութեց ․ և այնպ ո՛չ յաջողի նմա զբարի վարս 'ի յանբարւոյն քաջ զանազանել ․ որպ զի 'ի սաստիկ ատելութի շարժեալ ընդդէմ անբարւոյն , և 'ի սաստիկ փափաքումն վառեալ առ բարին , գունի գործեսցէ շնորհօք այն փոխել զվարս

իւր

խուր յանբաւուոյ 'ի բարին · որոյ կէտ նպատակի է կերպարանակից լինել միածնի որդւոյն այ յաստի կեանս ծածկածոյ վարուք ,

ԵՒ 'ի հանդերձեալն փառօք :

Ոչ ոք երկբայի , թէ զօրագոյն անբարի կիրք մարդոյ արգելուն բազումանգամ զբարեպաշտ գործողութիւն · բայց և զայս պարտ է մեզ հաւատալ , թէ և ս բարեպաշտօն կիրք մարդոյ երբեմն արգելուն զնա 'ի բարւոյ ինչ : 'Ի գիրս · Դ · Թագ · Գ · 12 · պատմի զեղիսէէ , թէ յաղագս վրդովման սրտի , որ եղև նմ վն փոքր մի առաւել նախանձայուզութբ յանդիմանելոյ նր զԹագաւորն իէլի յաղագս կռապաշտութե նր , ոչ կարաց մարգարէանալ , մինչև ածաւ առ նա սաղմոսասաց · որոյ նուագելովն հանդարտեցաւ սիրտ նր · և եկն 'ի վր նր ձեռն տն , և մարգարէացաւ : Նոյն · Գ · Թագ · ԺԹ · 11 · ասէ տր ցեղիա : Ապա ցեր 'ի լերին առաջի տն · և ահա տր անցցէ · և հողմ մեծ ուժգին , որ զլերինս հալէր , և զվէմս խորտակէր առաջի տն · և ոչ 'ի հողմն տր · և յետ հողմոյն շարժումն , և ոչ 'ի շարժմանն տր · և յետ շարժմանն հուր , և ոչ 'ի հուրն տր · և յետ հրոյն ձայն թեթև օդոյ :

Օի իբրև անցանելով ցուցանէ զնորոգութիւն , զոր առնէ 'ի մտաւորականն աղօթս · վնէ ասաց · և ահա տր անցցէ :

Երգ քաղցրաձայն առ յս̃ քրիստոս մեր ։

Յս̃ անուն լուր ցնծութե̃ .
տիեզերաց յոյս փրկութե̃ .
կեանք և տուօղ կենդանութե̃ .
և պարգևիչ երանութե̃ ։
Ով ոչոք կարէ սիրել ,
կամ բոլորով սրտիւ խնդրել .
և ոչ արդեամբ իսկ անուանել .
թէ չունիցի զհոգւոյն պարգև ։
Յս̃ յորժամ այց առնես մեզ ,
յայնժամ ստուգիւ խնդրեմք զքեզ .
յայնժամ շնորհօք բնակիս ՚ի մեզ .
և մեզ շնորհես բնակիլ ՚ի քեզ ։
Որ սիրոյ քում նուիրեալ է ,
ը̃ քեզ հոգւով միացեալ է .
նա յամենայն սրտէ իւրմէ ,
ընդ քեզ միայն սիրել խնդրէ ։
Ո՜ նոյն և ես ՚ի սէրտ սրտէ ,
հայցեմ ՚ի քոյդ քաղցրութե̃ .
վառիլ ՚ի հրոյ սիրոյ քումմէ .
սիրտ իմ միայն զքեզ սիրեսցէ ։
Յս̃ սիրտ իմ բոլոր քո է .
զի քեզ ստեղծեր ՚ի յոչնչէ .
և գտուցեր յամենայնէ .
սէր քո միայն ինձ տիրեսցէ ։
Եկ Տէր յս̃ , եկ ոգի մեր .
եկ ճշմարիտ սիրելի մեր .
սրբեա շնորհօք զսիրտս մեր ,
՚ի բնակութիւն ընդունիլ զքեզ ։
Ո՜ ինչ գործեցից արդեօք առ այս ,
կամ զոր միջնորդ ինձ ընկալայց .
զի շնորհիս այսմ արժանացայց .
՚ի քէն հայցեմ , արա ինձ այց ։
Առ քեզ դիմեմ մայր Տն̃ և կոյս .
որ ես միշտ յոյս իմ առ յս̃ .
միջնորդ լեր ինձ ողորմելւոյս ,
զի շնորհեսցի հոգւոյս յս̃ ։
Արդ աւետեաց ձայն մեծ հնչի .
արդ խնդութե̃ բարբառ լսի .
հոգւոյ զյս̃ սէրտ սիրողի ,
և յոգի իւր հրաւիրողի ։
Ո՜ ի նա ասէ , ահա մերձ եմ .
միայն զսիրտ խոնարհ խնդրեմ .
զիս սիրելեաց իմոց շնորհեմ .
զի զորս սիրեն զիս՝ ես սիրեմ ։
Ամեեալ սիրտն իմ ուժգին զարթեաւ .
այսու բանիւ զուարթացաւ .
հոգի իմ խնդութե̃ լցաւ .
անձն իմ բոլոր զուարճացաւ ։

Ահաւասիկ յս̃ Տէր իմ .
ահա խնդրեմ ՚ի քէն սէր իմ .
առնել զիս քո բոլորովին .
և զքեզ շնորհել ինձ զլխովին ։
Ո՜վ թէ որչափ քաղցր է սէր քո .
որչափ բարի է գալուստ քո .
շնորհածորան բարբառանք քո .
լնու շնորհօք զսիրող քո ։
Ո՜վ թէ որքան ձրիք է լի .
ներկայութի̃ քո ցանկալի .
չէ այս ումեք իմանալի ,
թէ ոչ որում շնորհեալ լինի ։
Ո՜ ի այս պարգև ում ընձեռի ,
՚ի քէն յս̃ անհուն բարի ,
բազում խորհուրդ իմաստիւք լի .
քոյին շնչմամբ նորա յայտնի ։
Երբև նոքօք լուսաւորի .
և ՚ի նոր սէր քո բորբոքի .
քեզ խաչակից գոլ փափաքի .
զի ողջակեզ սիրոյդ լիցի ։
Ո՜ որ արդ ժրտեմ , և ինձ լիցի ,
՚ի քէն յս̃ անհուն բարի .
ներկայութի̃ քո ցանկալի .
ներշնչութի̃ քո հոգելի ։
Ո՜ ի լինիցիմ սրտացուցեալ ,
սիրով սիրոյդ արբեցուցեալ .
զիս զլխովին ՚ի բաց թողեալ .
և ՚ի սէր քո փոխակերպեալ ։
Սամարուհւոյ սոյն նմանեալ .
ուժգին առ այլս թռուցեալ
կոչել առ քեզ հրաւիրանաւ .
սիրել ընդ քեզ սիրով մեծաւ ։
Եկայք զյս̃ ճանաչեսցուք .
՚ի սէր նր̃ պարապեսցուք .
զյս̃ խնդրել փոյթ արասցուք .
երանի մեզ՝ յորժամ գտցուք ։
Գտեալ զոտիւքըն փարեսցուք .
կալեալ ընդ նա՝ այլ մի՛ թողցուք .
մագդաղենւոյն նմանեսցուք .
՚ի սէր փրկչին վառեալ լիցուք ։
Ընդ հետ նր̃ միշտ ընթասցուք .
յնմէ հրաժարեսցուք .
զանձինս մեր ՚ի բաց թողցուք .
և ը̃ նմա ՚ի խաչ ելցուք ։
Ո՜ ի նոյն ինքն է կեանքն իսկական .
այլ և բարին մեր ամենայն .
առ որ ստեղծաւ սիրտ մեր միայն .
զորոյ չիք այլ սիրական ։
Նա զորով ինքն էակ անբաւ ,
և ոչ իմիք կարօտ բնաւ .
այնչափ սիրով առ մեզ զիջաւ ։

մինչև

մինչև յաղագս մեր մարդացաւ ։
Ոչ ո՛ք այսչափ մարդասիրեաց,
որչափ Յս՝ որ զմեզ փրկեաց.
զոր ինչ ունէր մեզ պարգևեաց.
զի զմեզ ինքեան եղբայրադրեաց ։
Ի զմարմին իւր ետ հաց կենաց,
զարիւն իւր ըմպելի շնորհեաց.
զհոգին ՚ի գին մեր փրկանաց,
պարգևելոյ ոչ անխնայեաց ։
Ո՛վ որ քորքոքումն տենչանաց,
կամ զո՛ր ներքող գովասանաց,
պարտիմք փոխան այսչափ բարեաց,
այնմ որ զմեզ այսչափ սիրեաց ։
Ակն ոչ ետես մահկանացուաց,
ունկն ոչ լուաւ հողեղինաց.
Թէ զինչ Յս մեզ պատրաստեաց.
զոր խոստացաւ իւր սիրելեաց ։
Քանզի Յս յերկինս ելեալ,
մարմնովն ՚ի մէնջ առընկալեալ.
ըզսիրտըս մեր ընդ իւր ձգեալ,
զի զմեզ ածցէ ՚ի փառս ուխտեալ ։
Յս յաջմէ Հօր իւր բազմեալ,
որ գալստեան եմք ըսպասեալ՝
զի ընդառաջ նմա ելեալ,
լիցուք ՚ի փառս վերառեալ ։
Յսի փառք և օրհնութիւն,
տացի ընդ Հօր և Սբ Հոգւոյն.
պատիւ և երկրպագութիւն,
այժմ և յաւէտ յապագայում,
ամէն ։

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ